




855

L. III. 5







საბჭოთა

II სურბ

საბჭოთა

ჭრეკენ, ჯანსაღეკენ სი ჭრეკენ

საბჭოთა

№ 9

საბჭოთა

1902

—o—o—o—o—o—

საბჭოთა

Синографія Груз. Издат. Т—ва. | საქართველოს წიგნებისა.

1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 9

	Երես
1. ՓԱԽԻ ՏԱՐԻՆ, պատմուածք Ա. Ահարոնեանի . . .	5
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. Խսահակեանի . . .	27
3. ԵՐԵՔ ԵՐԱԶ ԱՆԱՊԱՏՈՒՄ, պատմուածք Օ. Շրէյների, Թարգմ. Յ. Տ.-Դ.	29
4. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Նիկիսիմից, Թարգմ. Ալ. Ծատուրեանի	37
5. ԴԵՊԻ ՄՈՒԹ ՀԵՌՈՒՆ, պատմուածք Լ. Անդրեկի, Թարգմ. Բ. Յ. Տ.-Դաւթեանի	39
6. ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, Վէպ Շահրխարի (Վերջ)	55
7. ՄԻՐՔՅԵՒ ԶՂԱԳԱՐԻ ՄԸ ՔՍԱՆ ԵՒ ՄԷԿ ՕՐԵՐԸ, Եօզ. Տիգրանի	131
8. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաս-Հարունի	155
9. ՄՕՆՆԱ ՎԱՆՆԱ, գրամա Մօրիս Մեհեղիկի, Թարգմ. Տ. Յովհաննիսեանի	168
10. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. —29) Յ. Դաղբաշեան, «Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն», Ստ. Մալխ.— 30) Լ. Մանուէլեան, «Դէպի վեր», պօէմա, Տ. Յ.— 31) Լիլի Բրաունի, «Կանանց հարցը», Բ. Իսխ.	190
11. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսից Շահի վերադարձը ճանա- պարհորդութիւնից:—Պարսկահայ զինուորացիների դրու- թիւնը.—Դրանց օգնելու մի միջոց.—Ինչո՞ւ հասա- րակական ձեռնարկութիւնները մեր մէջ չեն դարգա- նում.—Ժողովրդի թուի և նրա մտաւոր-բարոյական զարգացման հասարակական նշանակութիւնը.—Մեր հասարակութեան անտարբերութեան արմատական պատճառը.—Նոր իդէալներով համակուած ինտելիգեն- ցիա.—Համալսարանների կեանքում նոր փոփոխու- թիւններ, Լ. Ս.	217
Պաշտօնական հաղորդագրութիւններ. Ֆինլան- դիայի մասին նոր կարգադրութիւն.—Սլէքսանդրօպօլիի հեռացրուած անձեր	221
12. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ամերիկական լայտագիրը Ռու- մանիայի հրէաների մասին.—Միջազգային արդարու-	

Նոր շրջան II տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1902



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերություն.
1902

Дозволено цензурою, Тифлисъ, 30 сентабры 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 9

	Երես
1. ՓԱԵԻ ՏԱՐԻՆ, պատմուածք Ա. Ահարոնեանի . . .	5
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱԼ. Իսահակեանի . . .	27
3. ԵՐԵՔ ԵՐԱԶ ԱՆԱՊԱՏՈՒՄ, պատմուածք Օ. Շրէյների, Թարգմ. Յ. Տ.-Դ.	29
4. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Նիկիսիցի, Թարգմ. Ալ. Ծատուրեանի	37
5. ԴԷՊԻ ՄՈՒԹ ՀԵՌՈՒՆ, պատմուածք Լ. Անդրեեվի, Թարգմ. Բ. Տ.-Դաւթեանի	39
6. ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրիարի (վերջ)	55
7. ՄԻՐԲՈՅԻ ԶՂԱԳԱՐԻ ՄԸ ՔՍԱՆ ԵՒ ՄԷԿ ՕՐԵՐԸ, Եօդ. Տիգրանի	131
8. ՇՎԷՅՍԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաք-Հարունի	155
9. ՄՕՆՆԱ ՎԱՆՆԱ, գրամա Մօրիս Մէսէուիցի, Թարգմ. Տ. Յովհաննիսեանի	168
10. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—29) Յ. Դադրաշեան, «Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն», ՍՏ. Մալիւ.— 30) Լ. Մանուէլեան, «Դէպի վեր», պօէմա, Տ. Յ.— 31) Լիլի Բրաունի, «Կանանց հարցը», Բ. Իօլիւ.	190
11. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսից Շահի վերադարձը ճանա- պարհորդութիւնից.—Պարսկահայ գիւղացիների գրու- թիւնը.—Դրանց օգնելու մի միջոց.—Ինչո՞ւ հասա- րակական ձեռնարկութիւնները մեր մէջ չեն զարգա- նում.—Ժողովրդի թուի և նրա մտաւոր-բարոյական զարգացման հասարակական նշանակութիւնը.—Մեր հասարակութեան անտարբերութեան արմատական պատճառը.—Նոր իդէալներով համակուած ինտելիգեն- ցիա.—Համալսարանների կեանքում նոր փոփոխու- թիւններ, Լ. Ս.	217
Պաշտօնական հաղորդագրութիւններ. Ֆինլան- դիայի մասին նոր կարգադրութիւն.—Սլէքսանդրօպօլից հեռացրուած անձեր	221
12. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Սմերիկական յայտագիրը Ռու- մանիայի հրէաների մասին.—Միջազգային արդարու-	

Թիւն և շահ.—Շիպկալում կատարուած հանդէսների նշանակութիւնը.—Ձը կատարուած խոստումներ, Լ. Ս.	223
Պ օ լ ս ի թ ե ը թ ե ը ի ց. Վրթական զործը Դիարբեքի թեմում.—Գաւառացին վանքերի վիճակը.—Վիլիկիայի կաթողիկոսական հարցը.—Անդրանիկ հայ դերասանուհի տ. Ս. Պէղիբեհանի վիճակը.—Լեհացիների դիմումը հայ եկեղեցուն.—Տրիպօլի հայերի հանրագիրը	227
13. ԷՄԻՆ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ, Ա. Ահարոնեանի .	234
14. ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ, Կղերականութիւնը Գերմանիայի մէջ, Quidam	244
15. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	249
16. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	257
17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	278

Փ Ա Խ Ի Տ Ա Ր Ի Ն

Բ

Կ Ո Յ Ր Ե Ր Ը

I

Գիւղի եզրին՝ մշտահոս ու կարկաչուն առուակի
ափին շատ վաղուց բուսել էին երեք հաստաբուն ու
ռիներ, սգատերև ու լալկան։ Ուռիները միշտ և ամեն
տեղ վշտահար են ու դլխիկոր, բայց այս երեքն առան-
ձին պատճառներ ունէին այդպէս լինելու։ Առուակի
ամբողջ երկարութեամբ էլ ուրիշ ծառ չը կար և ե-
րեք մենաւոր ուռիները տնկուել էին այնտեղ երեք
որբերի պէս, նայում էին ջրի մէջ, դիտում այնտեղ
իրանց տխուր պատկերն և ալեակներին պատմում հին
օրերի խոհեր։ Կայծակն էր ճայթել նրանց գլխին, որ-
դերը ներսից կրծել էին նրանց սրտերն և տարինե-
րից ի վեր իրանց խոշտանգուած՝ վիրաւոր բներով այս
մենաւոր ծառերը նմանում էին այն ծեր զինուորնե-
րին, որոնք բազմաթիւ պատերազմներից յետոյ վերա-
դառնում են կտրուած ոտքով կամ ձեռքով և կռացած
տարիների ծանրութեան տակ էլի ապրում են երկա՛ր,
երկա՛ր։ Երեքն էլ հաւասար հաստութիւն ու բարձրու-
թիւն ունէին, միայն առաջինի բունը ներքեւից փթած,
բաց էր արել մի լայն փչակ, որտեղից սպիտակ թեփը
թափւում էր անընդհատ իր փշրանքների հետ դան-
դաղութեամբ տանելով և ծառի կեանքը, երկրորդի

կատարը ճեղքուած էր կայծակից և մի մեծ վէրք ունէր, որ չէր ծածկուում երբէք, ինչպէս ցաւոտ սրտի պատառուածք, իսկ երրորդի բնի մի մասի կեղեւը պոկուած էր վերից վար բաց թողնելով նրա սեւացած, արեւից այրուած խղճուկ փայտը, որ այնպէս յիշեցնում էր ցնցոտիների պատառուածքներից երեւացող մի տանջուած, սեւացած մարմին:

Այսպէս ծեր էին մենաւոր ուռիները, ծեր և խարխուլած: Բայց էլի այնքան ոստեր ունէին, որ կարողանային անձրեւից և արեւի կիզիչ շողերից ծածկել իրանց բայքայուած մարմնի վէրքերն ու խոցեր, իրանց ծեծուած վիրաւոր գլուխները: Եւ կախուած էին այդ ոստերը երկայն ու ոլորուն, հասնում էին մինչև բունը, մինչև գետին: Իրանց մերկութիւնն ու այլանդակութիւնը ծածկել ջանացող խեղճ մուրացիկների պէս, ծառերը թագնւում, պատսպարւում էին տերեւների հովանու տակ և կարծես իրանց վիճակից գոհ էին: Արմատները շարունակ ջրի մէջ, անընդհատ ծծում էին սառն, պարարիչ հեղուկը, բայց երեւի այդքանը բաւական չէր նրանց գզգզուած, վառոյժ մարմինների կենսական զօրութիւնը պահպանելու, ուստի մի բանի երկար ոստեր նրանց օգնութեան էին հասել: Նրանք երկար ոլորուն վարսերի պէս կատարից իջել էին մինչեւ ջուրը, թաղել էին իրանց գլխիկներն ալիքների մէջ, զով համբոյրներ էին քաղում նրանցից, փափսում էին հետները, այնտեղ էին լալիս իրանց ցաւը փոթորկի ժամին, նրանց էին պատմում իրանց սարսափը կայծակի ու շանթի ճայթոցի առաջ և նրանց էին ժպտում գարնան պայծառ, անուշ օրերին, երբ իրանց մայրերը՝ հինաւուրց ուռիներն էլ կեանքի մնացորդի մի վերջին թափով էլի մի անգամ ծածկուում էին գրաւիչ կանաչով, էլի մի անգամ անցած լաւ օրերի փայլն ու կեանքը յիշում: Այդ ժամանակ թռչուններն էլ էին յայտնւում նրանց սաղարթի մէջ, չարածճի, կայտառ ճնճղուկների մի ամբողջ երամ և կեանքի ու կենդա-

նութեան մի պարարիչ շունչ էր անցնում նրանց տխուր հովանու տակ: Եւ այսպէս ծառերն ոչ միայն ապրում էին, այլ և կարողանում էին իրանց աղքատիկ սաղարթում ապաստանած այդ փոքրիկ, սիրուն արարածներին ի հարկին պաշտպանել բազէի և այլ գիշատիչների ճանկերից: Մի յուզիչ բան կար այդ ծեր, մեռնող կեանքերի մէջ, որոնք դեռ կարողանում էին հին կորովի մի մնացորդով իրանց խեղճ հովանու տակ պահպանել այնքան փոքրիկ, անմեղ գոյութիւններ: Ապրում էին, երկնքի տակ դեռ ևս տեղ ունէին, արեւից շողեր և ջերմութիւն էին առնում և բոլորովին անպէտք, աւելորդ էլ չէին:

Վատ եղանակներին՝ երբ երկինքը մռայլում էր վերեւից, երբ չընկալքում ամեն ինչ ասես սև էր հագնում, ուռիների մելամաղձի միայնութիւնն էլ աւելի վհատեցուցիչ էր դառնում: Նրանց պատկերն այդ ժամանակ խօսում էր մի մեղմ, դանդաղ մահից, իսկական մահից, որ թէև չէր երեւում, բայց մօտենում էր կամաց կամաց: Իսկ երբ փրդում էր փոթորիկը նրանց վրայ, երբ ոռնում էր քամին, այն ժամանակ հասնում էր շատ տարիներ առաջ սկսուած իսկական հոգեվարքը. փթած բները ցաւով ճոնչում էին, ոստերը վերսկսում էին իրանց հին լացն ալիքների ծոցում և ամբողջ ծառերը տնքում էին կարծես կեանքից յաւիտեան բաժանուելու խոր վշտով բռնուած: Ծեր էին, բայց էլի ապրել էին ուզում և լալիս էին, աղերսում, սգում: Փոթորիկն անցնում էր և ծառերն էլի այնտեղ էին իրանց խուռչներով, վէրքերով, խոցերով ու լալկան ճիւղերով: Եւ այսպէս տարինէր...

Ծառերի տակ՝ հէնց առուակի ափին կոպիտ բարերից և ցեխից շինուած մի փոքրիկ թումբ կար, մի նստարան: Անձրեւը մաշել էր այդ թումբը, չորս կողմից բուսել էին գալարուն պատուտակներ, գունատ, խղճուկ խոտեր. վերից թափւում էին նրա վրայ ծեր ուռիների դեղնած, լեզուաձեւ տերեւները, մողեսները

սողում էին ներս ու դուրս անում նրա ճեղքերից, երբեմն մի օձ էր յայտնւում, որ ամառային տօթից խոյս տալով, գալիս էր այնտեղ զով սատկերում հեւալու. կամ մի վայրենացած կատու զգոյշ բայլուածքով կըծկըւում էր այնտեղ և մարազ մոնում ծառերի վրայ ճռռողով ճնճողակներին: Եւ միայն այսքան: Տարիներից ի վեր այնտեղ մարդ չէր յայտնւում, գիւղից ոչ ոք չէր դնում իր յոգնած գլուխը այդ թմբի վրայ մի փոքր հանգիստ առնելու համար: Ծառերի պէս՝ այդ թումբն էլ մոռացուած էր, նա էլ մահից ու ամայութիւնից էր խօսում:

Մի փոքր հեռու ծառերից, առուակից զառիվայր իջնող մի խորութեան մէջ կանգնած էր մի տնակ, որի դուռը սաքայն միշտ փակ էր, փոքրիկ լուսամուտը միշտ մի խուրձ դեղնած խոտով խնամքով գոցուած, մի համր ու մռայլ տուն, ուր նոյնպէս ոչ ոք չէր ապրում, որի հերդիկից վաղուց էր, որ ծխի բուլայ չէր բարձրացել: Իսկ բակը շատ վաղուց ծածկուած էր բարձր խոտերով, որոնք ամեն աշնան, դեղնում, չորանում էին և ամեն գարնան բուսնում առաջուայ պէս և պատում տան չորս կողմը բոլորովին ամայի, բոլորովին վայրենի տեսք տալով ամբողջին: Հեռուից ամեն ինչ թւում էր չէն ու բնակելի, բայց այնտեղ ոչ մի կենդանի չէր երեւում, արագազ չէր խօսում, հորթեր չէին բառաչում, շուն չէր հաջում: Լուռ էր:

Գիւղում այդ տնակը համարւում էր «բէխ էր» և դատապարտուած էր ամայութեան, որպէս անիծուած վայր. ամենքը փախչում էին այդ տեղերից, ամենքը խոյս էին տալիս մօտովն անցնել, որովհետեւ նրա հետ կապուած էր մի արիւնի պատմութիւն, մի հին ոճիր: Այդ տեղ, այդ մենաւոր տան մէջ մի չար գիշեր խեղտամահ էր արուած մի կին, մի անմեղ, խեղճ արարած: Գիւղն այն առաւօտ զարթնեց սարսափելի դէպքից ըմբոստ, ինչպէս գիշերն այլանդակ ստուերի առաջ խըրտնած մի ձի, որ ծառանում է յետին ոտքերի վրայ կա-

տաղաբար փնջացնելով: Ասում էին, որ տարաբաղդ կինը զոհ է գնացել ամուսնու զաղանութեանն, իր հարազատ ամուսնու, որ ատում էր նրան. միջոց, հնար էր փնտռում աղատուել նրանից իր մի ուրիշ սիրային կապի համար: Գիւղը մոմռում էր, բայց յանցաւոր համարուողը կապուած էր տան սեանը. նա հաւատացնում էր, որ անյայտ չարագործներ գիշերը ներս մտան, իրան կապեցին սեանը և կնոջը խեղդամահ արին հէնց իր աչքերի առաջ: Գիւղը չէր հաւատում: Բայց շուտով էր, մտածում էր. ամեն ինչ ասում էր, որ բանն այսպէս պէտք եղած չը լինի:

— Ո՞րտեղից մտան չարագործները, հարցրեց մի ծերունի:

— Հերգիկից:

Ծերունին առանց ձայն հանելու մի քանի հարեան առաւ, կտուրը բարձրացան, ուշադրութեամբ նայեցին հերգիկին և ի՞նչ... Նեղ հերգիկը, որից մի մարդ սողալով հաղիւ ներս կախուէր, դեռ ծածկուած էր հին, սև մուրի հաստ շերտով, այնտեղից ոչ ոք ցած չէր իջել: Յանցաւորը գտնուեց, ապացոյցն անհերքելի էր: Եւ ոճրագործ ամուսինն արդարապատուութեան ձեռքով գնաց անյայտացաւ կրելու արժանի պատիժը. տունը փակուեց, բանալին կտուրը ձգուեց և յայտարարուեց «բէխէր»: Այնուհետև այդ արիւնոտ գործի մասին գիւղը դադարեց խօսելուց, և եթէ դառն անհրաժեշտութիւն էր լինում, մի քանի խօսք էին ասում փափսուկով, ասես վախենում էին իրանց ձայնից: Ի՞նչպէս չը վախենային, քանի քանի հոգի տեսել էին ուշ գիշերին թէ ինչպէս այդ փակ դուռը յանկարծ բացում է ահադին չրխկոցով, այնտեղից դուրս է գալիս սպիտակ, երկար պատանով փաթաթուած մի ստուեր, տարաբաղդ կնոջ ստուերը՝ դուրս էր գալիս յամրաբայլ, ցցում է բակում, կանգնում է թմրի վրայ և նայում աստղերին, փափսում ուռիների հետ: Մազեր էին դիպանում այդ պատմութիւններից: Եւ տունը շարունա-

կում էր մնալ փակ դռնով և լուսամուտը խոտով խցած։ Միայն մենաւոր ուռիներն էին անտարբեր դէպի իրանց շուրջը կատարուածը, նրանք ամեն դարնան վերստին կանաչում և կախում էին ջրերի մէջ, տխրութեամբ օրօրում էին իրանց գլուխները բամիների առաջ, թումբը նորից ծածկում էր բաղեղներով, պատուաւներով և այլ խոտերով։

Գիւղացիք թէև խոյս էին տալիս այդ տնից, բայց ամենքն էլ սրտանց կ'ուզէին, որ մի մարդ, մի կորած, մոլորած օտարական գայ բուն դնի այնտեղ, որ չարը հալածուի, վհատեցուցիչ դատարկութիւնը լցուի, երեխաներն էլ չը սարսափեն այնտեղից անցնելիս, կանայք արիւնի հոտ չը դգան, չը փախչեն, ուշացած անցւորները կէս գիշերին պատանով ստուերներ չը տեսնեն։ Մի-թէ չը կար աշխարհում մի անապատտան մուրացիկ, մի անճար թափառական, որ յանձն առնէր բնակուել արիւնոտ բնում, որ գար կեանք տալու այդ մեռելութեանը, հալածելու այնտեղ թագաւորող սարսափը։ Երկար սպասեցին և վերջապէս մի օր ցանկալի բնակիչներ յայտնուեցին, երկու կոյր երգիչներ, երկու թափառական աշուղներ Եկան և «բէխէր» տնակում բուն դրին։

II

Ո՞վքեր էին նրանք, ի՞նչպէս յայտնուեցին, գիւղում ոչ ոք չը գիտէր և ոչ օր էլ չէր հարցնում։ Այդ դժուար էլ էր խմանալ, մուրացիկներն ու աշուղներն «Աստուծու մարդիկ են», աշխարհի բնակիչներ, նրանք քաշ են տալիս հայրենիքը իրանց ոտների հետ և ամեն տեղ ման են ածում մի անյայտ պատմութիւն, մի մութ կեանք, որի արկածները թէև անփայլ ու անծանօթ, բայց միշտ յուզիչ են ու ցնցող։ Այդ կեանքերը նման են հարթավայրի մէջ գալարուող գետի ալիքներին, որոնք իրանց արտաքին խաղաղութեան տակ

Թագցնում են այնքան խուժ ու խռռչներ, այնքան գալարներ, սեւ մութ գաղտնիքներ, թէեւ երբեք չեն աղմկում, չեն ճշում, չեն սռնում:

Գիւղը գիտէր միայն, որ նրանցից մէկը կոչւում է Մուրօ և միւսը Մարգար, երկուսն էլ կոյր, թէև նրանցից մէկն իր թաւ յօնքերից մէկի տակ աչքի պէս մի բան ունէր, իսկ միւսը՝ միայն երկու խռռչ, երկու սեւ բացուածք, դատարկ ու այլանդակ, որ այնպէս յիշեցնում էին մութ ու խորհրդաւոր ձորակի երկու վիհեր, ուր երբեք արեւի շող չէ կաթում, ուր գիշերն իր սարսափն ունի, և ցերեկն՝ անլոյս ու տխուր իր յարատեւ մռայլն ունի: Երկու հոգի էին, բայց մի աչք ու նէին, մի հատիկ ողորմելի աչք, որ վաղուց, շատ վաղուց ծեփուել էր, կոպերն իրար հետ միացել էին բիբի վրայ, միայն նրանց արանքից ինչպէս մի մութ այրի բարակ ճեղքուածքից, լոյսի պէս մի բան էր թափանցում, մի խղճուկ գեղին փայլ, ճիշտ այնքան, որքան հարկաւոր էր ջոկելու գիշերը ցերեկից, խաւարը՝ լոյսից, առանց կարողանալու ճշտիւ որոշել առարկաներն, որոնք երեւում էին աչքի տիրոջ իբրեւ նուրբ, շարժուն անորոշ գծեր, անձեւ ու վայր ի վերայ, խառն ու այլանդակ: Այդ աչքի ճեղքից ներս նայողը սովորականէ աշխարհը չէր, այլ խօլական երեւոյթների մի ծով միշտ ալեկոծ ու փոփոխական, իրար վրայ թափուած պատկերների մի ժխոր, խորհրդաւոր ու վսեմ, որի օրէնքներն ու կարգերն այնպէս անսիրտ կերպով խոյս էին տալիս, փախչում անընդհատ: Այդ մի հատիկ աչքը Մուրօի գէմբի վրայ էր, բայց նա նոյնքան պատկանում էր Մարգարին, որքան իր խկական տիրոջը, թէ երկսին արցունք էր պէտք, այդ մի հատիկ աչքից էր ծորում ինչպէս փխրուն քարի ծակոտիներից, թէ ժպիտ էր պէտք, էլի նոյն աչքն էր գործում, թէ լոյս էր հարկաւոր նա պիտի արեւի շող գողանար երկսի համար էլ, թէ ճանապարհ էր պէտք, նա պիտի ցոյց տար, առաջնորդէր:

Երկու հոգի էին, մի աչք ունէին, ողորմելի անզօր աչք, այնքան անզօր, որ նրանք համարեաւ կոյրեր էին:

Մարգարն ու Մուրճն երկու աշուղներ էին և մի սազ ունէին, նոյնպէս խղճալի, նոյնպէս անփայլ, որպէս իրանց միակ աչքը: Եւ այդ սազը միայն երեք լար ունէր, սգաւոր ու լալկան, որոնց թրթիռները հնչում էին միշտ, ինչպէս հեռու տեղերից բամու բերած բարակ, ընդհատուող հեծկլտանքներ: Այդ լարերն էլ այնպէս էին յարմարեցրած, որ սազը պէտք էր ածել գլխիվայր, բարակ ծայրը կրծքին յենած, իսկ հաստ գունդը վեր ցցուած դէպի երկինք: Այդ ձեւով ասես նա մի բողբոջ, մի ըմբոստ սազ էր, ինչպէս մի բռունցք, մի խօսող, հառաչող, անիծող բռունցք, սպառնալի կերպով տնկուած կոյր, անողորմ ոյժերի դէմ, որ իր ամեն մի հնչիւնի հետ ցնցւում, դողում էր կարծես զայրոյթից, որ լալիս էր, հեծկլտում, բողբոջում, ունում:

Եթէ մի հատիկ աչքը միշտ Մուրճի դէմքի վրայ էր, նա էր մանածում այդ անփայլ, գունատ լապտերը, լուսաւորում կոյրերի միշտ խաւար ուղին, «տեսնում» երկաթի համար էլ միշտ անծանօթ և անըմբռնելի աշխարհն իր մութ, գալարուող ստուերներով, սաղն էլ միշտ Մարգարի ուսին էր կախած, կամ ձեռքին էր, նա էր թրթռացնում երեք լարերը, նա գիտէր հընչիւնների քաղցր լեզուն, երգի գաղանիքը, հազար ու մի ձայների խորհրդաւոր մրմունջներն: Եղբօր պէս բաժանել էին իրանց ամենաթանկ, ամենանուիրական հարստութիւն, աչքը՝ մէկին, սազը՝ մէկին, և երկուսն էլ՝ երկսին:

Մաշուած, փոքրիկ դէմքեր էին, վաղուց յետէ անմշակ ու երկայն միրուք, թաւ յոնքեր, որոնք հովանի էին անում կոյր աչքերի խօռոչների վրայ, ինչպէս անդունդի վրայ բուսած խիտ մացառներ: Մուր, ձգուած, իրար նման դէմքեր էին, ուր յոյղերը, մարդկային սովորական կրքերը չէին զարկւում իրար. յա-

խուռն այլանդակ թափով, լեռների մէջ պարփակուած լճակներ լինէին տսես, որոնք տակն սւ վրայ չէին լինում քամիների շնչով և միայն մեզմ' յեղյեղում էին իրանց տակ թագնուած խորհրդաւոր աշխարհի վրայ: Փոքրիկ մարմիններ ունէին, նոյնպէս վախ, նոյնպէս խղճուկ, որպէս իրանց ամբողջ պատկերը. կեանքի բիրդ բաւականութիւնները կարծես չէին ճանաչել և սնուել էին եթերից խլած ինչ որ անսխիւթ սնունդով: Նման զգեստներ չունէին, հագել էին, ինչոր կարողացել էին ճարել դռներից, ինչ որ բարի մարդիկ տուել էին և յաճախ անխտիր կերպով մէկի հագածը՝ միւսն էր հագնում, և ընդհակառակն: Առաւօտներն արթնանալիս, ամեն մէկի ձեռքի տակ, ինչ որ ընկնում էր, նա այն էր հագնում, մնացածը թողնելով իր ընկերոջը: Այսպիսով նրանց արտաքինը յաճախ էր փոփոխւում և հեռուից դժուար էր նրանց որոշել իրարից:

Երբ նրանք դուրսն էին, փողոցներում, կամ մեծ ճանապարհի վրայ, Մուրօն երկար փայտը ձեռքին, միշտ առաջ էր ընկնում տանելով իրանց խղճուկ լապտերը՝ ողորմելի աչքը և նրան հետեւում էր Մարգարը սաղը թիկունքին և աջ ձեռքը ընկերոջ ուսին:

Ամեն առաւօտ հեռու տեղ ճանապարհ ընկնելուց առաջ Մարգարը միշտ առաջինն էր զարթնում, ձեռքի տակ ընկած շորերը հագնում, սաղը վերցնում և դառնում ընկերոջը:

— Մ'հրօ:

— Մ'արգար:

Մուրօ, ես ցերեկուայ, լոյսի հօտ եմ՝ առնում, ինչ կ'ասես:

— Ցերեկուայ հօտ ես առնում, հա՛, անպէր, լոյսը հեռու չէ, հաւը վաղուց է խօսել:

— Ճանապարհ կը տեսնեմ:

— Ճանապարհը դեռ չեմ տեսնի:

Եւ Մարգարը լռում էր, սաղը ծնկների վրայ թողնում, գլուխը քաշ ձգում, մտածելով այն ճանապարհի

մասին, որ Մուրօն դեռ չէր տեսնում, այն աշխարհի մասին, որ ինքը երբեք չի տեսել և երբեք էլ տեսնելու չի։ Մուրօն փորձում էր թարթել մի հատիկ աչքը լոյս, շող ջոկելու համար, բայց կոպերն իրարից չէին հեռանում, դէմքի ջղերը ձգձգւում էին, ապա յուսահատ պառկում էր իր անկողնում։ Լռութիւն էր տիրում մի առժամանակ։

— Ես շողերը ջոկում եմ, լսում էր քիչ յետոյ Մուրօի ձայնը։

— Դու շողերը ջոկում ես, ախպէր, այդ լաւ է, դէ վերկաց։

Եւ դուրս էին ընկնում կոյրերն իրանց գիշերային ապաստարանից, քայլում էին դէպի անծանօթ հորիզոններ, ման էին ածում իրանց հետ երկու մուկ կեանքեր և այնքան երգեր։ Մուրօն սովորաբար նայում էր ուղիղ, միշտ հեռուն, առանց գլուխն այս ու այն կողմը դարձնելու, փայտով անընդհատ շօշափելով փոշոտ, ցեխոտ ճանապարհները, իսկ Մարգարը նրա յետեւից աչքերի մուկ խողովները ցցած դէպի վեր, դէպի երկինքն ու արեւը, որի ոչ մի շողը չէր կարողանում լուսաւորել նրանց սև յատակն, արտաքին աշխարհի և ոչ մի պատկեր չէր գալիս յուզելու այդ բանտարկուած երեւակայութիւնը, ուր իշխում էր յաւիտենական խաւարը, և ուր ապրում էին միայն ձայներ, իրանց հազար ու մի ելեէջներով, կենդանի, խօսուն մի ամբողջ աշխարհ, լցուած միմիայն հնչիւններով, սիրտ պատառոզ յուզիչ հնչիւններով, որոնց մի մասը, շատ շնչին մասը միայն հասկանալի էր իր ունկնդիրներին։

Այսպէս էին նրանք և մի օր յայտնուեցին Բ... գիւղում։ Փալիս էին շատ հեռու տեղերից, ուր, ասում էին, էլ քար քարի վրայ չը մնաց, ուր էլ երգ ու սազ հարկաւոր չէր սրտեր յուզելու, արցունք քամելու համար, որովհետեւ ողջ երկիրն արիւն ու արցունք էր։ Պատմութիւններն ողջ զարմանալի էին, գիւղացիք չըլլապատաժ լսում և նայում էին այս անօրինակ գուժ-

կաններին, որոնք ասես հանդերձեալ աշխարհից էին լոյս ընկել և խօսում էին ինչոր ահաւոր բաներ, սրտաճմլիկ ու խեղաոդ։

—Մենք արիւն չը տեսանք, ինչպէս տեսներ, Աստուած չի կամեցել, բայց հոտն առանք, հո՛ւ, ինչ հոտ էր, ասում էր Մարգարը։

—Ես տեսայ, շտապում էր ուղղել Մուրօն, ա՛խ ես տեսայ այս կոյր աչքովս, կուփ-կարմիր էին սար ու ձորեր, կուփ-կարմիր, օֆ օֆ.

—Հա՛, տեսանք, մենք արիւնը տեսանք, իսկոյն միանում էր նրան Մարգարը, դէ աչքն ընդհանուր էր, երբ ընկերը տեսել էր, ուրեմն նա էլ էր տեսել։

—Փախի ձայն կար այն տեղ և դայլ-գաղան սարերից իշած պատառոտում էին անմեղ գառներին, արիւնն աշխարհ էր բռնել.

—Հապա, փախի ձայն կար, արիւնն աշխարհ էր բռնել։

—Եւ լացեցինք, աւելացրեց Մուրօն.

—Օ՛հ, շատ լացեցինք, միացաւ նրան ընկերը, և կամացուկ ցած բերեց ուսից սաղը, բուլթ ծայրը դէպի երկինք ցցեց իր աչքերի երկու խողովների հետ, ասես երկնքից ինչոր բան սպասելով. լարերը ձգձգեց և հակառակ կողմից ածել սկսեց սրտապատառ, լալկան նուագներ։ Մուրօն երգում էր.

—Չարկենք սաղին, մոմուռ բամենք սարի, բարի, ձորի հետ, հաւար կանչենք, վա՛խ զուլում է, զուլում բոցին ջուր է պէտք, վառուան զըմէն շատ լացեցինք սարի, ձորի, բարի հետ։

Ա՛խ, լացեցինք ծով արցունքով սարի, ձորի, բարի հետ, կուց-կուց արցունք մոմուռ բամինք դաշտի, չօլի, գետի հետ։

Չարմանալի՜ աշուղներ... գիւղացիք այսպիսի երգիչներ չէին տեսել, այսպիսի երգ չէին լսել, այսպիսի սաղ՝ որ հակառակ կողմից ածէին, որի գունդը դէպի երկինք ցցուած լինէր, գետ երբէք, երբէք որ և է

աշուղ այդ կողմերը չէր բերել: Լսեցին լռութեամբ, մտածկոտ դարձան, փափսային և որոշեցին, որ աշուղներն իրանց գիւղում մնան, թող թափառեն, ուր ուզում են, նրանք մի տեղ նստել չեն կարող, բայց գիւղում բնակուեն, տուն խամ կար, գիւղի եզրի անբնակ, «բէխէր» տունը սրանցից յարմար բնակիչներ չէր կարող ունենալ: Սրանց երգերի ձայնից շարքերը կը հեռանան, ստուերը կը հանգստանայ, սարսափը խոյս կը առայ: Եւ աշուղները մնացին, որքան էին թափառել անտուն, անապաստան: Մի մարդ գտնուեց գիւղում, որ կամացուկ ասաց, թէ գուցէ «բէխէր» տան մէջ այս խեղճերին մի չար բան պատահի, ո՞վ գիտէ, լաւ չէ, որ այնտեղ մարդ ապրի: Բայց անհրաժեշտ էր, որ ամայի տունը բնակիչ ունենայ և գիւղը լռեց:

III

Այն ամառ մենաւոր տան առաջ, երեք ուռիների տակ կեանքի նման մի բան շննդաց, կոյրերն էլ գիտեն ապրել: Ամեն օր ճաշից յետոյ՝ երբ չրջակայքում այնպէս տօթ էր, երկու աշուղներն երկու խղճուկ, օտար թռչունների պէս թառում էին թմբի վրայ, խօսում էին հեռաւոր ու դժբաղդ վաթանից, խօսում էին կարմիր զսլլումից, յետոյ Մուրօն կամացուկ սկսում էր մռմռալ իր յօրինած ցաւի երգը՝ «Ջարկենք սաղին մռմռա քամենք»...

Նոյն վայրկեանին Մարգարը բարձրացնում էր իր սաղը բուլթ ծայրը դէպի երկինք բռնեցրի պէս և ծառերի տակ հնչում էին նուագների, որոնք երբէք դեռ այնտեղ լսուած չէին: Սաղը լաց էր լինում մրմունջներով, իսկ տերեւները մէկիկ մէկիկ վերից թափւում էին աշուղների գլխին: Գիւղի մանուկներն, որոնք այդ ժամերին սովորաբար լողանում էին առուի մէջ՝ խմբերով դուրս էին թափւում ջրից, բարձրանում թմբի վրայ և մերկ շարքերով պար կազմած, նայում էին կոյրերին,

լսում նուագները, մոռանալով՝ որ արեւ կիզի է, որ շողերը այրում են նրանց մերկ միտերը: Այդ պառաւ ծառերն, այդ երկու կոյրերը նրանց տակ իրանց անօրինակ սազով, այդ մերկ մանուկները թմբի վրայ շարուած, այդ բոլորը միասին կազմում էին մի անօրինակ ամբողջութիւն, մի պատկեր, որ չը գիտես ինչ մի խորհրդաւոր բան ունէր իր մէջ: Աշուղներն երգում էին ընդմիջումներով և ամեն անգամ երբ երգն ու երաժշտութիւնը լսում էր, մանուկներն իրար հրհրելով ջուրն էին թափւում ազմուկով՝ քիչ յետոյ նորից դուրս գալու և թմբի վրայ շարուելու համար:

Եթէ զիւզում՝ կնունք, հարսանիք կամ թաղում կար, կոյրերն այդ ամբողջ օրն անյայտանում էին և վերադառնում միայն գիշերները. այդպիսի դէպքերում նրանց լաւ էին կերակրում: մնացած ժամանակ օրուայ մեծ մասը մերթ կուշտ, մերթ քաղցած՝ անց էին կացնում ծառերի տակ և երգում ու ածում թմբերի վրայ շարուած մերկ մանուկների բազմութեան համար:

Երեկոյեան՝ երբ արեւ կախւում էր դէպի հորիզոնը և զոփն ընկնում էր, երբ ճանապարհների թանձր փոշին էլ այնպէս չէր այրում մերկ ոտքերի թաթերը, երբ մարդիկ իրանց ապաստանած տեղերից դուրս էին սողում, կալերն ու գաշտերը կենդանանում էին, երկու աշուղները թողնում էին իրանց բնակարանը և դուրս ընկնում իրանց ապրուստը հայթհայթելու համար: Նրանք երգում էին կալերում, գաշտերում, փողոցներում և դռների առաջ, նրանք երգում էին մանաւանդ՝ լուսնկայ գիշերներին, երբ ցորենի դէզերի առաջ հէշանների վրայ պառկոտած գիւղացիք տրամադիր էին լինում լսել հեռու երկրի հէքիաթներ, հեռու երկրի երգեր և չը լսուած սրտածմլիկ պատմութիւններ:

Խեղճերն այդ օրերում շատ անգամ վերադառնում էին ոչ բոլորովին դոհ իրանց վարձատրութիւնից և սովորաբար տուն հասնելուց յետոյ, նրանց մէջ սկսւում էր մի վէճ, մի հին վէճ աշխարհի և մարդկանց մասին:

—Աշխարհը կռապաշտ է դարձել, ասում էր Մուրօն.

—Հն կռապաշտ է Մուրօ, համաձայնում էր Մարգարը, որ կռապաշտ չը լինէր, այնպիսի բաներ չէին կատարուի. ինչէր տեսանք, սար ու քար մարդու ձեռից տնքացին: Այսքանում, երկսով էլ համաձայն էին, բայց Մուրօն իսկոյն աւելացնում էր:

—Էլի հարսանիքը լաւ է, մարդկանց սրտերը լայնանում են, ձեռքերն առատանում:

—Ո՛հ, ամենեւին չեն առատանում, մարդիկ այդ ժամանակ ուրախ երգեն ուզում, իսկ մենք միայն լաց գիտենք, յիշում ես խօսմ այն հարբածին, որ մի հարսանիքում քիչ մնաց սազը ձեռքիցս առնէր, դլխիս տար, ուրախ բան ածի ասում էր. այսպէս է ախպէր, աշխարհը կռապաշտ է, սրտերը քար՝ երբ ամենքն ուրախ են ու երջանիկ, բայց երբ ցաւը վրայ է հասնում, երբ բաղդն երես շուռ տալիս, բար սիրտն էլ է փափկանում, և լացողի հետ լացող է ճարում: Չէ, չէ Մուրօ, ես թաղումն եմ ուզում, այն ժամանակ երգ էլ հարկաւոր չէ, մարդիկ լալիս են իրանք իրանց:

—Թաղում, լաւ չես խօսում, Աստուծուն դուր չի գայ:

—Աստուծուն դուր չի գայ... Մուրօ, հապա այնքան թաղումներն Աստուծուն դուր եկան, երկինքը չը պատռուեց ցաւից, աշխարհը չը ճչաց, ժաժք չեղաւ, սարերը փուլ չեկան, գետերն իրանց ընթացքը չը փոխեցին: Չէ, չէ Մուրօ: Թաղումը լաւ է. շատ թաղում, շարան շարան դադաղներ, որ փոս փորողները չը հասնեն, որ լացողների արցունքը պակասի, որ գերեզմանների հողաթմբերն իրար խառնուեն և գետնի տակ ոսկոռներն իրար քսուին:

—Այդ բոլորից ի՞նչ օգուտ Մարգար:

—Ի՞նչ օգուտ, որ մարդիկ սովորեն արցունք թափել, և ուրիշի արցունքի գինը հասկանալ, որ էլ ուրիշի դիակները չը կրծոտեն, էլ հարսանիք չանեն

այն պատի յետեւում, որից այս կողմը իրանց նմանները մեմուռ են քամում այրուած կրծքի տակ պատառ պատառ եղած սրտերից: ՕճՖ Մուրօ. աշխարհ իրար տուինք, ցաւ ու կակիծից մեր ճիշն ու ոռնոցն երկընքին հասաւ, աշխարհը խուլ մնաց, աշխարհը կռապաշտ է. դագաղներ, շատ դագաղներ, շարան շարան: —Մեղք ես անում Աստուծու առաջ:

—Էլ մեղք չը կայ:

—Մեղայ բեղ Աստուած, մրմնջում էր Մուրօն և լսում. վէճը վերջանում էր: Քանի տարի այդպէս վիճում էին նրանք և դեռ չէին հասել համաձայնութեան, իսկ աշխարհը շարունակում էր լինել այնպէս ինչպէս կայ, մի տեղ հարսանիք, մի տեղ դագաղներ, մի տեղ խնդուծիւն, միւս տեղ արցունք, միայն կոյրերի վաթանումն էր, ուր իշխում էր միահեծան տէր արիւնն ու արցունքն, այնտեղ հարսանիք չը կար, խնդուծիւն չը կար, երգը՝ լաց էր, մահը՝ երջանկուծիւն:

IV

Փախ էր: Գիւղը լի էր զինուորներով:

Սշուղներն այլ ևս փողոցներում չէին երեւում, նրանց սաղը շատ էր ծիծաղելի. հարբած զինուորները սիրում էին քաջքել, այդ ողորմելի գործիքը, ճնկճնկացնել, լարերը կտրատել, կամ հրհրել կոյրերին, խեղճերն իրանց թմբի վրայ էլ ապահով չէին, ուստի ներս քաշուեցին, դուռը փակեցին և կծկուեցին մենաւոր տան մէջ: Այնտեղ էին երգում, այնտեղ էին ածում, մրմնջում, լալիս: Գիւղում մի պառաւ կար Մահտեսի Խուժարը, անզաւակ ու չոր—գլուխ մի կին. որ իր ունեցած չունեցածը հաւաքել երուսաղէմ էր գնացել, սուրբ գերեզմանը համբուրել, անցել էր ծովեր, աշխարհներ, ճանապարհորդել էր օրեր, շաբաթներ և այդ բոլորից միայն մի բան էր յիշում, որ նաւը ֆուրգօնի պէս է ջրերի վրայ, որ ինքը մի անգամ շատ աղաչեց,

որ այդ անիծած ֆուրգօնը կանգնեցնեն, սիրտը խառնում էր, բայց անողորմ ֆուրգօնչին չը լսեց, և որ Քրիստոսի գերեզմանի վրայ լոյս է ընկնում վերելից։ Կիսաապուշ, միամիտ ու բարի պառաւ, որ իր վարձքի համար նրանց չը մոռացաւ և օրը մի անգամ մի քանի պատառ հաց էր հասցնում բանտարկուած կոյրերին։ Այսպէս էլ լաւ էր, ապրում էին։

Աշուն էր. դուրսը քամիները ոռնում էին, ուռիները տերեւաթափ օրօրում էին իրանց ճիւղերը և լաւիս էին իրանց ծերութիւնն ու մերկութիւնը։ Գիւղը դեռ չէր փախել, բայց ամենքը փշի վրայ նստածի պէս էին. լեռների կատարները ձիւնով էին ծածկուել և նրանց յետեւում ասում էին, քիւրդերն ու ջէլօները վխտում են։

Մահտեսի Խումարը գալիս էր միշտ առաւօտները, փեշի մէջ խնամքով բռնած մի քանի կտոր հաց, որ նա հաւաքում էր դէսից դէնից, բաց էր անում դուռն զգուշութեամբ, բարի լոյս ասում, հացը վար դնում, նստում էր նրանց կողքին և մինչ կոյրերը ուտում էին նրա բերած պաշարը, ինքը պատմում էր գիւղում անցած դարձածը, մանաւանդ մանրամասն հաղորդում էր «Փախի» մասին շրջող լուրերը։ Նրա պատմութիւններն օր աւուր դառնում էին աւելի մռայլ, աւելի սարսափելի։ Նա խօսում էր զօրքից, ասում էր, որ էլի նոր դնդեր պիտի գան, որ թշնամին շատ զօրեղ է, կռիւը սարսափելի է լինելու, ասում էր, որ գիւղերում էլ պաշար չի մնացել այնպիսի թանկութիւն է լինելու, որի նմանը եղած չէ։

Մի երեկոյ կոյրերը նստած իրանց բնում, մըտմըտում էին պառաւի պատմածների մասին, ծրագիրներ էին կազմում ժամ առաջ խոյս տալ փախի երկրից, երբ դուռը ճռւաց և ներս մտաւ պառաւ Խումարը։ Նա յուզուած էր և գունատ։

— Զօրք շատ եկաւ, ասաց նա կերկերուող ձայնով. գլուխներիդ ճարը տեսէք։

—Ի՞նչ անենք, միաբերան ձայն տուին կոյրերը:

—Փախէք տնաշէններ, փախէք, դուք խօսմ կոյր մարդիկ էք, շուտով գիւղը կը փախչի և դուք ոտքի տակ կ'երթաք, օր առաջ փախէք:

—Օրը ցերեկով ի՞նչպէս փախչենք.

—Գիշերով փախէք, թէ ցերեկը բռնեն, վայն եկաւ ձեզ տարաւ. պաշարը չի բաւականանում, շներին կոտորում են, թէ ինչ է աւելորդ բերան չը լինի, մուրացկաններին էլ դէ, նրանք էլ չեն աշխատում, ասում են, կը սպանեն, եթէ դռներում չըջելիս տեսնեն.

—Կը սպանեն:

—Հա՛, անպատճառ կը սպանեն, ասում են, ես խօսմ մենակ չեմ, ամենքն են ասում սարսափելի բաներ, ասում են, որ կապ կը դնեն անճարների վզերին, քաջ կը տան սարերը շների հետ և այնտեղ կը սպանեն գնդակով: Փախէք, այս գիշեր փախէք, ես էլ բան չեմ կարող անել, հաց ճարել չեմ կարող: Պառաւն իր սարսափելի գոյժը հաղորդեց ու գնաց:

Խրճիթում մի առժամանակ լռութիւն տիրեց, երկու կոյրերը խաւարի մէջ կարծես չէին էլ շնչում:

—Մարգար.

—Մուրօ:

—Մինչեւ լոյս Արաղ կը հասնենք:

—Հա՛ Մուրօ, կը հասնենք:

—Ճանապարհը չե՞նք կորցնի:

—Աստուած ողորմած է:

—Դէ վեր կաց, էլ մի սպասիր. սաղը չը մոռանաս, մէջքիդ ձգիր. գիւղում քնած են, ոչ ոք չի տեսնի,

Եւ դուրս եկան նրանք, մութ, մռայլ աշնանային գիշեր. թխպոտ երկնքի վրայ մի հատ աստղ չէր պլպլում. Մուրօն իր ողորմելի աչքը այս ու այն կողմը դարձրեց, չռեց, տրորեց մի բան որոշելու համար, իզո՞ւր, ոչինչ չէր երեւում. միապաղաղ մութ զանգուածը նրանց շրջապատել էր, պէտք էր քայլել, շարունակ

մի գծով, մի ուղղութեամբ դէպի հիւսիս, նրանք գիտէին, որ Արազն այն կողմն է, բաւական է հասնէին ափին, մնացածը հեշտ էր:

Գիւղը քնած էր, նրանք զգուշութեամբ դուրս եկան, քայլում էին, որտեղից կարող էին, պէտք էր մեծ ճանապարհ գտնել. իսկ մինչեւ այդ անցնում էին խուլ դաշտերով:

—Մուրօ, լուսին կ'այ:

—Ձէ, Մարգար, լուսին չը կայ:

—Մէկ լաւ նայիր:

—Լաւ եմ նայել, ախպէր, չը կայ, չը կայ, ուսս պինդ բռնի. փայտս խոր գնաց, առաջներս առու է, լայն չէ, թռչներ:

—Մուրօ:

—Մարգար:

—Դու թռնիր:

—Հա, դու ճրտեղ ես:

—Ջրի մէջ, ընկայ ջրի մէջ. ցուրտ է, սառն է:

—Ջրի մէջն ես,

—Հա սաացի, ջրի մէջն եմ. այ նստած եմ, ոտներս թրջուած են, գորտեր էլ եմ զգում, նրանք էլ սառն են, դու գորտ չես զգում. նրանք ինձ մօտ են, ի՜նչ են գտել այդ ողորմելիներն այս սառը ջրում: Է՛հ, էլի երանի նրանց, տեղ ունին, մեզ պէս անտէր ու հալածական չեն:

—Տօ, թող գորտերը, փայտս բռնիր դուրս արի:

—Փայտդ բռնմ, ես փայտ չեմ գտնում, բայց գորտերը շատ են. ճրտեղ ես, ձայն տուր, որ փայտդ գըտնեմ, շարունակ խօսիր, բաներ ասա:

—Դէ, բռնիր, այստեղ, դէպի աջ, հը, հը, չը կ'այ, չը կ'այ, ի՜նչ չար գիշեր է. օտնաձայն լսում ես. ճվքեր կարող են լինել:

—Սո՛ւս, սուս, թող անցնեն:

—Մըսում եմ ջրի մէջ:

— Սուս, սուս, միտի՛ր, բայց սուս, մեր յետեւից են ընկել:

— Ի՞նչ գիտես:

— Լսիր, ականջ գիր և սճւս:

Ձիաւորներ էին, խօսում էին իրար հետ.

— Այստեղով փախան, ասում էր առաջին ձայնը:

— Հա՛ այստեղից, պատասխանեց երկրորդը:

— Դու հաստատ գիտես որ մեր փնտաւածներն են:

— Անպատճառ նրանք են, ուրիշ ո՞վ կարող է լինել, նրանց ձայները լսել են, լուսնի մասին են խօսել. հը՛րամայուած է լսփել, այ թէ կը պատահենք հա՛ւ. բայց այստեղ չեն, առաջ անցնենք:

Ձայները կամաց կամաց հեռացան: Շրջող պահակներ էին, որոնք կարծում էին թէ գիշերային լրտեսների հետքեր են գտել: Բայց կոյրերն իրանց մասին կարծեցին նրանց խօսակցութիւնը և բարացան իրանց տեղերում:

— Լսեցիր Մարգար. պառաւ Խումարը ճիշտ է ասել:

— Հա լսեցի, ի՞նչ անեմ, ես խօմ քեզ ասել եմ, որ աշխարհը կռապաշտ է, որ թաղում չատ է հարկաւոր սրտերը փափկացնելու համար, փախչում ենք, էլի չենք պրծնում. փայտդ տուր, ի՞նչ ցուրտ է այստեղ:

— Ահա փայտը. գտա՛ր, բռնեցիր,

— Հա, բռնեցի, քաշի, քաշի պինդ. լաւ է, դուրս եկայ, թրջուած եմ, բայց զնանք, աշխարհը լայն է, բայց մենք գլուխ դնելու տեղ էլ չունենք:

Եւ նրանք քայլում են անընդհատ, երբ Մուրօի ոտքը դիպչում է քարի, թմբի, և նա գլորւում է երեսի վրայ. յետեւից Մարգարը նոյն ձեւով ընկնում է ընկերով մէջքին, վեր են կենում, իրար գտնում, իրար մխիթարում և առաջ անցնում: Ուշ գիշեր էր արդէն, երբ հազիւ մեծ ճանապարհը գտան հեւալով, տնքալով, քրտինքի մէջ կորած: Այժմ հեշտ էր, հարթ հաւասար տարածութիւն է և նրանք քայլում են անընդհատ:

—Մուրօ:

—Մարգար:

—Լսում ես ձայնը:

—Արազի ձայնն է, աշուն է, ջուրը վարար, հասանքը զօրեղ, ալիքներն այդպէս ազմկում են:

—Մօտ ենք:

—Շատ մօտ:

—Երբ հասնենք ի՞նչ անենք:

—Նստենք, սպասենք լուսաբացին, որ նաւակները դործել, երթեւեկել սկսեն:

—Այդ ձայնից ես վախենում եմ և սիրում միաժամանակ:

—Արազի ձայնից, ի՞նչ վախենալու բան կայ:

—Քանի մօտենում ենք, դռուցն այնքան ուժգին է դառնում, լսում ես, այնպէս կ'ուզէի մօտիկ լինել, շատ մօտիկ, համարեա ջրերի մէջ, որ այդ ալիքները ականջներիս մէջ դռան. գիտե՞ս, ես միշտ կարծել եմ, թէ նրանք խօսում են, թէ նրանք էլ մեզ պէս ցաւեր ունեն, թափառական ու անտէր, անցնում են երկրէ երկիր, լաց են լինում, բողբոջում, ճչում, փսփսում, լալիս և նրանց ոչ ոք չի լսում: Խեղճե՛ր, մեր եղբայրներն են այդ ալիքները:

—Ահա հասանք, այ նստիր այստեղ, Մարգար, և լսիր, որքան կամենում ես, պէտք է սպասենք, մինչեւ լուսաբաց:

—Ես քայլում եմ դէպի ափը, մօտ, ջրերին, թող նրանք ինձ փսփսան, ականջիս մէջ լինեն, դու ցերեկով տեսնել ես, ալիքներն ինչի՞ են նման, ինձ թւում է թէ նրանք աչքեր բերան, մի խօսքով դէմք ունեն, որ գիտեն ծամածռել, հազար ու մի ձեւեր տալ, որ նրանք կարող են ճշալ ու ծիծաղել, արտասուել և ցնծալ: Այդպէս է Մուրօ:

—Հա՛ Մարգար, ալիքները ծիծաղել, բրբջալ ու արտասուել գիտեն. բայց մօտ մի գնա, այդ լաւ չէ, ես քեզ չեմ տեսնում: Ո՛ւր ես Մարգար, զգո՛յշ:

—Դու ինձ չե՞ս տեսնում, փայտը ձեռքիս, առաջս շօշափում եմ: ահա ես այժմ ափին եմ, բոլորովին ափին, ես լսում եմ, քանի՜ ձայներ, ի՞նչեր են ասում. սրանք միայն գիշերն են այսպէս, թէ՛ ցերեկն էլ խօսել գիտեն: Ու՛հ, մէկ իմանայի որտեղից են գալիս, ի՞նչ են այսպէս փսփսում:

—Բինդեօլից, տնաշէն, Բինդեօլից են գալիս:

—Մեր Բինդեօլից:

—Աշխարհում մի Բինդեօլ կայ. չե՞ս լսել երգը՝ «Արազ, Արազ խան Արազ, Բինդեօլից բղիտղ Արազ»:

—Օճֆ Բինդեօլ, հազար լիճ, ասա Մուրօ, ցերեկն այս ջրերն ի՞նչ գոյն ունեն, սէւ, թէ՛ կարմիր:

—Ես սեւ ու կարմիր եմ տեսնում Մարգար:

—Տես, Մուրօ, նրանք գալիս են, զարկում են ոտտներիս տակ, չըրժփ, չըրժփ, յետ ու յետ գնում մըռմըռալով, ի՞նչ են ուզում, Բինդեօլից են գալիս խեղճերը. ինչքո՞ր են տեսել, «Արազ, Արազ խան Արազ, հազար լճից, բղիտղ Արազ»: Հազար լճից, ինչքան բան կարող են ասել այնքան լճերը, պատմեցէք, էէ՛, ի՞նչ էք մոմուում ծեծուած գազանների պէս:

Ալիքները մոմուում են, ու թումբը որի վրայ կանգնած է Մարգարը կրծում, քերում են տակից նա մօտ է թափուելու:

—Մուրօ, սիրտս էլի լցուեց, ասա, մատաղ, ասա մեր երգը՝ «Ջարկենք սաղին, մոմուռ քամ...»

Երգը կիսատ մնաց ու լռուեց. ահագին չըրժոց բարձրացաւ, գետափն էր, որ փուլ գալով գնաց կատաղի ալիքների հետ, և Մարգարի ձայնը մէկէն ընդհատուեց: Մուրօն յանկարծ ճչաց.

—Մարգար:

Ալիքները մոմուային, ճղփոց հանեցին ափերի վրայ:

—Մարգար:

Ալիքները, խշխշացին, պոյոյտներ գործեցին, իրար հրեցին, հրհրեցին առաջ անցան:

—Մարգար:

Ընկերոջ ճիշդ մնաց անպատասխան, և խեղդուեց աղմկուած գետի մէջ, ուր Մարգարի գիակը լողում էր թաւալ թաւալ սազը պինդ բռնած ձեռքում, դարձեալ բութ ծայրը գէպի երկինք ջցած, դարձեալ աչքերի խռուչները գէպի վեր, գէպի անհունը ուղղած:

—Գետ, գետ, հազար լճից, հազար աղբւրից բըղխող գետ. սարերով, ձորերով ու օրով եկանք. սրտերս մոմուռ, աչքերս կոյր արեան ծովեր ենք կտրել և անցել. ջուխտ հասանք ամիգ, ես մենակ եմ մնացել, խեղճ ու կրակ, անյոյս, ու անյոյս, գետ, հազար լճից բխող անգութ, անողորմ գետ, կամ տար ինձ նրա հետ, կամ տուր ինձ նրան. Մարգար:

Լուռ էր ընկերը. մռնչում էին ալիքները, իսկ Մուրճն զաւակը կորցրած մօր պէս, վազվզում էր փերում:

Երկար թափառեց նա, ընկերին կանչեց, ճչաց, ոռնաց ալիքներից բարձր, ալիքներից ցաւով. իզոյր, Մարգարը չը կար, իսկ գետը շարունակում էր անհոգ բրբռելով թաւալել իր հարուստ ջրերը և նրանց հետ մի գիակ, մի խեղճ անտէր գիակ: Էլի մի քանի րոպէներ և ջրերը կրկին ճղփացին, նրանց ծոցը նետուեց յուսահատ Մուրճն, ալիքները բացուեցին մոմուռով, ներս առաւ նրան էլ և ամեն ինչ լռեց:

Բինգեօլից էր գալիս գետը, հազար լճերից, հազար աղբւրից, շատ բաներ գիտէր, բայց միայն մոմուռ էր և փսիսում, կամ կականով զարկում էր իր ամերին: Եւ ալիքների տակ թաւալ թաւալ գլորում էին երկու աշուղ ընկերները, կարծես խօսում, փսիսում էին ալիքների հետ, հայրենիքից լուրեր էին հարցնում և նրա սառը ծոցի մէջ հանգիստ օրօրում:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

*
* *

Էս ի՞նչն է ամպում զիլ թեին կուտայ.—
Գարնան գովքասան արտհետն է նշխուն.
Ու ի՞նչու ձէնը զարհուրիկ կուգայ...
—Վա՛խ, էս ագռանն է,—գլխուս պտըտում:

Ես ուրտեղ կ'երթամ, դուն հետս կուգաս,
Ինձէն ի՞նչ կուգես, այ գուլում ագռաւ,
Երազիս մէջն էլ վերաս կը դռաս.
Ինձէն ի՞նչ կուգես, սեասիրտ ագռաւ...

Ա՛խ, եարաբ չըլնի, թէ դուն էլ գիտես,
Որ ծաղիկ սիրտս դարդամահ մեռաւ.
—Ազիզ մեռելս քրքրե՛լ կուգես,
Զիւան մեռելս, այ իմ բազտ—ագռաւ...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

*
* *

Երկաթէ ցուպ ձեռքս առնիմ,
Աշխարհ ընկնիմ մէն-մենակ,
Կորած բախտս ման դամ, գտնիմ,
Աշխարհի մէջ՝ մէն-մենակ:

Սուր ու ձորեր, քուր ու ախպէր,
Բախտս չիտէք, ուր գնաց.
Հազար ու մի թագաւորի
Թագ կար գլխուն, ուր գնաց:

Ձառ աստղունքով ճակտին կամար,
Ճակտին պսակ,—ուր գնաց...
—Ոսկի արեն սրտիս մէջ վան,
Ոսկի արեւը ուր գնաց...

Ա.Լ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԵՐԵՔ ԵՐԱԶ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Մ Ի Մ Օ Զ Ա Ծ Ա Ռ Ի Տ Ա Կ

(Օ. ՇԵՂՆԵՐԻ)

Մի անգամ ես ճանապարհորդում էի ավերիկեան դաշտա-
վայրերով, արեւի այրող ճառագայթների տակ: Ես տարայ ձիս
միմօզա ծառի տակ, վերջրի թամբն և թողեցի նրան չորացած
թփի մօտ: Հեռու շուրջս տարածւում էր մոխրագոյն, այրուած
գետինը: Եւ ես նստեցի ծառի տակ, որովհետեւ չոգն անտա-
նելի էր: Շուտով ծանր քունը յաղթեց ինձ. ես գլուխս դրի
թամբի վրայ ու քնեցի և մի տարօրինակ երազ տեսայ:

Ինձ թւում էր՝ թէ ես կանգնած եմ անապատի ծայրին և
քամին ամեն կողմից լքցնում է նրան աւազով: Եւ ես տեսայ
երկու ահագին ուղտանման մարմիններ. մէկը նրանցից պառ-
կած էր աւազի վրայ, իսկ միւսը՝ կանգնած էր կողքին: Եւ ես
հետաքրքրութեամբ սկսեցի դիտել աւազի վրայ պառկած մար-
մինն, որովհետեւ նրա մէջքին ես նկատեցի ահռելի մի բնու և
աւազի այնպիսի չերտ, որ կարծես դարերով էր հաւաքուել
նրա վրայ:

Եւ ես նայում էի ու զարմանում: Մօտս լուռ կանգնած
էր մէկը, ես հարցրի նրանից՝ «Ո՞վ է աւազի վրայ փռուած այդ
ահագին էակը»:

Եւ նա պատասխանեց. «Դա կինն է. նա է, որ իր մարմնի
մէջ կրում է մարդուն»:

— Ինչո՞ւ է նա այստեղ պառկած բոլորովին անշարժ և ա-
ւազով ծածկուած:

— Լսիր, պատմեմ քեզ:— Անցել են դարեր ու դարեր, ինչ
նա պառկած է այստեղ և քամին փչում է նրա վրայով: Ամե-
նածեր, ամենաալիւսոր մարդը երբէք չի տեսել, որ նա շարժում
գործի, և ամենահին գիրքը պատմում է, թէ այդ էակը այստեղ

պառկած է եղել այն ժամանակներն էլ նոյնպէս, ինչպէս հիմա, բոլորովին աւագով ծածկուած: Բայց լա՛ր, ամենահին զրքերից աւելի հին, և ամենապիտոր մարդու յիշողութիւնից աւելի վաղեմի են նրա ոտքերի հետքերը, որ գտնուել են մարդկային լեզուի կիրճերում, և նախնեաց սովորութիւնների ամուր քարի փշրանքների վրայ: Այնտեղ դու գտնելու ևս նրա ոտքերի հետքերը մի շարքում այն էակի հետքերի հետ, որը կանգնած է նրա մօտ: Եւ իմացիր, որ դա, այժմ հողի մէջ պառկածը, մի ժամանակ ազատ էր և այդ էակի հետ ձեռք ձեռքի տուած թափառում էր սարերով և ձորերով:

Ես հարցրեցի՝ «Ինչո՞ւ է նա հիմա պառկած»:

Նա ուսաց՝ «Շատ դարեր սրանից առաջ Մկանունքային Ոյժի ժամանակները հասան նրան, և որը նա կուացած իր երեխայի վրայ, կերակրում էր նրան, և մօտ կանգնած էակը ծանրաբեռնեց կնոջ լայն մէջքը Խոնարհութեան չալակով և կապեց այդ չալակը անողորմ Կարեւորութեան ամուր կապերով: Եւ երբ կինը նայեց երկնքին և երկրին, նա հասկացաւ որ նրա համար յոյսը կորած է, նա թեքուեց գետնին ծանր բեռի տակ, ազատուել որից չէր կարողացել, և այն օրուանից նա այստեղ պառկած է: Դարեր անցնում էին դարերի յետեւից, բայց անզուժ Կարևորութեան կապերը չէին թուլանում»:

Եւ ես նայեցի նրա աչքերին և նրա մէջ տեսայ դարաւոր ահռելի համբերութիւն: Նրա տակի հողը բոլորովին թափ էր արտասուքներից և քթի ռունգները փչելիս աւագ էին յրում:

—Ես հարցրեցի՝ «Փորձել է նա արդեօք մի անգամ շարժուել»:

Մօտիս կանգնածը պատասխանեց՝ «Մերթ մերթ նրա անդամներից մէկը կամ միւսը շարժւում էր, բայց նա խելացի է՝ գիտէ, որ չէ յաջողուելու նրան ոտքի կանգնել, քանի որ դրած է նրա վրայ ծանրութիւնը»:

Ես հարցրեցի՝ «Ինչո՞ւ նրա մօտ կանգնած մարդը չէ թողնում նրան և չէ հեռանում»:

—Նա չէ կարող: Նայիր... Եւ դետնի վրայ այդ երկու մարմինների մէջ ևս տեսայ նրանց կապող մի լայն պարան. քանի որ կինը պառկած է, մարդը պէտք է մօտը կանգնի և անապատի շուրջը նայի:

Եւ ես հարցրեցի՝ «Մարդը իմանում է թէ ինչու նա չէ կարողանում շարժուել»:

Նա պատասխանեց՝ «Ո՛չ»:

Եւ ես լսեցի մի ինչ որ տրաքոյի ձայն, յետ նայեցի, տե-

սայ որ կնոջ մէջքին ծանր բեռը կապող պարանոցները կտրուեցան և բեռը վայր ընկաւ:

Եւ ես հարցրեցի՝ «այդ ինչ է նշանակում»:

Նա պատասխանեց՝ «Այդ մեռաւ Մկանունքային Ոյժի դարը. նրան դանակով սպանեց Նեարգային (Չղային) զօրութեան դարը: Անլսելի և անտեսանելի կերպով վերջինը մօտեցաւ կրնոջը և իր մեքենայական գիւտերի դանակով կտրեց նրա մէջքին բեռը կապող պարանոցը: Անողորմ Կարեւորութիւնը կոտորուած էր: Հիմա կինը կարող է ոտքի կանգնել»:

Եւ ես տեսայ, ինչպէս կինը գեռ էլի անշարժ, չարունակ պառկած էր աւազի վրայ, բայց աչքերը լայն բաց էր արել և դուրս էր հանել պարանոցը. թւում էր, թէ նա մի ինչ որ բան էր որոնում անապատի ամենահեռաւոր ծայրում, բայց այդ բանը չէր երեւում: Ես ուղեցի իմանալ՝ քնած է նա, թէ արթուն: Նայեցի նրան և նկատեցի որ նրա մաքմինը ջնցուեց և աչքերը լուսաւորուեցին իսկ այնպէս, ինչպէս մուլթը սենեակն արեւի ճառագայթի յանկարծ ընկնելիս է լուսաւորւում:

Եւ ես հարցրեցի՝ «Այդ ինչ է»:

Նա չնձայ ինձ՝ «Շ... Նա յղացել է միտք—չէ կարողանալու արդեօք բարձրանալ»:

Ես տեսնում էի. նա բարձրացրեց գլուխն և տալում ես տեսայ փոս, որի մէջ այդքան ժամանակ խրուած էր նրա գլուխը: Կինը առաջ նայեց երկնքին, յետոյ գետնին, յետոյ մօտ կանգնած մարդուն, բայց վերջինի հայեացքը անապատի խորքերն էր ընկած: Եւ ես կրկին նկատեցի, ինչպէս մի դող վազեց նրա ամբողջ մարմնով և նա գետնին այնպէս սեղմուեց ծնկներով, որ ես բացականչեցի՝ «Ահա նա այս րոպէիս ոտքի կը կանգնի»...

Բայց նրա կողքերը բարձրանում էին միայն և նա շարունակուում էր պառկած զրութիւնը առաջուայ նման: Իսկ գլուխը բարձր ունէր բռնած, էլ չէր ցածայնում:

Մօտիս կանգնածը ասաց ինձ՝ «Նա չափից դուրս նուազ է. նայիր, երկար պառկելուց նրա ոտքերը չեն կարողանում շարժուել»: Եւ ես տեսայ, ինչպէս այդ էակը կուռում էր և ինչպէս նրա մարմնի վրայ երեւացել էին քրտինքի կաթիլներ: Եւ ես ասացի՝ «Ի հարկէ, նրա մօտ կանգնած մարդը օգնութեան կը հասնի նրան»:

Բայց մօտիս կանգնածն ասաց ինձ՝ «Նա չէ կարող օգնել կնոջ—կինը ինքը պէտք է իրան օգնի. թող նա կռիւ քաչի մինչև որ կ'ուժեղանայ»:

Ես գոչեցի՝ «Գոհնէ մարդը չէ խանդարելու նրան»:

—Նայիր, նա հեռանում է, նա քաշում է պարանը և գետնին է ցածացնում կնոջը, Նա աւելացրեց՝ «Մարդ չէ հասկանում, թէ ինչ է անում, երբ որ կինը շարժւում է, պարանը ձգւում է և անհանգստացնում է մարդուն այնպէս որ վերջինը ակամայ հեռանում է նրանից: Գալու է մի օր, երբ նա կը սկսի հասկանալ և կ'իմանայ, թէ ինչ է անում կինը. թող միմիայն կինը կանգնի ծնկների վրայ, և այն օրը մարդը կը մօտենայ նրան և համակրանքով աչքերին կը նայի»:

Եւ նա մեկնեց պարանոցը և քրտնքի կաթիլները նրա ճակատից ընկան աւազի վրայ. նա մի վերջուկ բարձրացաւ և կրկին վայր ընկաւ. Ես բացականչեցի՝ «Ա՛հ, նա չափից դուրս թոյլ է. նա չէ կարողանում ման գալ, երկար ու ձիգ տարիները խլել են նրանից բոլոր ոյժը. նա երբեք չէ շարժուելու»:

Մօտիս կանգնածը ասաց ինձ՝ «Նայիր, որպիսի լոյս է երևում նրա աչքերում»:

Եւ հազիւ հազ այդ էակը շարժուեց ու վերջապէս չոքեց և ես արթնացայ:

Շուրջս, հեռու տարածւում էր չորացած թփերով պատած մերկ գետինը. կարմիր աւազի վրայ մըջիւնները յետ ու առաջ էին սողում, և անտանելի շոգ էր կանգնած: Ես նայեցի երկընթիքի վրայ, ձգուեցի և սկսեցի մտածել տեսած երազիս մասին: Եւ կէսօրուայ այրող տօթի ազդեցութեան տակ ես կրկին գըլուխս խոնարհեցրի թամբի վրայ ու քնեցի և մի ուրիշ երազ տեսայ:

Ես տեսայ մի անապատ և մի կին այդ անապատում: Նա հեռուից մօտենում էր և ուղեւորւում էր գէպի մի մութ գետի ափը. իսկ ափը կնճուտ էր և բարձր, և այդ ափի վրայ նա հանդիպեց երկայն ու սպիտակ մօրուքով մի ծերունու Սա ձեռքին փայտ ունէր, որի վրայ գրած էր «Խեղաչիութիւն». և ծերունին հարցրեց կնոջը՝ ինչո՞ւ համար է նա եկել: Նա պատասխանեց՝ «Ես կին եմ և աղատութեան երկիրն եմ որոնում»:

—Նա քո առջեւն է:

—Առջեւս ես ոչինչ չեմ տեսնում բացի մի մութը վաղող գետից, որի ափը բարձր է ու դիք, և ծանր աւազը միշտ թափւում է:

—Իսկ աւելի՞ հեռու.

—Ես ոչինչ չեմ տեսնում, երբեմն միայն, երբ ձեռքովս աչքերս պատապարում եմ, միւս հեռաւոր ափի վրայ ես կարծես նշմարում եմ ծառեր, բլուրներ և նրանց վրայ փայլուն արև:

—Դա է աղատութեան երկիրը:

— Ինչպէս կարող դժ ես հասնել նրան:

— Դէպի այդ երկիրը միմիայն մի ուղի կայ՝ դա, դէպի ներքև դիք, նեղ շաւիղն է, աշխատութեան քարերով պատած և տանջանքների ջրերով ողողուած: Ուրիշ ճանապարհ չկայ:

— Իսկ կամուրջ չը կայ այնտեղ:

— Ո՛չ:

— Զուրը խո՞ր է:

— Խո՞ր է:

— Իսկ յատակը հո՞րթ է:

— Հարթ, ոտդ հինգ անգամ կ'սլքուի և գուցէ ոչնչանաս:

— Անցե՛լ է արդէն մինը այն կողմը:

— Մի քանիսները փորձել են:

— Կայ արդեօք մի որ և է հետք, որտեղ աւելի յարմար կարելի լինի անցնել գետանցքով:

— Այդպիսի հետք ոչ ոք չէ թողել:

Կինը ձեռքով պատսպարեց աչքերը և ասաց՝ «Գնալու եմ»:

Բայց ծերունին կանգնեցրեց նրան՝ «Ուրեմն դու պէտք է ձգես այդ շորերը, որ հագիդ ունէիր անապատում, որովհետև այդ շորերը ջրում քեզ դէպի յատակ կը քաշեն»:

Եւ կինը ուրախութեամբ յետ ձգեց արմատացած նախնեաց կարծիքների վերարկուն, բոլորովին հնացած և ծակծկոտած, բացեց գոտին, որով այդքան երկար նա իրան զարդարում էր և ծերունին շարունակեց՝ «Դէն ձգիր ոտներիցդ ստորադրութեան կօշիկներդ»: Եւ կինը կանգնած էր համարեա մերկ, միայն ճերմակ, թեթեւ կտաւ էր ծածկում նրան:

— Այդ շորը դու կարող ես թողնել վրադ՝ ազատութեան երկրում բոլորն էլ այդպէս են ման գալիս: Դա չէ ծանրանում ջրի մէջ, միշտ բարձր է մնում ջրի մակերեւոյթի վրայ:

Եւ ես տեսայ որ այդ շորի վրայ, կուրծքի դիմաց, գրուած էր՝ «Ծշմարտութիւն», — նա ճերմակ էր, արեւը յաճախ չէր լուսաւորում նրան, վերեւի շորերը ծածկում էին նրան:

Եւ ծերունին ասաց կնոջը՝ «Վերցրու այս ցուպը և պինդ պահիր, այն օր, երբ դա դուրս կ'ընկնի ձեռքիցդ, դու կորչելու ես. առաջդ պահիր նրան և շօշափիր ուղին, և որտեղ գաւազանը չը հասնի յատակին, ոտ չը դնես»:

Եւ կինը ասաց՝ «Ես պարտաւոր եմ ճանապարհուելու»:

Բայց ծերունին կանգնեցրեց նրան՝ «Ո՛չ, սպասի՛ր, այդ լինչ է կրծքիդ վրայ»:

— Նա լուռ էր:

— Բայ արա, և թոյլ տուր տեսնեմ:

Եւ երբ կինը բաց արեց կուրծքը, ես տեսայ նրա կրծքի մօտ մի փոքրիկ արարած, սեղմուած նրան. ոսկեթել մազերը խճճուած էին նրա գլխի վրայ, ծնկները չոքած ունէր և սեղմուած կնոջը, իսկ փոքրիկ ձեռքերը պինդ բռնում էին կնոջ կրծքից:

Եւ խելացիութիւնը հարցրեց՝ «Ո՞վ է դա և ի՞նչ է այստեղ չինում»:

—Նայիր նրա թեւերին,—պատասխանեց կինը:

—Կրծքիցդ հեռացրու նրան:

—Նա քնել է և ծիծ է ուտում. նա դեռ երեխայ է: Ես երկար-երկար փայփայել եմ նրան: Ազատութեան երկրում նա տղամարդ կը դառնայ: Մեռք ձեռք ձեռքի տուած ման կը զահը նրա հետ և նա ինձ իր մեծ սպիտակ թեւերով կը պահպանի: Անապատում նա միմիայն մի խօսք՝ «Կիրք» էր փսփսում ականջիս. ես երազում էի, թէ ազատութեան երկրում դուցէ նա սովորի արտասանել «Լ՛նկերութիւն» բառը:

—Յաճացրու դրան:

—Ես նրան ահա այսպէս մի ձեռքումս կը տանեմ, իսկ միւս ձեռքով ջուրը կը ձեղքեմ:

—Իջեցրու նրան գետին: Երբ դու ջրում կը լինես, դու կը մոռանաս, թէ քեզ մարտնչել է հարկաւոր և կը մտածես միայն դրա մասին. վայր դիր գետնին. դա մեռնելու չէ: Երբ նա կը զգայ, որ դու թողել ես նրան մենակ, նա թեւերը բաց կը թողնի և կը սաւառնի. դա քեզանից առաջ կը լինի ազատութեան երկրում, գիտես, որ նրանց այն ափից օգնութեան մատուցանող առաջին ձեռքը, սիրոյ ձեռքն է: Այն ժամանակ դա տղամարդ կը լինի, և ոչ մանուկ. կրծքիդ տակ դա չէր կարող զարգանալ. իջեցրու որ կարողանայ մեծանալ:

Եւ կինը հեռացրեց նրան իր կրծքից և նա կնոջ այնպէս կծեց, որ արիւն կաթեց գետնի վրայ: Կինը վայր դրեց նրան ու ծածկեց վէրքը: Յետոյ կռացաւ և փայփայեց նրա թեւիկներն: Եւ ես նկատեցի, ինչպէս կնոջ ճակատի մազերը ձիւնի նման սպիտակացան և նա դարձաւ պառաւ կին: Նա կանգնած էր ուղիղ ջրի ափին և բացականչեց՝ «Ինչու համար եմ ես գնում այդ հեռաւոր երկիրը, որին դեռ ոչ ոք չէ հասել երբէք: Օ՛հ, ինչպէս միայնակ եմ ես, անսահման մենակ»:

Ինչ «Բանականութիւնը», ասաց այդ ալեւոր ծերուկը կնոջ՝ «Շշ... լսելի՛ է քեզ մի որ և է ձայն»:

Կինը ուշադրութեամբ լարեց իր լսողութիւնը և ասաց՝ —Այո, ես լսում եմ հազար և բիւրաւոր ոտներէ ձայներ, նըրանք դուրս եկան ճանապարհը:

—Այդ նրանց ձայներն են, որոնք հետեւում են քեզ, առաջ գնա. հետք բաց արա դէպի ջրի ծայրը, այդտեղ, ուր դու կանգնած ես այժմ, ուղիւն կը հարթանայ հազար և հարիւր հազարների ոտերից»:

Եւ ծնրունին շարունակում էր՝ «Տեսել ես արդեօք ինչպէս մորկիւք անցնում է հեղեղատն. առաջ մէկը իջնում է ջուրը և ջրի հոսանքը տանում է նրան, նրա յետեւից գնում է միւսը, յետոյ երրորդը, չորրորդը և այլն, և վերջապէս կուտակուած մարմինների զանգուածից կազմւում է կամուրջ, որով անցնում են բոլոր մնացածները»:

—Իսկ առաջաւորները, որոնց տանում է ջրի հոսանքը և որոնք անյայտ, յաւիտեան կորչում են, նրանց մարմինները չեն ծառայում մինչև անգամ իբրեւ կամուրջ ուրիշներին անցնելու համար...

—Եւ հոսանքը տանում է և անյայտ կորչում են, բայց դրանից ի՞նչ հետեւանք է լինում:

—Ի՞նչ է լինում, ասաց կի՛նը:

—Նրանք պատրաստում են շաւիղ դէպի ջրի ծայրը:

—«Պատրաստում են շաւիղ դէպի ջրի ծայրը» կրկնեց կի՛նը, իսկ մեր մարմիններից պատրաստած կամուրջով ո՞վ է անցնելու:

—Ամբողջ մարդկային սերունդը:

Եւ կի՛նը վերցրեց ցուպը և առաջ քայլեց:

Եւ ես տեսայ՝ ինչպէս նա իջաւ զառիվայր ափով դէպի մութ գետը:

Եւ ես զարթնեցի. իմ շուրջս բոլորը պատած էր մայր մտնող արևի դեղին լուսով, և սպիտակագոյն թփերի ճիւղերը մատների նման ցցուած շողշողում էին լոյսից. Զիս հանգիստ կողքիս արածում էր. ես շուռ եկայ կողքիս և սկսեցի մըջիւններին դիտել, որոնք բիւրաւոր քանակութեամբ կարմիր աւաղի վրայ շրջում էին, և ես մտածեցի, որ ինձ ժամանակ է արդէն ճանապարհ ընկնելու. սկսում էր ցրտել. Բայց ծանր նինջը նորից անդամներս կապեց, գլուխս ծանրացաւ և ես կրկին քնեցի: Եւ կրկին երազ տեսայ:

Ինձ թւում էր, թէ ես տեսնում եմ մի աշխարհ և նրա բլուրներով ման են գալիս ձեռք ձեռքի տուած ազատ և բախտաւոր կանայք և տղամարդիկ: Եւ նրանք նայում էին միմեանց աչքերին, ուր չէր երեւում երկիւղ, և ես տեսայ, որ կանայք նոյնպէս իրար ձեռներից էին բռնած: Եւ ես հարցրեցի մօտիս կանգնածից՝ «Այս ի՞նչ աշխարհ է»:

Նա պատասխանեց՝ «Սա է ազատութեան աշխարհը»: Ես

հարցրեցի՝ «Ո՞ւր է, որտեղ է»։ Նա պատասխանեց՝ «Երկրի վրայ»։ Ես հարցրեցի՝ «Ե՞րբ կը համենն նրան մարդիկ»։ Նա ասաց՝ «Ապագայում»։

Եւ երբ ես արթնացայ, ես տեսայ շուրջս բոլորը լուսաւորուած իրիկնադէմի լոյսով։ Յաճր բլուրների վրայ կանգնած էր մայր մտնող արեւը, մրջինները դանդաղ սոււն էին քաշոււմ. սքանչելի զովութիւն տարածուեց օդի մէջ։ Ես մօտեցայ ձիուս, որ հանգիստ կանգնած արածոււմ էր։ Եւ արեւը մայր մտաւ հեռաւոր բլուրների յետեւ, բայց ես գիտէի, որ վաղը նա կրկին ծագելու է։

Թարգ. Յ. Տ.-Դ.

Ժ Ա Ռ Ա Ն Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Նիկիթիմից)

Հայրըս չը թողեց
Ինձ ժառանգութիւն—
Քարաշէն տըներ,
Փող, հարստութիւն.

Հօրիցս ինձ մընաց
Գանձ ժառանգական—
Կըտրիճի հողի
Եւ կամք յաղթական:

Միշտ ուրախ, զուարթ
Իմ բընոյթ, իմ բարբ.
Հարուստ եմ—անփող,
Հըպարտ եմ—անյարգ.

Թշնամուս առաջ
Կանգնում կրճքաբաց,
Ժըպտում եմ կըռում
Փոթորկի դիմաց:

Լաւ օր թէ վատ օր—
Երկունն էլ սիրում,
Ինձ արար—աշխարհ
Դըրախտ է թըւում...

Թարգ. ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԴԺՆԱՇՈՒՆԶ ԿԵԱՆՔԻ...

(Նիկիթինից)

Դըժնաշունչ կեանքի խստութեան սովոր,
Անդորր հոգով եմ իմ խաչը կըրում:
Եւ չեմ աղերսում ես երկնից մի նոր,
Վարդազարդ ուղի իմ աղօթքներում:

Ինքնահաճ խելքըս գըտնում է գաղտուկ
Յաճախ սփոփանք և՛ մաշիչ վըշտում:
Այդպէս և ծովի հառաչքն ու աղմուկ
Յաճախ հիացք են մեզ վերայ ազդում:

Սովոր եմ կըռուին անհամբոյր կեանքի,
Սովոր—փոթորկին անվերջ դառնութեան,
Փոթորիկն է միշտ աղբիւր վեհ մըտքի,
Աղբիւր—արցունքի, ոգեւորութեան...

Թարգ. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Դ Է Պ Ի Մ Ո Ւ Թ Հ Ե Ռ Ո Ւ Ն...

(Լ. Անդրեկից *)

Արդէն չորս շաբաթ էր նա բնակւում տան մէջ,—և չորս շաբաթ տան մէջ թագաւորում էր երկիւղ և անհանդստութիւն։ Ամենքը աշխատում էին խօսել և գործել այնպէս, ինչպէս միշտ էին գործում ու խօսում, և չէին նկատում, որ իրանց խօսակցութիւնը աւելի խուլ էր հնչում, որ իրանց աչքերը մեղաւոր ու երկիւղով էին նայում ու մերթ պտոյտ էին անում դէպի այն կողմը, որտեղ պատրաստուած էր սննեակ նրա համար։ Տան միւս, հակառակ ծայրում քայլում էին անբնական պինդ և նոյնպէս անբնական բարձր էին ծիծաղում, բայց երբ որ դէպք էր պատահում անցնել սպիտակ զոնների մօտից, ամբողջ օր ներսից փակուած էին և այնպէս խուլ, կարծես յետևից կենդանութեան նշոյլ չը լինէր, նրանք մեղմացնում էին քայլերը և նրանց ամբողջ մարմինը մի կողմն էր թեքւում, կարծես սպասում էր մի որ և է հարուածի։ Եւ թէպէտ անցնողները ոտի ամբողջ թաթով էին չվւում յատակին, բայց նրանց քայլը աւելի թեթեւ և աւելի անձայն էր, քան եթէ նրանք ոտների ծայրերի վրայ անցնելիս լինէին։ Եւ ոչ ոք նրան չէր կանչում իր անունով, այլ հասարակ—խօսքով «նա» և որովհետև ամենքն էլ ամեն բոլորէ մտածում էին նրա մասին, այդ անորոշ կոչն աւելի պարզ էր երևում, քան նրա անունը, և առիթ չէր տալիս կրկին հարցնելու։ Մի տեսակ կարծես անպատկառ էր և մտերմական կանչել նրան այնպէս, ինչպէս ուրիշներին. իսկ «նա» խօսքը ուղիղ և կտրուկ արտայայտում էր այն վախը, որ նրա բարձր ու մօայլ կերպարանքը ներշնչում էր։ Միմիայն պառաւ նանին, որ բնակւում էր վերևի

*) Լ. Անդրեկիւ վերջին հինգ տարուայ ընթացքում երեան եկած ռուս նոր տաղանդաւոր գրողներից է։ Նա իր պատմութիւնները նուիրում է Մ. Գօրկուն։ Իր պատմութիւններում նա շօշափում է ռուսաց կեանքի այսպէս կոչուած «անիծեալ խնդիրները»։

յարկում, անուանում էր նրան Կօլեա, բայց նա էլ զգում էր լարուած զրութիւն երկիւղից և ամբողջ տունը թափանցող մի դժբախտութեան սպասողութիւնից, և շուտ շուտ լաց էր լինում։ Մի անգամ նանին հարցրեց աղախին Կատեայից, թէ ինչու օրիորդը չէ նուագում պիանայի վրայ այսօր, բայց Կատեան զարմացած նայեց նրա վրայ և պատասխան չը տուեց, ու հեռանալով գլուխը շարժեց, կարծես, նոյն իսկ հարցը հաւանե-
լիս չը լինէր։

Նկաւ նա նոյեմբերի մի մոխրագոյն կէսօրին, երբ ամենքը տանն էին ու նստած էին թէյի. միայն Պետեան արդէն վաղուց գնացած էր գիմնազիա։ Դուրսը ցուրտ էր և քաշ եկած թանձր ամպերը անձրև էին մաղում, այնպէս որ, չը նայած մեծ լուսա-
մուտներին, բարձր սենեակներում մութ էր, իսկ մի քանիսնե-
րում մինչև անգամ ճրագ էր վառուած։ Նրա տուած զանգը կտրուկ էր ու տիրապետող, և ինքը՝ Ալեքսանդր Անտօնովիչը ցնցուեց. նա կարծեց, թէ եկել է նշանաւոր այցելուներից մէկը և հանդարտ առաջ գնաց հանդիպելու, իր թուխ և լուռը երե-
սին շինելով փայփայող ժպիտ։ Բայց այդ ժպիտը իսկոյն թռաւ, երբ կիսամութ նախասենեակում նա տեսաւ աղքատ ու կեղտոտ հագնուած մի մարդու, որի առաջ շփոթուած կանգնած էր ա-
ղախինը ու երկչոտ ձևով փակում էր ճանապարհը նրա առաջ։ Երեւի երկաթուղու կայարանից նա եկել էր ոտով ու տեղ տեղ միայն ձիաքարշով, որովհետև նրա կարճ մաշուած վերարկուն թաց էր, իսկ վարտիկը ներքև ցխոտուած էր և ճիւղել էր ջրից ու ցեխից։ Նրա ձայնը խապոտ և կոպիտ էր, կամ մրսելուց և խոնաւութիւնից, կամ թէ երկար լուծիւն պահելուց օրօրուող երկաթուղում։

—«Ի՞նչ էք լուի, Տանն է, հարցնում եմ ձեզնից, Ալեք-
սանդր Անտօնովիչ Բարսուկովը», կրկնեց իր հարցը ներս մտնողը։ Բայց ձայն չարձակեց Ալեքսանդր Անտօնովիչը։ Չը մտնելով նախասենեակ, նա կիսապտոյտ նայեց մարդու վրայ, համարեց նրան անթիւ խնդրողներից մինը ու խստութեամբ ասաց՝—«Բեղ լի՛նչ է այստեղ հարկաւոր»։

—«Չը ճանաչեցիր, հայր», քիչ հեգնական, բայց դողը ձայնում, հարցրեց մանողը.—«ես իսկ Նիկողայոսն եմ, հօրս անունով Ալեքսանդրովիչ»։

—«Ի՞նչ... Նիկողայոս»—մի քայլ յետ քաշուեց Ալեքսանդր Անտօնովիչը. բայց հարցնելիս նա արդէն գիտէր, թէ ինչ Նիկո-
ղայոսն էր կանգնած առջև։ Աղայութիւնը թռաւ նրա երեսից և երեսը դարձաւ գունաւոր սարսափելի պառաւային մահաճաճ
գունատութեամբ, և ձևքերը բարձրացած կրծքին, որտեղից

յանկարծ դուրս եկաւ բոլոր օդը: Հետեւեալ բռնն ձգտումով զոյգ ձեռները գրկեցին Նիկողայոսին, ու ճերմակ փայփայած մօրուքը կպաւ, սկ թաց, փոքրիկ մօրուքին և համբուրելու սովորութիւնից յետ սովորած ծերացած շրթունքները որոնում էին երիտասարդ թարմ շրթունքներ և անյադ ագահութեամբ սեղմում էին նրանց:

—«Սպասիր, հայր, թոյլ տուր շորերս հանեմ», մեղմ ասում էր Նիկողայոսը:

—«Ներեցիր, ներեցիր, դողդողում էր ամբողջ մարմնով Ա. Ա.-չը:

—«Է՛հ, այդ ինչ յիմարութիւն է՛. խիստ ու կամաց ասաց Նիկողայոսը, յետ քաշելով հօրը—«էլ ի՞նչ ներում»:

Երբ որ նրանք մտնում էին սեղանատունը, Ա. Ա.-չը ամաչեց իր բռնկումից, որին նրա բարի սիրտը այնքան անզրպելի ոյժով անձնատուր եղաւ: Բայց տեսութեան ուրախութիւնը թէպէտ թունաւորուած եռում էր նրա կրծքի մէջ և ելք էր որոնում, և որդու պատկերը, որ ամբողջ եօթը տարուայ ընթացքում ով դիտէ որտեղ էր թափառել, հօր քայլուածքը դարձնում էր արագ և երիտասարդ ու չարժուածքները բռնն և ոչ ծանրաբարոյ: Եւ նա սրտանց ծիծաղեց, երբ Ն.-սը կանգնեց քրոջ առաջ և սրորելով իր սառած ձեռները, հարցրեց.

—«Իսկ այս օրիորդ—քոյրիկս է հօ»:

—Նինօչկան, 17 տարեկան օրիորդը, գունատ և նիհար, իր տեղում կանգնած էր, ու երկչոտ խաղում էր մատներով սեղանի վրայ, նետելով եղբօր վրայ իր մեծ վախեցած աչքերը: Նա հասկացաւ, որ դա Նիկողայոսն է, որին նա աւելի էր յիշում, քան ինքը հայրը, և ինչ անել հիմա, չէր իմանում: Եւ երբ Ն.-սը, համբոյրի տեղ սեղմեց նրա ձեռքը, նա պատասխանեց ամուր սեղմելով և քիչ էր մնում որ բեկերանա անէր նրա ըստ ինստիտուտի սովորութեան:

—«Իսկ սա պ. ուսանող է, Անդրէյ Եգօրիչ—Պեդեայի վարժապետն է»—ծանօթացնում էր Ա. Ա.-չը:

—«Պեթկա —գարմաղաւ Նիկողայոսը—նա արդէն սովորում է, հիանալի է»:

—Յետոյ նրան ծանօթացրին մի սուր դէմքով կնոջ հետ, որը թէյ էր ածում և որին ամենքը անուանում էին Աննա Իվանովնա, և ապա բոլորն էլ ագահութեամբ սկսեցին գննել Նիկողայոսին, մինչև որ նա իր կողմից սենեակն էր դիտում, ուղղում իմանալ, արդեօք բոլորը այնպէս է, ինչպէս 7 տարի առաջ: Նիկողայոսի մէջ կար մի ինչ որ տարօրինակութիւն, որ որոշման չէր ենթարկուում: Բարձր հասակով, գլխի հսկարտ

շարժումով, սե աչքերի ներս թափանցող հայեադքով դուրս ընկած ուր յօնքերի տակից նա յիշեցնում էր ջահիլ արծիւին: Վայրենութիւն և ազատութիւն էր փչում նրա քմահաճօրէն ցիր ու ցան եղած մազերից, ձանկերը դուրս հանող դիշատիչ կենդանու վայելելութեամբ չնչում էին նրա բոլոր վառվռուն շարժումաձեւերը համողումած, թեթեւ, անաղմկալի, և ձեռները առանց տատանուելու դանում և վերցնում էին այն, ինչ որ հարկաւոր էր նրանց: Կարծես չը հասկանալով իր դրութեան անյարմարութիւնը, նա ամեն մէկի աչքերում նայում էր խոր և հանդարտ, բայց նոյն իսկ այն ըռպէին, երբ նրա հայեադքը փայփայիչ էր, նրա մէջ նկատուում էր ինչ որ գաղտնի ու երկիւղալի բան, ինչ տեսնուում է միշտ փաղաքշող գիշատիչի աչքերում:

Եւ խօսում էր նա հրամայողական ձեւով ու հասարակ, ինչպէս երեւում էր չը խորհելով իր խօսքերի մասին, կարծես դրանք սխալական, մարդկային բանականութեան ակամայ ստող ձայներ չը լինէին, այլ անմիջապէս ինքը միտքն էր ձայն բարձրացնում: Զղջումի զգացմունքը չէր կարող տեղ ունենալ այդպիսի մարդու սրտում:

Բայց եթէ դա արծիւ էր, նրա փետուրները շատ սաստիկ էին տրորուած կռուի մէջ, որից նա դուրս էր եկել բոլորովին ոչ իրեւ յաղթող. դրա մասին խօսում էին նրա չորերը, որ կրում էին իրանց վրայ դիշերելու հետքեր, կեղտոտ էին ու մարմնի կազմուածքին անհամապատասխան. և կար այդ չորերի մէջ մի ինչ որ անըմբռնելի գիշատիչ, չփոթ բան, որ բոլոր լաւ հագնուած մարդկանց զգայնել էր տալիս երկիւղի երկչոտ զգացմունք: Եւ ըռպէներով ամբողջ նրա ուժեղ և գեղեցիկ կազմուածքով տարօրինակ սարսափի ակնթարթային սարսուռ էր անցնում. այդ ժամանակ ամբողջ մարմինը կարծես նսեմանում էր և կարծես ծոծրակի վրայ մազերը բարձրանում էին, ինչպէս որ ցից ցից են դառնում կենդանու վրայ: Եւ աչքերը արագ ու չար շրջում էին բոլոր ներկայ եղողների վրայ: Խմում էր և ուտում էր նա ագահութեամբ, ինչպէս մի մարդ, որին պատահելիս է եղել երկար քաղցած լինել կամ որը միշտ անխորժակից պակաս է ուտում և այդ պատճառով պատրաստ է ամեն ըռպէ ուտել և այն ամենը, ինչ որ սեղանի վրայ դրուած է: Վերջացնելով նա ասաց. «Երեւելի է»—և մի քիչ հեգնաբար ձեռքը քսեց փորին: Մերժելով հօր սիգարը, նա վերցրեց ուսանողից պապիրոսը—նա ինքը նոյն իսկ պապիրոս չունէր—և հրամայեց—պատմեցէք:

Պատմել սկսեց Նինօչկան այն բանի մասին, թէ ինչպէս

էր աւարտել ինստիտուտը, և ինչպիսի կեանք էր վարել նա այնտեղ: Առաջ նա երկչոտ էր, բայց յետոյ, որովհետև նա պատմում էր այն, ինչի մասին մի քանի անգամ ուրիշներին պատմել էր, նա հեշտութեամբ մտաբերեց բոլոր սրամիտ խօսքերը և շատ գոհ էր իրանից: Նիկողայոսը լսում էր թէ չէր լսում, անորոշ էր, նա ծիծաղում էր, բայց ոչ միշտ այն տեղերում, որտեղ սրամիտ խօսքեր կային, և բոլոր ժամանակ սենեակին էր դիտում իր դուռն ընկած աչքերով: Մերթ նա խանդարում էր խօսակցութիւնը անտեղի հարցերով՝ «Ի՞նչ ես տուել պատկերին—հարցրեց նա լուռ և մի քիչ հեգնական ժպտող հօրը»:

—Ձեռք յիշում:

—Երկու հազար—յարգանքով դէպի փողը ձայն տուեց մինչև այժմն լուռ Աննա Իվանովնան և վախենալով նայեց Ալեքսանդր Անտօնովիչի վրայ:

Եւ երկուսն էլ ժպտացին—հայրը և Նիկողայոսը, և ժպտի մէջ մի ինչ որ թշնամական բան սլլաց: Հիմա Ալ. Ան-իչն էլ չէր շփոթւում և այդ պատճառով նա դարձաւ խիստ և ծանրաբարոյ:

—Գործերը ինչպէս են.—նոյնպէս կարճ հարցրեց Ն-սը հօրը:

—Ոչինչ, գնում են:

—Նոր տուն են գնել Իտալական փողոցի վրայ, եռյարկանի և մի գործարան էլ է գնել,—համարեա չշուկով արտասանեց Աննա Իվանովնան: Նա վախենում էր Ալ. Անտօնովիչից, բայց չը կարողացաւ զսպել իրան, որովհետև միշտ զբաղւած էր այն բանով, որ համեմատում էր խնայողական գրամարկզում իր ունեցած փողը—556 ռ., պ. Բարսուկովի գրամագլխի հետ, որ ունէր տներ, գործարաններ և արժէթղթեր:

—Դէհ, Նինօչկա, չարունակիր,—ասաց Նիկողայոսը:

Բայց Նինօչկան արդէն վաղուց ձանձրացել էր. կրկին նրա կողքը ծակեց և նա նստած էր նիհար, դռնատ, համարեա թափանցիկ, բայց թառամել սկսող ծաղկի նման տարօրինակօրէն գեղեցիկ և արտառուչ: Եւ բուրում էր նրանից մի ինչ որ օտարոտի անուշահոտութիւն, որ յիշեցնում էր դեղնող աշունը և գեղեցիկ մահադուռը: Ամօթխած, չկշռտ ուսանողը ուշադրութեամբ դիտում էր նրա յետուից և նոյնպէս, կարծես, գունդատւում էր այն ժամանակ, երբ գոյնը թռչում էր Նինօչկայի երևօսից: Նա բժիշկ ուսանող էր: Նա սիրում էր Նինօչկային առաջի սիրով:

Բայց այստեղ ներկայացաւ ֆենսդեն Իվանովիչը: Ըներ

սպասաւորը: Նրա դէմքը դռներից դուրս ցցուեց ինչպէս նոր ծագող արև և նոյնպէս լալն, կարմիր ու անմազ: Նա բաղանիքումն էր, բաղանիքից յետոյ քիչ կոնծել էր, և տուն դալով իմացել էր աղախնից այն որդու գալու մասին, որի հետ երբեմն ձի էր խաղացել: Օղիից թէ ուրախութիւնից քիչ լալ լինելով նա հագաւ մի կերպ իր ֆրակը, օծեց իր անմաղ գլուխը անուշահոտութեամբ, ինչպէս այդ անում էր իր աղան և ծանր ծանր գնաց սեղանատունը: Դռան յետև մի քիչ կանգ առաւ նա և հանդիսաւոր ուռնցնելով իր թշերը, ինչպէս որ նահանգապետի գալու ժամանակն էր անում, նա ներկայացաւ Նիկողայոսին:

—Ֆենօգենկա,—ուրախ բացականչեց Ն-սը, և նրա ձայնը հնչեց ինչպէս երեխայի ձայն:

—Փոքրիկ աղան, ճիշդ արձակեց Ֆինօգենը և վայր ձգելով աթոռները, վազեց դէպի Ն-սը:

Նա առաջ ուզում էր համբուրել նրա ուսը, բայց որովհետև Ն-սը դրա տեղ, սեղմեց նրա ձեռքը, ֆենօգենը ծանր յետ քաշուեց և պատասխանեց ամուր սեղմումով: Նա թոյլ էր տալիս իրան մտածել թէ ինքը-ծառայ չէ, այլ Նիկողայոսի ընկեր—բարեկամ և ուրախ էր հրապարակական խոստովանութեան համար նրա այդ առաւելութեան մէջ: Բայց համբուրել անուամենայնիւ հարկաւոր էր:

—Եւ նոյն իսկ հարբած է—զգալով օղիի հոտը ասաց ուրախութեամբ Նիկողայոսը, զարմանալով ֆենօգենի սովորութիւնների հաստատութեան:

—Միթէ,—խստութեամբ արտասանեց Ալեքսանդր Անտօնօվիչը:

Բացասական ձևով չարժեքով գլուխը, Ֆ-նը քաղաքավարի յետ էր քաշում առանց շուռ գալու և աչքերը չռում էր իմանալու համար թէ ուր է դուռը, բայց այնուամենայնիւ նախ նա դիպաւ պատին և յետոյ ձեռքով ուղղուելով հասաւ դռանը: Այս բոլորը բաւական երկար ժամանակ խլեց: Նախասենեակում Ֆ-նը կանգ առաւ, քնքշութեամբ նայեց ձեռքին, որ սեղմել էր Ն-սը, և տանելով ձեռը իրանից առաջ ինչպէս մի տեսակ բոլորովին տարբեր դիւրաբեկ ու թանկագին բան, անցաւ ծառաների սենեակ: Առհասարակ նա իրան յարգում էր, բայց այդ բոլորին իր մարմնի ամենապատուելի մասն էր աջ ձեռքը:

Այդ օր Ալեքսանդր Անտօնօվիչը չը գնաց ծառայութեան և ճաշից յետոյ, երբ խմել էր բաւական շատ գինի, փափուկ և պարզ տրամադրութեան մէջն էր գտնուում: Գրկելով Նիկողայոս-

սին նա տարաւ նրան գրադարան, ծխեց սիգար և պատրաստուելով կրկար լսելու բարեսրտութեամբ ասաց.

—Ապա հիմա պատմիր, ուր էիր, ինչ էիր շինում:

Նիկողայոսը պատասխանեց ոչ իսկոյն: Նրա մարմնով կրկին անցաւ նոյն վախի օտարոտի սարսուռը ու աչքերը ուղղուեցին դէպի դռները, բայց ձայնը հանդիստ և լուրջ էր մնում:

—Ոչ, հայր, ես խնդրում եմ քեզ թողնել խօսակցութիւնը իմ արկածների մասին:

—Ես տեսայ մօտիկ արտասահմանում պատրաստուած մի քսակ. դու կզել քս արտասահմանում:

—Եղել եմ—կարճ պատասխանեց Ն-սը,—բայց բաւական է, հայր:

Ալեքսանդր Անտօնովիչը յօնքերը կիտեց և կահաւորակից վեր կացաւ: Ձեռքերը ծալելով մէջքին, սիւրտիւկի տակ, հայրը անցաւ սենեակով ու չը նայելով որդու վրայ, հարցրեց.

—Դու էլի մի եւ նոյնն ես:

—Ինչպէս տեսնում ես, իսկ դձու, հայր:—Ինչպէս տեսնում ես. գնա ես պէտք է պարապեմ:

Նրբ որ Նիկողայոսը դուրս գնաց, Ալեքսանդր Անտօնովիչը բանալիքով փակեց նրա յետեւից դուռը, յետ նայեց և մօտենալով բռնաբռն լուռ, բայց ուժեղ խիեց սպիտակ փայլող աղիւսին. յետոյ սրբեց թաշկինակով ձեռքը, որին կպել էր սպիտակ կաւի կտոր, և սկսեց պարապել: Եւ կրկին նրա երեսը ծածկուեց այն սարսափելի գունատութեամբ, որ յիշեցնում էր մահը:

Ոչ ոք չը տեսաւ Նիկողայոսին մեծ մօր հետ տեսնուելիս, բայց Ն-սը դուրս եկաւ մօր սենեակից թախիծով լի և կարծես մի քիչ վրդովուած: Եւ բոպէաբար ամենքը զգացին թեթեւութիւն, երբ Ն-սի յետեւ ծածկուեցին նրա սենեակի սպիտակ դռները, բայց այդ բոպէից նա էլ հիւր չէր և այդ բոպէից երեւան եկաւ այն տարօրինակ շփոթը, որ տարածուելով վարակեց ամբողջ տունը: Կարծես տունը մտաւ և մշտական տեղ բռնեց այնտեղ անթափանցելի, երկիւղալի մի մարդ որ աւելի օտար էր, քան փողոցի առաջին պատահած մարդը և աւելի սարսափելի քան թագնուած կողոպտիչը: Եւ միմիայն ֆենօպենը չէր զգացել այդ, որովհետեւ ուրախութիւնից էլի կոնծեց, և հիմա քնած էր խոհարարի անկողնում և քնած տեղը պահպանում էր ինքնապատուութեան ձեւը ամբողջովին ու աջ ձեռքը քիչ յետ էր քաշել:

Իսկ հիւրասնեակում Նինօչկան կամայողով պատմում էր ուսանողին, թէ ինչ էր պատահել 7 տարի առաջ: Այն ժամանակ Նիկողայոսը մի ինչ որ զէպքի համար դուրս էր վռնդուած Տելմնօլօգիական ինստիտուտից իր մի քանի բնկերների հետ, միայն հօր կապերն ազատել էին նրան մեծ պատժից: Տաք բացատրութեան ժամանակ զիւրազրգիւս Ալեքսադր Անտօնօվիչը խփել էր նրան, և նոյնիսկ արեկոյեան Նիկողայոսը թողել էր տունը, և վերադարձաւ միայն այսօր: Եւ արկումն էլ՝ պատմողը ու լսողը՝ զլուինները տատանում էին և ձայները ցածագնում, և ուսանողը Նինօչկային քաջալերելու համար վերցրեց նրա ձեռքը և փայփայում էր նրան:

II

Նիկողայոսը ոչ ոքին չէր խանգարում. ինքը քիչ էր խօսում և ուրիշներին լսում էր ոչ թէ ակամայ, այլ մի տեսակ գոռոզ անտարբերութեամբ, իբրեւ թէ առաջուց գիտէր, թէ ինչ կարող են նրան պատմել: Պատմութեան կիսում նա երբեմն դուրս էր գնում, և բոլոր ժամանակ նրա կրեսը այնպիսի արտայայտութիւն ունէր, կարծես նա ախանջ էր դնում մի ինչ որ հեռաւոր շատ վսեմ և իրան միայն լսելի բանի: Նա ոչ ոքին չէր ծաղրում և ոչ նախատում. բայց երբ դուրս էր գալիս գրադարանից, որտեղ անց էր կացնում օրուայ մեծ մասը և անուշադիր թափառում էր ամբողջ տան մէջ, մտնելով ծառաների սենեակը, քրոջ մօտ, ուսանողի մօտ—նա տարածում էր սառնութիւն բոլոր իր ճանապարհին—և մարդկանց մտածել էր տալիս այնպէս, իբրեւ թէ ահա այս բոլորի մի որ և է շատ վատ բան, նոյնիսկ ոճրագործութիւն են արել և նրանց դատի կ'ենթարկեն ու կը պատժեն: Հիմա, նա հագնուած էր շատ լաւ, բայց այդ նուրբ շորի մէջ նա չէր ձուլուել սենեակների շքեղ հարստութեան հետ, այլ կանգնած էր առանձին, ինչպէս մի ինչ որ օտարոտի և թշնամի բան: Եւ եթէ այդ բոլոր թանկադին իրերը կարող լինէին զգալ ու խօսել, նրանք կ'ասէին, թէ մկռնում են սարսափից, երբ որ Ն-սը մօտենում էր նրանց կամ վերցնում ձեռքին նրանցից մէկը և զիտում տարօրինակ հետաքրքրութեամբ: Նա երբեք ոչինչ չէր վայր ձգում և դնում էր իրերը այն տեղ, իսկ այն տեսակ, ինչ տեսակը իրը զաստուորուած էր, բայց կարծես նրա ձեռքի հպումը խլում էր գեղեցիկ պերճ արձանիկից նրա բոլոր արժողութիւնը և Նիկողայոսի հեռանալուց յետոյ նա կանգնած էր գատարկ և ամեն բանի անպէտք: Այդ իրի արուեստից ներշնչուած ոգին

հալուում էր Նիկողայոսի ձեռքերին և մնում էր միայն բրոնզի կամ կաւի անպէտք կտոր: Մի անգամ Ն-սը եկաւ Նինօչկայի մօտ նրա նկարչութեան դասի ժամանակ, երբ որ նա մեծ նմանութեամբ և լաւ արտանկարում էր մի պատկերից—ողորմութիւն ուզող աղքատի դէմք:

—Նկարիր, Նինա, ես խանդարելու չեմ քեզ,—ասաց Ն-սը, նստելով մօտը ցածր թախտի վրայ: Նինօչկան երկչոտ ժպտաց և մի առժամանակ շարունակում էր շարժել վրձինը, վերցնելով ոչ այն գոյները, որ հարկաւոր էին: Յետոյ թողեց և ասաց.

—Ես յոգնեցի, հաւատում ես:

—Այո, լաւ է. դու լաւ էլ նուազում ես,

Այդ սառը դովասանքից շուտ տպաւորուող Նինան ձանձրացաւ. նա քննադատաբար մի կողմ ծռելով գլուխը, դիտեց իր նկարը, հոգոյ քաշեց և ասաց. «Խնդճ աղքատ. ես այնքան խղճում եմ նրան, դու էլ ես խղճում.

—Հա, ես էլ:

—Ես մասնակցում եմ աղքատներին խնամող երկու ընկերութիւններին. սարսափելի շատ գործ կայ,—տաք-տաք վրայ բեկեց օրիորդը:

—Ի՞նչ էք դուք անում այնտեղ,—անտարբեր հարցրեց Ն-սը:

Նինօչկան սկսեց պատմել մանրամասնաբար, յետոյ աւելի կարճ, յետոյ բոլորովին կանգ առաւ: Ն-սը լուռ էր և թերթում էր ալբոմը, որտեղ Ն-չկայի ծանօթները գրում էին բանաստեղծութիւններ:

—Ես ուզում էի բարձր կուրսերը մտնել, բայց հայրս թոյլ չէ տալիս,—յանկարծ ասաց Նինօչկան, կարծես որոնելիս լինէր ճանապարհ դէպի եղբօր ուշադրութիւնը:

—Լաւ գործ է—և ի՞նչ:

—Թոյլ չէ տալիս հայրիկը, բայց ես կը համենմ ուզածիս:

Ն-սը հեռացաւ, իսկ Ն-չկայի կուրծքին տիրեց դատարկութիւն ու թախիժ: Նա դէն չպրտեց ալբոմը, տխուր նայեց սկսած նկարին, որ նրան թուած զգուելի և անպէտք քսուածք: Զիմանալով զսպել իր ձգտումները, Ն-ն վերցրեց վրձինը և խաչածն գլիժ քաշեց կտաւի վրայ կապոյտ գոյնով և աղքատի կէս գլուխը ջնջեց: Առաջի օրից, երբ Ն-սը սեղմեց նրա ձեռքը, նա սիրեց նրան, իսկ Նիկողայոսը ոչ մի անգամ չէր համբուրել նրան. եթէ նա համբուրէր, Նինօչկան բաց կ'անէր նրա առաջ իր ամբողջ փոքրիկ, բայց արդէն շատ ցաւ տեսած սիրտը, որտեղ մերթ երգում էին փոքրիկ ուրախ թռչնիկներ, մերթ սև ագռաւներ էին կոկոսում, ինչպէս գրում էր նա իր օ-

բաթերթի մէջ, Օրաթերթն էլ կը տար եղբօրը, իսկ նրա մէջ ամեն մի երեսի վրայ պատմում է, թէ ինչպէս նա ոչ անպէտք և անբախտ արարած է: Նիկողայոսը կարծում էր թէ քոյրը բաւականութիւն է զգում իր նկարչութիւնից էլ, երաժշտութիւնից էլ, աղքատախնամ ընկերութիւններից էլ, բայց սխալում էր: Նրան հարկաւոր չէր ոչ նկարչութիւն, ոչ երաժշտութիւն, ոչ աղքատախնամ ընկերութիւն:

Ծիծաղում էր Նիկողայոսը միայն ուսանողի դասատուութիւնների ժամանակ, և Պեթկան ասում էր նրան ծիծաղի համար. Նրա ներկայութեամբ Պեթկան դիտմամբ աւելի բարձր էր պահում իր ծնկները, այնպէս որ քիչ էր մնում վայր ընկնի աթոռի հետ մէջքի վրայ, արհամարհանքով պլշայնում էր աչքերը, մատը քթից չէր հեռացնում, թէպէտ շատ լաւ իմանում էր, որ այդ չը պէտք է անել: Նա ուսանողին սառնասիրտ ասում էր անտանելի յանդգնութիւններ. Բեպետիտօրի չեչոտ հրեան արիւնով էր լըցւում և քրտնում. նա քիչ էր մնում լաց լինէր և Պետիայի հեռանալուց յետոյ զանգատւում էր, թէ երեսխան բոլորովին չէ ուզում սովորել: «Ձեռ իմանում, ինչ է դուրս գալու նրանից.—ասում էր ուսանողը.—ահա հիմա աղախինն էլ էր դանգատւում ինձ թէ Պեթկան նրան սիրի՞ծ բաներ է ասում»:

—«Անպիտան կը դառնայ»—առանց նկատելի տխրութեան որոշեց Նիկողայոսը եղբօր ապագան:

—«Աշխատում ես, հոգիդ դուրս է գալիս, ջղերդ զրգոտւում ես, բայց լինչ օգուտ»։ քիչ էր մնում լաց լինէր ուսանողը, իր անարգութեան և ամօթի երկար շարքը մտաբերելիս, երբ նա ուզում էր գետինը մտնել կամ ծեծել աշակերտին:

—Թողէք:

—Իսկ ուտել պէտք է—յուսահատ բացականչեց Ալեքսէյ Եգօրովիչը:

—Դէհ, կերէք—ինչ որ մօտ են բերում:

Բայց ուսանողի հետ Նիկողայոսը չէր մտնում վիճաբանութիւնների մէջ, թէպէտ ուսանողը աշխատում էր, և Նիւնօկան և Ալեքսանդր Եգօրովիչը շուտ շուտ փորձեր էին անում վճռելու, թէ ինչ է ներկայայնում եղբայր Նիկողայոսը և հասնում էին այնպիսի ֆանտաստիկ պատկերների, որ երկուսին էլ ծիծաղելի էր դառնում: Բայց հեռանալով միմեանցից նրանք զարմանում էին իրանց ծիծաղի վրայ, և ամենաֆանտաստիկ ենթադրութիւններ անգամ թւում էր նրանց իսկական, ճշմարիտ, և միւս օրը երկուսն էլ ահով և բուռն հետաքրքրու-

Թեամբ սպասում էին Նիկողայոսի երևալուն, մտածելով, թէ այսօր իսկ կը վճռուի ձանձրալի խնդիրը:

Բայց Նիկողայոսը երևում էր, իսկ խնդիրը մնում էր նոյն-պէս հեռու վճռուելուց:

Մանսաւանդ գունաւոր և անհաւանական էին այն եղբայրութիւնները, որ անուամբ էին ծառաների սենեակում, և պատմողներին այնպէս առաջին տեղն էր բռնում Ֆենօգեն Իվանօվիչը: Երբ որ նա քիչ կոնծում էր նրանց երևակայութիւնը գործում էր անարգել և ստեղծում էր այնպիսի պատկերներ, որոնց առաջ նա ինքը կանգ էր առնում սարսափած և տարակուսուած:—«Նա—աւագակ է»—ասաց մի անգամ Ֆենօգեն Իվանօվիչը և նրա կարմիր երեսը սարսափից գունատուեց:

—Էլի ի՞նչ, աւագակ,—չը հաւատաց խոհարարը, բայց նոյն-պէս յետ նայեց դռան կողմը:

—Որ կողոպտում է միայն հարուստներին,—ուղղեց Ֆենօգեն Իվանօվիչը, երբեմն իմացած լինելով ինքը Նիկողայոսից դեռ երեխայութեան ժամանակ, որ լինում են այդպիսի աւագակներ:

—Ի՞նչ հարկաւորութիւն կայ կողոպտել, քանի որ հայրը անհամար փող ունի,—կասկածեց կառապանը, մի շատ հիմաւոր մարդ:—«Երեք գործարան, չորս տուն, ամեն օր ակցիաներ են կտրում»—փախսաց Աննա Իվանօվնան, որ հիմա դրամարկղում ունէր ուղիղ 560 ռուբլի, որովհետև 4 ռուբլին այս օրերս էր մոտրել Ֆենօգենի և նթագրութիւնը փուլ եկաւ: Աննա Իվանօվնան վնասուել էր Նիկողայոսի բոլոր իրերի մէջ և ոչինչ չէր գտել բացի սպիտակեղէնից, իսկ այդ հանգամանքը, որ ոչինչ չէր գտել բացի սպիտակեղէնից, ամենից շատ էր վախեցնում նրան և չփոթեցնում: Եթէ չհամոզանում զանուէր հրացան, փամփուշտ դանակներ և Նիկողայոսը իսկապէս աւագակ լինէր, կը լինէր ոչ այնքան սարսափելի, քան բոլորովին չը գիտենալ այն մարդու պարապմունքներն, որ այնքան նման չէ ուրիշներին երեսով և շարժուածքով, լսում է, բայց ինքը չէ խօսում ու նայում է բոլորի վրայ դահճի պէս: Երկիւղը մեծանում էր և անցնում անապաշտ սարսափի, որ սառն ալիքներով նման տարածում էր տան մէջ: Հստակ էր Նիկողայոսի մի կարճ խօսակցութիւնը հօր հետ, դա չը փարատեց աչք, այլ աւելի թանձրացրեց տարակուսանքի և հանելուկի թխալոս մթնոլորտը:

—Դու մի օր ասացիր, թէ ատում ես բոլոր մեր կեանքը, —ամեն մի խօսք առանձին չեղտելով, հարցնում էր հայրը,—դու հիմա էլ ասում ես մի և նոյնը:

Նոյնպէս չեղտուած և հանդարտ էր հնչում Նիկողայոսի լուրջ պատասխանը.

—Այո, ես ատում եմ նրան վարից մինչև նրա ամենաբարձր կէտը. ատում եմ ու չեմ հասկանում:

—Դու գտել ես աւելի լաւը:

—Այո, գտել եմ, այո գտել եմ,—հաստատ կրկնեց Ն-սը:

—Մնացիր մեզ հետ:

—Դա անմիտ է, հայր, և դու այդ պիտես:

—Նիկողայոս. թնդաց Ալեքսանդր Սնտոնովիչի բարկացած բացականչութիւնը: Եւ լարուած լռութեան մի րոպէից յետոյ Նիկողայոսի ցածր և մի քիչ տխուր պատասխանը.

—Դու էլի նոյնն ես, հայր—դիւրագրգիւ ու բարի:

Քրիստոսի ծննդեան տօնը եկաւ. այդ հարուստ տան մէջ անուրախ և չփոթի Այն մարդու ներկայութիւնը որ ոչ մի բանում չէր համաձայնում իրան չընկալատող մարդկանց մտքերի ու զգացմունքների հետ, մոայլ մթնոլորտով պատմում էր բոլորին և տօնից խլում էր ոչ միայն նրա ուրախ բնաւորութիւնը, նոյն իսկ նրա իմաստը. կարծես, ինքը Նիկողայոսը նկատել էր, թէ որքան նա ծանր է ուրիշների համար և համարեալ, դուրս չէր գալիս իր սենեակից,—բայց աչքից հեռու նա աւելի զարհուրելի էր թւում, քան ներկայ լինելու ժամանակ: Ծննդեան տօնից մի քանի օր առաջ Բարսուկովների մօտ հաւաքուել էին հիւրեր. Նիկողայոսը դուրս չեկաւ առաջ, ինչպէս առհասարակ դուրս չէր գալիս կողմնակի մարդկանցից ոչ մէկի առաջ, և հագնուած պռկած էր անկողնի վրայ և լսում էր երաժշտութեան հնչիւնները:

Հնչիւնները պատի հաստութիւնից նստացած թւում էին ներդաշնակ ու քնքոյշ, ինչպէս մաքուր ու անմեղ ձայների կրգը հեռուից, և այնքան մեղմ թափանցում էր ակամօքները, որ կարծես երգելիս լինէր ինքը օդը: Ն-սը ուշադրութեամբ լսում էր և մտաբերում այն ժամանակը, երբ նա դեռ փոքրիկ երեխայ էր և նրա մայրը կենդանի էր, և նրանց մօտ հաւաքուել էին հիւրեր, իսկ նա նոյնպէս հեռուից լսում էր երաժշտութիւն և երազում էր,—ոչ թէ պատկերներ, այլ մի ինչ որ ուրիշ բան, որի մէջ և պատկերները և հնչիւնները խառնուում էին մի փայլուն և չարատանջ գեղեցիկ երեւոյթի մէջ, և այդ երեւոյթը ոլորւում էր իբրեւ մի բազմազոյն երգող ժապաւէն: Եւ նա հասկանում էր այն ժամանակ, թէ ինչ էր նշանակում այդ փայլողը,—բայց ոչ որին չէր կարողացել բացատրել, նոյն իսկ իրան, և աշխատում էր միայն երկար չը քնել—և քնում էր: Մի անգամ նա քնել էր այդպէս ոչ ոքից չը նկատուած, նախա-

սենեակում մուշտակների վրայ, և հիմա նրան պարզ երեւաց խառտ մորթիի հոտը: Եւ նորից անհասկանալի սարսափի սարսուռ անցաւ նրա մարմնով սառը ասեղների մնան, բայց և մի ուրիշ բան էլ, աւելի քնքոյշ և ջերմ լուսաւորեց նրա երեսը և, կարծես, մի քնքոյշ փայփայող ձեռք ուղղեց նրա կիտած յօնքերը. երեսը անշարժ դարձաւ, բայց հանդարտ, հեղ ու անոխակալ ինչպէս մեռելի երես: Ձէր կարելի ըմբռնել արթուն է նա՝ թէ քնած, կենդանի է՝ թէ մեռած, բայց կարելի էր ասել միայն՝ որ այդ մարդը հանգստանում է: Եկաւ Ծննդեան նախընթաց երեկոն, և արդէն վերջալոյսին Նիկողայոսին ներկայացաւ Ֆենոգեն Իվանովիչը: Նա համարեա խմած էր, մոայլ ու միւս կողմն էր նայում, իսկ աչքերի վրայ նկատուում էր կարծես արտասուքների հետքեր:

—Շնորհ բերէք մեծ մօր մօտ,—ասաց նա դռների արանքից:

—Ի՞նչ կայ, դարմայաւ Ն-սը: Ֆենոգեն Իվանիչը հոգոց քաշեց և կրկնեց. «Շնորհ բերէք մեծ մօր մօտ»:

Նիկողայոսը բարձրացաւ վերեւ և հազիւ էր մտել դռների շէմքը, երբ երկու բարակ կուսական ձեռներ փաթաթուեցին նրա պարանոցից. երեսին մօտեցաւ քնքոյշ երես լայն բացած խոնաւ աչքերով և հեկեկանքից չնչսպառ ձայնը փսփսաց.— «Կօլեա, Կօլեա, ինչքան դու մեզ չարչարեցիր. Կօլեա, Կօլեա, սիրելիս, հաշտուիր հայրիկի հետ, և ինձ հետ. և մնա մեզ հետ, Կօլեա, Կօլեա»:

Եւ փոքրիկ դողդողացող մարմինը երերւում էր նրա ձեռներում և փոքրիկ սրտիկը դարձաւ այնքան ահաղին, որ նրա մէջ կը մանէր ամբողջ տանջուող աշխարհը:

Նիկողայոսը կնճռուած յօնքերի տակից հայեալք դարձրեց ամեն կողմ: Անկողնից դէպի նրան էին մեկնւում մեծ մօր անարիւն նիհարութեամբ ահ ազդող ձեռները, և ձայնը, որի մէջ արդէն լսելի էր ուրիշ կեանքի ձայնակցութիւն, խապոտ արտասուող հնչիւնով աղաչում էր. «Կօլեա, Կօլեա»: Իսկ դռան շէմքին լալիս էր Ֆենոգեն Իվանովիչը. նա կորցրել էր իր բոլոր վսեմութիւնը և քթից ձայներ էր հանում և բերանով ու յօնքերով չարժուաներ էր դործում, և արտասուեքները այնքան շատ էին, այնպէս յորդառատ էին հոսում նրա երեսից, կարծես աչքերից չէին թափւում, ինչպէս բոլոր մարդկանց մօտ, այլ հոսում էին մարմնի բոլոր ամենամանր ծակերից:

—Բարեկամս, Նիկօլենկա, փսփսում էր նա աղերսելով առաջ մեկնելով ձեռները կարմիր թաշկինակի հետ: Նիկողայոսը անօգնական և խղճալի ժպտում էր, չիմանալով, որ նրա արծի-

ւային աչքերից թափւում էր հազուադիւտ ժլատ արտասուքներ:

Եւ այդ ժամանակ մութ անկիւնից դէպի լոյս երեւայ պառաւային դողով երերունդ անզօր գլուխը այն մարդու, որ նրա հայրն էր և որի ամբողջ կեանքը նա ատում էր և չէր հասկանում:

Բայց հիմա նա հասկացաւ.

Սիրոյ նոյն խելացնորութեամբ, որով նրա ատելութիւնն էր թափանցել, Նիկողայոսը վրայ ընկաւ դէպի հայրը, հետը տանելով Նինօչկային, և բոլոր երեքն էլ կուտակուած մի կենդանի բուսնի (կտորի) մէջ, իրանց սրտերը բացած, ցնցուած նրանք մի ակնթարթում դարձան մի սիրտ և մի հոգի ու նույնով մի մեծ էակ:

—«Մնաց—խռպոտ ձայնով ասում էր ծերուկը—մնաց»,

—«Բարեկամս, Նիկօլենկա», փափսում էր Ֆենօդեն Իվանօվիչը:

«Հա, հա—ասում էր Նիկողայոսը, չը հասկանալով թէ ումն է պատասխանում և ինչ հարցին,—հա, հա—կրկնում էր նա, համբուրելով դողացող ծերացած ձեռքը, որը անխօս քնքշութեամբ փայփայում էր նրա գլուխն ու երեսը...»

—Հա, հա—էլի արտասանում էր նա, արդէն զգալով, ինչպէս նրա հոգու մէջ աճում է սպառնալի, անդուլթ, կարճ և բթածայր առչք:

Արդէն գիշեր էր մօտենում, և ամբողջ մեծ տունը, սկսած ծառաների սենեակից և վերջացնելով աղաների սենեակներով ուրախ ճրագալոյսերով էր փայլում: Մարդիկ զուարթ խօսում էին և աղմկալի միմեանց ձայն տալիս, և փոքրիկ, թանկագին, զիւրարեկ ու անպէտք իրերը արդէն չէին վախճանում իրանց համար. նրանք հպարտ ու անվախ հանդէս էին դնում իրանց գեղեցկութիւնը և բոլորը կարծես այդ տան մէջ ծառայում էր նրանց և խոնարհում թանգ արժողութիւն ունեցող նրանց գոյութեան առաջ: Ալեքսանդր Անտօնօվիչը, Նինօչկան և նոյն իսկ ուսանողը էլի նստած էին սենեակում մեծ մօր մօտ և մերթ խօսում էին բախտաւորութեան մասին, մերթ լուռ, իրանց լսողութիւնը դարձնում էին դէպի նա:

Ֆենօդեն Իվանօվիչը, էլի մի քիչ կոնծելուց յետոյ, դուրս եկաւ բաց օդ՝ իր գլուխը մի քիչ թարմացնելու նպատակով և այն ժամանակ երբ նա ձեռքերը քսում էր կարմիր անմազ դըլիսին, որտեղ ձիւնի մասնիկները հալւում էին, նա զարմացած տեսաւ Նիկողայոսին: Ձեռքն բռնած փոքրիկ կապոց նսւր գա-

լիս էր այն անկիւնի կողմից, որտեղ տան յետքի անցքն էր, և նոյնպէս անախորժ դարմայած էր Ֆ. Իւչի տեսնելուց։

—Ա՛, Ֆենսօգեչկա... յածր ասաց նա,—ապա ճանապարհ ձգիր ինձ մինչեւ դռները։

—Բարեկամս, իրան կորցրած փափսում էր Ֆ. Իւչը։

—Լո՛ր, այնտեղ կը խօսենք։

Փողոցը այդ պահուն ամայի էր և նրա երկու ծայրերը կորչում էին հանդարտ և անաղմուկ թափուող ձիւնի սպիտակախառն մթութեան մէջ, Կանգնելով Ֆենսօգեչն ի վանօվիչի առաջ և ուղիղ աչքերին նայելով իր ուռուցիկ փայլող աչքերով, Նիկողայոսը ձեռքը դրեց նրա ուսին և հանդարտ ասաց, կարծես սովորեցնելիս լինէր երեխային.

—Ասա հօրս, որ Ն-ս Ալէքսանդովիչը պատուիրեց ողջունել և ասել թէ նրանք գնացել են—«Ո՞ւր».

—Հասարակ—գնացել են—մնաս բարեւ։ Ն-սը մտերմաբար զարկեց սպասաւորի ուսին և հեռացաւ նրանից։ Բայց Ֆենսօգեչն ի վանօվիչը առանց խօսքերի էլ գիտէր, թէ ուր է գնում Ն-սը և բոլոր այժով, ինչ որ ձեռքերի մէջն ունէր, բռնեց նրան։

—Թողնելու չեմ. Աստուած վկայ, չեմ թողնելու։

—Նիկողայոսը յետ մղեց նրան և զարմայած նայեց իսկ Ֆենսօգեչն ի վանօվիչը ինչպէս աղօթելու ժամանակ ծալելով ձեռքերը խնդրում էր լալիան ձայնով. «Նիկօլենկա, միակ բարեկամս, ղթացէք, միք երթալ։ Տներ, ակցիաներ ամեն օր կտրում են»—անմիտ կրկնում էր նա տանտիրուհու խօսքերը։

—Ի՞նչե՛ր ես բրդում, —յօնքերը կիտեց Նիկողայոսը և արագ առաջ գնաց։

Իսկ Ֆենսօգեչն ի վանիչը, նոր ֆրակի մէջ բոլորովին տօնային կերպարանքով և ամբողջովին քայքայուած ու կարծես տրորուած վաղում էր նրա յետեւից, բռնում էր ձեռքերից և աղաչում.—«ապա ես էլ, ինձ էլ տարէք. բա ինձ, Աստուած վկայ, սիրելիս, աւագակ դառնալու եմք,—դառնանք»։ Եւ Ֆենսօգեչն ի վանիչը յուսահատ թափ տուեց ձեռքը վերջին հրաժեշտ տալով ազնիւ մարդկանց աշխարհին։

Նիկողայոսը կանգ առաւ ու լուռ նայեց սպասաւորին, և այդ հայեացքի մէջ փայլեց մի ինչ որ այնպիսի սարսափելի, սառը, կատաղի ու վտանգաւոր բան, որ Ֆենսօգեչն ի վանօվիչի լեզուն պապանձուեց և ոտները գետնին կպան։ Նիկողայոսի բարձր կերպարանքը գորշանում էր և փոքրանում, կարծես հալուելով մոխրագոյն մթութեան մէջ։ Էլի մի բոպէ և նա մըշ-

տապէս կորաւ այն մութը չարագուշակ հեռաւորութեան մէջ, որտեղից անսպասելի կերպով երեւացել էր: Եւ արդէն ոչինչ կենդանի չէր երեւում մարդազուրկ տարածութեան մէջ, իսկ Ֆենօզեն Իվանօւիչը էլի կանգնած էր ու նայում էր: Օսլայած շապկի օձիքը խոնաւացել էր և կպել պարանոցին. ձիւնի մասնիկները կամաց կամաց հալւում էին նրա կարմիր, սառած, անմազ գլխին և արտասուքների հետ հոսում էին սափրած լայն երեսից:

Թարգմ. ԲԺ. Յ. ՏԷՐ-ԴԱԻԹԵԱՆ

Զ Հ Ո Ւ Դ - Ք Ո Ւ Շ Ա Ն ^{*)}

(Հրէասպանութիւն)

Վ, Է Պ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

XV

Արեգակի շողը նոր էր ընկել Շիմրանի սարերի ձիւնապատ գագաթի վրայ և սա նոր էր սկսել կանաչ-կարմրին տալ, ամպերը նոր էին քուլայ-քուլայ բարձրանում Դէմավէնդի վրայից, աջ ու ձախ փռւում, բայց Թէհրանի սոված, հացի կարօտով քնաթաթախ արթնացած ժողովուրդը արդէն ոտքի էր կանգնել: Շտապ շտապ կատարելով վաղորդեան նամաղը, ամեն մարդ աշխատում էր գնալ և շուտով գնել տան հանապազօրեայ հացը ու ժամ առաջ վազել մեծ հրապարակը, ուր պէտք է տեղի ունենար մեծ թամաշան, ինչպէս նախընթաց օրը յայտարարել էր արքունի մունետիկը: Դէպի հացադուրծների խանութները և փողոցները տանող փողոցները և բազարները լի էին ծերերի, կանանց, երեխաների ահագին բազմութեամբ, խուժան ամբոխով, մանաւանդ մշակներով, արհեստաւորներով, որոնց սննդեան գլխաւոր նիւթն՝ ցամաք հացն է: Հաց, իսկական հաց և ոչ աւազի, թեփի, գարու շաղախ ստանալու յոյսը լցրել էր ամենքի սիրտը ուրախութեամբ:

*) Տե՛ս «Մուրճ» № 8.

երեխաները իրանց մայրերի շալակին, այլ ևս չէին լացում աղիողորմ ձայնով, այլ միայն հարցնում էին. «Նէնա (մայրիկ), շուտով հաց կը տամ»։—Բալնս, մի քիչ էլ համբերիր և տես ինչ նախշուն լաւաշ սանդեակ կը տամ քեզ։

Երեկուայ մեր տեսած գլխաւոր հացագործարանի առաջ խոնուել էր ահագին բաղմունքիւն։ Մօրուքը և եղունգները խինայած. Հաջի-Հասան հացագործը դարձեալ ծալապատիկ չոքել էր կշեռքի առաջ և երեսը չփելով ձեռներով «եա Ալլահ» էր մրմնջում։ Բայց, ո՞վ մեծի զարմանաց, թեք մակարդակի վրայ հաղիւ 10—20 հաց կար մեխերից կախուած, այն ևս դարձեալ աւազի, թեփի, ցեխի և գարու շաղախ և դարձեալ հաջին այդ շաղախի լիտրի համար պահանջում էր երկու ղուան կամ երկու հազար դենար։ Հացագործարանը տանող դուռը բաց էր և նրա դէմ առ դէմ տեսնում էր մեծ փուռը, որի մէջ կրակը շատ թոյլ պլպլում էր։

Ամբոխի հիասթափութիւնը, յուսահատութիւնը կատարեալ էր. մարդիկ ամբողջ գիշեր օրօրել էին իրանց այն յոյսով, թէ, վերջապէս, այսօր հաց կը ստանան, մի կուշտ փորով կուտեն այդ թանկագին հացը, իսկ այժմ, նորից նրանց առաջարկում են թեփի, աւազի, գարու շաղախը։ Զայրոյթը, կատաղութիւնը նորից տիրեց ամբոխին. խուլ տրտունջը սկսեց պայթել. սպառնական աղաղակներ և բռունցքներ ուղղուեցին Հաջի Հասանին. «Ձը լսեցիր երէկ ինչ յայտարարեց ճառչին, անիրաւ, իմանա՞րդ», պոռում էին ամեն կողմից։

—Վալլահ, բիլլահ, ես մեղաւոր չեմ. մենք, հաց թխողներս, մեղաւոր չենք. մենք ի՞նչ անենք, որ ամբարդարները ցորեն, ալիւր, չեն տալիս մեզ. թող նրանք ցորեն տան մաղանդայով, մենք էլ ձեզ հաց տանք յայտարարուած գնով։

—Էհ, ասաց ծերունի Հաջի Աբբասը, ձուկը գլխից է հստած. ես երէկ ասում էի, որ մեզ քնացնում են,

խաբում, որ ամբարդարները գիշերանց կը տեսնեն նոր քաղաքապետին, կը քաղցրացնեն նրա քիմքը, կոկորդը կը լցնեն ոսկիներով և ոչ ոք այլ եւս չի անսայ Շահի հրամանին: Լաւն այն է. որ մենք ինքներս մեր գլխի ճարը տեսնենք, մեր ձեռքով մեր դատաստանն անենք:

—Այո, այո, գրոհ տանք, քանդենք քաղաքապետի տունը իր գլխին, և հարամ անենք իր կերած կաշառը, գոռացին հազարաւոր ձայներ:

—Սալաւաթ, սալաւաթ, թնդաց օդը ամբոխի ոռնոցով:

Եւ ամբոխը գրոհ տուեց դէպի միւս փողոցը, որ տանում էր նոր քաղաքապետ Աբգար-Միրզայ շահադէի տունը, բայց այդ միջոցին փողոցի ծայրին երևաց ֆէրրաշների մի խումբ, որ յետ մղեց ամբոխը, գոռալով. «Տեղ տուէք, ճանապարհ բացէք Աբգար-Միրզայ շահադէի համար»: Փէրրաշների ճիպոտները, Աբգար-Միրզայի վէս և խրոխտ դէմքը, որ այդ միջոցին երեւաց, մանաւանդ նրա նստած ոսկեհուռ սարքով արաբական նոսրի տեսքը սթափեցրին ամբոխը, որ սկսեց յետ քաշուել և միայն խուլ տրտունջներով յայտնել իր դժգոհութիւնը: Այդ տրտունջը նկատեց նոր քաղաքապետը, որ շատ լաւ դիտէր և տրտունջի պատճառը, բայց չիմանալուն դնելով, հարցրեց. «Ի՞նչ էք հաւաքուել, ի՞նչ ազմուկ է»: Ինչպէս միշտ, այս անգամ ևս կանայք առաջ ընկան և համարձակ պոռացին.

—Հաց, հաց ենք ուղում. թող մեծ մարդարէի և տասներկու իմամների անէծքը թափուի ձեր գլխին, որ մեզ սովածութիւնից կոտորել էք տալիս:

Կանանց անէծքը համարձակութիւն ներշնչեց տղամարդկանց, որոնք սկսեցին նոյնպէս բարձրաձայն յայտնել իրանց տրտունջը.

—Դուք չէք կատարում Շահի հրամանը, ինչ քաղաքապետ էք, աղաղակում էին ամեն կողմից:

Եւ սպառնալիքները, առաջ զսպուած, հետզհետէ աւելի սանձարձակ, տեղացին խուժանի կողմից: Բար-

ձըրացաւ սարսափելի ժխոր, որ սաստկացաւ երեխաների լացով ու վայնասունով. «Նէնա, հաց ենք ուզում»:

— Լսեցէք, լսեցէք, գողացին ֆէրրաշները. շահագողէն կամենում է խօսել:

Աբգար-Միրզայի դէմքը բարկութիւնից պղնձի գոյն էր ստացել. լինել շահագողէ և հայհոյանք ստանալ ամբոխից—այդպիսի վիրաւորանք չէր կարող տանել նրա զաջարական հպարտութիւնը: Այդ բարկութիւնը շատ լաւ նշան համարեց իր համար հացագործ Հաջի-Հասանը, որ վախից լեղապատառ եղած, կամենում էր շահագողէի դէմքի արտայայտութիւնից գուշակել իր ճակատագիրը: Կարծելով որ քաղաքապետի բարկութիւնը ամբոխի դէմ է, նա ենթադրեց, որ խնդիրը նպաստաւոր կերպարանք է ստացել հացագործների և ամբարդարների համար, որոնք գիշերանց շտապել էին առատ ընծաներով դիմել նոր քաղաքապետին որպէս զի նոր հրամանը չը գործադրուի: Հաջի-Հասանը սպասում էր բանակցութիւնների ելքին և նա շատ ուրախացաւ, երբ ամբոխը գրգռեց շահագողէի բարկութիւնը իր հայհոյանքներով և սպառնալիքներով: Գոնէ նա այդ հանգամանքին էր վերագրում շահագողէի զայրոյթը, ուստի սիրտ առնելով, աղերսակուի ձայնով դիմեց նրան և ասաց.

— Ղուրբան, ինչ են ուզում ինձանից այս մարդիկ. պաշտպանեցէք ինձ. նրանք քիչ էր մնում ինձ քարկոծէին:

Բայց խեղճ հաջին սխալուել էր իր ենթադրութիւնների մէջ....

Աբգար Միրզան խրոխտ և հրամայողական ձայնով պոռաց.

— Թէհրանի ժողովուրդ, վկայ է Ալլահը, որ Շահի նուիրական հրամանը պէտք է կատարուի, վայ նրան ով համարձակի Աշխարհի Աղօթարանի հրամանին չան-

սալ. երկու-երեք ժամից յետոյ դուք կունենաք առատ հաց, երկուում եմ Մահմէդ-Շահի ջիգդայով ¹⁾;

Հացագործի լեզուն փորն ընկաւ. նրա վարդազոյն յոյսերը չքացան, բայց դեռ բոլորովին յոյսը չէր կտրել: Քաղաքապետը դիմելով նրան, շարունակեց.

—Հաջի, լսեցիր երէկ Շահի հրամանը ճառչու բերանով:

—Այո, ղուրբան:

—Ինչի համար այսօր չես կատարում այդ հրամանը:

Ծառագ ում շունն է, որ համարձակի չը կատարել Շահի նուիրական հրամանը, բայց հաց չը կարողացայ թխել և էփան ծախել, որովհետև ցորեն չը կարողացայ գնել, ամբարդարները մերժեցին յայտարարուած գնով ցորեն տալ:

—Ո՞ր ամբարդարին դիմեցիր:

—Մուրթուզա խանին:

—Երբ ամբարդարները մերժեցին ցորեն տալ, ինչո՞ւ չեկար անմիջապէս չը յայտնեցիր, որ մենք ցորենը առնէինք և տայինք քեզ:

Հացագործը լուռ մնաց. լռել էր և ամբօխը, որ ակնդէտ սպասում էր թէ ինչ պէտք է անէ շահզադէն և ինչպէս պէտք է հաց ստեղծէ:

—Բաց գործարանիդ դուռը, մի թամաշայ անենք, հրամայեց շահզադէն հացագործին:

Հաջին բոլորովին գունատուեց և սկսեց դողալ.

—Ղուրբան, կմկմաց նա, ձեզ լայեղ ոչինչ չը կայ, կեղտոտ է, դատարկ:

—Վնաս չունի, վնաս չունի, պատասխանեց Աբգար-Միրզան և հրաւիրելով ամբօխի միջից մի քանի ծերունիներ՝ հետեւել իրան, ներս մտաւ:

Գործարանի մէջ փուռի յետև գտնուած ամբարում դարսուած էին ալիւրի բազմաթիւ քսակներ և մի քան

¹⁾ Քազ. պաշտօնեաների ամենամեծ երդումն է.

նի հացթուխի աշակերտներ, թեւքերը ծալած, դաշտակների մէջ հունցում էին խմոր խ ա ս ա ¹⁾ սեանդակի համար:

—Օհո, ասաց շահգադէն, հապա դու ասում էիր ալիւր չունեմ:

—Ղուրբան, դողահար պատասխանեց Հաջի-Հասանը, ախր այդ ալիւրը գնել եմ թանդ գնով, ինչպէս կարող եմ էժան ծախել. ես էլ քուլֆաթի ²⁾ տէր եմ, խեղճ եմ: հիմա որ հրամայում ես, իսկոյն լաւ հաց թխել կը տամ, ինչքան կամենաս:

—Էֆէրիմ, Հաջի-Հասան. դէ շուտ վառիր փուռը, մի լաւ տաքացրու, ես էլ իմ աչքովս տեսնեմ: դէ, շուտ արա, ցախ բերել տուր:

Միամտուած, ուրախացած, որ այդպէս հեշտ պըրծաւ, Հաջին բարձրաձայն հրամայեց աշակերտներին ալիւրի բսակները իջեցնել, խմոր հունցել և ինքն էլ վազելով, մի մեծ խտրտ ցախ բերեց ու նետեց փուռի մէջ, որ սկսեց վառուել ու բորբոքուել:

—Դէ, ֆէրրաշներ, օգնեցէք հաջուն, գոռաց շահգադէն, դուք էլ ցախ բերէք և փայտ. փայտ էլ բերէք, բորբոքեցէք հսւրը:

—Բայց, ղուրբան, հարցրեց հացագործը. փայտ պէտք չէ, սեանդակի համար ցախն էլ բաւական է, արդէն փուռը բորբոքուած է, հացերը կարող են այրուել շատ տաքութիւնից:

—Ձէ, չէ, առաջ մի լաւ խորոված էլ կ'անենք, միտը ես կը տամ, յետոյ հացը կը թխես,

Ֆէրրաշները սկսեցին փայտ նետել փուռի մէջ, որ կատարեալ հնոցի վերածուեց:

Ամրոխը, որ բնաղդմամբ սպասում էր մի սարսափելի բան տեսնելու, շուարած, առանց համարձակելու իր միտքը յայտնելու, խոր լռութեամբ հանդիսատես էր. ծերունիները, որոնց գլխով շատ փորձանքներ էին

1) Ընտիր տեսակ 2) Ընտանիք:

անցել, որոնք իրանց կեանքի մէջ շատ անցքերի էին ականատես եղել, յօշում էին գլուխները, մրմնջալով. «բարերար Ալլահ, դժու ողորմիր, մեծ է քո զօրութիւնը, առանց քո կամքի ադամորդու գլխից մի մազ անգամ չէ կարող ընկնել»:

Փուռը ճարճատում էր բոցերից և իր տաքութեամբ խանձում էր մօտ կանգնածներին:

Հացագործը, որի սրտի մէջ նորից ծագել էր կասկած, այնպէս ավրթնել էլ, որ երեսի գոյնը պատի դաճի գոյնից չէր զանազանում: Ամբոխի խոր լուծթիւնը, չարագուշակ լուծթիւնը, շուարած դէմքերը, շահադէի սարգօնական ժպիտը—նշաններ էին, որ պատրաստում է, այն ևս շատ շուտով, մի սոսկալի եղեռն, բայց ինչ եղեռն, ում համար, նա չէր կամենում մտածել, այնքան այդ միտքը զարհուրելի էր: Պաղ քրտինքով ողողուել էր նրա ամբողջ մարմինը, ոտները կծկուեցին և սարսափահար, կարողացաւ միայն կակաղել:

—Դուրբան, ուղարկեմ ոչխար բերեն խորովածի համար:

—Ոչ, ես ինքս ոչխարն կը տամ, պատասխանեց շահադէն, որի դէմքը նոյնպէս գունատ էր:

—Ալլահ, Ալլահ, դու ողորմիր խեղճին, լսուեցին ամբոխի միջից ձայներ:

Թշուառ հացագործը, լսելով այդ խօսքերը, հասկացաւ սոսկալի, քստմնելի իսկութիւնը. նա փշաքաղուեց, նրա լեզուն պապանձուեց, աչքերը խելագար մարդու պէս չուեց և վերջապէս արտասանեց աղեկըտուր ձայնով:

—Ոհ, գթացէք, գթացէք, մուսուլման եմ:

Հնոցը աւելի և աւելի բորբոքւում էր և նրա բոցերը, հարիւրաւոր լեզուներով դուրս ժայթքելով կարծես կլանելու զոհ էին պահանջում:

—Գթացէք, գթացէք, մուսուլման եմ, նսրից հեկեկաց հացագործը:

Նրա աղեխարշ ձայնը, հնոցի սոսկալի տեսքը յուզեց, շարժեց արձանացած ամբոխին, որն, քիչ առաջ պատրաստ էր բզբտել գազանի նման հացագործին և հարիւրաւոր բերաններ բացուեցին պոռալու համար.

— Մենք հաց չենք ուզում, շահագէ, գլխացէք նրան, ձեռք մի տաք, մենք հաց չենք ուզում:

Հացագործը դատապարտուած մեղապարտի նման, որի հոգեկան և բարոյական բոլոր կարողութիւնները թմրացել, ընդարմացել են ի տես կախաղանի, միայն աչքերով էր գլխութիւն հայցում:

Բայց թշուառի ժամը հնչել էր. շահագէի մի ակնարկով ֆէրրաշները յանկարծ վրայ պրծան, գրկեցին նրան և սարսափահար եղած ամբոխը լսեց միայն մի ոչ-մարդկային ձայն, որ ցնցեց, փշաքաղեց ամենքին և յանկարծ պատկերացաւ սոսկալի տեսարան, երբ հացագործին, որ ոտքով, ձեռքով, ատամներով ընդդիմանում էր, խածնում էր, կռւում էր մոլեգին յուսահատութեամբ, հրեցին հնոցի մէջ, որի հրաշէկ պատերը և բազմալեզուեան բոցերը մի լոպէսում շրջապատեցին, պինդ սեղմեցին իրանց զոհին և մարդկային մսի, ճարպի, մաղերի ճենճերահոտը տարածուելով, ստիպեց սոսկացած ամբոխին յետ յետ գնալ: Փռուի բերանը փակեցին թիթեղեայ ծածկոցով և թշուառ հաջին անհետացաւ ամբոխի տեսքից հնոցի բոցերի մէջ¹⁾....:

Շահագէն, բեխերը շոյելով, նորից իր խրոխտ և վէս կերպարանքը ընդունելով, նստեց իր ոսկեհուռ սարքով արաբական նժոյգի վրայ և դառնալով ամբոխին, ասաց.

— Այժմ այստեղ գտնուած բոլոր ալիւրը թառաշ

1) Արուեստական կերպով սով առաջ բերող և հացը խարդախող հացագործներին այդպիսի պատիժ տալը անսովոր բան չէր Պարսկաստանի համար 50 տարի առաջ, և նոյն իսկ այժմ, թէեւ շատ բացառիկ դէպքերում, գործադրում է այդ պատիժը:

է. թառաշ կարող էք անել և Մուրթուզա խանի ցորենի ամբարը:

Արձանացած ամբոխը ցնցուեց, սթափուեց իր թմրութիւնից «Թառաշ» խօսքը լսելով. սոսկալի տեսարանը մոռացուեց և խուժանը դրո՛հ տալով գործարանը, սկսեց թառաշ անել ալիւրի պաշարը. բաղցածութիւնը նորից յարուցեց մարդ-գաղանի մէջ աւարառութեան, յափշտակութեան կիրքը և նա մտածում էր այժմ միայն այդ կրքին յագուրդ տալ: Ամեն ոք աշխատում էր իր բաժինը տանել. մինը ջիւն էր լցնում ալիւրով, միւսը գոգնոցը, երրորդը թաշկինակը, կանայք իրանց չարշաւները: Ամբոխի մի մասն եւս դիմեց դէպի Մուրթուզա խանի տունը և մի ժամից յետոյ խանի բոլոր ամբարները դատարկուած, աւերուած, քանդուած էին:

Ճարպիկ Աբգար-Միրզան մեկնելիս բարձրաձայն գոռաց. «Մի երկու ժամից յետոյ միւս ըմբոստ հացագործները և ամբարդարները ևս իրանց արժանաւոր պատիժը կը կրեն»:

Սակայն նա չը դիմեց դէպի բագար, այլ վերագարձաւ իր տունը: Եւ չէր անցել մի ժամ, երբ բոլոր հացագործները և ամբարդարները մտան նրա բակը և ծնկաչոք, առատ նուէրների ներկայացնելով, աղաչում, պաղատում էին ներել իրանց, խոստանալով թխել լաւ հաց և ծախել յայտարարուած գնով: Չէր անցել երկու ժամ և արդէն մաքուր, լաւ սանդեակ հացը առատութեամբ ծախուած էր լիտրը մի ղուանով և մէյդաններում, զափանի տակ ցորենի բեռները կուտակուել էին:

Ուրախ էր նոր քաղաքապետ շահադէ Աբգար-Միրզան, որովհետեւ մի հարուածով նա բազմապատիկ արդիւնք էր ստացել. կատարել էր տուել Շահի հրամանը, ահ ու սարսափ էր տարածել այդ հրամանը չանսացողների վրայ, առատ և լաւ հաց էր հայթայթել քաղցած ժողովրդին և, որ աւելի կարևորն է, առատաբար լցրել էր գեղին ոսկիներով իր քսակը: Ի հարկէ, նրա պարտքն էր մասն և բաժին հանել այդ

ոսկիներից իր պաշտպան Բէգլար-բէգուն և սադրազամին. նա համոզուած էր և գիտէր, որ կ'արժանանայ ոչ միայն սադրազամի շնորհներին, այլ արքաների արքայի, աշխարհի բեւեռի իլթիֆաթին ևս կ'արժանանայ իր այդպիսի եռանդուն ծառայութեան համար:

Եւ քաղաքապետը շտապեց գնալ Բէգլար-բէգու ապարանքը, որտեղից մի ժամ յետոյ դուրս եկաւ ու դիմեց պետական բանտը՝ յանցաւորներին դէպի կառափնարան և մեծ հրապարակը առաջնորդելու համար:

Պետական բանտերը Պարսկաստանում ամեն տեղ միատեսակ են, և Թէհրանինը ևս ոչ մի տարբերութիւն չէր ներկայացնում միւս քաղաքների բանտերից կամ զնդաններից: Բանտապետի առաջնորդութեամբ քաղաքապետը մտաւ մի գեանափոր նկուղ, խոնաւ, դուրկ լոյսից և օդից, յատակը ցեխոտ. մի փոքր ծակ, բացուած պատի մէջ, ծառայում էր իբրեւ լուսամուտ: Նկուղի պատերի երկարութեամբ դրուած էին հաստ գերաններ կամ կոճղեր, որոնց մէջ ցցուած էին երկաթեայ հաստ օղեր և այդ օղերից շղթաների միջոցով կապուած էին բանտարկեալները և նրանց ոտներին ամրացրած էր բխօղներ ¹⁾, ինչպէս ամրացնում են ձիի ոտները ու կողպած կողպէքով: Յանցաւոր թէ մեղադրուող, նոյն իսկ արդէն դատապարտուածները, ամենքն ևս միատեղ էին պահուում այդտեղ. նրանք այդտեղ էլ կատարում էին իրանց բնական կարիքները. նրանց երեսին ջուր չէր դիպչում և մաղերին՝ սանր. նրանք գրբեթէ մերկ էին, գունատուած, դալուկ, յոգնած, հիւժուած, մաշուած: Ապականուած, նեխուած օդի զազրելի հոտը իսկոյն դիպչում էր մանողի ըթին: Բանտարկեալների համար կերակուր բերում էին կամ իրանց ազգականները, ծանօթները, եթէ հարուստ էին, կամ պատահական անցորդները, իբրեւ ողորմութիւն: Բանտարկեալին կերակրելը սաւաք, վարձք է համարւում

¹⁾ Պախուղք:

չարիաթով, ուստի և իսկական մուսլիմները չեն զլանում երբեմն երբեմն հաց, մի կտոր միս, հալուա, պտուղ բերել աղքատ բանտարկեալների համար, երբեմն ևս ձգել պատի ծակից: Ի հարկէ, համեղ կերակուրների մեծ բաժինը անցնում է բանտապետին, որից, բացառապէս, կախուած է բանտարկեալների բախտը և վիճակը: Եթէ բանտարկեալը ինքն կամ նրա ազգականները հարուստ են, նրա վիճակը շատ լաւ տնօրինում է. բախշիչի միջոցով նա հնարաւորութիւն է ստանում ապրել բանտապետի սենեակում, օդ չնչել, լոյս տեսնել, լաւ կերակրուել, չը շղթայուել և յաճախ ևս փախչել: Բայց վայր եկել տարել է այն բանտարկեալին, որ աղքատ է. նա կարող է փաւել, քաղցից մեռնել, միշտ շղթայակալ մնալ, նոյն լակ անմեղ, եթէ որ և է միջնորդ կամ պաշտպան չունի և եթէ կարեկից, գթած մարդիկ չը խղճան նրան ու չը կերակրեն: Շատ անգամ ևս այդ անտէր, անօգնական բանտարկեալները, թէև անմեղ, պատժի են ենթարկւում կամ գլխատւում իսկական, բայց հարուստ ոճրագործների տեղ:

Գրեթէ փորսուղի տալով, քաղաքապետը մտաւ բանտը, բայց գարշահոտութիւնը ստիպեց նրան անմիջապէս դուրս վազել. նա հրամայեց բանտապետին բերել բանտի յետեւի ծածուկ բակը այն ամբաստանեալներին, որոնք մեղադրւում են երեք օր առաջ կատարուած մի յանդուգն գողութեան մէջ, բերել նոյնպէս Բէհման-Միրզայի գրագրին ու գանձապահին: Ծերունի սագրաղամը և ներքինապետը դեռ յոյս ունէին իմանալ թէ որտեղ և ում մօտ են պահուած Բէհման-Միրզայի փողերը և որովհետև նրա գրագիրը ու գանձապահը չէին խոստովանում, ոչինչ չէին յայտնում, ուստի նրանք վճռեցին ենթարկել նրանց իսխանջայի¹⁾, որ սովորաբար, գործադրւում է Պարսկաստանում յանցանքը խոստովանեցնել տալու համար: Այդ

1) Ինկվիզիցիոնական տանջանքի:

մտքով և հարկաւոր հրահանգը տուել էին նոր քաղաքացիներին:

Շահագուէն բազմեց բակի մի անկիւնում դրուած տախտի վրայ. ֆէրրաշները մի փոքր սենեակից դուրս բերեցին տանջանքի գործիքները և խարաղանները, լախտերը ձեռներին, կանգնեցին նրա առաջ:

— Բերէք գողութեան մէջ ամբաստանուածներին, հրամայեց շահագուէն:

Բացուեց բակի դուռը և երկու երիտասարդ, գզգզուած շորերով, չղթայակապ, դալուկ դէմքով, ահ ու գողով կանգնեցին բակի մէջ տեղ:

— Ո՞րտեղ էք թագցրել Մէշէգի Քէրիմ սարրաֆի խանութից գողացած փողերը. ասացէք, եթէ ոչ Ալլահը վկայ, ձեր եղունգները թափել կը տամ:

— Վալլահ, բիլլահ, մենք տեղեկութիւն չունենք, մենք չենք գողացել, պատասխանեցին մեղադրեալները, որոնց արդէն նախորդ օրը ենթարկել էին ֆալախկայի հարուածներին:

— Քանի հատ խարաղան էք խփել երէկ ֆալախկայի մէջ, հարցրեց շահագուէն ֆէրրաշներին:

— Յիսուն:

— Երեւում է քիչ է, բերէք շիկացրած երկաթը:

Պզնձէ մի մեծ մաղալի¹⁾ մէջ կրակը փուքսով բորբոքեցին և մի լայն կտոր երկաթ դրին մէջը ու սկսեցին շիկացնել: Քառորդ ժամից յետոյ երկաթը կաս կարմիր էր կտրել:

— Դաղեցէք սրա մէջըը, ասաց շահագուէն, ցոյց տալով աւելի հասակաւոր երիտասարդին, որ սկսեց «աման, աման» պոռալ:

Բռնելով ունեւիքով շիկացած երկաթը և գետնին տապալելով ամբաստանեալին, դաղեցին նրանով նրա մէջըը. խանձահոտի հետ միասին մի աղիղղորմ, կովի բառաչիւնի պէս ձայն բարձրացաւ օդում:

¹⁾ Կրակարան:

—Ես անմեղ եմ, անմեղ եմ, դուք Աստուած չունէք, հեկեկում էր դադուածը:

Միւս ընկերը սիրլթնած, ամբողջ մարմնով դողդոցում էր:

—Բերէք եռացրած ջուր, հրամայեց քաղաքապետը, տկլորացրէք սրան:

Փէրրաշները տկլորացրին միւս երիտասարդին և մինը մի աման լի եռուն ջրով ողողեց թշուառի մարմինը ¹⁾:

—Վայ, խաշուեցի, մեռայ, դուռաց թշուառը և ոստոստելով գետին փռուեց:

Նրա ամբողջ մարմինը ծածկուեց փշտիկներով և մորթը ուռեց, փքուեց:

—Գլթացէք, խնայեցէք, մենք անմեղ ենք, Աստուծու արարած ենք, լացում էին դառն կերպով տանջուածները:

—Երգւում եմ Շահի գլխով, պռուաց չահզադէն, որ եթէ վաղն չը խոստովանէք ձեր յանցանքը, աւելի սոսկալի պատժի կենթարկուէք: Տար սրանց բանտապետ և այս գիշեր մի ֆէրրաշ դիր դրանց գլխին, թող մախաթով ծակոտէ դրանց մարմինը և թոյլ չը տայ ընել, մինչեւ խոստովանեն իրանց յանցանքը:

Փէրրաշները քարշ տալով գետնի վրայով դուրս տարան ամբաստանեալներին, որոնք ցաւից, կսկիծից աղիողորմ հեկեկում էին: Աւելի երիտասարդ կալանաւորը, որի մարմինը խաշուել էր, ուշաթափ եղաւ և մեռելային դալկութիւնը պատեց նրա դէմքը:

—Շուտ արէք բերէք այժմ դանձապահին և գրագրին:

Բանտապետի առաջնորդութեամբ ներս մտան երկու տարիբաւոր, ալեխառն մօրուքով և բաւական

¹⁾ Զմեռը՝ մերկացնում են ամբաստանեալին, ստիպում են կանգնել դրսում սառուցի կամ ձիւնի վրայ, ածում են վրան սառն ջուր, մինչև որ նա թմրում և ուշաթափ է լինում. կամ ամբաստանեալին ամբողջ մարմնով մինչև գլուխը թաղում են ձիւնի մէջ և վրան ջուր ածում:

լաւ հագնուած տղամարդիկ, որոնք կարծես ծանր դժնգակ հիւանդութիւնից նոր էին վերկացել: Նրանք արդէն մի քանի շաբաթ առաջ ենթարկուել էին ֆալսկայի, ջրի, ամորձիքի սեղման տանջանքներին և գրեթէ հաշմանդամ էին դարձած: Սակայն բանտապետին տուած բախշիչների շնորհիւ նրանք կարողացել էին գոնէ ազատուել գետնափոր նկուղում ապրելու տանջանքից:

Թոյլ, Դողդոջուն ձայնով նրանցից առաջինը ասաց.

—Աբգար-Միրզա, մինչեւ երբ այդ իմանսըդ, անխղճմտանք քաւթառը չարչարելու է մեզ.

—Դու համարձակում ես այդպիսի անվայել լեղու բանեցնել սադրազամի դէմ: Ես կը հրամայեմ իսկոյն լեղուդ բնից պոկել:

—Սադրազամը ինձ արդէն մեռցրել է. ինձանում միթէ կեանք է մնացել. ես այլ եւս ինչից պէտք է վախենամ. թող Ալլահը անիժէ նրան, դժոխքի փայտնէ, անիժեալ լինես և դու, որ կատարում ես անօրէնի անիրաւ, անխղճմտանք հրամանները:

—Թշուառական, հարէմզադէ, ես քեզ ցոյց կը տամ այս րոպէիս: Ասա իսկոյն որտեղ և ում մօտ են պահուած Բէհման-Միրզայի փողերն, եթէ ոչ չարաչար մահով կը սատկեաս:

—Ես հազար անգամ ասացի, որ Բէհման-Միրզան իր փողերն առաջուց ստացել է սէրրաֆներից, ես ձեզ տետրակները ցոյց տուեցի, բայց դուք չէք հաւատում, զուր տեղ տանջում, չարչարում էք մեզ: Ալլահը ձեզ համար էլ այսպիսի մի օր կը պատրաստէ:

—Ուրեմն դու յամառում ես, չե՞ս ուղում յայտներէ:

—Ես ոչինչ չունեմ յայտներու. դուք բաֆիրներ էք և ոչ մուսուլման:

—Փէրրաշներ, պոռաց կատաղած շահադէն, վայր ձգէք այս անղգամին:

Ծերունի դանձապահը տապալուեց գետնի վրայ և կապկպուեց:

—Բերէք սեպերը և մուրճը: Փէրրաշները բերին փայտեայ փոքր սեպեր և կոխելով գետին թաւալուած դժբախտի ձեռքի և ոտների մատերի եղունգների տակ, սկսեցին մուրճով խփել սեպերին. արիւնը սկսեց հոսել, ծերունին թէև ցաւից դալարւում էր, ստոյիկաբար տանում էր և միայն դէմքի կսկծալի արտայայտութիւնը ցոյց էր տալիս տանջանքի սաստկութիւնը: Յանկարծ, նա թերեց գլուխը դէպի շահզադէն և ասաց.

—Թողէք, ես այս րոպէիս կը յայտնեմ ձեզ Բէհ-ման-Միրզայի գանձի մասին:

—Վերջապէս. փառք Ալլահին, ուրախացած՝ ոստոտեց շահզադէն և հրամայեց դադարեցնել տանջանքը, հանել սեպերը ու մի ղէյլան բերել տալ ծերունուն. ապա յարեց.

—Դէ շուտ, շուտ ասա գանձի տեղն, մի լաւ խալաթ կը ստանաս, մեծ իլթիֆատներ ¹⁾ կը ստանաս:

Ծերունին ցոյց տուեց իր արիւնոտած ոտները և ձեռները:

—Այո, ասաց նա, մեծ գանձ կայ, այնքան մեծ, որ եթէ սագրազամի և խօջաբաշու կոկորդիները լըցնելու լինենք, էլի չի սպառուի:

Ծերունու ընկերը, գրագիրը, որ սոսկալով սպասում էր իր հերթին՝ տանջուելու, կարծեց թէ իր ընկերը խելագարուել է. նա շարժեց գլուխը և միմեջաց.

—Ով Ալլահ, և դու տանում ես այսքան անիրաւութիւն. նա խելագարուեց ցաւից, տանջանքից:

—Բայց այդ գանձի տեղը, տեղը ասա, պոռաց նորից բաղաբապետը, որ արդէն մոռում հաշուում էր, թէ որքան բաժին կընկնի իրան:

Տեղը, չարախնդաց ժպիտով հարցրեց ծերունի գանձապահը:

—Այո, տեղը, որտեղ է պահուած:

—Ահ, տեղը, որ սառկէք էլ, տրաքէք, չեմ ասի:

¹⁾ Շնորհ:

Սեպտեմբեր, 1902.

Թող կորչի, գետնի տակ թաղուած մնայ գանձը, շուն հաջի-Միրզա-Աղասին չը ստանայ:

Շահզադէն կատաղութիւնից գլխի մազերն էր փետում:

— Ահ, բեօփակ, ես բանալ կը տամ լեզուդ. դու կասես տեղը:

— Շահզադէ, ասաց գրագիրը, երգում եմ Իմամ: Մուրթուղայով, հազրաթ Ալիով, Աստուծու սուրբ խօսքով, նա այդ սուտը հնարել է յատկապէս սաղաւաղամին կատաղեցնելու համար. ոչ մի գանձ չը կայ, նա խելագարուած է, գթացէք, նա կը մեռնի:

— Թող շանսատակ լինի, դու էլ հետը, դուք պէտք է յայտնէք գանձի տեղը: Բերէք թասը, հրամայեց նա ֆէրրաշներին. ածիլեցէք առաջ այս շան գլուխը, ասացէք բանտապետին ոջիլները բերի:

Պատի տակ կծկուած մի փոքրիկ մարդ մօտեցաւ ծերունուն իր վարսավիրական գործիքներով և իր պաշտօնին լաւ ծանօթ յարհեստաւորի հմտութեամբ սկսեց ածիլել ամբաստանեալի գլխի գազաթը, բոլորակաձեւ: Բանտապետը բերաւ մի փոքր թիթեղեայ տուփ, որից հանեց մի առ մի քսան հատ տուգած ուջիլներ և դրեց ածիլուած գազաթի վրայ: Միջատները շարժուեցին. ծերունու դէմքի մկանունքները կծկուեցին¹⁾, բայց նա ոչինչ չէր խօսում, չէր հեկեկում, չէր աղաչում: Խորին ատելութիւն էին արտայայտում նրա աչքերը և նա միայն ասաց.

— Զուր է, անգութ քաղաքապետ, ջանքդ ահագին գանձը պէտք է թաղուած մնայ հողի տակ. որ ինձ թիբայ թիբայ էլ անես, չեմ ասելու տեղն:

— Դրէք թասը գլխին, նորից պողաց շահզադէն:

Պղնձէ թասը դրին մաղալի մէջ և նորից փուրսով արծարծեցին կրակը ու երբ բորբոքուեց, թասը հրա-

¹⁾ Այդ ձևով, ոջիլները, ինչպէս ասում են, սատոկ տանջանք են պատճառում:

չէկ դարձաւ, ունեւիքով դրին թշուառ ծերունու ածիւլած գլխին: Սոսկալի ճիշդ, որ արձակեց ծերունին, յուզեց նոյն իսկ անկարելից և քարասիրտ ֆէրրաշներին և ինքն շահագրէն խլացրեց ականջները մատներով: Երբ թաաը բարձրացրին, նրա հետ բարձրացաւ և գլխի կաշին ու մի սոսկալի տեսարան ներկայացաւ ամենքի աչքին: Ծերունին մի վերջին անգամ կծկուեց և թէեւ նուազած, բայց շատ մեկին և օրոշ ձայնով արտասանեց.

—Անիծեալ լինես դու, շահագրէ, անիծեալ լինիք ո սերունդը եօթն պորտ, անիծեալ լինի Հաջին:

—Նա մեռնում է, ասաց ֆէրրաշներից մինը:

—Հեռացրէք, հեռացրէք աչքիցս, պոռաց շահագրէն, որ յանկարծ բռնուել էր ծերունու անէծքի վախով և սիրտը դող էր ընկել:

Բայց մի վերջին ճիգն ևս կամեցաւ թափել ու դիմելով սարսափահար եղած դրագրին, ասաց.

—Միթէ դու եւս չես խղճում բեզ, ընտանիքիդ:

—Աղա, ես դժոխքի կրակի մէջ այրուեմ, Եզիդ, Շիմր լինեմ եթէ սուտ խօսեմ: սա ջիգրու այդ բոլորն ասաց. ոչ մի գանձ չը կայ. Բէհման-Միրզան բոլորն առաջուց հաւաքել է. ինչու մենք պէտք է նրա պատճառով մեր տունը քանդենք, մեզ տանջել տանք:

Շահագրէն ինքն ևս զգալով, որ թշուառները անմեղ զոհեր են և զուր տեղ են տանջւում, մեռնող ծերունի գանձապահի անէծքի ազդեցութեան տակ, հրամայեց արձակել երկուսին էլ, բայց ծերունին արդէն փչել էր վերջին շունչը...

Արդէն կէսօր էր. պէտք էր շտապել առաջնորդելու դատապարտեալներին մեծ հրապարակը, ուր պէտք է տեղի ունենար երկու ժամ յետոյ հրապարակական պատիժը, որ սահմանուած էր ահաբեկելու ժողովուրդը: Աբգար-Միրզան շտապով կատարեց միջօրէի նամագը, կերաւ բազարից բերել տուած չիլաւ-բեաբաբը և

դուրս եկաւ բանտի մեծ բակը՝ հարկաւոր կարգադրութիւններն անելու:

Ժողովուրդը արդէն վաղուց խռնուել էր այդ հրապարակում տեսնելու մեծ թամաշան: Ահագին հրապարակի չորս կողմը, պատերի վրայ, պատերի տակ, ծառերի վրայ, խանութների առաջ, ասեղ ձգելու տեղ չը կար: Հրապարակի վերին ծայրում մի քանի վրաններ էին խփուած մեծամեծների, վեզիրների և եւրոպական դեսպանների համար: Փէրրաշների ճիւղոտները արդէն գործում էին. պտղավաճառները, թանավաճառները, օշարակավաճառները ղիլ ձայնով գովում էին իրանց ապրանքը և հրաւիրում հանդիսականներին զովացնել թանով, օշարակով, սառն ջրով իրանց ծարաւը: Հրապարակի մէջտեղ կարմիր հագուստներով և խայտաւանակ գլխարկներով դահիճները, դահճապետի ղեկավարութեամբ, պատրաստութիւններ էին տեսնում առաջիկայ կարեւոր գործողութիւնների համար: Դահճապետը մի գերանի վրայ խրոխտաբար բազմած երբեմն ժպտում էր, երբեմն զայրանում, երբեմն քրքիչ արձակում և երբեմն էլ արհամարհական նայուածք նետում, ամեն անգամ, երբ մի ուր և է անձն մօտենում էր նրան և կամացուկ, փսփսալով խօսում. այդ մօտեցողները դատապարտուածների ծնողները, ազգականները, բարեկամներն էին, որոնք սակարկում էին դահճապետի հետ այն գումարը, որն պէտք էր տալ, որպէս զի դահիճները բութ դանակով չը կտրեն մահապարտների գլուխները և տանջանքի չենթարկեն կամ ձեռքը, ոտքը, քիթը, ականջը վտանգաւոր կերպով չը կտրեն: Նայելով առաջարկուած գումարին, դահճապետի դէմքը կամ ժպտում էր, կամ փայլում էր և կամ զայրոյթ էր արտայայտում:

Հրապարակի մէջ մի քանի տեղ փոսեր էին փորուած, գրեթէ մարդաբոյի խորութեամբ, մի քանի տեղ ժայռեր էին դրուած միմեանցից հեռու. ուրիշ տեղեր փայտեայ մեծ սիւներ էին տնկուած. մեծ մաղաչների

վրայ մի քանի կաթսաների մէջ իւղ էին տաքացնում՝ և եռ տալիս: Բազմաթիւ մշակներ և որմնադիրներ եւս հրապարակի արեւելեան մեծ պատը տեղ տեղ քանդելով, մեծ ճեղքեր էին բանում: ճեղքեր, որոնց մէջ մի մարդ, ոտքի կանգնած, ազատ կարող էր տեղաւորուել: Դահլիճները սրում էին դանակներ, գնում սրածները մի կողմ, իսկ բոլթ ժանգոտած դանակները այլ կողմ:

—Ափիոն և չիբուխներն եւս պատրաստեցէք, կարգադրեց դահճապետը:

—Գալիս են, գալիս են, լսուեց յանկարծ մի ազաղակ և բազմութիւնը ալեկոծուեց, ցնցուեց ու ընդհանուր շփոթութիւն առաջ եկաւ. ֆէրրաշները իրանց ճիպտներով սկսեցին կարգ պահպանել և հանդարտեցնել ամբոխը:

Լսուեց զուռնա—նաղարայի ¹⁾ հնչիւնը. մի խումբ զինուորներ բերում էին մի քանի հատ զամբուրակ ²⁾, ուղտերի վրայ բարձած: Իրանը զուռնաչիներն եւս նստած էին ուղտերի վրայ. թնդանօթները իջեցրին, չոքեցնելով ուղտերին, շարեցին հրապարակի վրայ մէկ մէկու կողքին և զուռնա-նաղարէն գնաց տեղաւորուեց իր համար յատուկ պատրաստուած սաքուի վրայ:

Երկու ֆէրրաշ քշելով բերին նոյնպէս մի զոյգ եղ և մի զոյգ գոմէշ ու կապեցին սիւներից: Հրապարակի ղանազան կողմերում, կենտրոնից հեռու, այնտեղ, ուր հանդիսատես ժողովուրդն էր խոնուած, կանգնեցրուած էին երկար փայտեայ հաստ ձողեր:

Վրանները հետզհետէ լցւում էին բարձրաստիճան պաշտօնեաներով և հրաւիրեալներով: Փչուեց շեփորը և այդ նշան էր, որ եկան: մեծ վեզիրը ու շահադէները:

Հնչեց զուռնա-նաղարէն.

—Գալիս են, գալիս են, դարձեալ աղմկուեց ամբոխը աենդոտ յուզմունքով. ամենքը նայեցին դէպի այն

¹⁾ Երաժշտական գործիքներ—թմբուկ, փող: ²⁾ Փոքր թնդանօթ:

կողմը, արտեղից պէտք է երեւար դատապարտեալների գնացքը:

Ամենից առաջ գալիս էին մի խում սարքաղներ ¹⁾, չախմախի հրացաններով և երկար սուլիներով, չարուխ ²⁾ հագած կամ ոտնաբոբիկ: Ապա գալիս էին շաթիրներ և ֆէրրաշներ, որոնց հետևում էին մեր տեսած դահիճները և դահճապետը: Դրանցից յետոյ գալիս էին մահապարտները և զանազան պատիժների դատապարտուածները, երկու շարքով, թուով 30 հոգի և այդ շարքի պոչին մի կին, գլխաբաց, մազերը ոչ միայն կտրած, այլ և գլուխը ածիլած, էշի վրայ թարս նըստեցրած, այսինքն երեսը դէպի պոչը, այդ պոչն էլ ձեռքին տուած և երեսն մուր բսած: Գնացքը վաւում էր ձիաւոր զարափափախների ³⁾ մի գունդ,

Դատապարտեալների մէջ տասը հոգի իրանց արտասովոր վարմունքով ընդհանուր ուշադրութիւն դրաւեցին: Մինչ մնացածները գունատուած, դալկահար, դողդոջուն, համարեա կիսամեռ քայլում էին, շատերը աղիւղորմ հառաչելով և դառնապէս լացելով, այդ տասը հոգին միայն մի սպիտակ վարտիք հագած, ընթանում էին ուրախ, զուարթ, պայծառ դէմքով, կարծէր գնում էին ի խրախճան և ոչ ի կառափնարան և երգում էին հոգեւոր բովանդակութեան երգեր, չը նայելով, որ նրանց մարմինը ներկայացնում էր մի համատարած վէրք և արիւնը ծորում էր ամեն կողմից: Նրանց մարմինը ծակոտել էին տէգերով, նիզակներով և ամեն մի ծակի մէջ խրել մի մի ճարպէ վառուած մոմ. ճարպը, հալելով, թափւում էր մարմնի մորթու վրայ: Նրանցից մինը, 18 տարեկան մի պատանի, չը կարողանալով դիմանալ ցաւերին, լացում էր և հեկեկում, բայց մի ծերունի, բռնած նրա թեւից, խրախուսում էր, ասելով. «Արիացիր, դաւակս, սրանք միայն

¹⁾ Զինուոր ²⁾ Տրեխ ³⁾ Թիւրք մի ցեղ, որից կազմւում է պարսից ձիաւոր զօրքը:

մեր մարմինը կարող են սպանել. շուտով մենք կ'անցնենք Գալիտենականութիւն, ուր մենք յաւիտեան կ'ապրենք երջանիկ»:

— Բաբինները, բաբինները, ոռնաց մուսուլման ամբոխը:

Եւ այդ ամբոխը վայրկենապէս ելեկարականացաւ, կատաղեց ու ամեն մէկը շտապեց իր ատելութիւնը, արտայայտել այդ քաֆիրներին, իսլամ կրօնը անարգողներին և նախատել նրանց:

— Ախ, դուք անօրէններ, ամբարիշտներ, շներ, դուք անարգում էք իսլամ սուրբ կրօնը, դուք անարգում էք մեծ մարգարէին, դուք պղծում էք մեր հողը:

Եւ ամեն մէկը շտապեց գործով ցոյց տալ իր խօսածը: Մի քանիսը կում անելով թքում էին նրանց երեսին, մօրուքին, ոմանք ջիբի դանակներով և մախալներով ծակոտում էին նրանց մարմինը. ոմանք ապտակ էին խփում. մի պառաւ ևս, մօտենալով նրանցից մէկին, ծերունու, հանեց մարմնի մէջ տնկուած մոմերից մինը և մօտեցնելով մօրուքին, վառեց: Ընդհանուր բռնիք բարձրացաւ ամբոխի մէջ, երբ ծերունին աշխատում էր հանգցնել վառուած մաղերը, իսկ նա, որին նախատում էին, արտասանեց միայն.

— Մայր իմ, ինչ եմ արել քեզ, ինչո՞ւ բարկացել ես ինձ դէմ:

— Ի՞նչ ես արել, պոռաց պառաւը. դու քաֆիր ես, ուղում ես մեզ, մուսուլմաններին, խելքից հանել: Դու չէյթանի սպասաւորն ես:

— Թող Ալլահը դատէ ձեզ ամենքիդ, պատասխանեց ծերունի բաբին:

— Լուեցէք, շներ, քաֆիրներ, խարազանի հարուածներ տեղալով նրանց գլխին, դռաց դահճապետը:

Բոլոր դատապարտեալներին պատեցնելով ամբոխի առջեւից, բերին շարքով կանգնեցրին հրապարակի մէջ տեղ:

Զուռնա-նաղարէն լուեց, տիրեց խորին լուութիւն, առաջ եկաւ, հրապարակի մէջտեղ, մունետիկը, ձիւ վրայ նստած, տէգը ձեռքին, մի թիրմա շալ ուսին ձգած:

— Մուսուլմաններ, ժողովուրդ, պոռաց նա, ուռցընելով թշերը և որքան ոյժ ունէր պոռալու. հրաման է Շահն-Շահի, ալ-սուլթան, ալ-սուլթան Մահմէդ Շահի — Թող Ալլահը յաւերժացնէ նրա թագաւորութիւնը. — մի քանի խռովարարներ Սպահանում համարձակեցին անդոսնել իշխանութիւնը Աշխարհի Աղօթարանի, որից երկրի բոլոր թագաւորները սարսում են, իսկ մի քանի հերետիկոսներ համարձակեցին անարգել մեծ մարգարէի օրէնքը և գնալ մի սուտ Մահտիի յետեւից, արհամարհել իսլամի նուիրական օրէնքը, իսլամի, որ լըրումն և կատարելութիւնն է բոլոր կրօնների և դէնների. դրանով նրանք բարկացնելով Ալլահին, կարող են մեծ չարիքներ և պատուհասներ բերել մեր օրհնեալ իրանի գլխին: Շահն-Շահը, որի փառքի առաջ արեգակի ճառագայթները պատրաստ են նսեմանալ, հրամայեց պատժել այդ խռովարարներին և հերետիկոսներին, ի խրատ և ի զգուշութիւն ժողովրդի: Հերետիկոսները, որ իրանց բաբի են կոչում, իրանց սուտ մարգարէ Բաբի անունով, եթէ չը զղջան, յետ չը կանգնեն իրանց մոլորութիւնից, կը գլխատուեն. նրանց գլուխը կը ջախջախուի, նրանց պարանոցը կը պոկուի եղերի և ցուլերի ոյժով. իսկ խռովարար-ըմբոստները կենդանի կը թաղուեն այս հրապարակի պարիսպների մէջ: Արժանի պատիժ կը ստանան և նրանք, որոնք վերջերս կատարել են մի քանի գողութիւններ և նրանք, որոնք մոռանալով նամուս ու աբրու ¹⁾, անառակութիւն են գործել, որոնք կշեռքի մէջ խարդախութիւն են արել, մարդասպանութիւն են գործել: Թող նրանց պատիժը ձեզ ամենքիդ խրատ և զգուշութիւն լինի և թող Ալ-

¹⁾ Աբրու, կամ ինչպէս մեր ժողովուրդն է ասում «արու», նշանակում է «երեսի ջուր», իսկ այլպէս՝ պարկեշտութիւն, համեստութիւն,

լահը ամին-ուլ-Մոյմընի ¹⁾ բարեխօսութեամբ երկարարացնէ մեր խաղանի կեանքը»:

Ապա մուսուլմանները սկսեց տալ մի առ մի դատապարտեալների անունները: Երբ նա տուեց բախտիարցի ապստամբ Հէյդար խանի անունը, յանկարծ դատապարտեալներից մինը աղաղակեց.

— Ով մուսուլմաններ, ինձ խեղճիս, որ ոչ մի բանի մէջ մեղաւոր չեմ, դրել են Հէյդար խանի տեղը, իսկ նրան ազատել են...

— Խփէք դրա բերանին, պողաց միաստիճանաւոր, որ գտնուում էր դատապարտեալների մօտ:

Դահիճները վրայ պրծան, բայց դատապարտեալը կարողացաւ այնուամենայնիւ շարունակել.

— Ազատել են մեծ փող ստանալով և փախցրել, իսկ ինձ...

Աստիճանաւորի տուած նշանով զուռնան հնչեց և խլացրեց դատապարտեալի ձայնը, բայց ժողովրդից աւելի մօտ կանգնածները լսեցին նրա խօսքի վերջը.

— ... դրել են նրա տեղ:

Դահիճներից մինը մի րոպէում ձեռքը կոխեց գետնին տապալած դատապարտեալի բերանը և քաշելով լեզուն, դանակի մի հարուածով կտրեց ու նետեց աստիճանաւորի առաջ, որ վերցնելով այդ արիւնաթաթախ լեզուն, դիմեց դէպի վրանները և այնտեղ խոր գլուխ տալով Բէգլար-բէգուն.

— Անպիտան Հէյդար խանը հայհոյեց Շահին, հրամայեցի լեզուն կտրել, ասաց նա, աչքով որոշ շարժում անելով:

— Էֆէրիմ, էֆէրիմ, ասաց Բէգլար-բէգին, որ հասկացաւ իսկոյն անցքի էութիւնը:

Ամբոխի վրայ սարսափը սկսել էր տիրել. ոչ ոք չէր համարձակում ծպտուն հանել:

Վրանների կողմից դէպի կենտրոնը առաջացաւ

¹⁾ Ալի խալիֆայի տիտղոսներից մինն է:

ձիւ վրայ նստած Բէգլար-բէգին և հանելով թուրը պատեանից, գոռաց.

— Դահճապետ, կատարիր արքայական հրամանը:

Հնչեց զուռնա-նողարան, հնչեցին շեփորները, խփուեց թմբուկը:

Դահճապետը, մօտենալով դատապարտեալներէ շարքին, կոպտաբար հրեց առաջ երեքին և տալով երեք դահիճների ձեռքը, մատով ցոյց տուեց երեք սիւն, հրապարակի երեք կողմերում: Դահիճները բռնեցին նրանց ականջներից և սկսեցին վազ տալ դէպի սիւնները: Ընդհանուր բրբիջ բարձրացաւ ամբոխի մէջ, երբ դատապարտեալները, չը կարողանալով դահիճների հետ վազել, ոտոտտում էին: Կարեկցութեան զգացումը հեռու էր փախել ամբոխից: Հասնելով սիւնների մօտ, դահիճները կանգ առան և հանելով գօտիների մէջ խրուած մուրճ ու բեւեռ, պատրաստուեցին դաժել սիւններին դատապարտեալների ականջները: Վերջիններս աղաչում պաղատում էին դամել ականջի փափուկ մասից, բայց դահիճները պահանջում էին դրա համար փող.

— Այլահը վկայ, յետոյ կը տանք, տեսնում ես այժմ բացի մի փոխանից մեզ վրայ ոչինչ չը չկայ,

— Ոչ, ոչ, այժմ պէտք է տաք. որտեղից ուզում էք դտէք. թող ձեր ազգականները, բարեկամները տան:

Դատապարտեալները պաղատական նայուածք ձգեցին հանդիսականների վրայ.

— Ով բարի մուսուլմաններ, Իմամ-Քիլայի սառաբի համար օգնեցէք մեզ:

Երկու հոգի ամբոխի միջից շտապեցին մի քանի շաւան տալ դահիճներին, բայց երրորդը չը գտնուեց և երրորդ դատապարտեալի ականջը մեխուեց սիւնին կոշտ մասից:

— Այսպէս կը պատժուեն բոլոր նրանք, որոնք

կշեռքի խարդախութիւն կանեն, պսուայ մունետիկը:

Թնդաց զուռնա-նաղարէն:

Դահճապետը նորից մօտեցաւ և շարքից դուրս հանեց երեք դատապարտեալի ու կանգնեցրեց մաղալի առաջ, որի վրայ կաթսայի մէջ եռում էր իւղը: Ապա դահիճները բերին մի մեծ կոճղ և դրին դահճապետի առաջ, որ սկսել էր սրել մի մեծ կացին:

Դատապարտեալները մեռելի գոյն ստացած, հազիւ կարողանում էին կցկտուր խօսքերով արտասանել. «աման, աման, էլ չենք անի, գլթացէք մեզ»:

Դահիճները պինդ բռնեցին դատապարտեալներին բազուկները և մէկ մէկ դրին կոճղի վրայ. կացնի մի հարուածով դահճապետը կտրեց նրանց դաստակները, իսկ բազուկը խոթեց եռացոյ իւղի մէջ, որպէսզի արիւնհոսութիւնը դադարէ անմիջապէս:

Ձեռնազուրկ դատապարտեալները ուշաթափ եղան, իսկ մունետիկը գոռում էր դառնալով ամբոխին, որի առաջ դահիճները պտտցնում էին կտրուած դաստակները.

— Այսպէս կը պատժուեն նրանք, որոնք գողութիւն կանեն:

Նորից հնչեց զուռնա-նաղարան:

Դահճապետը մօտեցաւ մի երիտասարդ դատապարտեալի, գեղեցիկ դիմագծերով, սեւորակ աչքերով և խարտեաշ մազերով: Նա կտրեց դանակով նրա ձախ ալանը և խարազանը բարձրացնելով հրամայեց ծամել և ուտել այդ ալանը: Երբ այդ հրամանը կատարուեց, դահճապետը մի զաղիլ ¹⁾ անցկացրեց երիտասարդի քթածակերով, երեսը սև մուր քսեց և զաղիլը տալով դահճի ձեռքը հրամայեց պտտցնել նրան. մի այլ դահիճ բռնեց էջի սանձը, որի վրայ թարս նստած էր կինը, երեսը նոյնպէս մուր քսած և երկուսն միասին սկսեցին պտտցնել երիտասարդին և կնոջ հանգիստ-

1) Բարակ չտան, ձիի մազից:

կանները առաջ, որոնք «մաշալլահ, մաշալլահ» կոչելով մի մի սեւ փող էին տալիս դահիճներին կամ թքելով երիտասարդի և կնոջ երեսին, ասում էին. «այ դուք անզգամներ, անառակներ, չէք ամաչում, չնութիւն էք անում»:

Երիտասարդը ամօթից ոչ ոքի չէր նայում, իսկ կինը, որ հազիւ 18—20 տարեկան կար, այլ ևս ամօթը կորցրած, ասում էր. «ինչ յանցանք եմ արել, որ այսպէս գեղեցիկ ջահիլին սիրել եմ. ինչ անեմ հապա, քանի որ մարդս 60 տարեկան է»:

—Թիւ քո աննամուս երեսիդ, թքում էին ամեն կողմից,

Մի կին, չարշառում փաթաթուած, երեսի բոցն յետ տանելով և մի մեծ կում թուփ շարտելով դատապարտեալուհու վրայ.

—Այ դու լաչառ ¹⁾, գետինը մտնես, ասաց և երկու ձեռքով չանգ ²⁾ արեց:

—Լաչառը դու ես, պոռաց թշուառ կինը, ճանաչելով իր դրացուհուն. ամեն օր քո մարդի դուրանի աշակերտի հետ սիլի-բիլի ես անում, հիմա ինձ ես չանգ անում:

Կինը շտապով երեսի բոցը իջեցրեց. Դահիճները հետզհետէ հաւաքում էին սե փողեր, մինչև հասան վրանների առաջ: Այդտեղ Բէգլար-բէգին իջաւ իր ոտկեսար երեւարից և ձեռացի նշանով հրամայեց կնոջ իջեցնել էջի վրայից ու նրա տեղ նրա սիրեկանին դնել: Երիտասարդին նստեցրին երեսը թարս, գէպի պոչը, և պոչի ծայրը տուին ձեռքը և սկսեցին պտտեցնել: Ջահիլ կինը մնաց կանգնած:

—Բերէք խաչան ³⁾, չունը և կտտուն:

Թշուառ կինը գունաթափուեց, վազեց գէպի այն վրանը, ուր նստած էին մեծ վեզիրը և ներքինապետը, ընկաւ գետնին ծնկաչոք և աղիողորմ աղաղակեց.

1) Անզգամ, 2) ձանկ անել, 3) Տոպրակ, քրձեալ քուակ:

—Գլխովի, գլխովի, չէյթանը ինձ փորձանքի մէջ ձգեց. էլ այդպիսի ղալաթ ¹⁾ չեմ անի:

Ներքինապետի խորշոմած կնճիռները կծկուեցին և նրա դէմքը զայրոյթից կապտեց.

—Քաշ տուէք այս անամօթին, պողաց նա:

Դահլիճները բռնելով թշուառ կնոջ, խօթեցին տոպրակի մէջ, ձգեցին այնտեղ շանը և կատուին և տոպրակի բերանը պինդ կապեցին ու մի մի փայտ վերցնելով, սկսեցին խփել տոպրակին: Աղիողորմ՝ ճիշդ, շան կաղկանձին և կատուի մլաւսց—մի քանի լոպէ լսուեց տոպրակից, ապա արիւնը սկսեց ծորել նրա անկիւններից և երբ, Բէգլար-բէգու նշանով, փայտի հարուածները դադարեցին, տոպրակի բերանը բացուեց ու թշուառ կինը ձգուեց դետնին, միայն մի տձև, այլանդակ զանգուած կարելի էր տեսնել:

—Այսպէս կը պատժուեն նրանք, որոնք անառա-կովի են կը դործեն և կը շնանան, պողաց մունետիկը:

Ջուռնա-Նազարան խլացրեց ամենքի լսելիքը, խը-փուեց թմբուկը և ամբոխը նորից աղմկուեց, նորից յուզուեց: Երկինքը ամպամած, կարծես կամենում էր ծածկել լուսաւոր արեգակից քստմնելի տեսարանը, որը մարդիկ դիտում էին անկարեկից, առանց զայրոյթի, բողոքի նշաններ ցոյց տալու: Սարսափը անդամալուծել, տհաքեկել էր ամենքին, իսկ անհաւատարիմ կնոջ տը-րուած սոսկալի պատիժը շատ սովորական և բնական էր նկատուում և ոչ ոքի մտքից չէր անցնում բողոքել:

Լուռի են, համատարած, չարագուշակ լուռի են տիրեց ամեն տեղ. ամենքը զգում էին որ հասել է ժա-մը աւելի սոսկալի պատիժների, բայց ոչ ոք չէր կա-մենում հեռանալ, ականատես չը լինել, ոչ ոք չէր ու-զում բաց թողնել թամաշան. այդ թամաշային ակա-նատես էին և երեխաները, որպէս զի ապագայում, երբ կը ծերանան, այդ սոսկալի անցքերի թուակա-

¹⁾ Սխալ:

նով պատմեն իրանց պատմութիւնները, «երբ եազիններին¹⁾ պատժեցին, ես ութ տարեկան էի», ասելով:

—Առաջ բերէք եազիններին, տէրութեան խայիններին²⁾, աղաղակեց Բէգլար-բէգին:

Դահիճները բշեցին վրանների առաջ խարազաններով տան և երեք դատապարտեալների, որոնց մէջ աչքի էր ընկնում մօտ 50 տարեկան մի վիթխարի հասակով տղամարդ, հաստ, երկար բեխերով և ալեխառն մօրուքով. նրա գէմքն վէս էր և խրոխտ և թէև ձեռները չլթայակապ, բայց նա քայլում էր այնպէս, որպէս թէ իր Լօրստանի սարերումն լինէր, արհամարհական նայուածք ածելով իր շուրջը և չը խոնարհեցնելով գլուխը շահագրէների և սադրազամի ու ներքինապետի առաջ, որոնք վրանի տակ նստած էին, թիկն տուած մութաքաներին: Դա՛ Լօրստանի Փրէյդուն խանն էր, որ երկար ժամանակ հարկ չէր վճարում Շահին, ըմբոստացած, արհամարհում էր Շահի իշխանութիւնը, փախցնում էր իր գէմ ուղարկած զօրքը իր քաջ ձիաւորների օգնութեամբ, և ահ ու սարսափ էր տարածել այդ զօրքի վրայ. նա ձերբակալուել էր միայն խաբէութեամբ, հիւր հրաւիրուելով Սպահանի կուսակալից, որ երդուել էր զուրանի վրայ, թէ նրա մազին ոչ ոք չի դիպչի: Քաջ, պարզամիտ, վայրենի լեռնցին հաւատացել էր երդման, հաւատացել էր այն զուրանին, որի վրայ երդուել էր կուսակալը և մօլլանների ձեռքով ուղարկել էր նրան. նա եկել էր Սպահան իր քաջ այրու ձիով, ստանալով մեծ պատիւներ. կուսակալն առաջարկել էր նրան որոշ պայմաններով հնազանդել Շահին և խոստացել էր, երդուել, ներումն ստանալ, նշանակել տալ նրան ֆիրմանով Լօրստանի կառավարիչ և խնդրել էր սպասել մի քանի օր, մինչեւ կ'ստանայ Թէհրանից ֆիրմանը: Մի օր նա հրաւիրեց Փրէյդուն խանին զնալ հռչակաւոր բազնիքը, որ կառուցել է Շահ-Աբբաս Մե-

1) Ապրտամբ: 2) Դաւաճան, անհաւատարիմ:

ծը, ինքն եւս նրա հետ գնալով. այդտեղ, երբ տկուր խանին լողացնում էին, առաջուց դարանակալ ֆէրրաշները նրա վրայ պրծան, կապոտեցին և չղթայեցին: Նրա ձիաւորների մի մասը փախաւ, մի մասը, որ կամենում էր ազատել իր տիրոջ, սպանուեց. իսկ տասներկու հոգի ձերբակալուեցին և նոյնպէս չղթայակապ ուղարկուեցին Թէհրան խանի հետ:

Փրէյդուռն խանը կանգնեց շահզադէների վրանի առաջ հրացայտ աչքերով գլուխը բարձր պահած:

— Կուլիս տուր, փէդէր սուխտա ¹⁾. շահզադէներին, մի սպտակ տալով նրա երեսին, պոռաց Բէգլար-բէգին.

— Փառք քեզ Ալլահ, աղաղակեց լուեցին, մուռտառ մկները խրոխտում են չղթայակապ առիւծի առաջ. տօ, տնիծից արմատ, ես քո կնամարդի Շահից չէի վախենում, այս լակոտներին պէտք է գլուխ տամ: Ղաջարները մարդ եմ, նրանք կարող են միայն կնոջ փոխան հագնել, դրժել զուրանի վրայ արած իրանց երդման:

— Խփէք այդ շան բերանին, լսուեց ներքինապետի սուր, բարակ ձայնը:

Բէգլար-բէգին մօտեցաւ, բայց Փրէյդուռն խանի աչքերից կայծեր էին ցայտում և մի ակնթարթում ոտքով անպիսի աքացի տուեց Բէգլար-բէգու փորին, որ սա թաւաղուր, մի քանի քայլ հեռու, ընկաւ փոշու մէջ:

Ընդհանուր ծիծաղ բարձրացաւ ամբոխի մէջ:

Փոշոտ, գլխիկուր, զայրացած, ատամները կրճաւելով վեր կացաւ Բէգլար-բէգին և բարկութիւնից կատաղած ձայնով հայհոյեց ֆէրրաշներին և դահիճներին.

— Ի՞նչ էք կանգնել, ինչու շան սատակ չէք անում:

Բայց լուեցին օգուտ քաղեց ընդհանուր շփոթութիւնից և որքան ոյժ ունէր պոռաց.

— Էյ դու կնամարդի զաջար, էյ դու բիղէյրաթ ²⁾ Մահմադ-Շահ, ով դու անհայր և անմայր, քո կինը,

¹⁾ Հայրդ աչրուած: ²⁾ Ղէյրաթ նշանակում է իսկապէս եռանդ, արիաստուծիւն, վեհութիւն. փոխաբերական մտքով բիղէյրաթ նշանակում է վատահոգի, lâche.

բո բոյրը... ինչ ես թաք կացել, եթէ մարդ ես դուրս եկ մի երեսիդ թքեմ, շուրանով սուտ երգում ու տող...¹⁾

Չուռնայի և թմբուկների ձայնը թոյլ չը տուեց որ այդ հայհոյանքների շարունակութիւնը լսուի ամբոխից։ Փրփրած, կատաղած Բէգլար-բէգին գոռում էր շարունակ։

— Դահճապետ, սատկեցրու այս շներին, շուտ, շուտ։

Փրէյդուն խանին և իր ընկերներին նորից քշեցին դէպի հրապարակի կենտրոնը։ Այդտեղ նրանց մերկացրին հագուստներից և ընդունուած աւանդական սովորութեան համաձայն, ներկայացրին նրանց ղէյլան և մի մի ֆինջան սուրճ. մի բանիսը, որոնք կսրցրել էին արիութիւնը, պահանջեցին ափիոնի չիբուխ, որպէս զի ինքնամոռացութեան մէջ ընկնեն և տանջանք չը զգան։

Փրէյդուն խանը դէն շարտեց և ղէյլանը և սուրճը։

— Ես կարօտ չեմ երգմնադրութ և կնամարդի զաւարի ղէյլանին, պուռաց նա. կատարեցէք ձեր գործը։

Ամբոխը, որ սրտում յարգանք էր զգում դէպի այդ բռի, յանդուգն ու անվեհեր տղամարդը, էլ չը կարողացաւ պահել հիացմունքը և մի ընդհանուր շշուկ տարածուեց՝ «մաշալլահ, մաշալլահ, ափսոս տղամարդ»։

Դահիճները կապեցին լուեցի խանին և նրա աջակից ընկերին թնդանօթների բերանին, նրանք շարունակ հայհոյում էին ճահին, նրա որդիներին, բայց զուռնան և թմբուկը խլացնում էին նրանց ձայնը։ Այն միջոցին, երբ դահիճը մօտեցաւ մօմը ձեռին վառելու թնդանօթների պատրոյդը, շատերը փակեցին իրանց աչքերը. որտաց թնդանօթը և ռդի մէջ մարդկային մարմնի կտորներ, արիւնաշաղախ մսի հատուածներ, ուղեղի կոյտեր պտոյտներ գործելով, սկսեցին թա-

¹⁾ Մինչև այժմ ես երբ մահուան դատաւարտուածները իրանց յուր կտորում են ներումն ստանալուց, զլիատման ժամանակ եկում են հայհոյել չիշոցներով Շահին։

փուռել հրապարակի վրայ և նոյն իսկ հանդիսականների գլխին:

«Քո մօր աչքը կուրանայ», ողբացին մի քանի պառաւ կանայք:

Դէմաւանդի ձիւնափայլ գազալժը այդ միջոցին ծածկուեց թանձր և պղնձա-կարմրագոյն ամպերով և արեգակը թաքնուելով նրանց յետեւ, կարծես չէր կամենում լուսաւորել այդ սոսկալի տեսարանը. բարձրացաւ մի տաք, հեղձուցիչ քամի, որ առատ փոշի բարձրացրեց և ծածկեց հրապարակի տեսարանը ամբոխի աչքից: Այդ մռայլ օդի մէջ լսուեց մունեալիկի ձայնը.

—Այսպէս կը կորչեն նրանք, որոնք կը բամազրեն Շահնշահի զօրութիւնը, որից դողում է համայն աշխարհը:

Տեսնելով իրանց պետի սոսկալի մահը, լուեցինեւրը, կուրցնելով իրանց բաշլութիւնը, սկսեցին գթութիւն պոռալ, բայց դահիճները նրանցից երկուսին ցիցերի վրայ բարձրացրին, իսկ վեցին դրին դիք դիք պարսպի մէջ բացուած ճեղքերում. որմնադիրները աղիւսով և կրախառն ցեխով լցրին ճեղքերը և ապա դատապարտեալների գլուխների վրայով բարձրացնելով պարիսպը, կենդանի թաղեցին նրանց պարիսպի մէջ: Յից հանուած դատապարտեալները սոսկալի տանջանքներով չարչարուելով աղաչում էին սպանել իրանց. շահգադէների մէկի հրամանով զինուորները գնդակահար արին նրանց հրացաններով: Մէկի գլուխը դրին կոճղի վրայ. ափիոնի չիբուխից նա արդէն անզգայացել էլ. դահիճը երկաթեայ մեծ տապարով ջախջախեց գլուխը և ուղեղը ցայտելով տարածուեց ամեն կողմ:

—Ալլահ, Ալլահ, լսում էին միայն թոյլ մրմունջներ ամբոխի միջից:

Ջուռնա-նաղարան շարունակ թնդում էր, դադարելով միայն, երբ մունեալիկը գոռում էր. —այսպէս կը սատակեն նրանք, որոնք կընդդիմանան Աշխարհիս Ալօ-

թարանի իշխանութեան, որից դուրսում են սարերը և ձորերը:

Ապստամբներից մնում էին երկու հոգի, որոնց պէտք է գլխատէին: Երբ դահիճները սկսեցին որել բութ դանակները նրանց աչքի առաջ, նրանք կովի պէս բառաչեցին և նրանց աղիոգորմ՝ լացը մինչև երկինք բարձրացաւ: Նրանք դիմեցին ամբոխին, աղաչելով.

—Ով մուսուլմաններ, թոյլ մի տաք մեզ կովի, ոչ խարի պէս մորթեն. սաւաք արէք, որ դահիճները մեզ առանց տանջելու մորթեն:

Ամբոխը սկսեց սև, նոյն իսկ սպիտակ դրամներ նետել դահիճներին, պռուալով «սրեցէք, լաւ սրեցէք»: Դահիճները դանդաղ սրում էին, բաւական չը համարելով նետուած դրամները: Դատապարտեալները խընդրեցին նորից զայլան և սուրճ, ափիոնի չիբուխ ու ագահաբար ծխեցին: Վերջապէս դահիճները չորեցրին նրանց. յետևից բռնեցին գլուխը, մատերնին խօթեցին թածակերի մէջ և դանակը դնելով կոկորդին, սկսեցին քաշել. «չուտ, չուտ կտրիր», պռուում էին ամեն կողմից: Արիւնը սկսեց առուի պէս հոսել և երկու գլուխները նետուեցին հրապարակի վրայ: Անմիջապէս մի բանի կանայք վազ տալով ամբոխի միջից, թաթախեցին իրանց թաշկինակները լճացած արեան մէջ: Մարմինների ջղաձգութիւնները դեռ շարունակուում էին, իսկ գլխատուածների աչքերը չուած՝ նայում էին:

Այդ միջոցին մի սոսկալի որոտում դղրդեց երկինքը և երկիրը. կուտակուած ամպերը միանգամայն մթնացրին օրը, կայծակը փայլատակեց և ճեղքելով ամպերը խփեց սարերի գլխին. բամբին նորից բարձրացրեց սոսկալի փոշի, որ աւելի մթնացրեց օդը և գրեթէ խաւար տիրեց. սոսկացած, ահաբեկուած ամբոխը կարծում էր որ ահա, ահա կայծակնահար կը լինի և չէր համարձակուում տեղից շարժուել: Ամպերի խորքում նորից թնդաց որոտումն, այս անգամ՝ աւելի դղրդալից, աւելի խլացուցիչ. մի հսկայական կայծակ պատռելով

Թանձր ամպերը յանկարծ լուսաւորեց և սարի զադաթը, և հրապարակը, և ցից հանուած ու գնդակահար եղած գիակաները, և աչքերը դէպի երկինք շռած գլուխները, և ահաբեկուած ամբօխը. նորից տիրեց մթութիւն: Մի նոր քամի, սարսափելի շովնդով փչելով պոկեց վրանները պարանները, կանանց գլխից չարշաւները և տղամարդկանց աբաները, բայց նա վանեց և մի բանի ամպեր, ու երկնքի մի մասը պարզուեց: Ամբօխը մի քիչ շունչ առաւ և լսուեցին ձայներ.

— Երևի անմեղների արին թափուեց և Ալլահը կամեցաւ իր բարկութիւնը յայտնել:

— Ոչ, լսուեց յանկարծ մի այլ ձայն, Ալլահը բարկացել է, որ բաֆիր բաբինները դեռ կենդանի են աշխարհիս երեսին:

Ճիշտ այդ րոպէին հնչուեց մի հոգևոր երգ, որ դատապարտեալ բաբինները սկսեցին խմբովին երգել:

— Անիծեալներ, անիծեալներ, ոռնաց ամբօխը, որի ֆանատիկոսական զգացումները զարթնեցին աւելի մեծ ուժգնութեամբ:

Մունետիկը գոռաց.

— Մուսուլմաններ, դուք տեսաք, թէ ինչ ահուելի պատիժների ենթարկուեցին գողերը, անառակները, ապստամբները. բայց դրանք մուսուլմաններ էին. կան այստեղ աւելի մեծ յանցաւորներ, որոնք ապստամբել են մեր սուրբ զուրանի, մեծ մարգարէի և մեր պաշտելի իմամների դէմ և քուֆր ¹⁾ են ասում, սուտ Մէհտի են ստեղծել և նրան հաւատում. դրանք բաբիներն են, որոնցից տասը հոգի պարագլուխներ ընտրուել բերուել են. դրանցից երկուսը պէտք է կենդանի այրուեն, երկուսի գլուխները պէտք է ցուլերը պոկեն, իսկ վեցը պէտք է գլխատուեն:

— Արժանի են, արժանի, ոռնաց ամբօխը. դրանց արմատը պէտք է ջնջել:

1) Հայհոյանք:

—Սակայն, շարունակեց մունետիկը, պատիժը տալուց առաջ իմամ-ջուման և շէյխ-ուլ-իսլամը կամենում են վերջին անգամ յորդորել որ ձեռք բաշեն, ուրանան իրանց մոլար դենը և դառնան մարգարէի լոյս հաւատին. Ալլահը թող այդ քաֆիրների խաւար սիրտը լուսաւորէ:

—Ամեն, պոռաց ամբոխը:

Բարեկներին խարազանով բշեցին դէպի վրանը, ուր բազմած էին երկու կրօնապետները, սադրազամը և ներքինապետը: Խաղաղ անդորրութիւն տիրում էր բարեկների դէմքի վրայ. վախի, սարսափի հետքն անգամ չէր նկատուում. միայն երիտասարդ բաբին, որ գնում էր պարագլուխ ծերունու յետևից, գունաթափուած էր և անդադար կրկնում էր:

—Ձեմ կարող հայր, չեմ կարող տանել այդ տանջանքները և, վերջապէս, ով պէտք է պահէ մօրս քեզանից յետոյ.

—Ձաւակս, կանգ առնելով և անհուն գլծով նայելով որդու վրայ ասաց ծերունին. բո ժամը դեռ չէ հասած, քեզ բռնադատել չեմ կարող, հետևիլ սրտիդ թելադրութեան և աղօթիր հօրդ համար:

Երիտասարդը չոքեց, հայրը ձեռները դրաւ գլխին և օրհնեց, ապա շտապ շտապ առաջ անցաւ ու կանգնեց վրանի առաջ միւս ընկերների հետ: Երիտասարդը մի քիչ հեռու առանձին կանգնեց և գլուխ տալով կրօնապետներին, ասաց.

—Ես բաբի չեմ այլ ևս, ես մուսուլման եմ, ազատեցէք ինձ պատժից:

Եւ արտասանեց բարձրաձայն իսլամի հաւատոյ հանգանակն—«Ձը կայ Աստուած բացի Ալլահից և Մահմէդը նրա մարգարէն»:

Ներքինապետը ծլունկ եղաւ տեղից, համբուրեց երիտասարդի ճակատը և ամենքն պոռացին.

—Օրհնեալ է Ալլահը, մարգարէն իր հրաշքը ցոյց տուեց:

Երիտասարդին տարան վրանը:

—Սալաւաթ, սալաւաթ, պողաց ամբոխը:

Ծերունի բաբի դէմքը համակուեց տխրութեամբ. նա նայեց իր ընկերներին և ասաց նրանց.

—Եթէ ձեր ժամն ևս չէ հասել, եթէ ձեզ պատրաստ և կազմ չէք գտնում անանցաւոր և յաւիտենական արքայութեան համար, կարող էք հետեւել որդուս:

—Քաւ լիցի, քաւ լիցի, միաբերան աղաղակեցին ինն բաբիները:

Եւ ծունկ չորեքով, ամենքը բարձրաձայն կարդացին.

«Դաւանում ենք և խոստովանում, ով Աստուած, որ դու յայտնեցիր մեզ ճշմարտութեան արեւը. վկայում ենք, որ չը կայ ուրիշ հազգ—ճշմարտութիւն—բացի նրանից, որ դու յայտնագործեցիր մեզ. դաւանում ենք, որ ոչ ոք չէ կարող ոչ գովել քեզ, ոչ երեւակայել: Ով մեր Աստուած, մի յետ մղիր մեզ, որ կառչել ենք Քո կրօնից յոյսի մատերով»:

Ամբոխը, որ շրջապատել էր իսլամի այդ հաւատաւորացեալներին, նոյն իսկ կրօնապետները և դահիճները, թմրած և շլացած այն վեհութեան ազդեցութեամբ, որ տպաւորուած էր բաբիների դէմքերի վրայ, լուռ լսում էին և ոչ ոք չը խանգարեց այդ ազօթքը: Առաջինը թմրութիւնից սթափեց ներքինապետը, որ իր կանացի, սուր, անհաճոյ ձայնով սուլեց.

Սրանք քուճի են կարդում, սրանց լեզուն պէտք է կտրել տակից և շների առաջ ձգել:

Դահիճները վրայ պրծան:

—Սպասեցէք, ասաց շէյխու-ուլ-իսլամը, գուցէ, այս մոլորեալներին խելքի բերենք:

Եւ դառնալով բաբիներին, հրամայեց.—Վեր կացէք:

Բաբիները անմռունչ հնազանդեցին:

—Դուք ընդունում էք, որ Ալլահը մի է, որ նա հազգ—ճշմարտութիւն է:

—Ընդունում եմք և հաւատում:

Ամենքի գէմբի վրայ խորին զարմացր արտայայտուեց:

Շէյխ-ուլ-իսլամը շարունակեց.

—Ընդունում էք, որ Մահալին պէտք է գայ:

—Ընդունում ենք:

—Ուրեմն էլ ինչի մէջն է ձեր և մեր զանազանութիւնը, ինչի համար ձեզ դահճի ձեռքն էք տալիս:

—Ոչ, ասաց ծերունի բաբին, զանազանութիւնը մեծ է: Ալլահը նոյն ինքն հագգն է, ճշմարտութիւնը. Մահմէդը նոյնպիսի մարգարէ և առաքեալ է, ինչպէս Աբրահամը, Մովսէսը, Յիսուսը, որոնց բերանով Աստուած յայտնագործել է մարդկանց ճշմարտութիւններ, բայց ոչ վերջնական ճշմարտութիւնը. վերջնական, յուսկիտեանական ճշմարտութիւն նա պէտք է աւանդէ Մահալին բերանով, դռնով և այդ դուռը, բաբը, այդ Մահալին այսօր եկել է և բերել մեզ վերջնական ճշմարտութիւնը:

—Դու սուտ ես խօսում, գարշելի ծերունի. Մահալին երբ գայ, պէտք է նուաճէ իր զօրքով բոլոր աշխարհը և հպատակեցնէ իսլամին. ուր է նրա զօրքը, ուր է նրա զօրութիւնը. ինչո՞ւ բոլոր աշխարհը չը նուաճեց և իսլամի ոտքի տակ չը գրեց:

—Հէնց այդտեղ է ձեր մոլորութիւնը. Մահալին չը պէտք է իր թագաւորութիւնը, իր զօրութիւնը հաստատէ գիականի վրայ, այլ մարդկանց սրտերի մէջ. նա պէտք է նուաճէ սրտերը:

—Ուրեմն, ձեր կարծիքով, մոսսուլմանը ոչ մի առաւելութիւն չունի:

—Ոչ. մոսսուլման, հրէայ, քրիստոնեայ, մօլթանի ամենքը մի են և հաւասար, ամենքը եղբայրներ են, չը կայ ընտրեալ. ինքիհաղ և իքթիճագ—համերաշխութիւն և միութիւն մարդկային բոլոր ցեղերի մէջ—ահա մեր հաւատը, ահա վերջնական ճշմարտութիւնը:

—Անէծք, անէծք, քուֆր է խօսում այս անիծեալ:

լը, պրուացիին կրօնապետները և ներքինապետը, տա-
րէք սրանց և սատակեցրէք:

—Ձեր սուրը՝ մեր պարանոցը, յարեց ծերունին,
դուք կարող էք սպանել միայն մեր մարմինը, բայց ոչ
մեր հոգին. մենք այսօր տասն ենք, հարիւր, վաղն
կը դառնանք հազար, տասն հազար, միլիօն. կը գալ
ժամանակ երբ ոչ մեծ կը լինի. ոչ փոքր, ոչ աղնուա-
կան, ոչ ուամիկ, ոչ աղքատ, ոչ հարուստ, ոչ իշխող, ոչ
հպատակ, ոչ տէր, ոչ ծառայ. ամենքը մի կը լինեն,
ամենքը Ալլահի որդիք կը կոչուեն:

Ամբոխը շնչասպառ լսում էր ծերունու խօսքերը.
ամենքի դէմքի վրայ խորին զարմանք էր կարգացում.
միթէ սրանք բաֆիրներ են. սրանք կատարեալ, ճշմա-
րիտ մուսլիմներ են: Ոչ մեծ կը լինի, ոչ փոքր, ոչ աղ-
քատ, ոչ հարուստ — սրպիսի երանութիւն. ուրեմն այլ
ևս բաղցած չենք քնի ոչ մենք, ոչ մեր երեխաները.
ուրեմն մեզ այլ եւս ճիպօտներով չեն ծեծի, մեզ չեն
հարստահարիւ հոգեբանը, անշուշտ, կը կարգար այս
մտածմունքը այն բաղմամբիւ մշակների, համալների,
կիսաքաղցած և կիսամերկ արհեստաւորների դէմքի
վրայ, որոնք մի քանի րոպէ առաջ, պատրաստ էին
կտոր կտոր անել այդ բաբներին, համարելով նրանց
թշնամի Ալլահի, ընկեր սատանայի և բաժին դժոխքի:
Նա, այդ ամբոխը, այլ ևս չէր սոռնում, անէծք չէր
կարդում. սերմը, բարի սերմը ընկել էր պարարտ
հողի վրայ և ապագայում առատ հունձ պէտք է տար...

Տեսնելով բաբի ծերունու խօսքերի ազդեցութիւնը
ամբոխի վրայ, կրօնապետները և ներքինապետը շտա-
պեցին հրամայել դահճապետին դորձադրել պատիժը:

—Սրանք հայհոյում են Ալլահին և մեծ մարդա-
րէին, պրուացիին նրանք. սրանց շունչը պղծում է երկի-
րը:

Հնչեց զուռնահնաղարան. դատապարտեալները
տարուեցան հրապարակի կենտրոնը, երկուսին դահիճ-
ները կապեցին սիւներից, երկաթէ շղթաներ անցրին

նրանց պարանոցով և այդ շղթաները կապեցին մի զոյգ գոմէշի և մի զոյգ եզների լուծից. երկուսին նստացրին գետնի վրայ, նրանց վրայ ու չորս կողմը թափեցին սեւ նաւթ ու դիզեցին ցախ ու փայտ: Մնացած հինգին չոքեցրին և դահիճները հանելով իրանց բութ, ժանգոտած դանակները, սկսեցին պուռալ:

— Դէ տուէք մեր վարձը, որ սրենք, եթէ ոչ ոչ խարի պէս կը մորթենք:

Բաբինները սկսեցին աղօթել և երգել:

— Ուրեմն ոչ ոք այս շների համար ոչինչ չէ տալիս, ասացին դահիճները և դառնալով բաբիններին. «ձեր գլուխը մի բխտի¹⁾ անգամ չարժէ, անհաւատ շներ»:

Յանկարծ ամբոխի միջից դուրս եկան մի քանի հոգի և ձգեցին դահիճների առաջ մի բուռ սպիտակ զուաններ: Դրանք հայեր էին և հրէաներ:

— Ահ, էրմանի, եահուդի, դուք էլ ախր սրանց նման քաֆիրներ էք, ծիծաղեցին դահիճները և հաւաքելով դրամները, սկսեցին սրել դանակները:

Ամբոխը պահպանում էր խորին, մեռելային լուծիւն. նրա սրտի մէջ մտել էր արդէն կասկածը. «այս մարդիկ արդար են և անմեղ, սրանք մեր բարեկամներն են»: Եւ այն արիւնթիւնը, այն ուրախութիւնը, որով այդ մարդիկ պատրաստուում էին մեռնելու, դիտում էին, անտարբեր, դահիճների պատրաստութիւնները և տանջանքի գործիքները՝ զարմացրել, ապշեցրել էին ամբոխին: Միթէ չար, ամբարիշտ կարող են լինել այն մարդիկ, որոնք քարոզում են սէր, գթութիւն, եղբայրսիրութիւն, որոնք ողորմում են աղքատներին, տնանկներին, նրանց եղբայր, ընկեր են աշուանում:

Յանկարծ մի սարսափելի բոց բռնկեց. դահիճները վառել էին կենդանի ջահերին, մուխը, կրակը բարձրա-

¹⁾ Գէո կոպէկ:

նալով օդի մէջ, ծածկեցին նահատակներին: Վախեցած այդ կրակից և անհանգստացած տաքութիւնից գոմէշները և եզները երբ մանաւանդ զգացին խարազանի հարուածները իրանց մէջքին, կատաղած, այնպիսի ուժգին շարժումն գործեցին և ձգեցին շղթաները, որ բաբինների գլուխները մի ականթարթում պոկուեցին և տաք արիւնը վշվշաց ու ողողեց շրջապատողներին:

Թանձր, մռայլ, սև ամպերը, որոնք նորից կուտակուել և բռնել էին ամբողջ երկնակամարը, այդ միջոցին թնդացին այնպիսի սաստիկ որոտումով, որ ամբոխը ցնցուեց և սարսափած «Ալլահ, Ալլահ» աղաղակեց. որոտը սաստկացաւ, կայծակները փայլատակեցին, և խաւարը գրեթէ պատեց. վախը մտաւ ամենքի սիրտը. թուում էր, թէ ահա մի սարսափելի բան պէտք է պատահի, երկինքը փուլ պէտք է գայ, երկիրը պէտք է պատռուի և համատարած լուռութեան մէջ լսում էին միայն մի բանի զարհուրած ձայներ. «Վայ մեզ, վայ մեզ, արդար արիւն թափուեց»: Յանկարծ մի ահեղ կայծակ նորից փայլատակեց, պատռեց ամպերը և գրնաց խփեց Շահի մզկիթի գլխին և երբ դրանից յետոյ խաւարը սկսեց բիշ բիշ ցրուել, փոթորիկը հանդարտուեց, երկինքը բացուեց, սարսափած ամբոխի առաջ պատկերացան հինգ բաբինների գլուխները, որոնք դահիճները շարել էին իրար կողքի, դիակների մօտ, իսկ խարոյկից բարձրանում էր դեռ մուխ և ճենճերահոտ:

Անձրեւը սկսեց տեղալ. ամենքը սկսեցին փախչել և մի բանի ընկալից յետոյ ահագին հրապարակը սկսեց դատարկուել. դահիճները սկսեցին երկար կարթերով բաշել դիակները և նետել հրապարակի ներքեւի ծայրում գտնուած խանդաքը ¹⁾:

Վրանների առաջ խռնուել էին ֆէրրաշները, շաթիրները. շահզադէները նստեցին իրանց ոսկեսար ձիերի վրայ: Դուրս եկաւ և իմամ: Նուման սադրազամի

¹⁾ Իրամաս:

ու ներքինապետի ընկերակցութեամբ և երբ վերջինս համբուրում էր նրա քղանցքները, կրօնապետը նստելով իր սպիտակ էջի վրայ, ասաց. «Աղա սադրազամ, ջհուդ-ների խնդիրը վերջացաւ. հաստատուեց իմ առաջ, որ ջհուդ աղջկան սէյիդը բռնի կերպով տարել է, ուստի և ես ազատութեան ֆիթվայ տուի այսօր առաւօտեան, բայց աղջիկը առժամանակ կը մնայ իմ տանը, գուցէ կարողանանք մեր սուրբ հաւատին բերել նրան»։

Սադրազամը շնորհակալութիւն յայտնեց և կրօնապետը, իր թալաբաներից հետեւում, մեկնեց իր տունը։

Մի սէյիդ, որ լաւ լսել էր իմամ-ջումայի խօսքերը, գունաթափուած, բռունցքը շարժեց կրօնապետի յետեւից և աղաղակեց։

— Ես վրէժս կառնեմ, ես այդպէս չեմ թողնի, ես ցոյց կը տամ ամենքիդ։

— Ես զգուշացրի ձեզ, աղա սէյիդ, որ իմամ-ջուման սիրում է գեօզալներին, ձեռքը դնելով սէյիդի ուսին ասաց Սէլիմ շաթիրը, որ վաղուց հետեւում էր սէյիդի շարժումներին։

— Այդ դու ես, հաջի Սէլիմ. իմամ-Րիզան վկայ, որ ես վրէժս կը հանեմ, բայց ինձ պէտք է ասպացոյց...

— Ապացոյց. ես ձեզ կը տամ. եկէք միայն այս երեկոյ իմամ-ջումայի տունը, շնջաց Սէլիմը սէյիդի ականջին և արագ բայլերով հեռացաւ։

XVI

Մինարէներից հնչում էին երեկոյեան եղանները, հրաւիրելով բարեպաշտ մուսլիմներին ալօթիքի կանգնել և հանդստանալ ցերեկուայ աշխատութիւններից։ Թէհ-րանի ահաբեկուած ժողովուրդը շտապել էր փախուել իր տների մէջ և փողոցներում շատ քիչ անցուդարձ կար։ Միայն իմամ-ջումայի տան առաջ կանգնած էին մի քանի հոգի և դռնապանը երգում հաւատ էր ա-

նում, որ աղան, յոգնած, եկել պառկել է, պատուիրել է ոչ ոքի ներս չը թողնել ու արձակել է բոլոր դրա-
գիրներին: Եւ մինչ դռնապանը բշելով այդ անժամա-
նակ եկած խնդրատուներին, կամենում էր մեծ դուռն
փակել. նրա առաջ յայանուեց Սէլիմ չաթիրը և սա-
լամ տալով խնդրեց կանչել հարամխանից Եասաման
աղախնուն, ասելով որ Բէգլար-բէգու կինը, շահադէ
խանըմը մի յանձնարարութիւն է արել Լէյլա խանըմին
և պէտք է անպատճառ իսկոյն հաղորդել:

—Դէ որ այդպէս է, ասաց ծերունի դռնապանը,
դու մի զէյլան չաղ արա, ես գնում կանչեմ Եասա-
մանին:

Եւ ծերունին, բարձրացնելով վարագոյրը, մտաւ
հարամխանի պարտէզը:

Սէլիմը անմիջապէս բացեց մեծ դուռը և շուաց-
րեց. մի բոպէից յետոյ փողոցի ծայրին կանդնած երի-
տասարդ սէյիդը ներս մտաւ նախադաւիթը: Սէլիմը
բարձրացրեց բիրունին տանող դռան վարագոյրը և ա-
սաց սէյիդին. «չուտ մտիւր, ոչ ոք չը կայ. կը գնաս կը
մանես մեծ թալարը, այնտեղ ականջ կը դնես, թէ ինչ
է անցնում կողքի սենեակում և կարող ես տեսնել թէ
ինչ է անում աղան. դէպի տռանձնարանը տանող սե-
նեակի դուռը փակուած չի լինի. ի սէր Սլլահի այն-
պէս արա, որ աղան ոտքիդ ձայնը չը լսի. երբ դուրս
դաս, կամաց եկ, դուռը հանգարտ բաց, ծերունին խոր
բնացող է, չի լսի, և գնա:

—Միամիտ մնայ, պատասխանեց սէյիդը:

Եւ վարագոյրը ընկաւ նրա յետեւից: Այդ միջոցին
եկաւ ծերունի դռնապանը, ասելով. «ահա և գեղեցիկ
Եասամանը»:

Խափշիկուհին զայրացաւ.

—Տես, տես, այս քաֆթառն ևս գեղեցկութեան
մասին է խօսում:

—Ինչո՞ւ չեմ խօսի, ես ումից պակաս եմ: Այլահը
վկայ, որ պէտք է այն ջհուդ աղախնին մուսուլման

չինեմ' և ինձ կին առնեմ: ոհ, Սէլիմ, որքան գեղեցիկ էր անիծեալը, երբ էզանից մի քիչ առաջ անցկացաւ առաջիցս ուրախ ուրախ. այնքան ուրախ էր, որ կարծես աշխարհիս թագաւորութիւնը իրան էին տուել:

— Ի հարկէ ուրախ կը լինէր, ասաց Նասամանը, աղան այսօր ֆիթվայ արձակեց, որ ջհուդները արդար են և Նսթերը սէյիդի կինը չէ. ահա այդ ֆիթվան աղան տուեց Նսթերին, նա էլ տուեց իր աղախնին, որ տանի տայ ջհուդներին. հիմա ինչքան ուրախացած կը լինեն:

— Այդ լաւ բան չի արել աղան. չատ զարմանում' եմ: ինչու հապա ջհուդ աղջկան, Նսթերին բաց չի թողնում:

— Որովհետեւ կամենում է համոզել նրան մուսուլմանութիւն ընդունել. աղան ասում է՝ ափսոս է այդպիսի նազանի, գեղեցիկ աղջիկը ջհուդ լինի:

— Ահ, ինչ լաւ կը լինի. այն ժամանակ նրա աղախին Ռեբեկան եւս մուսուլման կը դառնայ և ես նրան կուղեմ. ոհ, անիծեալ աղջիկն խելքս հետն տարաւ:

— Լաւ, ամուսն, բարով մուրազիդ հասնես, դու ղէյլանդ ծխիր, ես Նասամանին ասեմ ինչ որ խանըմըս հրամայել է:

Եւ երկուսն էլ դուրս եկան փողոց:

— Ահ, աղա Սէլիմ, ասաց խափշիկուհին, խեղճ Նսթերը յոյս ունէր, որ դու կ'ազատես նրան. Լէյլա խանըմը սաստիկ բարկացած է քեզ դէմ. Նսթերն արդէն պատրաստուում է աղայի մօտ գնալ և մի երկու ժամից յետոյ նրա բանը պրծած կը լինի. խեղճը ցաւից կը մեռնի, բայց Լէյլա խանըմը որոշել է խափանել և թոյլ չը տալ:

— Դու ասա երկուսին էլ, որ միամիտ մնան, ես ինչ ասել եմ, կը կատարեմ: Լէյլա խանըմը թող տեղն հանդարտ նստի. կատարել ես, ինչ որ պատուիրել եմ:

հօ չես փակել աղայի սենեակից դէպի թալարը տանող դուռը:

—Ոչ, բայց ինչի՞ համար ես կամենում որ դուռը բաց մնայ, քանի որ թալարում ոչ ոք չը կայ. աղան ճամբել է ամենքին:

—Այդ յետոյ կ'իմանաս, այժմ մնաս բարեւ. մնաս բարեւ, ամու, ասաց Սելիմը դռնապանին և դուրս գնաց:

Մութը արդէն կոխել էր, փողոցում ոչ մի ձայն չէր լսուում, երկինքը ամպամած էր, ոչ մի աստղ չէր փայլում և գիշերուայ խաւարը աւելի սաստկացել էր: Սելիմը նստեց դռան դրսի սաքուի վրայ և հանելով ջիւրից չիբուխը, ծխախոտի քսակը, լցրեց չիբուխը ու սկսեց ծխել: Նա սաստիկ յուզուած էր. իր մտքի մէջ վաղուց երկնած և յղացած վրէժխնդրութեան ժամը մօտեցած տեսնելով, նա սաստիկ երկիւղ էր կրում, որ չը յաջողուի. սէյիդի մէջ նա տեսնում էր Ալլահից ուղարկուած այն ձեռքը, որ պէտք է կատարէր արդար վրէժխնդրութեան ակտը. նրան սկզբում տանջում էր այն միտքը, թէ մեղաւոր իմամ-ջումայի հետ նա զոհում է և անմեղ հրէայ աղջկան, Եսթերին, որովհետեւ սէյիդը դժուար թէ խնայէ նրան, բայց, նա շատ էլ հոգս չէր անում այդ մասին. նախ՝ ինչ մեծ բան է, եթէ մի ջհուդ աղջիկ զոհուի. երկրորդ, առանց Ալլահի կամքի, աղամորդու գլխից մի մազ անգամ չի ընկնի և Եսթերի ճակատին երեւի այդպէս է գրուած ի վերուստ, որ նա սէյիդի ձեռքով սպանուի... Այդ մտածմունքները հանդարտացրին Սելիմին և նա, կծկուած սաքուի խորքում, սպասում էր: Ներսից ոչ մի ձայն, աղմուկ չէր լսուում:

Ծերունի դռնապանը փակելով դուռը Սելիմի յետեւից և բանալին կախելով գաւթի պատից, ծխեց ղէյլանը, ապա գրպանից հանեց փոքրիկ տուպը, կլլեց ավիոնի երկու դեղհատ և շուտով նա խռմիացրեց,

քնում՝ անոյշ երազներ տեսնելով և գրկելով հրէայ ա-
ղախնին....»

Երիտասարդ սէյիդը իրան միայնակ գտաւ ընդար-
ձակ բակի մէջ. նա շատ լաւ ծանօթ էր իմամ-Նումայի
արտաքին կացարանի տեղագրութեան, ուստի և վրս-
տահ, առանց վարանելու, մթութեան մէջ նա դիմեց
նախասենեակը, ուր ցերեկը նստում էին երկրորդական
գրագիրները, թալաբանները, ըստ սովորութեան, բոլոր
դռները բաց էին, ուստի նա հեշտութեամբ մտաւ ըն-
դարձակ թալարը և նստելով վարագոյրի մօտ, սրեց
ականջը։ Նա արդէն որոշել էր ինչ ասել, եթէ մէկը
վրայ հասնէր. «Աղան իրան հրամայել է երկու օր ա-
ռաջ գալ իր գործի վճիռն իմանալ, և նա եկել սպա-
սում է»։ Սկզբում մթութեան մէջ նա ոչինչ չը նկա-
տեց, բայց երբ աչքերը հեղհեռէ վարժուեցին, նա նը-
կատեց մի աղօտ լոյս թալարի վերին ծայրի դռնի ճեղ-
քից. նա գիտէր, որ այդ դռնը տանում է ա-
ղայի առանձնասենեակը, հարամխանան, ուրեմն այն-
տեղ մարդ կայ, գուցէ ինքն աղան, և Եսթերը նրա
դրկումն է։ Այս մտքից նա յանկարծ ծլուկ եղաւ և
բայլեց թալարում. կօշիկները նախասենեակում հանած
լինելով, նա քայլում էր միայն գուլքա հագած, փա-
փուկ գորգերի վրայ ուստի և ոտնաձայնը չէր կարող
լսուել։ Անշուկ, լուռ, նա հասաւ դռան, որի կիսաբաց
ճեղքից ներս էր մտնում աղօտ լոյսը։ Նրա սիրտը այն-
պէս էր բաբախում սաստիկ, որ քիչ էր մնում՝ կուրծքը
պատռի դուրս պրծնի։ Խանդոտութիւնը, կասկածը
այրում, տոչորում էին նրան և սակայն, նա գեռ չէր
կամենում հաւատալ, որ իմամ-Նուման, որբութեամբ և
առաքինութեամբ հռչակուած ծերունին, այն խօտա-
կրօն և խօտապահանջ քահանայապետը չլանար մի ջը-
հուդ աղջկանից և ոտնակոխ անէր իսլամի նուիրական
պատուիրանները։ «Ով գիտէ, մտածում էր նա, այդ
անիրաւ շաթիր Սէյիմը խաբեց ինձ և կամեցաւ թա-
կարդի մէջ ձգել»։ Կիսաբաց դռան ճեղքը թոյլ էր տա-

լիս լաւ նկատել սենեակի մէջ անցած դարձածը: Նա նայեց. սենեակի գլխին, ճիշտ դռան հանդէպ, սաջադայի վրայ նստած էր իմամ-ջուման, առանց չալմայի, ճաղատ գլխով, սլարեգօտը հանած, գօտին քակած. նա միայն մի երկար սպիտակ շապիկ ունէր հագած և մի փոխան, ու շապիկ վրայից մի թիրմա քուլաջէ: Նրա դէմքը կարծես երիտասարդական աշխոյժ էր արտայայտում. աչքերը, կատուի բերբերի պէս փայլում էին. անհանգարտ չարժումներ էր անում: Նա ծխում էր զէյլան. այդ նշաններից սէյիդը հասկացաւ. որ աղան մէջուն է կուլ տուել. «ահ, ուրեմն ճիշտ է, ջհուդ աղջըլայ համար է», մտածեց նա և արիւնը խոխոց նրա գլխին. զայրոյթից ձեռները, տաները դողացին և բիշ էր մնում ընկնի:

Իմամ-ջուման զէյլան էր ծխում: սենեակի մէջ տեղ, կաշուէ սփռոցի վրայ դարսուած էին զանազան օշարակների սրուակներ, պտուղներ, քաղցրաւենիք, շաքարեղէն և խմորեղէն, սակայն ուրիշ ոչ ոք չը կար. պարզ էր, որ աղան սպասում էր մէկին. սաջադայի կողքին ձգուած էր անկողին. «իսկ եթէ իր կանանց մէկին է սպասում և ոչ նսթերին», անցաւ յանկարծ սէյիդի մաքով: Եւ նա մի տեսակ թեթեւութիւն զգաց, կարծես մի ծանր քար բարձուեց նրա կրծքից:

Յանկարծ իմամ-ջուման ծափ տուեց. մի քիչ յետոյ ներս մտաւ մի կին, որի ձայնից սէյիդը ճանաչեց Խասամանին, որ ասաց. «ի՛նչ էք հրամայում»:

— Ես չասացի՞ ջհուդ աղջկան կանչիր այստեղ, ինչու է ուշանում:

Սէյիդի աչքերը արիւնով լցուեցան. «անիծեալ», միմնջաց նա:

— Այս բոլորին կը գոյ, լսուեց Խասամանի ձայնը. նա հագնւում է:

— Ուրեմն ճիշտ է Սէլիմի ասածը, ուրեմն այս անիծեալը խաբեբայի մէկն է եղել և ջհուդ աղջկայ գեղեցկութեան համար այնպիսի ֆիթվայ է տուել: Ահ,

դո՛ւ կամենում ես իմ որսը ձեռքիցս խլել, աղա իմամ-
ջումայ, քեզ շատ թանգ կը նստի այդ։

Եւ սէյիդը ձեռքը տարաւ մէջքը և գօտիի մէջ
թաքցրած մի կէռ խանչալ հանեց ու կոխեց դօտու
մէջ, առաջից։ «Ուրեմն այդ անիծեալ ջհուդ աղջիկն ևս
համաձայնել է սրա հարճը դառնալ, որպէս զի ազատի
իր մուստառ ջհուդներին և արձակուի ինձանից։ Քեզ
էլ ցոյց կը տամ, անզգամ աղջիկ» — մտքում որոտում էր
սէյիդը։

Վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ Եսթերը.
սէյիդը տեսաւ նրան, որովհետեւ նա կանգնեց սենեա-
կի մէջ տեղ, սփռոցի գլխին ու խոր գլուխ տուեց ա-
ղային։ Նա հագել էր զարդարուն շորեր, ձգել էր ա-
պարանշաններ և օղեր, սնգուրել էր յօնքերը և այն-
պէս գեղեցկացել էր, որ նմանում էր քաշած պատ-
կերի։ Դէմքը սակայն վշտահար էր, մի քիչ դալուկ, որ
աւելի ուժեղացնում էր գեղեցկութիւնը։

Հոգեկան ծանր տանջանքներից, իր սրտի մէջ
մղուած յուսահատ պայքարից յետոյ, նա եկել էր այն
որոշման, որ պէտք է հրաժարուել անձնական երջան-
կութիւնից և զոհել իրան, բայց այդ զոհը նա չէր կա-
մենում անել, ծախելով իրան։ Երբ առաւօտը, իմամ-
ջուման յանձնեց իրան ֆիթվան, որ ապացուցանում
էր հրէաների անմեղութիւնը, նա յայտնեց, որ եթէ
Եսթերը կամենայ խաբել իրան, խոստումը չը կատարել,
նա ֆիթվան կեղծ կը հրատարակէ և հրէաները չեն ա-
զատուի ջհուդ-քուշանից։ Եսթերը հաստատեց խոստումը,
Ռեբեկայի ձեռքով ուղարկեց ըստինների ազատութեան
թուղթը, պատուիրելով նրան ծածուկ ասել Սաւուղին,
որ նա չը կասկածի իր նշանածի անմեղութեան, հաւա-
տարմութեան մասին և նախ քան նրան անիծելը, սպա-
սէ մի քանի ժամանակ։ Զոհել իր կուսութիւնը վաւա-
շտ ատելի ծերունուն — նա սոսկում էր այդ մտքից և
գերադաս էր համարում մեռնել, սպանել իրան։ Որքան
նա լացեց, երբ հասաւ ժամը գնալու իմամ-ջումայի

մօտ. նրա հետ լացում էր և Լէյլա-խանըմը, որ նոյնպէս զոհել էր իր կուսական տարիները, թարմութիւնը այդ զոհելի ծերունուն: Լէյլա-խանըմը շատ լաւ գիտէր, թէ ինչու իմամ-ջուման այնպէս էր կարգադրել, որ այդ օրը ճամբել էր բոլոր սպասաւորներին, հարէմի կանանց պատուիրել էր, որ կարող են դնալ իրանց ծնողների և ազգականների տները և միայն ծեր դռնապանն էր մնացել, որին պատուիրել էր ոչ ոքի չընդունել: Իրան ևս իմամ-ջուման առաջարկել էր հիւր դնալ հօրը տունը, բայց նա, հիւանդութիւնը պատրուակ բերելով, մնացել էր. այն ժամանակ ծերունի վաւաչոտը յայտնել էր նրան որ մտադիր է սիղայ անել Յսթերին և դրանով ջհուդ աղջկան դժոխքից ազատել: Իբրեւ բարի մուսուլմանուհի, Լէյլա խանըմը պարտաւոր էր միայն ուրախանալ, որ սուրբ մարդը, բարի նախանձախնդրութեամբ, աշխատում է աւելացնել մուսուլմանների թիւը և գանգատուել էր միայն, որ երեւի ալան ձանձրացել է իրանից, երեւի պառաւել է ինքն:

—Ոչ, իմ սիրուն, նազելի Լէյլա, դու իմ աչքի լոյսն ես, պատասխանել էր աղան. մի բարկացիր, էգուց դիչեր անպատճառ քեզ հետ կ'անցնեմ, քո նստիչուն աչքերդ կը համբուրեմ:

«Նրանի թէ այս օր իսկ մեռնէիր, մտածել էր Լէյլա խանըմը. ես էլ, խեղճ Յսթերն էլ կ'ազատուէինք քո ճիրաներից»:

Իմամ-ջուման պատուիրել էր, որ Յասամանը լաւ սեղան պատրաստի իր սենեակում: Լէյլա խանըմը, տեսնելով Յսթերի աղի արտասուքը, աշխատում էր մխիթարել նրան. «ինչ արած, Ալլահը այսպէս է ստեղծել կնոջ. մենք պէտք է տղամարդկանց սարկուհին, հաճոյքի առարկան դառնանք. մենք չենք կարող մեր ետրի¹⁾

¹⁾ Նա — ընկեր, սիրական. պարսից բանաստեղծութիւնների մէջ մէջ լաճախ զործածուող բառ:

հետ ամուսնանալ: Աստուած ողորմած է. ով գիտէ դեռ ինչեր կարող են պատահել»,

Լէյլա խանձմը դեռ սրտում մի անորոշ յոյս ունէր, թէ Սէլիմը կ'ազատի խեղճ Եսթերին: Նա ոչինչ չը գիտէր Սէլիմի ծրագրի մասին. վերջինս, որքան էլ սիրում էր նրան, բայց այն համոզմունքով, թէ «կինը, իբրեւ երկար մազեր ունեցող, կարճամիտ է և կնոջ չը պէտք է գաղտնիք հաւատալ», թագցրել էր նրանից իր գաղտնիքը:

— Ոչ, ոչ, ասաց Եսթերը, ինձ միայն մահը կարող է ազատել. ես միայն խնդրում եմ բեղանից Լէյլա, շուտ իմաց տալ հօրս և նշանածիս, եթէ ինձ հետ մի բան պատահի:

— Բայց ինչ կարող է պատահել:

— Ով գիտէ, ցաւից, վախից կամ զգուանքից սիրտս կարող է պտուռուել:

Եւ ծածուկ թաքցնելով փոքրիկ խէնջարը ու թոյնի տուփը ծոցում, շապկի մէջ, նա համբուրեց Լէյլային ու մտաւ իմամ-ջումայի առանձնասենեակը: Ծերունու աչքերը փայլեցին ուրախութեամբ. մէջուներ, որ նրա վաղածանօթ դէրվիշը պատրաստել էր գոհարեղէնից, սկսել էր իր ազդեցութիւնը գործել: Եսթերի գեղեցկութիւնը շլացրեց նրան:

— Ոհ, հրեշտակս, մօտ, մօտ եկ, համբուրեմ այդ նռնի նման կարմիր շրթուներդ, ուտեմ այդ համեղ թըշերդ, արտասանեց նա բանաստեղծի ոտանաւորներով: Տես ինչ ընծայ եմ պատրաստել քեզ համար:

Եսթերը քարացած կանգնել էր. իմամ-ջուման վեր կացաւ. աղջիկը ձեռքը տարաւ ծոցը և հանելով խէնջարը, մտքում կարդաց աղօթք ու տարաւ սուր ծայրը դէպի կուրծքը. յանկարծ մի զօրեղ հարուած տապալեց նրան պատի տակ և մի սոսկալի ձայն «այ դուք անամօթներ, ես ձեզ ցոյց կը տամ» հնչեց նրա ականջին: Եսթերը միայն այս նկատեց, որ մի խէնջար խըրուեց իմամ-ջումայի կուրծքը, արիւնը ֆշչաց և երկու

կատաղի, վայրագ աչքեր նայեցին նրան: Իմամ-Նուրման ժամանակ չունեցաւ նոյն իսկ ախ քաշելու և փռուեց գետնին: Սոսկումը ցնցեց Յսթերին. նա սթափեց, ցայտեց և իր փոքրիկ խէնջարը ու թոյնի տուփը ձեռքից բաց թողնելով, սկսեց փախչել, ու հարայ տալ. «Այ, անզգամ, դու կարծում ես քեզ սաղ կը թողնեմ», լսեց յետեւից սէյիդի ձայնը, որ խէնջարը հանելով արդէն մեռած իմամ-Նուրմայի սրտից, վազեց Յսթերի յետեւից, բայց երբ մտաւ երկրորդ սենեակը, որ բաժանում էր հարէմիանայի մասը առանձնասենեակից, նա յանկարծ կանգ առաւ. այդ սենեակի դռան կանգնած էր մի այլ կին. դա Լէյլան էր, որ, անհանգիստ՝ Յսթերի մասին, ուղարկել էր Ետսամանին քնելու, իսկ ինքն դռան յետեւն դարանամուտ՝ հսկում էր: Սէյիդի ազադակը, երբ սա սլացել էր իր խէնջարով իմամ-Նուրմայի վրայ, նա լսելով, բացել էր դուռը. տեսնելով Յսթերին լեզապատառ վազելիս, նրա յետեւից սէյիդին արիւնաթաթախ խէնջարը ձեռքում, նա հասկացել էր Սէլիմի արածը: Նրա երեւալը փրկեց Յսթերին. հէնց որ սէյիդն կանգ առաւ, Լէյլան քաշեց Յսթերի ձեռքից և դուռն անմիջապէս փակեց: Նրա առաջին շարժումն, առաջին դրդումն եղաւ հարայ տալ, օգնութիւն կանչել: Յսթերն փռուել էր դորդի վրայ ուշաթափ ու կեանքի նշոյլ չէր ցոյց տալիս: Բայց մի սոսկալի միտք յանկարծ կայծակի նման անցաւ Լէյլայի գլխում. աղմուկ հանել, ցոյց տալ և յայտնել որ մարդասպանը սէյիդն է, միթէ դրանով նա վտանգի չի ենթարկի և Սէլիմին. չէ՞ որ կարող է հաստատուել, վերջապէս սէյիդն ինքն տանջանքներից ստիպուած կարող է խոստովանել, որ իրան ճանապարհ ցոյց տուողն եղել է Սէլիմը: Այդ միտքը այնքան սոսկում պատճառեց Լէյլային, որ նա մոռացաւ ամեն բան, մոռացաւ գետնի վրայ փռուած Յսթերին, մոռացաւ վախը և նորից բանալով դուռը, ներս վազեց: Սէյիդը, աչքերը արիւնոտած, ձեռքերը արիւնաթաթախ, դեռ

կանգնած էր սենեակի մէջ տեղ և խելագարի նման պտտցնում էր ձեռքում խէնջարը:

—Շուտ, շուտ փախիր, աղա, ասաց Լէյլան, թափ տալով նրա ուսը. տանը ոչ ոք չը կայ, ոչ ոք չը գիտէ, ոչ ոք չէ տեսել. անցիր, դռնապանը քնած է. բանալին պատից կախուած է, բաց դուռը և փախիր. ես ոչ ոքի չեմ ասի:

Արտասանելով այս խօսքերը Լէյլան յետ վազեց և մտնելով սենեակը, փակեց դուռը: Այդտեղ տեսնելով Եսթերին ընկած, նա կռացաւ, ականջը դրեց սրտին և լսելով բաբախումն, վազեց ջուր բերելու:

Սէյիդն սթափուելով Լէյլայի խօսքերից, սկսեց քիչ քիչ վրայ գալ և գտնել իր պաղարունութիւնը: Նա մտաւ առանձնասենեակը, ուր ընացած արեան մէջ ընկած էր իմամ-ջուման. երբ նա վերցրեց մոմակալը նրան լաւ նայելու, նա յանկարծ նկատեց Եսթերի վայր ձգած խէնջարը, տուփը և չարչաւը, որ անկման ժամանակ վրայից սլուել էր: Նրա դէմքը փայլեց ուրախութեամբ. «այժմ աղատուած եմ», չչնչաց նա, և վերցնելով փոքրիկ խէնջարը, որի փղոսկրեայ կոթը զարդարուած էր եբրայրական նշանագրերով, նա կոխեց իմամ-ջումայի վերքի մէջ. ապա սրբեց իր խէնջարը ընկած չարչաւով և գուրս գնաց: Թալարի մէջ նա կանգ առաւ, ականջ դրեց. ոչ մի ձայն, ազմուկ չէր լսում. նա առաջացաւ, դուրս եկաւ նախասենեակը, մթութեան մէջ որոնեց կօշիկները, բայց չը գտաւ. գուլբայած՝ վաղեց բալը և կամօցուկ մտաւ դռան գաւիթը, ուր խռմիացնում էր անուշ քնի մէջ ընկրմուած ծեր դռնապանը. ճարպէ մոմը մոմակալի մէջ, թախչայի վրայ գեռ չէր հանգած: Նա վերցրեց պատից կախուած բանալին, բացեց կամացուկ դուռը և յետեից ծածկելով, իրան գտաւ փողոցի մէջ ու աղատ շունչ քաշեց: Մի բոպէ էլ ականջ դրեց դռան, գեռ ոչ մի ազմուկ, ոչ մի շշուկ չը կար. «ուրեմն ոչ ոք ինձ չը տեսաւ, բացի այն սիրուն կնոջից. անշուշտ նա իմամ-ջումայի կանանց միջն էր, նա բար-

կացել էր, իբրեւ մուսուլմանուհի, որ իմամ ջուլման մուռտառ ջհուգ աղջկան է սիրում: այդ պատճառով նա չի մատնի ինձ, ամենքը կը կարծեն, որ սպանողն ջհուգի աղջիկն է, ջհուգներն դարձեալ կը կրեն իրանց պատիժը, Եսթերն էլ կը գլխատուի: Աչքը դուրս, չը կամեցաւ իմ կինս լինել, այժմ թող սատկի: Ես վրէժս երկուսից էլ լուծեցի»—մտածում էր նա և հրճուանքից իրար քսում ձեռները:

Ապա շտապ քայլերով նա աներեւոյթ եղաւ թաղի ծուռ ու մուռ փողոցներում: Բայց նա սխալւում էր. դարանամուտ եղած Սէլիմը տեսաւ, կամ աւելի շուտ, զգաց դռան բացուելը, նրա դուրս գալը, սաւառիկը դարձաւ, որ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ և ոչ մի աղմուկ չը լսուեց անից: «Ուրեմն նա սիրտ չարաւ սպանել նրան, անիծեալ վախկոտ և փտտ հոգի», մրմնջաց նա: Նա հաւատացած էր, որ Լէյլան և Եսամանը, լսելով աղմուկ կը վազեն իմամ-ջուլմայի սենեակը, կը տեսնեն նրան և Եսթերին սպանուած ու աղաղակ կը բարձրացնեն, դռնապանը կը զարթնի, դրացիները նոյնպէս կը զարթնեն և սպանութիւնը կը յայտնուի: Զայրացած, յուզուած, որ իր վրէժխնդրութեան փափագը չը կատարուեց, նա իջաւ սաքուից ու բալեց դէպի դուռը, բայց յանկարծ յետ ընդդրկեց. դուռը նորից բացուեց փոքր ճռնչիւնով և մի նոր մարդ դուրս եկաւ. կիսաբաց դռնից մոմի աղօտ լոյսը ընկնելով փողոցի մէջ, Սէլիմը կարողացաւ նկատել, որ դուրս եկողը Ալի-Հէյդար գերվիշն էր, յայտնի կախարդը և բժիշկը. օտանաբոբիկ, զգագուած մազերով, մի երկար մաշուած խալաթ հագին, նա կանգ առաւ փողոցում, դէս ու դէն նայեց և գողի նման պատերի տակով սկսեց գնալ: Սէլիմը կամեցաւ վազել և բռնել նրան, բայց մի այլ մտածմունք նրան դաժուած պահեց իր տեղում և նա կուշ եկաւ պատի տակին, որ դէրվիշը իրան չը տեսնի, թէեւ մթութեան մէջ անհրաժեշտ էր որ նա տեսնուէր: «Ուրեմն հասկանալի է, սէյիդը այս անիծեալ գերվիշին տեսել է թալարում,

կամ բակում և այլ եւս չի համարձակել ներս մտնել, ինչու ուրեմն այսքան երկար ժամանակ մնաց նա ներսում, մտածեց նա. այդ միտքը թոյլ չը տուեց նրան դերովի յետեւից ընկնել. ինչ հարկ կար դերովին իմանար, որ ինքն գիշերուայ այդ ժամին այդտեղ է եղել. չէ որ պէտք կը լինէր բացատրել, թէ ինչու է եղել այդտեղ:

Եւ սակայն դերովին ականատես էր եղել իմամ-ջումայի սպանութեան: Երեկոյեան, բերելով իր պատուատած մէջունը իմամ-ջումայի համար, նա ստացել էր առատ վարձատրութիւն և դուրս գալով առանձնասենեակից թալարը, նա, յոգնած՝ քաշուել էր թալարի խցերից մէկը, վարագոյրով ծածկուած և այդտեղ պարզուել գորգի վրայ ու քնացել: Սէյիդի արձակած աղաղակն և Եսթերի հարայ տալն արթնացրել էին նրան. քնաթաթախ, մթութեան մէջ նա առաջ ոչինչ չը հասկացաւ, բայց մի խռնչոց լսելով իմամ-ջումայի սենեակից, նա վեր կացաւ և կամացուկ դիմեց դէպի այն կողմն. կիսաբաց դռնից լոյս նկատելով, նա առաջացաւ. հրեց մի քիչ դուռը և սարսափահար եղաւ. նա տեսաւ իմամ-ջումային սպանուած, իսկ միւս սենեակում մի սէյիդ արիւնաթաթախ խէնջարը ձեռքին, վայրենի և զարհուրելի դէմքով: Ինչ անել, եթէ ձայն տայ, մարդասպանը կարող է իրան ևս սպանել. վախեցած, չփութուած, միայն ինքնապաշտպանութեան բնագդմամբ, նա կամոց, առանց շշուկի յետ դարձաւ ու նորից կծկուեց իր խուցում, աբան գլխին քաշելով. անցան մի քանի րոպէներ, սոսկալի րոպէներ, և երբ նա համոզուեց, որ ոչ մի ձայն չէ լսուում, ոչ մի վտանգ չէ սպառնում իրան, նա նորից դուրս եկաւ, նորից նայեց առանձնասենեակը և տեսաւ, որ սոսկալի սէյիդը չը կայ. նա վազեց բակը. այդտեղ ևս ոչ մի շշուկ. հասաւ դաւիթը, տեսաւ դռնապանին քնած և դուռը կիսաբաց. նա հասկացաւ, որ մարդասպանը փախել է. աղաղակել, օգնութիւն կանչել՝ կը նշանակէր իրան փորձանքի մէջ ձգել. կարող էին իրան համարել մարդաս-

պան և ոչ ոք չէր հաւատայ նրան, թէ առատ ոսկիները աղան ինքն է տուել իրան մէջունի համար: Վերջապէս, ինչպէս բացատրել, թէ ինչու նա քնած է եղել թալարում: Դէրվիշն լաւ համարեց անշշուկ հեռանալ և ամեն բան թողնել Նախախնամութեան կամբին:

Երբ նա անհետացաւ, Սէլիմը առաջ գնաց. կամացուկ հրելով դուռն, մտաւ գաւիթը: Ծերունին շարունակում էր իր խումիոցը: Սէլիմը բարձրացրեց հարէմխանայի պարտէզը տանող մուտքի վարագոյրը. նա մտածում էր մտնել պարտէզը, բայց չէ՞ որ պարտիզից հարէմխանան տանող դուռն փակուած կը լինի. ինչպէս կանչել Յասամանին մի բան իմանալու, սոսկալի անորոշութիւնից դուրս գալու համար. բաղխել դուռը, կը նշանակէ արթնացնել և ուրիշներին ու վայր եկել նրան տարել է, եթէ նրան բռնեն իմամ-ջումայի հարէմխանայի պարտիզում: Նա կամենում էր դուրս գնալ, երբ յանկարծ նրա ականջին դիպաւ ոտնաքայլերի ձայն. երկու-երեք հոգի գալիս էին, մինը նոյն իսկ լացում էր. նրա սուր ականջը ճանաչեց Լէյլայի ձայնը. նա իսկոյն հանգցրեց մոմը և վարագոյրը բարձրացնելով առաջացաւ պարտիզի մէջ, ու կանգնեց մի ծառի տակ: Ծուռով նա նկատեց Յասամանին մի մոմ ձեռքին, Լէյլային, որ Եսթերի թեւից բռնած՝ գալիս էին. վերջինս մեռելային գոյն ունէր. նա կարծում էր, որ սէյիդը դեռ վաղ է տալիս իր յետեւից և կամենում է սպանել: Լէյլան շատ հեշտութեամբ կարողացաւ համոզել նրան, որ պէտք է փախչել, գնալ իր հրէաների մօտ, որտեղ նա ապահով կը լինի:

—Սյդ դուրս եր, Լէյլա, Յասաման, առաջ գալով կամացուկ, ձայնեց Սէլիմը:

Եսթերը զարհուրած, ուզում էր պռաւ, բայց Լէյլան ձեռքով փակեց բերանը.

—Սուս, սուս, մի վախիր, Սէլիմն է, Սէլիմ չաթիրն:

Ապա Լէյլան մօտեցաւ Սէլիմին, բաշեց մի այլ ծառի տակ և յուզուած, ասաց.

—Այս ի՞նչ արիր, Սէլիմ, սէյիդն սպանեց աղային:

—Սպանեց, կէս-ուրախ, կէս-զարհուրած, գրեթէ պոռաց Սէլիմը: Իսկ Եսթերը մնաց կենդանի, մենք կորած ենք:

—Ոչ, մենք փրկուած ենք, Սէլիմ, փառք տուր Աստուծուն, որ Եսթերն չէ սպանուած:

—Ինչպէս. չէ որ նա կը պատմի թէ ով սպանեց իմամ-ջումին և այն ժամանակ կարող է բացուել որ ես եմ գրգել նրան, ճանապարհ ցոյց տուել:

—Ձէ, դու լսիր ինձ. Ալլահն երեւի այսպէս է կամեցել, որ այս խեղճ աղջիկն զոհ գնայ. դու նրան տար հրէաների թաղն, ես նրան համոզել եմ փախչել. ոչ որ չէ տեսել սէյիդին. երբ Եսթերն կը փախչի, մի քիչ յետոյ մենք հարա հուրայ կը գցենք, կը թափուեն, կը տեսնեն աղային սպանուած և ամենքն էլ կը կարծեն թէ սպանողն Եսթերն է եղել: Դուցէ նրան ներեն, երբ իմանան, որ աղան կամենում է եղել նրան զրկել կուսութիւնից. ես, Եսսամանն էլ կը վկայենք. այդպիսով ոչ որ չի իմանայ, որ սպանողն սէյիդն է, դու էլ ապահով կը լինես: Եսթերի և ջհուդների խօսքին ոչ որ չի հաւատայ:

—Էֆէրիմ, Լէյլա. ես չէի կարծում այդքան խելօքն ես, միայն խեղճ Եսթեր. լաւ աղջիկ էր, բայց երեւի այդպէս է նրա ճակատին գրուած. թող օրհնեալ լինի Ալլահի կամքը:

—Դէ շուտ արա, տար նրան ջհուդների թաղը. ես նրան երգումն կը տամ որ ոչ ոքի չասի, որ դու ես նրան տարել:

—Գնում եմ գնում, բայց մինչեւ չը թողնես այդ կարմիր շրթունքներիցդ մի տաք համբոյր քաղեմ, չեմ գնա: Ոհ, իմ աննման, նազոտի Լէյլա, վերջապէս, մենք հասանք մեր մուրաղին, վերջապէս, ես կը տիրա-

նամ հօրս կալուածներին և հարստութեան և դու իմս կը լինես:

Եւ սիրահարների շրթունքները միացան ջերմ համբոյրի մէջ:

Մի քանի րոպէից յետոյ Եսթերը, Եասամանի չարշաւն ձգած, Սէլիմի առաջնորդութեամբ, դուրս եկաւ դռնից և դիմեց հրէաների թաղն: Կէս ժամ յետոյ, Եասամանը և Լէյլա խանըմը մոմեր բռնած ձեռներին, դուրս վազեցին հարէմխանայից և հարայ տալով զարթնեցրին ծեր դռնապանին ու օտքի կանգնեցրին բոլոր դրացիներին:

— Ալլահ, Ալլահ, պողպատին դրացիները. իմամ-ջուման սպանուել է և ո՞վ է սպանել. մի մուռտառ, ջհուդաղջիկ: Մահ ջհուդներին:

Եսթերի խէնջարը և չարշաւն յայտնի ապացոյցներ էին:

Գիշերից չորս ժամ ¹⁾ անցել էր, երբ Եսթերը, անվտանգ, Սէլիմի առաջնորդութեամբ, հասաւ հրէական թաղը: Հասնելով սինագոգի առաջ, Սէլիմը երգութեցնել տուեց աղջկան, որ ոչ ոքի չի յայտնի, թէ ինքն առաջնորդել է նրան իմամ-ջումայի տնից: Սինագոգում լոյս էր երեւում. այդ նշան էր, որ ժողով կայ և հրապարակական աղօթք, ուրեմն իր հայր Բենիամինը և նշանած Սաւուղն եւս այդտեղ կը լինեն: Եւ արդարեւ, հրէաները ստանալով Ռեբեկայի բերած ֆիթիլան, օրով իմամ-ջուման անպարտ էր կացուցանում հրէաներին, ժողովել էին ցնծութեան տօն կատարելու, նրանք երգում էին սաղմոս. «Յնծացէք, արդարներ, ի Տէր, ուղիղներին է վայելում օրհնութիւն: Խոստովան եղէք Տիրոջ օրհնութեամբ, տասնամեայ սաղմոսարանով սաղմոս երգեցէք նրան:

«Ամբարիշտները սուր հանեցին և լարեցին իրանց

1) Ժամը 11-ին:

աղեղները, որ խփեն աղքատին և տնանկին և սպանեն նրանց, բայց նրանց սուրն իրանց սրտի մէջ մտաւ և նրանց աղեղները փշուրեցին:

«Տէրը ոչնչացնում է հեթանոսների խորհուրդները, անարգում է ժողովուրդների մտածմունքները: Մեր օգնականը Տէրն է, նրանով են ուրախ մեր սրտերը, նա այց արաւ իր ժողովրդին, Իսրայէլին: Տէրը զօրութիւն կը տայ իր ժողովրդին»:

Այս ընդհանուր ցնծութեան չէր մասնակցում Սաւուղը. նա սրտում մահ էր զգում, միեւնոյն ժամանակ կատաղի զայրոյթ: Նա համոզուած էր—Ռեբեկայի հաղորդածները չէին կարողացել դրդուել նրա մէջ այդ համոզմունքը—թէ եսթերը, կամենալով ազատել հօրը և իրան ու ժողովուրդը, ծախել էր իրան իմամջումային. նա այժմ միայն մի բան էր ուզում—տեսնել եսթերին, մի անգամ համբուրել նրա մեղր շրթունքը, սուրը ցցել նրա սրտում և նոյն սրով սպանել իրան: Չը յագեցած տենչը, ցանկութիւնը, չը յագեցած սէրը լափում, տոչորում էր նրան: Հիւանդութիւնից ապաքինելով, նա ամբողջ օրերով կարգում էր «Երգ երգոց»-ի այն դրութը, ուր Սողոմոնը գովում է իր սիրուհուն և այդ նկարագրութիւնը համեմատում էր եսթերի գեղեցկութեան հետ:

«Դու գեղեցիկ ես, ով ընկերուհիս, գեղեցիկ. աչքերդ աղանու աչքերի նման են. վարսերդ Գաղաադի լեռներից իջնող այծերի երամակների նման. ատամներդ լուացարանից դուրս եկող խուզած հօտի նման են. չրթունքներդ՝ որդան կարմրի թելի նման և բերանդ՝ վայելուչ, կիսած նռնի նման: Ձուխտ ստինքդ՝ նման է մի ջուխտ ուլերի, երկուորեակ այծեամի, որ արածում են շուշանների մէջ: Մեղրախորիսխ է կաթում չրթունքներիցդ, ով իմ հարս. մեղր ու կաթ կայ լեզուիդ տակին և հանդերձներիդ հօտը՝ կնդրկի հօտի նման: Փակեալ պարտէզ է իմ քոյր հարսը, փակեալ ակն է, կընքեալ աղբիւր է. նարդոս և ըրբում, խունկեղէն ու

կինամոն, զմուռս և հալուէ, բոլոր գլխաւոր բուրմունքներով»:

Սաւուղը գրեթէ խենթանում էր, երբ մտածում էր, որ այդ փակեալ պարտէզը պէտք է բացուի մի զգուշի, ծերունու առաջ, որ այդ փակեալ ակնը, կընքեալ աղբիւրը ուրիշը պէտք է վայելէ, այն ևս ով, մի մուսուլման, մի փտած կրօնաւոր: Ոչ, ոչ, մեղաւոր է եսթերը. նա պէտք է սպանէր իրան, թոյն խմէր և այդ անարգանքը յանձն չտունէր: Նա ինձ չէ սիրում ուրեմն — գալարում էր դառն մտածմունքների և հոգեկան տանջանքների մէջ խեղճ սիրահարը:

Նա չը կարողացաւ այլ ևս դիմանալ, լսելով իր հայրենակիցների փառաբանական սաղմոսը, որի ամեն մի խօսքը ասելի նման ծակում էր նրա սիրտը:

— Բաւական է, լռեցէք. դուք փոխանակ լացելու, ուրախանում էք, դուք, որ գիտէք, թէ ինչ անարժան և անարգ գնով ձեռք է բերուել այդ Ֆիթվան: Դուք ուրախանում էք մեր աղջիկներից մինի բռնաբարութեամբ և խայտառակութեամբ:

— Եսթերը զոհեց իր անձը ժողովրդի համար, փրկեց Իսրայէլը. Եհովան կը ների նրան և դու զուր ես ամբարշտութեամբ ընդդիմանում ճակատագրին, խստութեամբ պատասխանեց րաբբիներից մինը:

Յանկարծ կանանց դասից մի ձայն պոռաց.

— Ահա և Եսթերը:

Զարմացման աղաղակներ բարձրացին ամեն կողմից:

— Այո, ահա և ես. օրհնեալ է Եհովան, որ ազատեց ձեզ և ինձ. ալէլուիա, ալէլուիա նրան, արտասանեց Եսթերը՝ դեռ գունատուած յուզմունքից և փոքր ինչ առաջ կրած սարսափից:

Սաւուղը այլ ևս չը կարողացաւ համբերել: Մի ոստիւնով ցայտեց, արձանացաւ Եսթերի առաջ և հանելով դոտու մէջ թաքցրած մի կեռ դաշոյն, պոռաց.

— Անդգամ աղջիկ, դու դեռ համարձակում ես երեւալ այստեղ պոռնկութեան նշանով, երբ ճմլուել են

քո ծծերը, երբ շօշափուել են քո կուսութեան ստինքները:

Եւ նա բարձրացրեց դաշոյնը, բայց հանդիպելով Եսթերի նայուածքին, որ փայլում էր անմեղութեան, անարատութեան փայլով, նա ճնշուեց այդ նայուածքից, թուլացաւ և դաշոյնը ընկաւ նրա ձեռքից:

— Դու զուր ես մեղադրում ինձ Սաւուղ, ասաց, յորդ արտասուք թափելով Եսթերը. ես անմեղ եմ, և ես սպանած կը լինէի ինձ առաջ քան մինը յանդգնէր շօշափել իմ ստինքները:

Եւ նա յուզուած, խոցուած անարգար վիրաւորանքից, սկսեց պատմել իմամ-ջումայի տան անցածը:

Սարսափ, զարհուրանք պատեց ամենքին:

— Վայ մեզ, վայ մեզ, աղաղակեցին բարբրիները և ծերունիները. Իսրայէլը կորած է այժմ:

Առանց ուշ դարձնելու այդ ողբին, Սաւուղը, ուրախացած, առանց մտածելու, որ ոտնակոխ է անում աւանդական սովորութիւնը, առանց ամաչելու և քաշուելու, փաթաթուեց Եսթերի վզով և, համբուրելով նրա ճակատը, ասաց.

— Ներիր, ներիր, իմ Եսթեր, հոգիս, ես խելադարուած էի. վիշտը կասկած էր մտցրել սրտիս մէջ:

Եսթերը, շառագունած ամօթից, հրեց Սաւուղին և դառնալով ծերունիներին, ասաց.

— Բայց ինչու կարծում էք որ մեզ վտանգ է սպառնում. հօ ես չեմ սպանել իմամ-ջումային, իրանց սէյիդն է սպանել, իսկ իմամ-ջուման մեզ ֆիթվայ է տուել:

— Ով կը հաւատայ մեր խօսքին:

Եւ հրամայելով լռութիւն պահպանել, ծերունիները հրամայեցին Եսթերին մանրամասն պատմել անցքը: Պատմութեան ժամանակ նա ձեռքը տարաւ ծոցը, որ հանի խէնջարը և տուփը և առաջին անգամ նկատեց նրանց աներեւոյթանալը. այժմ միայն յիշեց, որ վեր կենալիս բաց էր թողել իմամ-ջումայի սենեակում. նա յիշեց

նոյնպէս, որ չարչաւն թողել էր այնտեղ և Եասամանի չարչաւն էր ձգել: Վերահասու լինելով բոլոր այդ մանրամասնութիւններին և իմանալով, որ բացի Լէյլա խանըմից ոչ ոք չէ տեսել սէյիդին ու իմամ-ջումայի տան մէջ դեռ ոչինչ չը գիտէին մինչեւ Եսթերի փախչելը, ծերունիները միաբերան ազաղակեցին.

—Վայ մեզ, վայ մեզ, մենք կորած ենք: Հիմա սպանութիւնը յայտնուած կը լինի և որովհետեւ Եսթերը փախել է ու նրա չարչաւն ու խէնջարը այնտեղ գտած կը լինեն, ուստի և ամենքը կ'ասեն, որ Եսթերն է սպանել ու փախել մեզ մօտ: Մենք կորած ենք, անխուսափելի է այլ ևս ջհուդ-քուշանք:

—Բայց չէ՞ որ Լէյլա խանըմը գիտէ, որ մարդասպանը սէյիդն է:

—Լէյլա խանըմը չի ասի, կամ նրան թոյլ չեն տայ ասի, որորհետեւ մուսուլմանների համար խայտառակութիւն կը լինի:

Տիրեց ընդհանուր յուզմունք: Յանկարծ սինադօգի դուռը բացուեց և մի քանի հրէաներ սփրթնած, դողդոջուն ներս մտան, երկու հայ երիտասարդների հետ:

—Մեր տունը քանդուեց, ինչ էք նստել, գլխներդ ճարը տեսէք:

Հայերը պատմեցին, որ իրանք մի քանի հաշիւների կարգադրութեան համար սադրազամի տունն էին գնացել և երբ մի ժամ առաջ դուրս էին գալիս, մի իրարանցում տիրեց և ֆէրրաշներ, սէյիդներ, մօլլաներ ներս վաղելով գոռում էին, թէ իմամ-ջումային սպանել է ջհուդ աղջիկն ու փախել: Լսելով այդ, նրանք վաղեցին եկան իմաց տալու. անկասկած, առաւօտեան երբ լուրն տարածուի քաղաքում, խուժանը թափուելու է հրէաների թաղի վրայ և ջհուդ-քուշան են սարքելու: Քանի որ դեռ գիշեր է և բաւական ժամանակ կայ, պէտք է պաշտպանութեան միջոցներ որոնել, պատրաստուել:

Հայերի բերած լուրը ընդհանուր սարսափ տարա-

ծեց: Լաց, ճիչ, սուգ-շիւան պատեց ամեն կողմ. կանայք ահագին վայնասուն բարձրացրին և սկսեցին պատռել օձիքները, խփել կուրծքը: Ծերունիները և բարձրները խորհուրդ կազմեցին, կշռելով վերահաս վտանգի բոլոր հետեւանքները և կարեւոր կարգադրութիւններն արին, Պէտք էր անմիջապէս մի քանի աղսախկալ¹⁾ ուղարկել սաղարազամի մօտ, նրան պատմել դործի էութիւնը ու խնդրել զօրք ուղարկել թաղն պաշտպանելու. միւս կողմից, որովհետեւ այդ օղնութեան վրայ շատ յոյս չէ կարելի դնել, նոյն իսկ եթէ զօրք ուղարկուի—որ շատ կասկածելի է—պէտք է անմիջապէս ամեն մարդ իր տան մէջ ունեցած թանկագին իրերը՝ փող, դարդ, բարեզէն, շալեզէն բերի սինադօզը՝ թաքցնելու ստորերկրեայ գաղտնարանում, կամ ով կարող է և միջոց կայ, տանի պահ տայ հայերին, գաբըրներին և եւրոպական դեսպանատներին: Տան մէջ պէտք է թողնել ծանր կահ կարասիք, պղնձեղէն, դռները պէտք է պինդ ամրացնել, բայց որ ամենագլխաւորն է—պատուիրում էին ծերունիները—ի սէր Նհովայի, յանուն Տապանակի երդուեցնում ենք երկտասարդներին, որ ղէնք չը գործածեն. աւելի լաւ է մի քանի հողի ղոհուեն, քան ամբողջ ժողովուրդը, որովհետեւ ղէնքի գործածութիւնը առաջ կը բերի հրէաների ամբողջական ջնջումն: Ապա ծերունիները պատուիրեցին, որ կանայք և աղջկերքը բոլորն հաւաքուեն սինադօզում, թաղի կենտրոնը, իսկ տղամարդիկ պաշտպանեն տները, բայց Եսթերին անկարելի է թողնել սինադօզում, որովհետեւ նրան, երևի, իշխանութիւնը կը պահանջի և և ոչ ոք էլ չէ կարող թաքցնել նրան իր տան մէջ, որովհետեւ նրա պատճառով կարող են ամբողջ տունը քանդել:

—Եսթերը պէտք չունի ոչ ոքի պաշտպանութեան, նա իմ նշանածն է, ես կը պաշտպանեմ նրան և որպէս

1) ծեր:

զի կարողանամ տանել իմ տունը, խնդրում եմ այս րոպէիս իսկ կատարել և օրհնել մեր ամուսնութիւնը:

Եւ արտասանելով այս խօսքերը, Սաւուղը բռնեց Եսթերի ձեռքից ու երկուսն միասին չորեցին խախամի առաջ: Քահանան օրհնեց նրանց պսակը և երկու սիրահար ամօրնեքը շտապով հեռացան սինադօգից. նրանց հետեւեց ծերունի Բենիամինը:

Արշալոյսը նոր էր ծագում, երբ իմամ-Ջումայի սպանութեան լուրը հրէայ աղջկայ ձեռքով արդէն տարածուել էր Թէհրանում: Այդպիսի սոսկալի յանդգնութիւնը — մուսուլման քահանայապետի սպանութիւնը անարդ, արհամարհուած ջհուդի ձեռքով — այնքան անակնկալ էր, որ շատերը չէին հաւատում: Ամենքը շտապում էին գնալ նամազները կատարել մզկիթներում, որպէս զի այդտեղ իմանան մանրամասնութիւնները: Մզկիթները լի էին բազմութեամբ. ամեն մի ամբիոնի վրայ մի մօլլա կամ սէյիդ գրգռում էր ամբոխը՝ օրինակելի կերպով պատժել մուռտառ ջհուդներին, նրանց եօթը պարտը անիծել, որ եօթը պորտ յիշեն այդ պատիժը:

— Ջհուդ-բուշան, ջհուդ-բուշան, աղաղակում էր ամբոխը. սալաւաթ, սալաւաթ:

Եւ կազմուում էին խմբեր. խանութները չէին բացւում. ստահակ մանուկները վազելով փողոցներում, պոռում էին. «Ջհուդ-բուշանի դնանք, ջհուդ-բուշանի»: Ամեն մարդ վազում էր տունը և մի գործիք վերցնում. բահ, կացին, երկաթէ ձող, թուր, խէնջար, հրացանինչ որ ձեռքն էր ընկնում. չէին մոռանում տոպրակ, քսակ, չուալ եւս վերցնել՝ առատ աւար բերելու սրուած ախորժակով:

Լճացած խաղաղ կեանքը ալեկոծուել էր, երեկուայ ահաբեկուած ամբոխը այսօր սրել էր ատամները և գնում էր մի նոր թամաշայի — աւերելու, կողոպտելու, սպանելու, յանուն կրօնի, յանուն հաւատի պաշտպա-

նութեան: Լսում էր հեռուից գոռացող հեղեղի աղմուկը և ամենք զգում էին, որ ոչ մի ամբարդակ կարող չէ այդ հեղեղի առաջն առնել. նա պէտք է կատարէ իր աւերիչ գործը, հիմնայատակ անէ ամեն ինչ, որին կը հանդիպէ իր ճանապարհին: Ինչպէս կարող են դիմադրել այդ կատաղած հեղեղին խեղճ հրէաները, մի փոքրիկ հօտ ոչխարների, շրջապատուած գիշատիչ գազաններով, իսկ մոլեռանդութիւնը գիշատիչ էր դարձրել նոյն իսկ ճնշուած հարստահարուած գիւղացուն:

— Սալաւաթ, սալաւաթ, պոռում էր ամբօխը:

Եւ մոլեռանդ քարոզիչները գոռում էին.

— Մուսուլմաններ, վրէժ, վրէժ առէք մուռառու, անհաւատ ջհուդներից:

Այդ քարոզիչների և դրդողների մէջ աչքի էր ընկնում մարդասպան սէյիդը, վառուած վրէժխնդրութեան ծարաւով և յուսալից, որ նորից ձեռք կը ձգէ իր որսին: Նա հաւատացած էր, որ ոչ ոք չի իմանայ իր ոճրագործութիւնը, բանի որ միակ վկան՝ իմամ-ջու-մայի կինը պահելու է լռութիւն, բայց եթէ նոյն իսկ յայտնուի որ ինքն է սպանել, նա յոյս ունէր արգարանալ նրանով, որ ջհուդ աղջիկն խելքից հանել էր կրօնապետին հմայքով և կախարդութեամբ և կրօնապետը դաւաճանել էր մեծ մարգարէի օրէնքին. նա կաղմակերպում և զինաւորում էր խմբեր և մի խմբի առաջնորդութիւնն ստանձնելով, ոգեւորում էր նրան առատ և հարուստ աւարի խոստումներով:

— Ջհուդ-քուշանի դեանք, ջհուդ-քուշանի զնանք,

— թնդում էր Թէհրանի մի ծայրից միւսը:

Եւ ամբօխային հեղեղը հոսեց գէպի հրէաների թաղը: Նա նմանում էր քաղցած գայլերի վոհմակին, որ հեռուում մտի հօտ է առել և վազում է, աչքերը պըսպըղան, երախը լայն բացած: Մի բանի Ֆէրրաշներ և մօտ յիսուն սարբաղներ, որոնց Բէգլար-Բէգին ուղարկել էր, սադրաղամի հրամանով, պաշտպանելու հրէական թաղը, չէին կարող, ի հարկէ, այդ հեղեղի առաջն առ-

ներև և բաւական էր մի երկու ծերունի մօլլաների յորդորը և կոչը նրանց մուսուլմանական զգացումներին, որ նրանք միանային ամբօխին և նրա հետ մասնակցէին աւարառութեան ու յարձակման: Մուսուլման սարքազը պարտաւոր չէ ամենեւին պաշտպանել քաֆիրներին մուսուլմանների դէմ. այդ մտքին շատ ջերմ կողմնակից էր ներքինապետը, որ եկել էր սադրազամի մօտ և յորդորում էր նրան թողնել ժողովրդին՝ կատարել իր պարտքը:

Հրէայ աղսախկալները, որոնք հազիւ կարողացել էին լուռածագին ներկայանալ սադրազամին, որքան երդուեցին, պնդեցին, որ սպանողն Նոթերն չէ, այլ սէյիդը, որքան ազաչեցին ստուգել, քննել դործը, բայց չը կարողացան համոզել և աւելի սաստիկ կատաղեցրին ներքինապետին.

— Լռեցէք, մուռառ ջհուդներ. դուք դեռ կամենում էք կեղտոտել մեր սուրբ կրօնապետին. ձեր լեզուն պէտք է կտրել:

Վախեցած՝ հրէաները լռեցին: Սակայն մի անակընկալ օգնութիւն՝ սիրա տուեց հրէաներին: Սենեակը ներս մտաւ Ալի-Հէյդար դէրվիշը, սադրազամի հին ծանօթը և բարեկամը: Դէրվիշը դաւուդի¹⁾ էր ծածուկ. նա սոսկացել էր, տեսնելով թէ ինչ մեծ վտանգի են ենթարկուել խեղճ հրէաները և երբ նա լսեց մզկիթի տաաջ երիտասարդ սէյիդի բարոզը, նա իսկոյն ճանաչեց մարդասպանին: Նա վճռեց այլ ևս լուռ չը մնալ ու շտապեց սադրազամի ապարանքը: Այդտեղ նա պատմեց սադրազամին և ներքինապետին իր տեսածը և յայտնեց, որ հրէաները անմեղ են: Ներքինապետը դարձեալ չէր ուզում հաւատալ. նա գոռաց, որ դէրվիշն ավիտնով հարբած է եղել և զառանցել է, բայց սադրազամը, որ արդէն մեծ կասկածներ ունէր և շատ

1) Մի աղանդ է, Գալիթ մարգարէին հետեւողներ:

անհաւանական էր գտնում Նսթերին վերագրած յանցանքը, ճանաչում էր դէրվիշին ճմարտախօս մարդ, իսկոյն կանչել տուեց Բէգլար-բէգուն, պատմեց դէրվիշի վկայութիւնը և հրամայեց հարցաքննել Լէյլա խանըմին: Վերջինս ստիպուեց խոստովանել, որ սպանողն սէյիդն է, բայց ինքն վախեցել է յայտնել, որպէս զի իմամ-ջումայի անունը չարատաւորուի: Սէյիդի թողած կօշիկներն ևս գտնուեցան, միայն անկարելի եղաւ իմանալ, թէ ինչպէս է մտել սէյիդը թալարը և թագնուել: Անմիջապէս հրաման տրուեց բազմաթիւ զօրք ուղարկել հրէական թաղի պաշտպանութեան համար, բայց արդէն շատ անագան էր....:

Ձհուդ-քուշանը վաղուց սկսուել էր: Մէքանի տներ արդէն աւերուել էին, գոյքը աւարի առնուել: Ամբօխը, արդէն արիւնի հոտ առած, սկսել էր կատաղել. երկու երեք ծերունի հրէաներ, որոնք փորձեցին ընդգլխմանալ և թոյլ չը տալ, որ գինու կարասները ջարդ ու փշուր լինեն, վիրաւորուեցին, իսկ մի քանի երիտասարդներ, որոնք աշխատեցին փայտերով պաշտպանուել, երկաթի ձողերի հարուածներով սպանուեցին: Ամենից կատաղին այն խումբն էր, որին առաջնորդում էր երիտասարդ սէյիդը, բուն ոճրագործը. նա աշխատում էր ըստ պէտքի հասնել Սաւուդի տան, որովհետեւ Բենիամինի տունը թափուր գտնելով, նա հասկացել էր, որ Նսթերը նշանածի տանն է պատսպարուած: Եւ երբ նա հասաւ Սաւուդի տան, ուրախութիւնից ոռնաց, կըտուրի վրայ կանգնած էր ¹⁾ Սաւուդը մի քանի երիտասարդների հետ, ոտքից գլուխ զինաւորուած. տունը, ինչպէս երեւում էր, ամրացրած էր: Եւ արդարեւ, Սաւուդը, իր մի քանի ընկերների օգնութեամբ, ամբողջ գիշերը աշխատել էր և պաշտպանողական միջոցներ ձեռք առել: Բոլոր նրա աղաչանքը, պաղատանքը

¹⁾ Պարսկաստանում կտուրները հարթ են և նրանց վրայ ամառները քնում են ու ճեմում:

Եսթերին, որ նա թաքնուէ մի հեռու տեղ, անօգուտ էին անցել. Եսթերը վճռողաբար յայտնել էր, որ կամենում է իր ամուսնու հետ ապրել կամ նրա հետ մեռնել և չէ կամենում իր պատճառով ուրիշներին վտանգի ենթարկել:

Բարեբախտաբար, տունը այնպիսի դիրք ունէր, որ կտրից կարելի էր երկար ժամանակ պաշտպանուել և յետ մղել ամեն կողմից յարձակումը: Տան դուռը պինդ ամրացրին երկաթներով և քարերով. կտուրի վրայ քարեր կուտեցին, երկու մեծ կաթսայ դրին և ջուր եռացրին, ինչպէս և իւր, փայտեր դիզեցին: Եսթերը ամուսնու կողքից չէր հեռանում. նա եւս մի նոր կէռ դաշոյն էր խրել դօտու մէջ: Պաշտպանողները պատահէլ էին շինել որի յետեւ կարող էին թաքնուել:

Վերջապէս, ամբօխը հայհոյանք, աղաղակ արձակելով, մօտեցաւ Սաւուղի տան: Հազիւ սէյիդը նկատեց Սաւուղին և նրա կողքին Եսթերին, պոռաց:

—Մուսուլմաններ, ահա այս շան աղջիկն է սպանել մեր սուրբ կրօնապետին և այս շան լակոտը յափըշտակել է նրան ու շնացել նրա հետ:

—Սուտ է, անօրէն սէյիդ, գոռաց վերելից Սաւուղը, իմամ-ջումին դու ես սպանել, երբ նա կամենում էր բռնաբարել սրան. սա իմ կինն է, օրինաւոր կինը:

—Մահ, մահ մուռտառ ջհուդներին, ոռնաց ամբօխը:

Եւ սոսկալի հարուածները տեղացին դռան դէմ, բայց յանկարծ վերելից, կտուրից թափուած եռացող ջուրը յետ մղեց ամենքին.

—Վայ երեսս այրուեց, վայ խաշուեցի, լսուեցին ողբալի ձայներ:

—Միթէ մուռտառ ջհուդները պէտք է մեր առաջն կտրեն. փչրեցէք այս դուռը, ինչ տղամարդիկ էք, պոռաց սէյիդը:

Եւ ամբօխը նորից մօտեցաւ դռան ու կացնի հարուածներով փորձեց փշրել դուռը:

Վերելից մի բանի քարեր թափուեցին և վիրաւորեցին մի բանիսին:

— Ձեզ շան պէս կը սատկեցնեմ, պոռաց Սաւուղը, եթէ յետ չը դառնաք:

Բայց ամբօխը կատաղել էր. դուռը արդէն սկսել էր շարժուել կացինների հարուածների տակ: Մի աման եռուն իւղ թափեց եսթերը և կռացաւ, այն միջոցին, որ ներքեւում, շատերը կսկիծից խանչում էին, ու Սաւուղը, գլուխը հանելով պատնէշի յետեւից, կամեցաւ յետ քաշել եսթերին, սէյիդը, մի ղինուորի հրացանը խելով, ուղղեց Սաւուղին. հրացանը թնդաց և արիւնլուալ Սաւուղը յետ ընկաւ կտրի վրայ:

Ամբօխը ուրախութիւնից սոսկալի ոռնոց արձակեց. դուռը ընկաւ հարուածների տակ և խուժանը թափուեց տան բակը: Սկսեցին ամեն բան ջարդ ու փշուր անել. մի մօրը վաղեց սէյիդի առաջնորդութեամբ դէպի այն սանդուխները, սրոնցով բարձրանում էին կտուրը: Սրա դուռն թէև նոյնպէս ամրացրուած էր, բայց, ի հարկէ, երկար դիմանալ չէր կարող:

Եսթերը, համարեա խելագար, ընկաւ ամուսնու վրայ. Սաւուղը դեռ չնչում էր. «փախիր, փախիր, Եսթեր, ազատիր քեզ»: Այս խօսքերը սթափեցրին երիտասարդ աղջկան. նա նորից կռացաւ, համբուրեց Սաւուղին և շնչաց. «ես կը գամ քո յետեւից. այնտեղ, երկնքում, մենք կ'ապրենք, բայց ես դեռ պէտք է վրէժդ առնեմ»:

Եւ նորից մի համբոյր դրոշմեց ամուսնու շրթունքներին:

— Իմ հողեակս, իմ թաղ ու պարձանքս, եղան Սաւուղի վերջին խօսքերը: Նա աւանդեց հողին:

Հարուածները կտրի դռան սկուռեցին. լսում էր սէյիդի կատաղի ոռնոցը: Եսթերը այդ ձայնից

ծլունկ եղաւ, հանեց խէնջարը ու կանգնեց դռան առաջ:

Դուռը սոսկալի շառաչիւնով վայր ընկաւ և երեւաց սէյիդի դազանացած դէմքը, կացինը ձեռքին: Մի ակնթարթում եսթերը թռաւ վրան, խրեց խէնջարը նրա կուրծքը և երբ սէյիդը յետ յետ գնալով, ընկաւ իր յետեւից եկողների վրայ, որոնք սկսեցին գլորուել սանդուղներով, եսթերը դարձաւ Սաւուդի դիակի մօտ և «հա ես էլ գալիս եմ քեզ հետ, իմ աննման, սրտի հատոր, Սաւուդ», միմնջալով, արիւնաթաթախ խէնջարը խրեց իր կուրծքը ու ընկաւ Սաւուդի վրայ:

ՇԱՀՐԻԱՐ

Վ Ե Ր Զ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-
ԹԻՒՆԻՑ

Les vingt et un jours d'un Neurasthenique par
Octave Mirbeau. (Ձղադարի մը քսան և մէկ օրերը:

Հեղինակի հետ մասամբ ծանօթ է «Մուրճի» ընթերցողը *). Միրբո՝ ինչպէս իր բոլոր հեղինակութիւններուն՝ իր այս նոր հատորին մէջ կը մտրակէ ժամանակակից ֆրանսայի հասարակական բարքերը, կը բնորոշէ տիրապետող դասակարգերը:

Ներկայ հատորը կազմուած է մեծ մասով՝ ֆրանսական լրագրութեան մէջ իր հրատարակած յօդուածներէն:

Միրբո՝ մինչև վերջերս, խոշոր հասարակութեան անծանօթ կը մնար. խոշոր հասարակութիւնը, ամբողջ տղայ մըն է, որուն հաճելի ըլլալու համար պէտք է խնդալ, խնդացնել, խաղալիքներ տալ անոր ձեռքը. մտածումներ արթնցնել, անոր ցըրուած, անգիտակից ուշադրութիւնը մասնաւոր կէտի մը դարձնել՝ չի սիրեր ան. ֆրանսական հասարակութեան միայն մէկ մասը Միրբոի յօդուածները կը ճանչնար: Բայց ասոր փոխարէն, մէկ հատ ֆրանսացի ճշմարիտ գրագէտի չէք հանդիպիր որ կարդացած չըլլայ ամբողջ Միրբոն. մանաւանդ գրական երիտասարդութիւնը՝ «Աբբայ Ժիւլ»-ի, «Չարչարանքներու պարտէզ»-ի, «Գէշ Հովիւներ»-ի հեղինակին համար ունեցած սէրը պաշտամունքի հասցուցած է:

Միրբո նաև խոշոր հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրեց իր տաղանդին վրայ ասկէ 2—3 տարի առաջ հրապարակ հանելով իր ամենէն հետաքրքիր ու ամենէն վրդովող գործերէն մէկը՝ Le Journal d'une femme ou chambre՝ Սենեկապանուհիի մը օրագիրը՝ ճահիճի մը մէջ, հասարակական նեխած ճահիճին մէջ, նետուած քարի մը պէս գորտերու հանգիստը խռովեց: Միրբո՝ սենեկապանուհիի մը բերնով՝ կը մերկացնէր այն անհուն կեղտը:

*) Տես «Մուրճ» № 8.

որ ընտանեկան կեանք կը կոչուի: Մարքիզուհիներէն սկսած մինչև հասարակ բուրժուազը իր բաժինն ունէր այդ զարհուրելի ամբաստանագրին մէջ: Սենեկապանուհին կը պատմէր, օրինակի համար, թէ ինչպէս իր տէրերը՝ վաւաչոտ ու ջերմեռանդ՝ ամեն բարեգործական ընկերութիւններու անգամ ու տան սիմէն դուրս միշտ խուսկ ու մոմ հոտող՝ քայլ առ քայլ զինքը կը հետապնդէին, ինչպէս կաղուքէ մտրակուած արու գազանը էզը կը հալածէ: ՍԵՆԵԿԱՊԱՆՈՒԿԻԻ մը օրագիրը՝ մէկ խօսքով՝ ներկայ ընկերութեան ներքին կեանքն էր իր ամբողջ ներխուժին ու խաղճութեան մէջ: Այդ հատորը Վայրկենիս՝ իր հարիւրերորդ տպագրութեան բարձրացած ըլլալու է, կարծեմ:

Արդ, Ջղագարի մը քանքմէկ օրերը նոյն կարգի գիրք մըն է: Առաջիս գտնուող հատորին վրայ 19-րդ տպագրութիւն նշանակուած է ու մինչև հիմա մէկ տարուան մէջ, այս գործն ալ հասած ըլլալու է բաւական պատկառելի տպագրական թիւի մը: Ի՞նչու է գիրքը կոչուած *Les vingt et un jours d'un neurasthénique*: Միրբօ՝ ընտանեկան ճահիճէն յետոյ կուղէ քիչ մըն ալ խառնել զիւզագնացութեան, հանքային ջուրեր այցելուելու—միջավայրը ուր մարդ՝ իրենց այլանդակութիւններով ու մոլութիւններովն աչքան հետաքրքիր տիպարներու կը հանդիպի: Քսան և մէկ օր ալ Միրբօի Ջղագարը այդ միջավայրին մէջ կը թափառի, ոչ այնքան իր երևակայական հիւանդութիւնը դարմանելու, որքան իր գէմն ելած դէմքերը նօթի առնելու, ուսումնասիրելու և մեզի ներկայացնելու *):

Միրբօ իր հատորը հետեւեալ կերպով կը սկսի որը ինքնին արդէն բաւական արտայայտիչ է:

«Ամառ ժամանակ, նորաձեւութիւնը, կամ իր առողջութեան հոգածութիւնը որ նոյնպէս նորաձեւութիւն մըն է, կը պահանջէ որ մարդ ճամբորդէ: Երբ մարդ հարուստ, աշխարհիկ սովորութիւններու շատ հլու, շատ յարգալից բուրժուա մըն է, պէտք է որ տարուայ մէկ որոշ միջոցին թողու իր գործերը, իր հաճոյքները, իր հեշտալի ծուլութիւնները, իր սիրալիք մտերմութիւն-

*) Հանքային ջրեր գնալ ոչ իսկական բուժուելու, այլ բուրժուական քէֆեր և ֆլիրտ անելու նպատակով տարածուած նորաձեւութիւն է և Նովկասի հայերի մէջ. հետեւաբար Միրբօի մերկացումների հարուածներից մաս պիտի հասնի և մեր աղգային բուրժուաների համար: Այդ հանգամանքը դուցէ ստիպէ մեր հարստացած «ապերներին» և «բաջիններին» ինչպէս և դրանց ամեն կողմից հարուստ նման ինտելիգենտներին Միրբօի հայելիի մէջ գտնել և իրենց սեփական պատկերները...

ները, ու երթայ, առանց չատ անգամ զիտնալու ինչո՞ւ, մեծ ամբողջին (բնութեան) մէջ մխրճելու: Լրագիրներու և զանոնք կարդայող մեծապատիւ անձնաւորութիւններու զաղտնապահ լեզուին համեմատ, ասիկա կը կոչուի տեղափոխութիւն մը, բառ՝ որ ճամբորդութենէն նուազ բանաստեղծական է և սակայն սրբան ճիշտ... Անշուշտ, չատ յաճախ տեղափոխութիւնը մարդուն սրտովը չէ, կարելի է ըսել զրեթէ միշտ սրտովը չէ, բայց պէտք է այս զոհողութիւնը ընել իր բարեկամներուն, իր թշնամիներուն, իր մատակարարներուն, իր ծառաներուն համար, որոնց հանգէպ հարկաւոր է աղքեցիկ զիրք բռնել, որովհետեւ ճամբորդութիւնը դրամ կենթադրէ, ու գրամը՝ հոսարակական ամէն գերազանցութիւնները:

Ուրեմն, կը ճամբորդեմ, ինչ որ զիս սարսափելի կերպով կը նեղացնէ, ու կը ճամբորդեմ Պերինեաններու մէջ, ինչ որ մասնաւոր չարչարանքի կը փոխէ ճամբորդութեան համար ունեցած ընդհանուր տաղտուկս:

Իմ գտնուած քաղաքիս՝ որուն «հովուերգական վսեմ գեղեցկութիւնը» գերմանական պատուական պէտէքէր մը այլանդակ քնարերգութիւններով կ'երգէ, իմ գտնուած քաղաքիս առանձնայատկութիւնը այն բանին մէջ կը կայանայ, որ քաղաք մը չէ: Ընդհանրապէս քաղաք մը կը բաղկանայ փողոցներէ, փողոցները տներէ, տուները բնակիչներէ: Արդ, Գ...ի մէջ՝ ոչ փողոց, ոչ տուն և ոչ ալ տեղացի բնակիչ կայ, օթելներ (հիւրանոց) միայն կայ... Եօթանասուն և հինգ օթել, ահագին շինութիւններ, զօրանոցներու և յիմարանոցներու նման, որ իրարու քով կը շարուին, անվերջ կերպով, մէկ գծի վրայ, մշապատ ու մութ կիրճի մը խորը, ուր թռչատապ ունեցող պղտիկ ծերուկի մը պէս, կը հազայ ու կը թքնէ փոքրիկ հեղեղ մը: Աստին, անտին, օթելներու գետնայարկին վրայ, վաճառականներու մէկ քանի ցուցադրումներ, գրախանութներ, պատկերազարդ քառթ փոսթալներ, ջրվէժներու, լեռներու, լիճներու լուսանկար պատկերներ, ալիէնսթօքսի մթերքներ և զբօսաշրջիկներուն պէտք եղած ամէն բան ծախող խանութներ: Յետոյ քանի մը վիլլաներ, զառիվայրներու վրայ ցրցքնուած... և, մի ծակի խորը, հոռուցիկներու ժամանակէն մնացած հանքային ջրի հաստատութիւնը... ահ, այն... հոռուցիկներու ժամանակէն!.. Ու ահա ամենը Դէմզ՝ մութ ու բարձր լեռը. յետեւ լեռը՝ բարձր ու մութ... Այլ կողմէ, լեռ, որուն ստորոտը լիճ մը կը քնանայ. ձախ կողմէ միշտ լեռը ու նոր լիճ մըն ալ... Ու երկինքի պատամը չի կայ, ... Երկինք բնաւ չի կայ, գլխուղ վե-

րես: Խոշոր ամպեր որ կը քաջընեն մէկ լեռնէ միւս լեռը՝ իրենց ճնշող, անթափանցիկ, թխպոտ գանգուածները...

Գ...ի մէջ, օրինակի համար, հօթանասուն և հինգ օթելները կը վիտան ուղեւորներով: Մեծ դժուարութեամբ է որ սենեակ մը գտայ, վերջապէս: Սմէն երկրէ մարդ կայ, անգլիացիներ, գերմանացիներ, սպանիացիներ, ռուսեր, և նոյն իսկ ֆրանսայիներ: Այս բոլոր մարդիկ կուզան հոտ, ոչ թէ իրենց հիւանդ փայծաղը, դժուարամարս ստամոքսը, և վերնամաշկային հիւսնադութիւնները դարմանելու... անոնք կուզան հոտ — լաւ մօիկ ըրէք — զուարճանալու համար... Ու առաւօտէն մինչեւ երեկոյ, կը տեսնէք որ լուռ խումբերով կամ տրտում տողանցումով մը կը քալեն օթելներու երկայքն ի վար, կը կուտակուին ցուցադրուած վաճառականներուն առջև, կանգ կ'առնեն ընդերկար որոշ տեղ մը, ու իրենց անսահման հեռագիր տակները կ'ուղղեն նշանաւոր ու ձիւնապատ լեռան մը վրայ, որը դիտեն թէ այնտեղ է, և իրաւ ալ այնտեղ է, բայց որ երբէք չի նշմարուիր՝ զինքը յաւիտենապէս ծածկող ամպերու թանձր պարիսպին տակ...

Այս ամբողջ բազմութիւնը տղեղ է, հանքաջրային քաղաքներու մասնաւոր տեղեկութիւնով: Հազիւ երեսմի, որը մէկ անգամ, այս բոլոր թանձր դիմակներուն ու ծանր փորերուն մէջ տեղ, սիրուն դէմքի մը կամ թեթեւ գնացքի մը անակնկալը կը վայելնէ: Նորեակ երեխաները փոքրիկ ծերունիներու կերպարանքն ունին: Անմխիթար տեսարան, որովհետեւ մարդ կը համոզուի որ ամեն տեղ բուրժուա դասակարգերը խոր ծերութեան հասած են. և ինչ բանի որ կը հանգիպիք, նոյն իսկ երեխաները, այնքան խեղճօրէն բացուած ամուսնութեան զարչահոտ ճահիճներու մէջ... ինչ որ կը հանգիպիք արդէն անցեալ է միայն...

Երէկ երեկոյ, օթելի դարաւանդին (terrasse) վրայ ընթերցի... Իմինիս դրացի սեղանի մը առջև, պարոն մը մեծ աղմուկով կը խօսէր, կ'ըսէր.

— Լերեւըները... Էհ, ինչ է որ վերելքները... Ես ամենքն ալ բարձրացեր եմ, ես որ ձեզի կը խօսեմ... ու առանց առաջնորդի... Այստեղ խաղալիք է... Պերինեանները, ոչինչ բաներ են, լեռ չեն առնք... Լեռ կ'ուզես, հը... գնա Զուիցերիա... Երեք անգամ Մօն Պլան եղեր եմ... կարծես թէ թիկնաթոռի մը մէջ... հինգ ժամուան մէջ: Այո, հինգ ժամուան մէջ, սիրելի պարոնս:

Միւրեւի պարոնը՝ ոչինչ կ'ըսէր սակայն, քիթը պնակին վրայ կախած ուտելով էր: Միւսը նորէն շարունակեց.

— Ալ ես ձեզի չեմ խօսիր ոչ վարդագոյն Լեռան... ոչ Կա-

պոյտ Լեոնան... ոչ Դեղին Լեոնան մասին... ատոնք մեծ բաներ մը չեն ինձի համար... բայց մտիկ ըրէք, ես՝ ձեզի խօսողս, տարի մը, մեծ Սարա-Բէրնարին վրայ ձիւնին մէջ կորսուած երեք անդլիացիներ ազատեցի։ Ա՛խ, եթէ Փաշտան նախադուշակած ըլլայի...

Տակաւին շատ ուրիշ բաներ կ'սէր, զոր ես լաւ չէի լսեր, բայց ուր անդադար յանկերգի մը պէս կը դառնար ու կը դառնար. «Ե՛ս, ե՛ս, ե՛ս»։ Յետոյ ծառայողը կը նախատէր, կերակուրները յետ կը ղրկէր, ղինիի ցուցանակին վրայ կը վիճէր ու նորէն իր ընկերոջ դառնալով.

—Ի՛նչ կ'ըսէք, ի՛նչ կ'ըսէք... Տակաւին աւելի տարօրինակը, աւելի սարսափելիին կայ։ Ե՛ս, թիավարելով անցայ, չորս ժամուան մէջ, Ժընէվի լիճը, Թերիտտէէն Ժընէվ... Այն, ես... ես... ես!!..

—Պէտք ունիմ ձեզի ըսելու որ այս պարոնը ճշմարիտ ֆրանսական ֆրանսացի մըն էր։

Գնչուհիներու երաժշտութիւնը արգելեց զիս աւելին լսելու, որովհետեւ այստեղ գնչուհիներու երաժշտութիւն ալ կայ... Ինչպէս կը տեսնէք, ալ ամէն բան կատարեալ է...

Արդ, լաւագոյն բանը զոր կրնամ ընել, ձեզի ներկայացնելն է բարեկամներէս մէկ քանին, մէկ քանին այն անձերէն՝ զորս կ'արմկահարեմ այս տեղ օրն ի բուն։ Անոնք մեծ մասով կամ խեղկատակ (grotesque)-են կամ սլոգայի, ընդհանրապէս կատարեալ սրիկաներ (canaille) որոնց ընթերցողմը չիւ՛ կարող յանձնարարել ղեռատի աղջիկներուն։ Գիտեմ հիմա ինձի համար պիտի ըսէք. «Ահաւասիկ պարոն մը որ տարօրինակ ծանօթներ ունի»։ Բայց ուրիշներ ալ ունիմ որ տարօրինակ չեն երբէք, և որոնց մասին բնաւ չեմ խօսիր, որովհետեւ անհունօրէն կը սիրեմ զանոնք։ Հետեւաբար կը ինդրեմ՝ ձեզմէ սիրելի ընթերցողներս, և դուք նոյնպէս, ամօթիսած ընթերցողուհիներս, որ յայտնի ասացուածքը ինձի չյարմարեցնէք. «Ըսէ՛ ինձի ո՞վ են բարեկամներդ»... Որովհետեւ այն հոգիները՝ որոնց յաճախ տղեղ զիմագծերը ձեզի պիտի ցոյց տամ, որոնց շատ քիչ չինիչ պատմութիւններն ու գրեթէ միշտ դայթակղալի խօսքերը պիտի պատմեմ ձեզի, ասացուածքին հասկցած եղանակով բարեկամներս չեն... Անոնք պատահական բարեկամներ են, ինչ որ՝ կարծեմ, բոլորովին ուրիշ բան է և իմ կողմէս ոչ մէկ գնահատումի չեն արժանանար։ Ես այս պատահականներս ձեզի կը պատմեմ ձեր զուարճութեան համար և իմ զուարճութեանս ալ համար, թուղթին վրայ...

Այս նախաբանը ըրի որպէս զի ձեզի բացատրեմ թէ բա-

րեկամս Ռօպէտ Հակըման՝ բարեկամս չէ՛ս Ու է մէկն է ան զոր ճանչցայ, աստենօք, որ ինծի հետ եղակի դէմքով կը խօսի, և որուն հետ ես եղակի դէմքով կը խօսեմ և հեռուէն հեռու, զիպուածով ու առանց հաճոյքի կը տեսնուիմ:

Դուք ալ զինքը կը ճանչնաք արդէն: Բարեկամս անհատ մը չէ, այլ հաւաքականութիւն մը (collectivité): Մոխրագոյն, թաղիքէ լայն գլխարկ, սեւ վէսթօն, վարդագոյն շապիկ ու սպիտակ օձիք, սպիտակ տաքատ մէջտեղի ծալքը լաւ կոտորուած, սպիտակ կաշիէ կօշիկներ. անոնք ծովեզերքներու վրայ ու լեռներու մէջ են. այս պահուս, անոնք, Ռօպէտ Հակըմանները՝ երեսուն հազար են, որոնց հազուատն ու հոգիները, կարելի է ըսել թէ միեւնոյն դերձակն է որ պատրաստած է,—անոնց հոգիները մանաւանդ, որովհետեւ ատենք շատ զիւրաւ ձեւուող հոգիներ են ու ափսոսի կերպսէ մը շինուած որ մեծ բան չարժեք:

Այս ատու, երբ դուրս ելայ, բարեկամս Ռօպէտ Հակըմանը տեսայ: Առաւօտեան՝ անստգիւտ բարեձեւութեամբ արդ ու զարդով՝ ծառուղիին հիանալի սօսիներու տակ կը ճեմէր...

Նախ, ևսանդուն կերպով շահագրգռուիլ կեղծեցի՝ ճանապարհայարդարի (cantonnier) մը գործողութեամբ, որ թաւայով (casserole) մը զինուած՝ առուակէն ջուր կը քաշէր ու չաղ կուտար ծառուղիին մէջ, զայն ջրելու խարեքայօրէն թաղապետական պատրուակով... Ու բարեկամիս հեռանալուն ժամանակ տալու համար նոյն իսկ, ճանապարհայարդարին հետ խօսակցութիւն մը սկսայ իր գործիքին պատմա-թաղապետական հանգամանքին վրայ, բայց Ռօպէտ Հակըման, ինքն ալ զիս նշմարել էր.

—Ա՛խ, անիծած, բացագանչեց. դէպի ինծի եկու, սրտաղեղ, ու սպիտակամորթ ձեռնոցներով ձեռքերը երկարելով:

—Ի՞նչ, դուն ես... այս կողմերն ի՞նչ գործ ունիս:

Աս ու ան իմ պզտիկ հիւանդութիւններուս խորհրդակից ընելէն աւելի բան չը կայ որ ափսոսն ատեմ: Պատասխանեցի.

—Ման գալու համար... հապա դուն:

—Ա՛հ, Ես... դարմանուելու եկած եմ... բժիշկն է որ զիս այստեղ զրկեց... գիտեմ սոռոջութիւնս բաւական քանդուած է...

Անր խօսակցութիւնը անմիջապէս շատ հասարակ դարձուածք մը առաւ Ռօպէտն ինծի խօսեցաւ. Բօլ Տէշանէլի մասին, որ յաջորդ օրը պէտք է դար. Կաղինօի մասին, որ այս տարի ափսոսանքով չէր. աղաւնորսութեան մասին որ շատ յաջող չէր... և այլն:

—Մանաւանդ կին չը կայ, բարեկամս, կին չը կայ... եզ-

բակացուց: Ո՛ւր են այս տարի, մարդ չը գիտէր... Թշուառական եղանակ, չէ...

—Բայց լեռը կայ, աղաղակեցի... հեզնական ոգևորութեամբ մը... հիանալի է այստեղ... մարմնաւոր դրախտն է: Տես սա բուսականութիւնը... սա փլուզոնները, լէօքանդէմները որոնք կաղամախներու բարձրութեան կը հասնեն... հապա այս հսկայական վարդենիները որ չեռ գիտեր որ երազի երկիրներէն բերուած են կարծես, պ. դը Ժիւսիէօի *) զլխարկով:

—Ա՛խ, ինչ երիտասարդ սիրտ ունես:

Ոգևորուեցայ:

—Հապա, այս հեղեղները, սառցարանները... Այս ամենը քեզի բան չեն ըսի ուրեմն...

—Շատ դուարճալի ես... պատասխանեց Ռօպէռ... Այդ տեսակ բաներէն խաբուող միամիտներու կերպարանքն ունիմ արդեօք: Հեղեղներէն խելքը թոցնող չեմ ես... ինք լեռը, տարօրինակ ինչ ունի... Մօն-Վալէօիէն **) է, աւելի մեծ ու նուազ ծիծաղաշարժ, ահաւասիկ...

—Ուրեմն ծովը կը նախընտրես...

—Ծովը... Ա՛հ, ինչ բաներ ալ կըսես... Բայց, բարեկամ, լսէ. տասնըհինգ տարիէ ի վեր, ամեն ամառ Թոռվիյ կերթամ... ու շիտակն ըսեմ, մէկ անգամ ծովուն չեմ նայած... ծովն կը գանես... Ա՛հ, բնաւ... խելք թոցնելու համար բան չէ մնացեր որ բնութեան տեսարան ըստածին վրայ պիտի հիանամ... Ամենէն ալ կարօտս առեր եմ, բաւական է:

—Ինչ որ է... դուն այստեղ առողջութեան համար եկած ես չէ... գէթ ինքզինքդ խնամած ունես. դարմանի մը կը հետեւես...

—Շատ խիստ կերպով... պատասխանեց Ռօպէռ... եթէ ոչ...

—Ի՞նչ ըրած ունիս...

—Իբր դարման:

—Այո:

—Շիտակը, ահա ինչ կընես... Ժամը 9-ին կարթննամ... պարկին մէջ, բուֆէտին շուրջը պտոյտ մը... ասոր անոր կը պատահեմ... քիչ մը մաքուր շունչ կը քաշինք... կը հանգստանանք... կը գանգատինք որ այստեղ կը ձանձրանանք... արդ ու զարդերը կը ծաղրենք... Ու այսպէս կէս օրը կը գտնեմ վերջապէս...

*) Անթուան դը Ժիւսիէօ, ֆրանսացի ծանօթ բուսական մըն է:

**) Մօն-Վալէօիէնը Պարիզի շրջակայքը գտնուող բարձր բլուր մըն է:

Ճաշին յետոյ կասթօնենց տունը ձևոք մը պօքէր կը խաղանք... Ժամը հինգին կազինո... պաքառայի մը շուրջը առանց ոգեւորութեան կը հաւաքուինք կը խաղանք... ընթրիքի ժամանակ է, կ'ընթրենք ու... նորէն կազինո կը վազենք... ահա բոլոր զարմանս... և հետեւեալ օրը կը վերսկսեմ միեւնոյն բանը... Երբեմն, պզտիկ փոփոխութիւնը մը թուուզցի Լաիսի մը կամ պօրտոցի Փրինէի*) մը հետ...

Օհ, լա, լա, խեղճ բարեկամս... բայց հաւատարմութեան է, այս այնքան գովուած զարմանատեղին որ ամէն հիւանդութիւն կը բժշկէր... Իմ վրայ ոչ մէկ ազդեցութիւն չըրաւ... Ես նոյնքան հիւանդ եմ՝ որքան նոր եկած ժամանակս... Խեղկատուութիւններ են, այս հանքային ջրերը...

Օգը հոտոտեց ու ըսաւ...

—Միշտ ալ սա հոտը... զգացիր... գարշելի բան է... բութեմէն, եկող իփօսիլֆիթի հոտ մը սօսիներուն մէջ ման կուզար...

Բարեկամս շարունակեց.

—Այս հոտը... ակ, չար սատանայ... Ինչ յիշողութիւն ունիմ... այս հոտը մարքիզուհիին տան մէջ առած հոտս է ճիշտ...

Ու սկսաւ շառաջածայն ծիծաղել.

—Երեւակայէ... իրիկուն մը... Թիւրնայրիճի մարքիզուհին ու ես պիտի ճաշէինք ճաշարանի մը մէջ... կը յիշեմ մարքիզուհին... այն բարձրահասակ խարտիշուհին որուն հետ երկու անգամ գտնուեցայ միասին... Ո՛հ... Չեմ յիշեր... Բայց, բարեկամս, Պարիզի մէջ ամէն մարդ պիտէ խնդրէր Վերջապէս, ինչ որ է!...

—Ի՞նչ էր որ այդ մարքիզուհին, հարցուցի.

—Շատ չիք կին մը... բարեկամս... Գօնքարնօի մէջ Ժամանակաւ լուսադարարուհի, իրաւ որ չիտակը չը գէտեմ որո՞ւ շնորհիւ գարձել էր մարքիզուհի, ու ան ակ, Թիւրնայրիճի մարքիզուհի... ու ինտելիգենտ, այսչափը միայն կ'ըսեմ...

Արդ, ինչպէս որ առաջուանէ կարգադրած էինք, փոխանակ ճաշարան երթալ ընթրելու, մարքիզուհին—խելքն այնպէս փըշեց—իր տունը ճաշել նախընտրեց... Լաւ... Գնացինք տունը... Բայց հազիւ գուռը փակած էինք, նախասենեակին մէջ ահռելի

*) Լաիս և Փրինէ նշանաւոր գեղեցկութեամբ յոյն զարպաւրնկալ կիներ էին։ Պրաքսիթէլ յոյն հուշակաւոր արձանագործը իր Աստղիկները քանդակելու համար վերջինը իբրեւ *modèle* գործածեց. սրբապիղծութեան յանցանքով դատուեցաւ, բայց անպարտ արձակուեցաւ։

հոտ մը մեր կոկորդէն խեց. «Nom de Dieu *)... աղաղակեց մարքիզուհին... մայրս է նորէն... երբէք չը պիտի կրնամ զինքը այդ վարժութենէն յետ կեցնել...» ու կատաղած, ուղղուեցաւ դէպի խոհանոց: Ազնուական մայրը այնտեղ կաղամբով ապուր մը կը պատրաստէր...

«Ձեմ ուզեր որ իմ տանս մէջ կաղամբով ապուր եփես... Քսան անգամ ըսի քեզի... աբաւթըմանը գարշահոտութեամբ լեցուցիր... Եթէ սիրահարէս զատ ուրիշ մէկը բերած ըլլայի այստեղ, ինչ պիտի ըսէր, ինչի տեղ պիտի դնէր զիս այս արտաքնոցի գարշահոտութեամբ... Հասկնար... ուղեղդ մտնու, վերջապէս»: Ու ինծի դառնալով, ըսաւ...

— Կարծես թէ, nom de Dieu! զրահակիր զօրքերու ամբողջ բանակ մըն է, որ մնացեր են այստեղ...»

Այս յիշատակութեան առջև բոլորովին մեկամաղձոտ դարձաւ... ու հառաչեց.

— Ինչ որ ալ ըլլայ հիանալի կ'ին մըն էր զիտես... ու անպէս չիք...

Ու կրկնեց.

— Արդ, այս հոտը որ մեզ կը հալածէ այստեղ... ինծի կը յիշեցնէ մայր Թիւրնպրիճի կաղամբապուրը... Մի և նոյն հոտն է...

— Մարքիզուհին յիշատակը, ըսի, քեզ պիտի զօրացնէ այդ հոտը տանելու... Ու ձեռքս երկարելով.

— Օ՛հ, բարի առողջութիւն... Դարմանումիդ արգելք չըլլամ...

— Ինծի նայէ, ինծի նայէ, կանչեց Ռօպէտ:

Բայց ես մարգագետնին վրայ յատըած ու բարեկամիս և իմ մէջ դրած էի թանձրութիւնը անագին տարածութեան մը...

Հատորը ծայրէ ի ծայր լեցուն է այս տեսակ խորունկ երգիծանքի, կենդանի, վառվառն իրականութեամբ պատկերներու: Դժբաղդաբար ինծի անկարելի է այսպէս շարունակել, որովհետեւ, այն ատեն ամբողջ գիրքը թարգմանել հարկ պիտի ըլլար: Ընտրանօք ձեզի պիտի ներկայացնեմ մէկ քանի հայակապ պատկերներ ալ, որոնք ձեզի պիտի սիրցնեն Միրբօի քարի, վեհանձն ու հզօր տաղանդը:

«Ահաւասիկ աղգասէրի մը ծաղրանկարը վարպետօրէն դժուած:

*) Ծանր հայհոյութիւն մը, մանաւանդ մարքիզուհիի մը բերնին մէջ անվայել:

«Մօնթօպանի Լիսէին մէջ պրօֆէսօր՝ պ. Իգիտօն Ժօղէֆ Թարապիւսթէն իր ընտանիքով Բ. . եկած էր եղանակն անյնչու համար: Պ. Թարապիւսթէն, ականջի հիւանդութեամբ մը, տիկին Ռօզ Թարապիւսթէն ծունկի հիւանդութեամբ մը, Լուի-Փիլաթ Թարապիւսթէն, իրենց որդին, ողնայարի թիւրումէ մը կը տառապի. ներկայ ժամանակներու ճշմարիտ ընտանիք մը, ինչպէս որ կը տեսնէք: Այս՝ խոստովանուած ու ճիշտն ըսելով յարգելի հիւանդութեաներէն զատ, ուրիշներ ալ ունին, որ զիրենք կը հարուածէ իրենց կեանքի աղբիւրներուն մէջ իսկ: Պ. և տ. Թարապիւսթէն՝ երկուքն ալ, ինչ ապականուած ժառանգականութիւններու, ինչ կեղտոտ կիրքերու, ինչ ազահ ու գաղտագողի յոխութիւններու, ամուսնական ինչ կոյուղիներու (cloaque) ծնունդ են, որպէս զի յանգին հրէշաբանական մարդկութեան այս վերջին նմոյշին, այս տձև ու խոյլիէ փտած վիժուկին՝ երիտասարդ Լուի-Փիլաթին: Հողագոյն ու փաթփոթած, գիկզակ կոնակով, իր ծուռ ու մուռ սրունդներով, իր սպնդային ու կախող ոսկորներով, այս երեխան 70 տարեկան կը թուի: Հիւանդոտ ու մենամոլ (maniaque) պղտիկ ծերունիի մը ամէն ձեւերն ունի: Երբ անոր քոյլն ես, իրաւցնէ կը տառապիս զայն սպանել չը կարենալուդ համար: Առաջին անգամ երբ այս բոլոր Թարապիւսթէնները տեսայ, մտքէս անցաւ երթալ իրենց երեսին պսոալ:

— Ինչո՞ւ եկեր էք ձեր երեսի ներկայութեամբ, ձեր երեսի անբարոյական ներկայութեամբ, լեռներու ամենի շքեղութիւնն ու աղբիւրներու պայծառութիւնը պղծելու... Տուներնիդ դարձէք... Դուք շատ լաւ գիտէք, որ ոչ մէկ դար—որչափ հրաշագործ կուղէ թող ըլլայ—չի կրնար երբէք լուալ ձեր գործարաններու դարաւոր փթութիւնը ու բարոյական կեղտը ուրիշ ծնած էք...

Իայց կը խորհիմ թէ պ. Իգիտօն-Ժօղէֆ Թարապիւսթէն շատ պիտի դարմանար այս տեսակ պերճախօսութեան մը վրայ ու չը պիտի հպատակէր բնաւ այս հոմերական հրամանին:

Ամէն օր, առաւօտը, որոշ ժամերու, ծառուղիներուն կամ Բէնքօնկաներուն վրայ, լազնիքէն նոր ելած, հանդիսաւոր, մէթոդիկ, մեծ խօսքերու և մեծ շարժ ու ձեւերու սիրահար պ. Իգիտօն Ժօղէֆ Թարապիւսթէնի կը հանդիպիք, որ իր կարճ սրունգները, կորիզաւոր դէմքը և վատառողջ փորը կը պըտըտցնէ: Ընտանիքը իրեն հետ է, ու երբեմն, իրեն կ'ընկերանայ նաև իր դրացի սենեակը բնակող իրեն նման պրօֆէսօր քարեկամ մը, որուն հիւանդ, ալիւրոտ մորթը տրտում փէխօի մը երեւոյթը կուտայ: Ոչինչ այնքան գեղեցիկ է, որքան զա-

նոնք տեսնելը, որ լճին եզերքը քերելով կը քալին, կարասներուն կը խօսին, մինչդեռ երիտասարդ Լուի-Փիլաթը անոնց քար կը նետէ... արգէն:

—Նաոտ կը փափաքէի զիտնալ թէ ինչու համար կարապ կ'անուանեն այս թեւաւորները, կը հարցնէ Իզիսօս Ժէզէֆ Թարապիւսին:

Որուն՝ բարեկամը կը պատասխանէ ակօսներու կրճաիւնով մը.

—Երկար վիզերով սաղեր են ասոնք, ուրիշ ոչինչ... Միշտ սուտին սէրը:

Երեկոյեան, պառկելէ առաջ, պ. Թարապիւսթէն ման կուգայ, վեհափառ, Սպանիա սանող ճամբուն վրայ, մինչև «Ֆրանսայի վերջին կազի կտուցը (bec de gaz)»։ Չայնն ուռցընելով կ'ըսէ.

«Երթանք, մինչև Ֆրանսայի վերջին կազի կտուցը»։ Իրեն կը հետևի կինը, դաժանօրէն կազալով, թուլամորթ, դեղին ճարպով ուռած՝ որուն յետեւ կուգայ իր որդին, որ սաքերը մէջը կոխելու համար, կովու ամենէն մեծ քակօրները, թրիքի ամենէն խոշոր կոյտերը կը վնտռէ, որ այդ պահուն այդ ճամբուն վրայ բազմաթիւ են, որովհետև օրուան մէջ եղի և ձիու այնքան կ'առքեր անցած են... Ֆրանսայի կազի վերջին կտուցին առջև հասած՝ պ. Թարապիւսթէն կանգ կ'առնէ, երկարօրէն կը խօսայ, և կամ իր տրամադրութեանց համեմատ, բարոյական խոհեր, փիլիսոփայական բարձր մտածութիւններ անպատրաստից կը դարձնէ իր ընտանիքի դաստիարակութեան համար։ Յետոյ, դանդաղօրէն կը դառնայ քաղաք ու ասանց օդի ու լոյսի սենեակը կը մօտէ զոր վարձած է նեղ, խոնաւ, վատառողջ՝ ամենէն պայծառ արևներու ժամանակ անգամ ծառերու կրկին շարքով մը մթնցած տան մը մէջ։ Ու երեքը միասին, կը քնանան, մահճակալ մահճակալի դալած, իրենց կուրծքերը ընտանօրէն փոխանակելով իրենց երեք շունչերուն թոյնը... Երբեմն երբ իրենց դուակը քնած է, մոլեղնաբար իրենց զգուհի սէրերուն կը հետապնդեն ու իրենց մալթուսական համբոյրնորով գիշերուան լուսթիւնը կը խռովեն:

Երէկ, Սպանիոյ ճամբուն վրայ, Իզիսօս-Ժօզէֆ Թարապիւսթէնի հանդիպեցայ։ Ֆրանսայի կազի վերջին կտուցին առջև կանգ առած էր։ Կինը աջ ու տղան ձախ կողմը կը կենար։ Ու լեռներու խորքին վրայ, վերջալոյսին մէջ որ լուսինը կ'արծաթաղօծէր, այս ամենը կը ներկայացնէր Չարչարանքի տարօրինակ տեսարան մը, խաչելութեան խեղկատակ նմանութիւն մը:

Ճամբուն վրայէ ոչ ոք կանցներ, ոչ անասուն: և ոչ մարդ: Նեղ հովտին խորը՝ հեղեղը՝ գլտորած ժայռերու մէջ տեղ կը փրփրար, և գայլախաղներ կը թաւալէր առմօնիքայի շոնդիւններով: Ու լուսինը յամբօրէն կը սահէր՝ երկնքին վրայ, երկու լեռներու պատուումքին մէջ, որ մանիշակագոյն մշուշով մը սքողուած՝ վայրկեան առ վայրկեան նուազ մուրթ կերկնային:

Գուշակելով որ պ. Իգիտօո-Ժօղէֆ Թարապիւսթէն վերջնական խօսքեր պիտի արտասէր, և փափաքելով ղանոնք լսել, պատուըտեցայ զառիկողի մը յետև իր պերճախօսութիւնը չը խրոչեցնելու համար երբէք:

—Ռօղ... հրամայեց յանկարծ պ. Թարապիւսթէն... և զո՛ւն, Լուի Փիլաթ... դիտեցէք, երկուքդ ալ, այս գործիքը... լուսաւորութեան:

Ու ազնիւ շարժ ու ձևով մը, ցոյց կուտար լապտերը՝ զոր, խնայի խնայողութեամբ մը, քաղաքապետական վարչութիւնը չէր վառած բնաւ, որովհետև այդ իրիկունը լուսենկայ կար:

—Դիտեցէք այս գործիքը, շարունակեց պրօֆէսօրը, ու ըսէք ինձի՝ ի՞նչ է:

Լուի Փիլաթ իր ծամածուռ ուսերը ցնցեց: Ռօղ՝ իր հիւանդ ծունկը չփելով՝ պատասխանեց:

—Բարեկամս, ի՞նչ պիտի ըլլայ, կազի կտուց մըն է:

—Կազի կտուց մը... կազի կտուց մը... Տարակոյս չը կայ որ կազի կտուց մըն է... բայց, ասիկա՜ միւսներուն պէս կազի կտուց մը չէ բնաւ... Ասիկա շատ մասնաւոր, ըսեմ, շատ խոր հըրդանշական բան մըն է... Նրբ որ զայն դիտէք... ըսէք սիրելի Ռօղս, և զո՛ւն, Լուի-Փիլաթ, միթէ չէք ունենար զչայտութիւն մը... յուզում մը... սարսուռ մը... վերջապէս զօրաւոր, հզօր... կրօնական... ըսենք բառը... ազգասիրական բան մը... ինքնամիտփում մէ՞ վայրկեան մը Ռօղ... Լուի-Փիլաթ հողիիդ մէջ իջիր... ուրիմն այս կազի կտուցը ոչինչ չը խօսիր ձեր սրտին...

Ռօղ հառաչեց, գրեթէ արտասուալից:

—Եւ ի՞նչու կուզես որ, Իգիտօո-Ժօղէֆ, այս լապտերին առջև այնպիսի բաներ զգամ գոր չեմ զգար միւսներուն առջև:

—Որովհետև այս լապտերը, սիրելի կի՛նս, գաղափար մը կը պարունակէ... սուրբ գաղափար մը... մայրական գաղափար մը... խորհուրդ մը... զոր ոչ մէկ լապտեր կը պարունակէ... որովհետև... լաւ մտիկ ըրէք... որովհետև այս կազի կտուցը, Ֆրանսայի կազի վերջին կտուցն է, որովհետև, իրմէ անդին... լեռն է... Սպանիան... անձանթը... կը հասկնան... օտարը, վերջապէս... որովհետև հայրենիքն է որ, ամեն երեկոյ կը լու-

սավառուի, մեր սրտերու հաճոյքին, երախտագիտութեան համար, և որ կարծես մեզի կըսէ. «Եթէ կը սիրես զիս, աւելի հեռուն չը պիտի ելթնաս»:

Ահաւասիկ ինչ է այս կազի կտուցը: Տիկին Թարապիւսթէն երկար դիտեց կազի կտուցը, ուժգին ճիւղ մը ըրաւ աստուածային ցնցումն զգալու համար, և տխուր, ընկճուած՝ որ իր ամուսնին սիրտը ուռեցնող զգացումները ինք ալ չը զգար, հեծեծեց:

— Ես քեզի չափ խելք չունիմ, բարեկամս... ու այդքան գեղեցիկ բաներ չեմ տեսներ պարզ լապտերի մը մէջ... Մեծ դժբաղդութիւն մըն է ասիկա... Ինծի համար կազի կտուց մը, միշտ կազի կտուց մըն է, նայն իսկ՝ եթէ ան Թրանսայի կազի վերջին կտուցն է...

Պ. Թարապիւսթէնի ձայնը մեղամաղձոտ չեղտ մը առաւ:

— Աւտդ, բացագանչեց... ինչ պիտի ըլլայ, կին մըն ես դուն... Ինծի պէս, իրերու խորը չես թափանցած... Իրերը՝ խելճ բարեկամս, երեւոյթներ են միայն, որոնց տակ կապրեն յաւիտենական խորհրդանշանները... Ռամիկը երեւոյթ միայն կը տեսնէ... Ինծի պէս, մեծ մտքերն է որ, միայն, երեւոյթներու տակ ծածկուած խորհրդանշանները կը գտնեն... Ինչ որ է, չերկարենք:

Լուսթիւն տիրեց պահ մը:

Թարապիւսթէններու շունչը՝ երեկոյեան կենդանացուցիչ մաքրութիւնը կը պծէր: Վայրի շահոքրամբ բուրում մը, որ մինչեւ անոնց մօտեցած էր առանց զիանալու, կրունկին վրայ յետ դարձաւ և կորսուեցաւ հովտին մէջ: Ծղրիթները լռեց էին, պրօֆէսորի ձայնին աններդաշնակութենէն ապշած:

— Իսկ, դուն, Լուի-Փիլիպ:

Բայց ողան իր ներքան տակ կայծառիկ մը կը ճգմէր, որ խոսին մէջ նոր սկսեց էր փալիւլալ... Չը պատասխանեց:

Այն ատեն, վհատած՝ պ. Իզիտու-ժօլէֆ Թարապիւսթէն դիտեց, վերջին անգամ, ջերմաւանդօրէն, Թրանսայի կազի վերջին կտուցը: Ու մեկնեցաւ, կնոջ հետ՝ որ նորէն սկսաւ դաժանօրէն կաղալ, և իր դաւակին հետ՝ որ շարունակեց թրիքներու և քակորի դէզերու մէջ տապալակիլը:

Թրանսական ազգասէրէն յետոյ ահաւասիկ ուրիշ նշանաւոր տիպարի մը՝ ֆրանսական զինուորականին պատկերը:

«Քլառա Ֆիսթիլը այս առտու ինծի տեսութեան եկաւ: Բացի ուրիշ պատմութիւններէ, ինծի ըսաւ թէ բառօն դը Փոէսալէ զնդապետը, Բ...ի մէջ օրերն ու գիշերները կանցնէ պաքառայի սեղանին առջև... Կազինօյի վարչութիւնը թոյլ կու-

տայ որ արի գնդապետը խարդախութիւններ ընէ... Ամեն ձեռք խաղի ոսկի մը կը վերցնէ...

—Ի՞նչ ընենք... բացատրեց Քլաուս Ֆրաթիւլ, Կադինոյի տնօրէնը... Նախ յարգանք դէպի բանակը... և յետոյ մեծ բան մը չէ... ընդհանուր ծախքերու հաշուին մէջ կը մտնէ...

Երէկ, որովհետև իր առջևի խաղատախտակը կը շահէր, անվեհեր գնդապետը՝ հարիւր ֆրանքնոց դրամատոմս մը քչեց շտապով կանանչ առուիին վրայ և երբ վճարուելու կարգը իրեն եկաւ.

—Ամենը դրամատոմսինն է... յայտարարեց, զուարթօրէն: Խաղատիրոջ փոխանորդը (croupier) վարանեցաւ, ինչ ընկ-ւեքը չը գիտնալով...

—Բայց, գնտապետ... կակաղեց.

—Է՛, ինչ... Է ինչ 100 ֆրանքնոց դրամատոմսի մը ինչ ըլլաւ չէք գիտեր... nom de Dieu?

Այն ատեն խաղատնօրէնը՝ որ ճիշտ գիւցազնական դի-նուորին յետեւ կը գտնուէր, ծռելով՝ կամացուկ մը անոր ուսին դարկաւ ու ականջին փսփսաց.

—Ուշադրութիւն, գնտապետ... չափը կ'անցնէք... չափը կ'անցնէք...

—Իրաւ... բացազանչեց գնտապետը... Ա՛խ, թշուառա-կան...

Ու croupier-ին ուղղուելով.

—Ոսկի մը, միայն, դրամատոմսին...

Ինչպէս կը տեսնէք զինուորականի ճշմարիտ տիպար մը...

Երբնմն, Դրէյֆուսի խնդրին ամենէն տաք ժամանակին, գնտապետը՝ առտուն լացելովեւան կուգար ինծի... Դռնէն ներս կը մտնէր, հագալով, թքնելով, հայհոյելով...

Ու ահաւասիկ մեր խօսակցութիւնները.

—Ի՞նչ նորութիւն, ինչ կայ գնտապետ:

—Է՛հ, ողջութիւն... ինչպէս կը տեսնէք հիմա քիչ մը ինքզինքս կը գտնեմ... բայց շատ դժնդակ վայրկեաններ ան-ցուցի... Ա՛հ, nom de Dieu!

—Ձեր հայրենասիրութիւնը...

—Խնդիրը հայրենասիրութեանս վրայ չէ... այլ զինուորա-կան սատիճանիս...

—Միենոյն բանն է:

—Անտարակոյս, միենոյն բանն է...

—Յետոյ:

—Լսեցէք... տասնըհինգ օր ամբողջ, կարծեցի թէ զի-

նուորական աստիճանս ձեռքէս պիտի խլէին այդ անզգամները... ազնիւ խօսք...

—Վերջապէս. այսօր, ալ վախ չունիք... Աւելի հանգիստ էք.

—Աւելի հանգիստ... աւելի հանգիստ... Էհ... քիչ մը շունչ կ'առնենք... ահա եղածը... Այո, բայց տեսնենք... տեսնենք ինչ կ'ըլլայ... nom de Dieu!...

Այստեղ, գնտապետը մտածկոտ կը դառնար, ու, իր յօնքերու յուզուած մացառին տակ, իր հայեացքը կարծես ապագան կը թափանցէր... Յանկարծ իրեն հարցունցի.

—Արդեօք զինուորականներուն ուղղած ձեր օրակարգերուն մէջ պիտի նորէն սկսիք pékin*)-ները կեղտոտ խոզեր անուանել... և աշխարհաքաղաքացիներու փորին մէջէ՛ ձեր կըտրիճ սուրը անցնելու խօսքեր ընել դարձեալ:

—Պահ... չմտ տարօրինակ էք, դուք կեցէք քիչ մը... նախ պիտի ձգեմ որ ոչխարը չռէ... Եթէ լաւ չռէ, այսինքն եթէ կառավարութիւնը շարունակէ խտուրթեամբ վարուել մեր դէմ... ահ կ'ապահովացնեմ ձեզ թէ այդ աշխարհաքաղաքացիներու հասցէին տակաւին ինչ փառաւոր օրակարգեր ունեմ ուղարկելիք...

—Եթէ վատ չռէ, գնտապետ:

—Ի՞նչ կուզէք ըսել այդ խօսքերով:

—Ըսել կուզեմ որ, եթէ կառավարութիւնը իր խտուրթիւնը աւելի սաստկացնէ, եթէ պրետօրական զրգոռմանքու դէմ պաշտպանողական լուրջ միջոցներ ձեռք առնէ:

—Այն ժամանակ, տարբեր բան... սո՛ւս, ձայն ձուն հանել չը կայ, տղաս... Եւ կամ իրենց կը խօսիմ իմ յարգանքիս մասին այդ բոլոր օրէնքին համար... իմ հնազանդութեանս մասին այդ vache **) (կով) Հանրապետութեան համար... Զինուոր եմ, այո՛ թէ ոչ... Ուրեմն ձեռն ի կարգ, և զէպի ձախ...

Եւ մեղմադձոտ՝ կաւելցնէր:

—Ահ զինուորական արհեստին մէջ ամեն բան վարդազոյն է... Սուրդ կըլլելու ես, nom de Dieu! կարծածէդ շատ աւելի

*) pékin-ի հայերէն թարգմանութիւնը չը կայ. զինուորականները pékin կ'անուանեն այն բոլոր մարդիկը, որ իրենց փառայեղ համազղեւտը չեն կրեր, այսինքն պարզ քաղաքացիները. pékin-ը իրենց համար անարգական մեծագոյն բառն է:

**) Vache-ը ամենէն նախատական բառն է որ կարելի ըլլայ ուղղել մէկուն. անիկա իր նախնական իմաստով (կով) չի գործածուիր. ընդհանրապէս պոռնիկներուն կ'ուղղեն այդ հայհուցութիւնը:

յաճախ... բայց ի՞նչ... ուրիշ ի՞նչ կրնանք ընել... Հայրենասիրու-
թիւնը...

— Գնդապետի աստիճանը...

— Միևնոյն բանն է:

— Ծիչդ է...

Պատուական գնդապետը սենեակին մէջ կերթար ու կու-
գար, կրծոտելով սիկառ մը՝ ուրկէ ծուխի տարտամ ոլորտներ
միայն զուրս կուտար... ու իւրաքանչիւր ամպի մէջ տեղ կը
կրկնէր.

— Ֆրանսայի մայրը լիւում է nom de Dieu!... Ֆրան-
սան աշխարհաքաղաքացիներու ճանկին մէջ է...

— Աշխարհաքաղաքացի բառը երբէք բերաննուդ բաց չէք
թողուր... արդեօք անգաղտնապահութիւն պիտի ըլլար ձեզի
հարցնել թէ ի՞նչ կը հասկնաք իսկապէս այս բառով...

— Աշխարհաքաղաքացիները:

— Խնդրեմ, գնտապետ:

— Ես գիտեմ... կեղտոտ զազաններ... դաւաճան և հայրե-
նազուրկ կեղտոտ անզգամ խոզեր...

— Անտարակոյս... բայց ուրիշ:

— Կաշառուածներ... Ֆրանս-մասօններ... մսի ճանճեր...
pékin-ներ վերջապէս:

— Աւելի բացայայտ խօսեցէք, գնտապետ:

— Այդ խարդախութիւնների մասին, nom de Dieu!

Ու գնտապետը վերստին կը վառէր իր սիկառը, որ իր
լեզուաբանական բացատրութիւններու մոլեգին տարափին տակ
բոլորովին մարած էր... Յետոյ.

— Այդ ի՞նչ բաներ է որ կը պատմեն... Կալիֆէն բանակին
զինուորական համազգեստը ջնջելու միտք ունի եղեր... Այդ-
պէս բան մը գիտէք, զո՞ւր:

— Աստուած վկայ, չը գիտեմ...

— Կ'ըսեն թէ նախ պիտի սկսի տաբատէն (pantalon), ուր,
յուլիս 14-ի զօրահանդէսին ժամանակ բոլորովին ad libitum
(ըստ կամս) պիտի ըլլայ եղեր... Սպիտակ տաբատ, կապոյտ
տաբատ, քառակուսիներով տաբատ. կողմերը թաւիչոտ տա-
բատ. երկանաւորի վարդիկ... Ու պետերուն համար սիլին-
դրը պարտաւորիչ պիտի ըլլայ եղեր... Ոչ սպիտակ փետուր...
ոչ գարգամանակ... Սքանչելի է ըսելիք չը կայ... Աւելի լաւ կ'ը-
սեն անմիջապէս բանակը ջնջելով... սրովհետեւ ի՞նչ է բանակը...
Գարգամանակն է, ցցունքները, փետրափունջը՝ nom de Dieu
... Այն ատեն ի՞նչպէս այսուհետեւ զինուորական մը պիտի զա-
նազանուի քաղաքացիէն ((civil))...

—Շատ ուրիշ բաներ կան, գնտապետ, որով civil-ը կը զանազանուի զինուորականէն...

—Ի՞նչ բաներ է որ կը պատմեն նոյնպէս լրագիրները... Դրէյֆիւսը ֆրանսա դարձեր է եղեր...

—Անշուշտ, գնտապետ:

—Ա՛հ, ալ ատոր ըսելիք չը կայ... ալ ատիկա կլուելիք բան չէ...

—Բայց քանի որ անմեղ է:

—Անմեղ... Հրէայ մը... աղտոտ ջրհոտ մը: Տախաւին ինչ տարօրինակ բաներ կրնաք ըսել տեսնենք... Ընդունինք որ անմեղ է... Ատիկա մեզի ինչ... Մեզի ինչ որ անմեղ է... Անմեղ... Եւ յետոյ... Ատիկա պատճառ մը չէ երբէք...

—Ի՞նչ կ'ըսէք... գնտապետ:

—Ինչ կ'ըսէք մինչ կ'ըսէք չը կայ... Դրէյֆիւսը դատապարտուեցաւ թէ չէ: Այո: Զինուորական դատաւարներու կողմէ: Այո... Հրէայ է: Այո... ուրեմն թող ալ մեր զլուխը չը տանի, հանգիստ ձգէ մեզ... Ա՛հ, աշխարհաքաղաքացիներու կառավարութեան մը փոխարէն, եթէ ճշմարիտ ազգասէրներու կառավարութիւն մը ունենայինք, տեսէք ինչպէս այդ թշուառականը նորէն իր կղզին պիտի քշէին... մէկ, երկու... մէկ, երկու... Յառաջ... անմեղ... Նախ lascar¹⁾ մը որ ինքզինքին թոյլ կուտայ, առանց իր պետերու հրամանին անմեղ ըլլալ crapule²⁾ մըն է, կը հասկնանք... աղտոտ elampin³⁾ մը... Եւ յետոյ ինչ կերպարանք կ'ստեն, այդ ողորմելի մատնիչը:

—Ամենէն առաջ ըսին թէ շատ կերպարանափոխ եղած էր, շատ ընկճուած...

—Կատակերգութիւն: Անմեղ մը միթէ կ'ընկճուի երբէք: Միթէ ես ընկճուած եմ, ես: Գնահ բանդ... Մարդ երբ վստահ է անմեղութեան վրայ, զայն կը պոռայ, կոռնայ, nom de Dieu! Մարդ չի վախնար que diable! Գլուխը բարձր կը բռնէ... զինուորի պէս:

—Ճիշտ միևնոյն բանը Դրէյֆիւսը կ'ընէ, գնտապետ... որովհետեւ առաջին տեղեկութիւնը ճիշտ չէր... իրականութիւնը այն է որ Դրէյֆիւս ինքզինքը շատ վստահ ցոյց կուտայ, պատրաստ՝ մաքսուելու...

—Զըսես ուրեմն, ամբարդաւան մը... յոխորտացող մըն է... Parbleu!... ըսածիս պէս է եղել... Մարդ երբ անմեղ է, ոչ լիբբի մը ե ոչ ալ լեռներ ջարդողի կերպարանք կ'ստեն... կըսպա-

1) Lascar, 2) crapule, 3) elampin հայհոյութիւններ են, որոնց համապատասխան բառը չը կայ հայերէնի մէջ.

սէ, տխուր, զլիւրկոր, կարգապահ, բերանափակ... զինուորի մը պէս... Եւ յետոյ խնդիրը անոնց վրայ չէ... Անմեղ կամ մեղաւոր, կշռուած չափուած՝ դատուած է... Այլ այդ մասին խօսք ընելն անգամ աւելորդ է... Թէ ոչ Ֆրանսայի մայրը հազար հեղ լլկուած է։ Այսպէս, տեսէք թէ ինծի ինչ պատահեցաւ... բարեկամներէս ոմանք՝ ձիարչաւի ձիեր բուծանողներ՝ անցեալ օր արչաւ մը կազմակերպեր էին... շատ կարեւոր ձիարչաւ մը *nom de Dieu!* Ձիս ալ դատաւոր, իրաւախոհ կարգեր էին, իմ համբաւաւոր արդարադատութեանս պատճառաւ... Մէղօն Լաֆֆրիթ գնացինք... Ձիարչաւը սկսաւ... ինչ պատահեցաւ ինծի չը գիտեմ... Այլ ընդ այլոց տեսայ... Գնացէ... Բայց բանն այն եղաւ որ առաջին մրցանակը տուի՝ վերջին ձիուն... բարեկամներս բողբոջեցին, կատղեցան, պոռային կանչեցին...

— Յետոյ, յետոյ ինչ եղաւ, գնդապետ։

— Ի՞նչ պիտի ըլլայ, տղմս, որոշումս, յամառօրէն, անխափա պահեցի... և զմտնք փոռաւորապէս ճամբա դրի ըսելով. «Միալեցայ, ճշմարիտ է... Կասկած չը կայ որ սխալեցայ ու ակնյայտնի չարաչար սխալեցայ... կընդունիմ... բայց զԼուիս մի՞ տանկը, հանգիստ ձգեցէք զիս (*foutez-moi la paix!*)... Եթէ ես *civil* մը, կեղտոտ աշխարհաքաղաքացի *pékin* մը ըլլայի, մրցանակը պիտի յատկայնէի այն ձիուն որ, իսկապէս, ինքը չանեցաւ... և կամ, փորձը չեղած պիտի սեպէի... բեկանէի... բայց ես զինուոր մըն եմ... և զինուորի պէս կը դատեմ։ Կարգապահութիւն... և անսխալակամութիւն... փորձը օրինաւոր կը սեպեմ... բացուեցէք... ու բարուեցան, հեռացան...

— Եւ սակայն, գնդապետ... արդարութիւնը...

Արի գնդապետը իր ուսերը կը ցնցէր, յետոյ բազուկները՝ խաչելով աստեղադարձուած ու շքանշաններով ծածկուած կուրծքին վրայ խաչաձև ծալլելով, կըսէր.

— Արդարութիւնը... լաւ նայեցէք ինծի... կեղտոտ *pékin*-ի մը կերպարանքը ունեմ արդեօք... *Nom de Dieu!* Ձինուոր եմ, թէ ոչ։

— Ահ, գնդապետ, պատասխանեցի... շատ կը վախճամ որ ձեր աստիճանէն ալ վեր զինուոր մը ըլլաք.

— Տարբերութիւն չունի... կ'աղաղակէր քաջարի պատերազմիկը որ՝ վերսկսելով երթեկեկ սենեակին մէջ կահ կարասիները կ'ապտակէր, աթոռներուն կռուփի հարուածներ կիջեցներ... ու երախաբաց կ'ունար.

— Մահ հրէաներուն... մահ հրէաներուն։

Հիմա մօրիկ ըրէք ուրիշ նշանաւոր տիպարի մը՝ աղ-

նուականին՝ հին օրերու ոլիմպական բարձրութիւններէն եկած աղնուականին ոչ նուազ շինիչ պատմութիւնը.

«Քանի մը օրէ ի վեր շատ կը խօսին այստեղ Պօռպիէտի մարքիզին վրայ: Եւ բաղնիքներու վարչութիւնը մարքիզին անունով բաւական գեղեցիկ réclame մը կընէ իրեն համար... Մարքիզը մեծ գումարներ կը շահի պաքառայի, բօքերի մէջ... ամէն անգամ դուրս ելած ժամանակ իր օթոմօպիլը ահագին բազմութիւն կը հաւաքէ... վերջապէս իր տօնական և չիք կեանքը ճշմարիտ իրարանցում մըն է որ առաջ կը բերէ... Քլաուս Ֆիսթիւլ ինծի կ'ապահովցնէ թէ hôtel (հիւրանոց) և կաղինօ գինքը ձրի կը պահեն ու կ'ապրեցնեն:

— Խորհէ անգամ մը, ինծի կըսէր Ֆիսթիւլ, այդ մեծ անուն մը... քաղաքական և աշխարհիկ այդքան խոշոր զէրք մը... և գիտես ինչ ալ ընկերական... Հպարտութիւն ըսուածը չի գիտեր...

Կըսեն նոյնպէս թէ մարքիզը Ք... եկած է Սպանիայի մօտ ըլլալու համար, ուր յաճախակի ու վճռական տեսակցութիւններ պէտք է ունենայ Օպէանի պ. գուքսին *) հետ... կը յայտնեն մօտաւոր գալուստը նոյնպէս պ. Արտիւր Մէյէրի **) որ մարքիզին բարեկամն է և քիչ մըն ալ անոր սակարանի գործերուն և հաճոյքներուն վերակայուն...

Ահաւասիկ ինչ որ գիտեմ Պօնպիէտի մարքիզին վրայ:

Կիրակի առաւօտ մը, բարեկամի մը հետ Նօրֆօլէօր հասանք: Նօրֆօլէօրը նորմանտիական պղտիկ քաղաք մըն է, չափազանց նկարագեղ, և որ իր հին նկարագիրը անաղատ պահած է: Թոփյեի սիրուն հովտին խորը, մահիկի ձևով կառուցուած՝ քիչ մը վիրօքը՝ տենդաբեր ընդարձակ մարգագետիններուն որոնց մշտադալար ծածկոցները կը տարածուեն մինչև արևմուտք, Նօրֆօլէօրի արևելեան և հիւսիսային կողմերուն վրայ կը բարձրանան ձկուն ու կակուղ վէրվէտումով անտառախիտ ըլլալներ: Մարդ կարող է տակաւին հիանալ շատ հին աքքա-յարանի մը մնացորդներուն վրայ՝ դսթական կամարներու ամբողջ երկար շարք մը՝ որ կանգուն կը մնան զիրենք պաշտպանող բաղնիքներու շնորհիւ, և XV-րդ դարու շատ գեղեցիկ եկեղեցիի մը վրայ՝ որ հազիւ թէ նորոգուած է: Թոփյե՝ իր եղբրատունի կաղամախիներով անոր մէջ օգային սարսուռներ և փափուկ ցոլքեր ունեցող ջրի թեթև գօտի մը կը

*) Օպէանի գուքսը Ֆրանսայի թագաւորական գահուն թիկնածու է:

**) Արտիւր Մէյէր՝ Gaulois արքայական և հակասեմական լալտնի թերթին տնօրէնն է որուն գլխուն բաւական խաղ խաղացած է Միրթօ:

կազմէ... Քսան տարի առաջ ինչպէս որ տեսած էի, նոյնպէս կը տեսնէի այդ առտուն իր միևնոյն հեղ, կեղտոտ փողոցներով, իր հերձաքարէ, բարձր, եռանկիւնի տանիքաւոր միևնոյն տուներով, որոնք քիչ մը աւելի ծերացած, քիչ մը աւելի դարսուած, քիչ մը աւելի խարխլած էին... և նոյնպէս իր միևնոյն մարդկութեամբ որ, ինչպէս երբեմն, միևնոյն աղտեղութեանց մէջ կը մրափէ... Նօրփլէօր ոչինչ չէ զոհած առաջադիմութեան՝ որ, փոքր առ փոքր, կերպարանափոխ ըրաւ չրջակայ գիւղաքաղաքներն ու քաղաքները... մեքենական խղճուկ սղոցարանէ մը դատ՝ որը, սակայն, տարիին կէսը գործ չի գտնէր, ոչ մէկ էնտիւսթոի չի եկած վրդովել իր՝ փոքր մշակութեամբ զբաղող յարձակողական, յամառ բնակիչներու միապաղաղ ու լուռ կեանքը:

Եւ սակայն, այդ օրը, քաղաքապետութեան հրապարակին վրայ, կիրակնօրեայ զգեստները հագած գիւղացիներու ահագին բազմութիւն մը կար որ պատարագին ներկայ դառնուելու և, յետոյ, իրենց պզտիկ հարցերուն վրայ խօսելու եկած էին: Ամբողջ սովորականէն աւելի յուզուած բզզացող էր, որովհետեւ ընտրողական տենդոտ շրջանի տակ վայրկեանին մէջ էին... իրենց արթնցուցած կիրքերով, պաշտպանած կամ վնասած շահերով՝ միայն, ընտրութիւններն է որ կը յաջողէին քաղաքին տալ շարժումի և կեանքի վաղանցուկ պատրանքը: Պատերը ծածկուած էին կապոյտ, դեղին, կարմիր, կանանչ յայտարարութիւններով ու քանի մը խումբեր՝ այս կողմ, այն կողմ, անոնց առաջ կը կենային, ծնօտը դէպի վեր, աչքը պղտեկցուցած, բերանը փակ, ձեռքերը կոնակին յետև խաչածնած, առանց խօսքի մը, առանց շարժումի մը որ կարծիք մը, նախապատուութիւն մը արտայայտէր... Հրապարակի անկիւններէն մէկուն վրայ, գեղջկուհիներ՝ յաճախորդի կը սպասէին, նիհար հաւեղէններով լեցուն կողովներու առջև կկզած՝ և կամ նստած՝ բանջարեղէնի պզտիկ ցուցադրութիւններու առջև զորս տապահեղձ արև մը կըսկսէր արդէն թօշնեցնել... Բն չրջիկ վաճառողներ՝ թաւալուն ափսէներու վրայ՝ ման կ'ածէին, անբացատրելի ապրանքներ ու փերեզակի նախապատմական առարկաներ...

Ինծի ընկերացող բարեկամը՝ աւելի բազմաթիւ, աւելի ոգևորուած խումբի մը մէջ տեղ ճառախօսող և շարժումներ գործող՝ ընտրութիւն թեկնածուներէն մէկը՝ խոշոր հողատէր՝ Պօնպիէտի մարքիզը յայց տուաւ, որ իր վարած ճոխ ու չքեղ կեանքին պատճառով ամբողջ Նօրմանտիայի՝ և իր կառապանի համազգեստին ու իր լծաքարչ անասուններու կատարեալ վայելչութեան պատճառով Պարիզի մէջ նշանաւոր էր: Ծօթէջբիւսով

անդամ, ձիու, չներու և պոռնկի սիրահար, կատաղի խաղացող, յայտնի հակահրէական ու գործոն արքայական, սալօնի թերթի խմբագիրներու բացատրութեան համեմատ, ֆրանսական ընկերութեան լաւագոյն մասին կը պատկանէր...

Մեծ եղաւ զարմանքս երբ զինքը տեսայ կապոյտ, երկար, հաստ կտաւէ բաճկոնակ (blouse) մը հագած ու զլխին ճաղարի մորթէ զգալով մը: Ինծի բացատրեցին թէ ասիկա իր ընտրողական համազգեստն էր և թէ այդ հագուստը զինքը ու է սկզբունքի յայտարարութենէ բոլորովին ազատ կը կապուցանէր... Սև արդէն, մարքիզը խարդախ ձիավաճառի մը կատարեալ երեւոյթն ունէր: Իր ընթացքին, իր շարժումներին մէջ ոչ մէկ բան յոյց կուտար թէ այդ զգեստը պատահական զգեստ մըն էր. ոչ մէկ բան, նոյնպէս, իր կաս կարմիր ու գոհիկ բայց նենդամիտ և խորամանկ դիմագծութեան մէջ զինքը չէր զանազանէր միւս չըպէտք ու դարդակ մարդերէն, ու իր մէջ չէր յայտնէր ինչ որ թերթերու մարդաբանները կը կոչեն «ազնիւ ցեղը»:

Անձկութեամբ զինքը քննեցի:

Ոչ ոք իրմէ աւելի անխիղճ ու ստատնորդի չէր կրնար ըլլալ գործառնութիւններու մէջ, ձի մը կամ կով մը լաւագոյն կերպով ներկելու, կերպարանաւորիս ընելու արհեստին մէջ, առետուրի մը սակարկութիւններու միջոցին լիտրաներով զինի խմցնելու մէջ, տօնաւաճառական ամեն տեսակ անառակութիւններու փորձառութեան մէջ... Որովհետեւ իր կողքէն կանցնէի, ծիծաղներու մէջ տեղ, լսեցի որ կը պոռար.

—Այո կըսեմ... այո... կառավարութիւնը պոռնիկ (vache) մըն է: Ձեզ կը հաւատացնեմ որ անոր զլխուն շատ խաղեր պիտի խաղանք... Ահ nom de Dieu!... զաւակներս...

Իրաւ որ ան շատ հանդիստ էր՝ իր զեղացիի բաճկոնակին տակ, աղմկալից սրտակցութիւն մը, տեսակ մը պարզամիտ անսրտակառութիւն, չնական հրաշալի ընկերակցութիւն (camaraderie) մը կը կեղծէր, ասդին կը խնդար, անդին կը բարկանար... և միշտ յարմար պարագաներու մէջ, ձեռքի սեղմումներ, եղակի խօսելներ կը բաշխէր ստատորէն աջ ու ձախ, մտերմօրէն ուսեր ու փորեր կը ծեծէր, կկոցի մը նման անդադար կերթար կուգար հրապարակին վրայ, ուր ծիծաղաշարժ խօսքեր կը շոպլէր, էսպէտանսի սրճարանին մէջ ուր ամեն կողմ փոքրիկ բաժակներ կը հրամցնէր... Ու հոյակապօրէն կը ճօճէր, նորմանտիական ծանր հունէ դաւազան մը որ աջ դաստակին կապուած էր սև կաշիի ուժեղ փոկով մը...

—Ահ nom de Dieu!...

Պէտք է ըսել նոյնպէս որ Պօնափէրի մարքիզը՝ Նօրփէօրի մէջ՝ իր տանն էր, և Նօրփէօրը կը նկատէր իբրեւ իր ստացուածքը աւատը (fief) և ուր իր խորամանկութեամբ, աչք ներկելու հանճարով, «մարդոց խելքը տոպրակը դնելու» («mettre les gens dedans») ճարպիկութեամբ, ահագին ժողովրդականութիւն մը չահած էր: Անիկա այնքան լաւ գրաւած էր երկիրը իր համարձակ, յայրատ ու զգուելի յատկութիւններով—որոնց համար ուրիշ ու է տեղ մը քարի պիտի բռնուէր—որ ոչ ոքի մտքէն չէր անցներ զարմանալ՝ ընտրողական շրջաններու մէջ՝ իր արդ ու զարգին կրած յանկարծական փոփոխութիւններուն վրայ: Ընդհակառակը ամէն մարդ ազոր համար ուրախ էր ու իր մասին կ'ըսէին.

—Ա՛հ, պ. մարքիզը բարեմիտ մարդ է: Ահաւասիկ մէկը որ հպարտ չէ... Ահաւասիկ մէկը՝ որ կը սիրէ մշակը!

Ոչ ոք չէր զարմանար, նոյնպէս, որ մարքիզը պահած ըլլար հին ժամանակուայ ազնուականներու մենաշնորհներն ու պատուասիրութիւնները, ինչպէս, օրինակի համար, հետեւալը... Ամէն կիրակի, պատարագէն յետոյ, suisse-ը *) կուգար, «գղեակին յատկացուած» մատուռի սղտիկ դռան առջև. կանգ կ'առնէր, և երբ մարքիզը դուրս կ'ելլէր, ընտանիքին հետ, շրջապատուած իր համազգեստաւոր սպասաւորներէն՝ suisse-ը հոյակապ՝ իր ցցունադարդ զլխարկով, իր կարմիր մետաքսէ թուրի գօտիով՝ մարքիզին առջեւէն կ'երթար՝ հանդիսաւոր հեռաւորութիւն մը պահելով՝ մինչև կառքը կ'առաջնորդէր զայն, մարդիկն ու աթոռները հրմշտկելով, իր ոսկի դուռն գաւազանով եկեղեցիի սալաքարերը ծեծելով... և պտռալով.

—Օ՛հ... ճամբայ... ճամբայ տուէ՛ք պ. մարքիզին!...

Ու ամէն մարդ դո՛հ էր, մարքիզը, suisse-ը և ամբոխը...

—Ա՛հ, աշխարհքը տալին ու վրայ ընելու էր այսպէս մարքիզ մը գտնելու համար...

Գոհ էին նոյնպէս իր զղեակէն՝ որուն սպիտակ քարէ ճակատը և հերձաքարէ բարձր տանիքները՝ ըլլուրին վրայէ, բարդիներու կուտակումին մէջ տեղ, քաղաքին կը տիրապետէին. գոհ՝ իր օթոմօպիլէն՝ որ, երբեմն, իր ճամբուն վրայ ոչխարներ, շներ, երեխաներ ու հորթեր կը ճղմէր. գոհ՝ իր parc-ը շրջապատող որմերէն՝ որուն վրայ յցած էին չիլի հակեր. գոհ իր պահապաններէն որ երեք անգամ, հրացանով խոտերուն մէջ թաւալեցին, ճագարներն ու նապաստակները նեղաց-

*) Suisse կը կոչէին հին ազնուականներու ղռնապանին, եկեղեցիի կարգապահութեան վերահսկողին:

նեկու յանցանքին մէջ բռնուած ահռելի գաղտորանքն եւ կարծեմ թէ ալ աւելի գոհ պիտի ըլլային, եթէ պ. մարքիզը բարեհաճէր նորէն ծաղկեցնել հին, ազնուապետական, գեղեցիկ սովորութիւնները, ինչպէս, օրինակի համար գանակոծութիւնը: Բայց պ. մարքիզը չէր բարեհաճէր... հին բարի ժամանակները շատոնց անցած էին, որպէս զի մարքիզը այդ բանը ընէր... և յետոյ, շիտակն ասած՝ մարքիզ ըլլալով հանդերձ՝ դատաւորներէն կը վախնար: Մէկ խօսքով՝ աշխարհի ամենէն պարկեշտ մարդը որ երբեք չէր գողցած իր ժողովրդականութիւնը...

Գիւղացիները, ընդհանրապէս, չարածնի ու խորամանկ ըլլալու համբաւն ունին. ընտրութեան թեկնածուները՝ շատ յաճախ, տխմար ըլլալու համբաւը: Այդ մասին վէպեր, կատակերգութիւններ, ընկերային գիտութեան հատորներ գրուած են և պատրաստած՝ վիճակացոյցներ (statistique) որ, բոլորն ալ այս երկու ճշմարտութիւնները հաստատած են: Արդ, կը պատահի որ՝ տխմար թեկնածուներն է որ միշտ կը լոլոզին *) չարածնի գիւղացիները: Ատոր համար, անսխալ միջոց մը ունին անոնք՝ որ ոչ ոք խելացիութիւն, ոչ մէկ նախապատրաստական աշխատութիւն, ոչ մէկ անճանական արժանիք կը պահանջէ, ոչ մէկը նոյնպէս այն յատկութիւններէն՝ որ պետութեան ամենախոնարհ պաշտօնեայէն, մտքով ամենազառամած ծառայէն կը պահանջուի: Միջոցը՝ ամբողջապէս այս բառին մէջ է. խոստանալ... Յաջողելու համար թեկնածուն ուրիշ բան չունի ընելու բայց և՛ չհագործել—ճարպիկօրէն չահագործել—մարդերու ամենէն մշտատե, ամենէն յաճառ ու ամենէն անջնջիւի մտամոլութիւնը (manie). ակնկալութիւնը: Ակնկալութեան, յոյսի միջոցով անիկա կուղղուի կեանքի ազբիւրներուն իսկ. շահուն, կիրքերուն, մոլութիւններուն: Կարելի է իրեւ բացարձակ սկզբունք ընդունել հետեւեալ axiome-ը. «Անպատճառ ընտրուած է այն թեկնածուն՝ որ ընտրական շրջանի մը միջոցին՝ ինչ որ ալ ըլլան իր կարծիքները, ինչ կուսակցութեան ալ որ պատկանի, այդ կարծիքներն ու այդ կուսակցութիւնը նոյն իսկ եթէ ընտրողներու կարծիքներուն և կուսակցութեան դրամադորէն հակառակ ըլլան, ամենէն աւելի խոստացած ու ամենէն շատ բան խոստացած է»: Այս գործողութիւնը՝ որ ակոսյ քաշողները ամէն օր, իրաւ է, նուազ փայլով ու, աւելի զգուշութեամբ կը կատարեն հասարակաց հրապարակներու վրայ, ընտրողներու, յանձնարարներու համար

*) Լոլոզել (rouler quelq'un) քաղցր համոզիլ խօսքերով խաբել կը նշանակէ. զառաւական բառ է:

կը կոչուի «իր կամքը թելադրել—dieter sa volonte», իսկ ընտրողներու, յանձնառուներու համար «մտիկ ընել ժողովուրդին բաղձանքները»... Լրագիրներու մէջ այդ բանը ալ աւելի ազնիւ ու հնչուն անուններ կ'ըստանայ... Ու քաղաքական ընկերութիւններու մեքենականութիւնը այնքան հրաշալի է որ անաւասիկ բիւրաւոր տարիներէ ի վեր է, որ բաղձանքները մտիկ զրուած՝ երբէք չեն կատարուած՝ և որ մեքենան կը դառնայ ու կը դառնայ առանց ամենափոքր խանգարում մը ունենալու իր անխնայութեամբ կազմուածքին մէջ, առանց ամենափոքր դադար մը առնելու իր թաւալքին մէջ։ Ամէն մարդ գոհ է, ու ամէն բան լաւ կ'ընթանայ, ինչպէս որ հիմա կ'ընթանայ։

Ընդհանուր ընտրութեան պաշտօնավարումին մէջ ամենէն հիանալիին այն է, որ ժողովուրդը գերիշխան ըլլալով՝ և իրմէ բարձր բնաւ տէր մը չունենալով՝ մարդ կարող է իրեն խոստանալ բարեքնեք՝ զորս երբէք չը պիտի վայելէ և երբէք չը կատարել այնպիսի խոստումներ, զոր ոչ ոք կարող է, արդէն, իրագործել։ Նոյն իսկ աւելի լաւ է, երբէք խոստում մը չը գործադրել, այն ընտրողական և գերազանցօրէն մարդկային պատճառաւ որ, այդ եղանակով մարդ անքակտելիօրէն իրեն կը կապէ ընտրողները՝ որ իրենց ամբողջ կեանքի տեսողութեան մէջ պիտի վազեն այս խոստումներու յետեւէ, ինչպէս խաղամոլները իրենց կործնողեացած գրամին յետեւէ, սիրահարները իրենց տառապանքներուն յետեւէ։ Ընտրող կամ ոչ, ամենքս ալ այսպէս ենք...

Գոհացած բաղձանքները՝ մեղի համար այլևս ոչ մէկ ուրախութիւն ունին իրենց մէջ... Ու մենք ոչինչ այնքան չենք սիրեր որքան երազը՝ որ յաւիտենական և ունայն ձգտումն է դէպի երջանկութիւն մը՝ զոր գիտենք թէ անհասանելի է։

Կարեւորը՝ ընտրութեան մը մէջ, խոստանալն է ուրեմն, անսահմանօրէն խոստանալը, ուրիշներէն ալ աւելի խոստանալը։ Որքան աւելի խոստումները անխրականալի են, այնքան աւելի՝ խոստացողը՝ հաստատապէս պիտի խաբսխէ ընդհանուր վստահութեան մէջ։ Գիւղացին սիրով կուտայ իր ձայնը, այսինքն կապտել իր նախապատուութիւնները, իր ազատութիւնը, իր խնայողութիւնը առաջին հանդիպած տխրամարին կամ աւազակին ձեռքերուն մէջ։ Իրաւունք չունի՝ գէթ պահանջելու, որ այս ամենուն փոխարէն իր ստացած խոստումները չողջողուն ու խեղճ թոյնող ըլլան... Անիկա խոստումներ կը պահանջէ իր վստահութեան համեմատ որ յաւիտենական է, ինչպէս յաւիտենական է իր խաբուած մնալու ճակատագիրը։

—Ի՞նչ կուզէ, գիւղացին, կ'ըսէր ինծի անկեղծութեան խանդէ մը բռնուած պատգամաւոր մը: Խոստումներ՝ ահա ինչ որ կուզէ: Խոստումներ՝ որ ահագին, հակաբնական և միևնոյն ժամանակ յստակ ըլլան... Անիկա չի պահանջեր որ զանոնք իրագործեն, իր շատ յայտնի անկշտութիւնը մինչեւ այդ տեղերը չերթար. կը պահանջէ միայն որ անոնք հասկանալի ըլլան: Անիկա երջանիկ է, եթէ այդ խոստումները առնչութիւն ունին իր կողմին, իր արտին, իր սան հետ: Եւ եթէ կարող ըլլայ, անոր վրայ խօսիլ, իրիկունը, կիրակիմուտքին, ժամու դաւթին կամ գինետան դրան առջև՝ կարծես այնպիսի բանի մը վրայ, որ իբր թէ կարող էր կատարուել և չի կատարուիր բնաւ, ինքզինքը դոհացած կը համարէ: Այն ատեն կարող են ճշմել զինքը հարկերու տակ, կրկնապատկել այն բնուրը, որ կը ծանրանան իր վրայ... Գիւղացին, կը ժպտի նուրբ կերպարանքով մը, ու ամէն նոր հարկի, վարչական ամէն նոր դժուարութեան առջև կ'սէ քթին տակէ. «Լաւ... լաւ... չարունակեցէք տեսնենք... Էն տեսակ մի երեսփոխան ունենք որ, անմիջապէս, գաղաղիցնել պիտի տայ էս ամմէն դարձուածքները: Խօսք տուաւ!»

Արդեօք, Պօնպիէրի մարքիզին հետեւեալ ընտրողական շատ զուարճալի դէպքը պատահած էր:

Իր ընտրողական շրջանակին մէջ, գլխակէն շատ հեռու գաւառակ մը կը գտնուէր, ուր իր անձնական ազդեցութիւնը նուազ ուղղակի էր ու, եթէ համարձակեմ ըսել, նուազ հանապազօրեայ:

Պէտք է խոստովանել նոյն իսկ որ իրեն դէմ ուժեղ կուսակցութիւն մը կազմուած էր, որ թէպէտ և իր քաղաքական գիրքին ոչ մէկ կերպով չէր սպառնար, բայց նորէն զինքը կը նեղացնէր... Մարքիզը այդ հակառակ կուսակցութիւնը ընկած էր հանգիստաւորապէս խոստանալով որ վարչութենէն՝ դաւառակին համար չուրկառքի կայանի մը շինութիւնը ձեռք պիտի բերէր, զոր երկար ժամանակէ ի վեր, իզուր պահանջած էին բնակիչները: Տարիներն անցան, օրէնսդիրները նոյնպէս, և խոստացուած կայանը չէր շինուէր երբեք... Ինչ որ չէր արգելեր որ մարքիզը միշտ վերընտրուի:

Անգամ մը տեսնելով որ իրենց պատգամաւորը այդ մասին իրենց չէր խօսեր այլ ևս, գիւղացիները՝ ներկայացուցիչներու միջոցով եկան յարգանք տեղեկութիւն խնդրելու կայանի մասին, աւելցնելով որ հակառակորդը նոյնպէս խոստացած էր կայան մը ձեռք բերելու իրենց համար...

—Կայանը, աղաղակեց մարքիզը... ինչպէս... չգիտեմ:

Բայց կայանը գրկիժէ չինուած է, պատուական բարեկամներս... գալ շաբաթ պիտի սկսեն: Այլ նեղութիւն քաջեցի... այս պոռնիկ կառավարութեան ձեռքէն... որ հողագործին համար ոչինչ ընել չի կամենար...

Ասարկեցին որ ատիկա բնական չէր թուեր... քանի որ ոչ մէկ անցագիծ նշանակուած էր տակաւին... ոչ մէկ երկրաչափ չէր երեցած երկրին մէջ...

Բայց մարքիզը այդքան չնչին բաներով նեղի ինկողը չէր: — Կայան մը... կը հասկնաք, բարեկամներս... մեծ գործ մը չէ... բոլորովին ոչինչ բան մըն է... ու երկրաչափները այդքան ողորմելի խնդրի մը համար իրար չեն անցներ: Անոնք յատակագիծներ ունին... անցագիծը կը պատրաստեն զրասն-նեակներու մէջ... բայց ես ձեզի ըսի արդէն, այդ դարձը լմընցած է... գալ շաբաթ կըսկսեն...

Արդարեւ, հինգ օր յետոյ, լուսաբացին, գեղացիները քարով բեռնաւորուած ահագին սայլակի մը դալը տեսան... յետոյ աւազի սայլակի մը գալը...

— Ա՛հ, ա՛հ, մեր կայանն է քաղաքանչեցին... Տարակոյս անդամ չը կայ... պարոն մարքիզը իրաւունք ունէր...

Ու իրենց սովորական քուէն տարին ձգեցին քուէատու-փին մէջ...

Ընտրութենէն երկու օր ետք, սայլակապան մը եկաւ ու կրկին բեռնաւորեց քարերն, յետոյ աւազը... Եւ որովհետեւ կը պատրաստուէր մեկնել:

— Ասիկա մեր կայանին համար սակայն... պոռնիկն գեղացիները:

Սայլակապանը մտրակեց ձիերն ու ըսաւ.

— Կերելի թէ խաբուեր են... ուրիշ նահանգի մը համար է ասիկա...

Յաջորդ ընտրութիւններու ժամանակ, գաւառակի ընտրողները իրենց կայանը պահանջեցին սովորականէն շատ աւելի զօրեղապէս... Այն ատեն մարքիզը վսեմ շարժում մը ունեցաւ...

— Կայան մը, աղաղակեց... Ո՞վ է կայանի մասին խօսողը: Ի՞նչ պիտի ընէք ողորմելի կայան մը... Պահ՛հ Կայանները հիմա երբէք ներկայ պահանջներու համապատասխան չեն... Ձեզի կայարան մը պէտք է... Կայարան մը կուզէք: Ըսէք... Մեծ կայարան մը... գեղեցիկ կայարան մը... ապակեւոր կայարան մը ելեքտրական ժամացոյցներով... պիւֆէներով... մատենադարաններով... կեցցե՛ք Ֆրանսան... ու եթէ երկաթուղիի գծէն ճիւղեր ալ կուզէք, ըսէք ինձի... կեցցե՛ք Ֆրանսան...

Գիւղացիները իրարու հարցուցին.

—Մեծ կայարան մը... Տարակոյս չը կայ որ այդ աւելի լաւ էր... Ու, անգամ մըն ալ, վերընտրեցին մարքիզը...

Այս առտուն որու մասին կը խօսեմ, մինչդեռ, պահ մը, պ. մարքիզը էսպէսոմսի սրճարանէն դուրս կելլէր գեղացիներու վոհմակի մը հետ որ՝ ձեռքի հակառակ կողմով՝ իրենց գինիէ կապուտցած չրթունքները կը սրբէին տակաւին, իր մրցակիցը անցնելու վրայ էր... Խեղճ ու կրակ մէկն էր, շատ նիհար, շատ ափօյն, կոճակաւոր դէմքով, ու ինչպէս կերէր շատ ալ աղքատ, որ անհեթեթ գաղափարն ունկցած էր մարքիզին դէմ ներկայանալու, իբրև ընկերվարական թեկնածու... Նոյն դէպարտըմանին մէջ նախկին դաստիարակ՝ պ. ԺօռԺ Լէկի *) միջոցով պաշտօնանկ եղած՝ դպրոցին մէջ փակցուցած ըլլալուն համար—խեղճը, շատ կանուխ—մարդուն և քաղաքացիին իրաւունքներու յայտարարութիւնը... յեղափոխական գործողութեան կօմիտէի կողմէ ընտրուած էր, իբրև ամեն բարենորոգումներու, ամեն բողոքներու, ամեն պահանջներու թեկնածու։ Շատ խելացի, շատ համոզուած, «գաղափարին» շատ անձնուէր. դժբաղդաբար ինքզինքը ծախել, ինքզինքը ցոյց տալ չը գիտէր։ Ու իր դէմքը երբէք չէր համապատասխաներ, որմերու վրայ փակցուած իր ազդերու հպարտ ու բուռն յայտարարութեանց... Իր ընտրողներուն պատիւ մը ըրած ըլլալու համար, իր ամենէն գեղեցիկ հագուստները հագած էր... Մաշած, խաւերը թափած, շատ հին ձևով սև ուրէնկօթ մը ուրկէ նաֆթալինի առնախորժ հոտ մը կը բուրէր, և զոր՝ քանի մը տեղերէ կը կըրծէին, ուտիճներու անյադ գաղթականութիւններ... զոյնը նետած, ղեղնած, եղբքները փալիլուն, իւզոտ ժապաւէնով *haus de forme* (ցիլինդր) գլխարկ մը կը պսակէր իր խղճուկ արդ ու զարդը... Մենակ էր... մեն մենակ... ու իր դէմ հակառակութիւն մը զգալով, չիոթած ու վախկոտ նայուածքով մը, ամբողին մէջ, իր բարեկամները կը փնտռէր, որ, անկասկած տակաւին չէին եկած բնաւ...

Իր նորմանտիական գաւաղանին ծայրովը, վերուած կերպարանքով մը՝ մարքիզը, անմիջապէս զայն իրեն ընթերցող մարդոց մասնանիչ ըրաւ...

—Նայեցէք անգամ մը սա պէտքը պէճնուող մարդուկին... աղաղակեց խոշոր ծիծաղով մը, ուր պտելութիւնը իր դէմքը կը

*) ԺօռԺ Լէկ՝ հանրային կրթութեան և գեղարուեստից նախարարն էր նախորդ ու ալ աւելի առաջուայ դահլիճներու մէջ. opportuniste-ի տիպն է որուն վրայ Միլլըրի մտրակը բաւական հրաշք գործած է։

ծամածոէր: Ու մէղքէս ալ եղեր ինքզինքը ընկերվարական կը ծախէ... վայ, վայ մեր գլխուն...

Նախ՝ մէկ քանի սմակղուկ ծիծաղներ, յետոյ քանի մը քրթնչիւններ բարձրացան...

—Օ՛հ, լա, լա, լա...

Պօնպիէրի մարքիզը՝ ինքը՝ իր ահագին երկաթածածկ կօշիկներուն վրայ ուղիղ կանգնած էր, ճագարի մօրթէ գդակը անառակվարի դէպի յետև նետած... Ու հովը կռռեցնէր իր բաճկոնակը որ, կուրծքին վերերը, աղեղնաձև բացուածքէ մը՝ մետաքսէ կարմիր թաշկինակի մը ծայրերը նշմարել կուտար: Շարունակեց.

—Ու եկեր է այստեղ, մեղի աղնուաշուքի հովեր ծախշու... le gommeux!... *) ամենուն առջև փռելու իր պերճանքը... նախատելու ժողովուրդը՝ իր իշխանական հագուստներով... Նայեցէք, անդամ մը սրան... Ա՛հ, nom de Dieu!... Ամօթ է...

Երկու հարիւր ակնարկներ՝ պարուրեցին խեղճ թեկնածուն՝ արհամարհող ու այսպանող ատելութեամբ մը... Մարքիզը՝ խրախուսուած՝ աւելի ուժգին ձայնով մը՝ պոռաց.

—Եւ ուրկէ գողցաւ այս ուրտէնկօտը... Ու այս զլխարկը, ո՞վ գնեց այս գլխարկը... Գերմանիացի հարցնելու է... Les fripouilles... les sales fripouilles!...

Քրթնչիւնները մեծցան, ուռեցան... Անուագործ մը, մինչև արմուկները մերկ թևերով, իր սրունքները ծածկող կաշիէ գոգնոցին տակ ահագին պոռչտաց.

—Անտարակոյս... մատնիչ մըն է... Ու քանի մը ձայներ ոռնային:

—Գետինն անցնեն մատնիչները...

Մարքիզը շարունակեց վկայ բռնելով իր կապոյտ բաճկոնակը, իր ճագարի մօրթէ գդակը, իր երկաթապատ կօշիկները, իր ոստուտ դաւաղանը.

—Ժողովուրդի ճշմարիտ բարեկամները միթէ ուրտէնկօթի կը հագնեն... ինչպէս օտարները... թեթևօլիկները... հրէաները: Միթէ ես ուրտէնկօթ... և ութ ցուրբերով սիլինդր ունիմ ես... Ձեզի կը հարցնեմ՝ դուք ըսէք...

—Կեցցէ պարոն մարքիզը:

—Ե՛ս գեղջուկի բաճկոնակ հագած եմ... Ֆրանսայի պատ-

*) Gommeux ժողովուրդի բերնին մէջ կը նշանակէ այն մարդը՝ որ հագուել, շփուելու յետև է կը վազէ, կօտրտուել, ինքզինքը ծախել կը սիրէ:

ուական գեղջուկին բաճկոնակը... պարկեշտութեան և աշխատանքի բաճկոնակը... ֆրանսական խնայողութեան բաճկոնակը...

—Կեցցէ պարոն մարքիզը:

—Ու ասով ես ինքզինքս անպատուած չեմ զգար երբէք... Այնպէս չէ, դուք ըսէք...

—Կեցցէ... կեցցէ պարոն մարքիզ...

—Մինչդեռ այս կեղտոտ gommeun-ն... այս աշխարհաքաղաքացին... այս ընկերվարականը...

—Այո... այո... այո...

—Կը համարձակի գալ այստեղ... նախատել ժողովուրդի թշուառութիւնը...

—Այո... այո... ճիշդ է...

—...Պատուական հողագործի թշուառութիւնը... որ Ֆրանսայի հոգին է... Ֆրանսան է... Ահ! nom de Dieu!...

—Գիտինն անցնեն մատնիչները...

Դժբաղդ թեկնածուն կանգ առած էր... Իր գէմ պայթող այս ատելութենէն բան մը չէր հասկնար... Նախ իր ուղտէնկօթը քննեց տեսնելու համար որ, իրաւ, ասիկա ժողովուրդին նախատինք մըն էր: Յետոյ ուղեց խօսել, բողոքել... բայց ձայները ծածկեցին իր ձայնը...

—Գետինն անցնեն մատնիչները...

—Գերմանիա դարձիր...

—Դէպի Անգլիա...

—Այո... այո... գետինն անցնեն ծախուածները... գետինն անցնեն մատնիչները...

Եւ որովհետեւ բռունցքները կը բարձրանային, իր վրայ, սպառնալից, փախաւ, ամբողջ քաղաքին հայհոյողներէն հալածուած:

Այն ատեն, մարքիզը, յաղթական, էսպէսանսի սրճարանը մտաւ, ու խանդավառութիւններու և ծափ ողջոյններու մէջ տեղ, նոր շիշեր ապսպրեց, գաւազանով մարմարէ սեղաններուն զարնելով և աղաղակներով:

—Ճիշդ չէ հապա... nom de Dieu!... հոտած աշխարհաքաղաքացի մը... Յետոյ իր լեցուն գագաթը ճօճեց օդին մէջ...

—Ֆրանսայի բաճկոնակին կենացը... բարեկամներս... Յարգանք Ֆրանսայի բաճկոնակին»...

Պատկերը՝ ապահովաբար, ամբողջ չը պիտի ըլլար, եթէ զինուորականին, ազնուականին քով իր արժանի տեղը չունենար կղերականը: Հիմա ըմբոշանցէք սա Պրըթանեացի քահանային նկարագրութիւնը: Պրըթանեան՝ ինչպէս ընթերցողները

գիտեն, Ֆրանսայի ամենէն ջերմեամեղ ու ամենէն քստմնելիօրէն մոլեռանդ մասն է: Լրագիրներու հետեողները պիտի յիշեն թէ Ֆրանսայի այս մասին մէջ է որ միաբանական դպրոցներու փակումը հանդիպեցաւ ամենաթունդ ընդդիմութեան, գրեթէ ապստամբութեան:

Լաւ է որ մօտէն ճանչնաք այս աստուածավախ մարդերը:

Միբո նկարագրել է յետոյ Պրըթանեայի Լըքէռնաք գիւղաքաղաքը, ուր կը գործէ, քահանան կ'աւելցնէ.

«Այս գերեզմանական միջնոլորտին, այս անշնչելի բնութեան մէջ, երկու հոգի միայն առողջ կայտաւ էին. քահանան և քաղաքագլուխը:

Քահանան, կամ ինչպէս Պրըթանեայի մէջ կանուանեն զինքը, վերառնուելը, պզտիկ, չոր ու արիւնոտ մարդ մըն էր, անդուլ գործունէութեամբ, և որ կրօնքն ու քահանայութիւնը լրջօրէն կ'ըմբռնէր: Իր Պրըթոն պաշտօնակիցներու մեծամասնութեան հակառակ՝ զորս կը գտնենք միշտ, իրենց այցելած ժամանակ, չիը գինի լեցնելուն կամ մեղունք խնամելու վրայ, սակաւակեաց, զոստ էր, ու ճղնաւորի կեանք մը կանցնէր... Եւ ինչ ալ վարչագէտ... Քաղաքագլխին մեղսակցութեամբ, որ իր բարեկամն էր, և ամեն օր, ճարտար նուիրահաւաքութեան և ահռելի տասանորդական տուրքերու (dime) միջոցով, խեղճ ու չքաւոր քէռնաքցիներու թշուառութեան վրայէ խուղելով՝ յաջողեր էր, առանց դէպարտըմանի և պետութեան օժանդակութեան՝ կառուցանել սպիտակ քարէ գեղեցիկ եկեղեցի մը, քանդակագործ մեծ դռնով, լուսանցիկ (à jour) զանգակատնով որուն գագաթին վրայ կը շողշողար ոսկէ անսահման խաչ մը: Այս երկրի անասելի աւերածութեան մէջ տեղ անսկիւնկալ տեսարան մըն էր այս մատուռին չքեղութիւնը... Քահանան այգեքանով գոհ չէր: Ամեն շաբաթ, քարոզի ժամանակ, առանց երբէք յոգնելու, իր ծուխերու բարեպաշտութենէն, կը պահանջէր և կամ անոնց վախէն կը խլէր—որովհետեւ գիտէին թէ վրէժխնդիր էր ու ամենակարող—նոր զոհողութիւններ, հետզհետէ աւելի ծանր: Կիրակի մը, բնաւ բարձրացաւ, Սուրբ Կուսի դրօշակը ձօձելով:

—Նայեցէք սա դրօշակին, աղաղակեց ցասկոտ ու կատաղի ձայնով մը... ամօթ չէ... Նայեցէք... Դրօշակ է ասիկա... Մետաքսը փռած՝ ծոպերը մաշած՝ և զնդերուն ոսկեգօծումը կորստած... Կոթին վրայ այլ ևս բռնուելու տեղ չէ մնացեր... Ոչ մէկ կողմը աստեղնագործութեան ձեռք չը կայ... Գալով Սուրբ Կուսի պատկերին՝ քանի՞ կառնէք չը գիտեմ... Շարլ Լըթէօն,

դո՛ւն, առ դրօշակով քու մատակ ձիուդ վէրքերը կապել չը պիտի ուղէիր... և դո՛ւն, Ժօղէֆին Պոխաք, քու կաթսաներդ մաքրելու համար... Ա՛հ, հոգերնիդ անգամ չէ՞, մինչդեռ դուք առատութեան ու պերճութեան մէջ քէֆ կընէք, հոգերնիդ անգամ չէ՞, ողորմելի մեղաւորներ, որ Աստուծոյ Սուրբ Մայրը, Թափօրներու և Թեմական մեծ տօներու օրը, ձեր մէջ ման գայ կեղտոտ ցնցոտիներ հագած և յետոյքը հովին... լաւ ուրեմն, պէտք է որ ասիկա վե՛ջ գտնէ... Կոյսին համբերութիւնը հատաւ ալ ձեր յանցաւոր անտարբերութեան և ձեր գարշելի մտքերէն... նոր դրօշակ մը կուզէ ան, կը լսէք... հոյակապ դրօշակ մը... ամենէն գեղեցիկ որ կարելի ըլլայ չինել... առնուազն երկու հարիւր ֆրանկնոյ դրօշակ մը... Լաւ մտիկ ըրէք ինծի... ու խօսքերս միտք պահեցէք, եթէ չէք ուզեր որ ամենէն անգամ ի դժբաղդութիւնները Թափին ձեր վրայ... ձեր արտերուն վրայ... ձեր նաւակներուն վրայ... եթէ չէք ուզեր փոխուել կատուածուկի... գորտի... ծովաշունի... Մտիկ ըրէք ինծի... Դո՛ւն, ի՞նչ Լիկօնէք, դուն պիտի տաս հարիւր սու... Ի՞նչ ըսիր... Ոչինչ... *A la bonne heure...* Քու գինովութիւններդ վրայէ պիտի խնայես դո՛ւն, խո՛զ... Դո՛ւն Ռօլ Քէրլանիու... դուն ալ հարիւր սու... Ու եթէ քեզ նորէն բռնեմ, Քէրլոսի մանչուն հետ, նաւահանգստի ամբարտակին յետեւ, կեղտոտութիւններ անելիս... հարիւր սու չեմ առներ այն ժամանակ... այլ տասը ֆրանկ... Դո՛ւն, մայր Միլլինէս, դուն ալ քեզի երէկ իրիկուն ծնած հորթը պիտի տաս... Ծուռ ծուռ մի նայիր ինծի պառուած գող... որովհետեւ եթէ յամառութիւն ընես, հորթը չէ որ պիտի տաս միայն... այլ կո՛ւր... Յիւր, Պիէս և Ժօղէֆ Լըքէս, դուք ալ ձկնորսութեան մը արդիւնքը պիտի բերէք ինծի... բայց նայեցէք որ լաւ ըլլայ հա... Ոչ մէկ քանի օր մնացածները՝ ոչ ալ Թափիփուկները, լաճեր... Այլ Թարմ ու չորհրդով... վահանածուկ և լեղուածուկ... Հասկցաք, հէ՛...

Ու քառորդ ժամէ աւելի, այսպէս՝ իւրաքանչիւրի իր տուրքի բաժինը ցրուեց, թէ հնչուն զրամով վճարելի և թէ ապրանքով, գունդ կարագ, գետնախնձորի կամ ցորենի պարկ հայն, ամենէն բացարձակ հրամանները ամենէն նախատալից լուրամբներուն խառնելով...

Ծերունի մաքսաւոր մը՝ որ վարպետորդի ըլլալու համարը ունէր, և որ դասին վարի կողմը, սիւնի մը գէմ ոտքի վրայ էր, սարսափելի վիրատեսչէն ինքզինքը ազատած կարծելով, սկսաւ խնդալ, գաղտնաբար, իր խոշոր պիսերուն և երկար, սրածի մօրուքին տակէ, որոնք թանի գոյն առած էին... Ծիծա-

ղը քահանային աչքէն չը վրիպեցաւ բնաւ, որ յանկարծ, մաքսաւորը մատնանիչ ընելով՝ բազկատարած՝ որուն ծայրը գըտնուած դրօշակը՝ փոթորկի բռնուած նաւակի առագաստի մը պէս կը ծփար ու կը շաչէր.

—Քեզի եմ, հէ, այծմօրուք (barbiche)... պոռայ... յանցաւոր ես, իրաւունք չունես խնդալու... Եւ քանի որ ինքզինքիդ՝ լիբը, անգգամ՝ թոյլ կուտաս այդքան անվայել եղանակով մը՝ Բարի Աստուծու տան մէջ խնդալու... քսան ֆրանկ ալ գնն պիտի տաս... Եւ որովհետեւ մաքսաւորը կը բողբէր.

—Այո, քսան ֆրանկ, սատանի մօրուք... կրկնեց քահանան, աւելի մեծադղորդ ձայնով մը... Ու լաւ ուշադրութիւն ըրէ ըսելիքիս... Եթէ այդ քսան ֆրանկը, այս իրիկուն իսկ չը բերես ինծի, ժամերգութենէն յետք... բանդ բնորդ է... Քեզ կը մատնեմ Հանրապետութեան պրօկուրօրին ձեռքը... գողցած ըլլալուդ համար—տակաւին շաբաթ մը չիկալ—ծովուն վրայ է գտնուած ապրանքներ... Հահ, հահ, ալ չես խնդար կոր, քաֆտան այծմօրուք... Աս՝ բնաւ մոքէդ չէր անցներ հէ... դժոխքի այծմօրուք...

Եւ խաչախքելով՝

—In nomine patris es filii et spiritus sancti... Amen!
(Յանուն հօր եւ որդւոյ եւ հոգոյն սրբոյ... Ամէն) ըսաւ:

Յետոյ բեմէն իջաւ, եւ խորանը մտաւ, շաչեցնելով դրօշակը՝ սարսափահար գլուխներու վրայ...

Այսպէս մարդ էր Քէռնակի պարոն վերատեսուչը...

Մինչեւ հիմա հեգնող, մտրակող ու հսկայական ծիծաղի մը տակ խարանող, ճգմող Միքսն է, որ ճանչցաք Նոյնքան գերազանց են անոր ուրիշ պատմուածքներն ալ, սակայն վերջացնենք մեր ասացուածքները, որ այնքան երկարացաւ, կտուրով մը, որ կարծես մեր կեանքէն ալ վերցրած ըլլայ:

«Երէկ Թոխէփսի մօտ ընթրեցինք, ընթրիք՝ որ դրուած էր ի պատիւ տօքթօր Թոխէփսին՝ իր բարեկամին եւ պաշտպանին: Տասը հրաւիրեալներ կային. ամենքն ալ հարուստ, ամենքն ալ երջանիկ: Ծաշի միջոցին, ու ճաշէն յետոյ, բնականաբար, մարդկային թշուառութեան վրայ միայն խօսեցանք: Յղփանալու աստիճան ուտել խմելէ յետոյ, հարուստներուն համար տեսակ մը sadique *) հրճուանքէ աղքատներուն վրայ լալը... Առատ ու

*) Sadique՝ սատական. այս բառը շինուած է morquis de Sade-ի անունէն, որ հռչակաւոր էր իր՝ երկխոսած լեզուով խօսելով սրղջախոհական շահատակութիւններով:

համեմատոր կերակուրներուն, հազուադէպ գինիներուն հրաշալի պտուղներուն, ծաղիկներուն և արծաթամաններուն պէս բան չը կայ աշխարհի վրայ, որպէս զի մեզի ընկերվարական յուզումներ ներշնչէ՝ փրկսովայութեամբ սկսուած խօսակցութիւնը՝ շուտով անէկտոթներու շրջեցաւ... Եւ իւրաքանչիւր իր պատմութիւնը պատմեցաւ...

Իւրաքանչիւրը այդ պատմութենէն մի մի մերկացում է արդի հասարակական վտտթար կարգերի... Սակայն ադ ալ միւս անգամուայ թողաք:

ՏԻԳՐԱՆ

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

II

Ես քեզ խոստացայ, սիրելիս, նկարագրել Շվէյցարիայի զիւղական տունը իմ յաջորդ նամակներից մէկում: Երէկ ես այդ նպատակով շատ մօտիկից ծանօթացայ մի զիւղացու տան կազմութեան հետ և այսօր գրում եմ քեզ: Բայց թոյլ տուր ինձ նախ քեզ մի քանի խօսք ասել զիւղական պանսիօնների մասին, որոնք նոյնպէս տեղական երեւոյթ են հանդիսանում այս երկրում և մեր ժողովրդի համար գուցէ բոլորովին նորութիւն լինին:

Գիւղական տան իբրև նմուշ չը պիտի առնեմ իմ բնակածը, որովհետև դա թէ իր արտաքինով և թէ ներքինով շատ է հեռացել բուն շվէյցարական զիւղական տնից և աւելի հիւրանոց է յիշեցնում, քան մասնաւոր բնակարան: Հաստ, կարմիր այտերով, շիկահեր և ժպտադէմ տանտիկին կայ, որ վարում է տնտեսութիւնը, ամուսինը խուլ է, բայց ամբողջ օրը դաշտային աշխատանքներով է զբաղուած՝ տունը կառավարելու հոգսը կնոջը թողած: Նա սիրով ընդունեց հեռու երկրացի ուսանող օտարականին և ծանօթացրեց իր պանսիօնի հետ: Ահա այդ է, որի մասին մի քանի խօսք կ'ասեմ, ապա կ'անցնեմ շվէյցարական տանը:

Այս պանսիօնում կան 5—6 սենեակներ, որոնց մէջ ապրում են տանի չափ օտարականներ հաւաքուած զանազան կողմերից, ամարային ամիսներում Շվէյցարիայի կենսարար օդը շնչելու: Այսպիսի պանսիօններ կարելի է գտնել այս երկրի համարեա իւրաքանչիւր անկիւնում, մանաւանդ լեռնային զիւղերում: Առհասարակ Շվէյցարիայում չը կայ փոքր ի շատէ յարմար, գեղեցկագիր, օդաւէտ վայր, ուր պանսիօն չը լինի: Զոր ուսնտառ, լեռնալանջեր ու կատարներ, վճիռ լճերի ափեր, այս բոլոր տեղերում գործնական շվէյցարացին ստեղծել է բազմաթիւ յարմարութիւններ իր երկրի բնական և կուլտուրական

բարիքները վայելելու եկող հաղարաւոր օտարահայրների համար:

Եթէ չէք կամենում ապրել գիւղերում, եթէ առանձնութիւն, լուծիւն սիրող մարդ էք, կարող էք խոյս տալ բնակութիւններից, հեռանալ խուլ անտառներում, ոտքով կամ ֆիշիկիւլերով բարձրանալ Ալպերի կատարները և այդ տեղերում էլ դուք կը գտնէք երջանիկ ու խաղաղ կեանքի բոլոր յարմարութիւնները, մի հիւրանոցում կամ մի պանսիօնում: Այդպիսի մի պանսիօնում եմ ապրում ես և այդ տեղի կեանքը ըստ իս շատ ուսանելի, հետաքրքիր կողմեր է ներկայացնում: Զանազան ազգութիւններից պատահական մարդիկ են հարկաններս. ի միջի այլոց երկու ամուսիններ կան, եօթնասուն տարեկան երկու պառաւներ, որոնք ծեր աղանձիների պէս դուրգուրում են իրար և արևի վերջին շողերի պէս ասես դժուարանում են թողնել աշխարհը:

Հետաքրքիր դոյզ է. նրանք սեղանին միշտ իրար կողքի են նստած, տարօրինակօրէն նման դէմք ունին, երկուսն էլ կարմիր, երկուսն էլ կոլոր, ու կենսուրախ, միասին ժպտում են, միասին խօսում, միասին լռում են, կարծես քոյր ու եղբայր լինին: Հասարակութեան սրախօսութիւնների մշտական առարկաներ են, նրանք լսում են հաճութեամբ և ծերերի բարի ժպտով: Հասակաւոր զաւակների և թոռների տէր են, իրանք էլ եկել են գիւղ մի քիչ կազդուրուելու, այսպէս են ասում իրանք: Այս «կազդուրուել» բառը նշանակալից է, դու խօս գիտես, սիրելիս, որ եթէ «մի ոտքը գերեզմանում» մեր ծերերը կազդուրուելու մասին մտածեն, ամենքը տարօրինակ կը գտնեն, «կեանքից չը կշտանալը» մեր երկնքի տակ համարուում է ամօթ, համարեա մեղք: Տառապանքներով ու սներով լի արեւելքում մտրդը վաղ է դադարում կեանք վայելելուց և ժամ առաջ գերեզմանի մասին մտածում, որ գուցէ նրան հանգիստ և երկնային երջանկութիւն պարգեւի: Դու խօս չես մոռայել մեր գիւղի յայտնի սկանդալը, երբ մի տարիքաւոր կին, հէնց մեր հարեւանուհին, երեխայ ծնեց: Ողջ գիւղը տալին ու վրայ եղաւ, կարծում էր թէ նեոը ծնունց, այլապէս ով է տեսել որ 48—50 տարեկան կինը երեխայ ծնի, նրան էլ ինչ կը սագի երեխայ ծնել, որպիսի խայտառակութիւն, մտածում էին ամենքը և անօրինակ դէպքի մասին խօսում էին փափսուկով: Օհ, տարօրինակ երկիր է մեր երկիրը, այնտեղ տառապիր, տանջուիր, ցաւեր կրիր, որքան կուզես, ձեռք մեկնող, ոտքի կանգնեցնող չի լինի, բայց վայելքի, ինքնուրոյնութեան, անհատական մարդկային իրաւունքների, բնական անբռնաբարելի իրաւունքների վրայ ծանրացած է մի ապուշ մօրալ, որի մէջ խեղդում

են այնքան մարդկային ազնիւ յոյզեր, խեղաթիւրւում, այլանդակւում են այնքան շիտակ բնաւորութիւններ: Այլ է Շվէյցարիան, այստեղ մարդն աշխարհ է եկել կարծես վայելելու և ոչ թէ անօգուտ, անմիտ տեղը տառապելու համար: Ահա երկու ծերունիներ, գերեզմանին մօտեցած երկու կեանքեր, որոնք սակայն չարունակում են լայն կերպով վայելել աշխարհը և ոչ ոք տարօրինակ չի գտնում, ոչ ոք չի յիմարանայ ասել, թէ ծերութեանը չի սաղի մարդավարի կեանք:

Կան և ուրիշ պանսիօներներ, ալգասյի մի փոքրիկ, կայտառ աղջիկ, որ առաւօտից կրեկոյ վազվզում է մարդագետիներում և խնձոր կամ տանձ կրծում: Նա առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում բացի այն, որ չատ սիրուն երգում է, երբ բերանը պտուղներով լիքը չէ: Կան երկու ուրիշ պատաւած աղջիկներ, սրանք արդէն ուրիշ բան են և հոգեբանական հետաքրքիր ուսումնասիրութեան նիւթ կարող են մատակարարել: Սրանց տեսնելուց և դիտելուց յետոյ ես միայն հասկացայ թէ ինչու վարդապետները մեծաւ մասամբ չոր սիրտ և անողորմ են լինում և այնքան ուշադիր են գէպի իրանց մարմինը, գէպի ստամոքսի պահանջները և այնքան անտարբեր, անհոգ գէպի իրանց չրջապատը: Այս խեղճ կանայք վաղուց կորցրել են սեփական օջաղ, դաւալներ ունենալու յոյսը, կեանքը նրանց համար դադարել է իր յաւիտեական խորհուրդն ունենալուց, որ անվերջ զոհողութիւնների մի շղթայ է տեսակի պահպանութեան համար, իրանց նմանների հոգսերն ու ցաւերն անձանթ մեն նրանց, երեխայի ձայնը ուշ գիշերին նրանց քաղցր քունը չի խանգարել, նրանց ամուլ ստինքը ոչ ոքի չի կերակրել, և նրանց հոգածութեան միակ առարկան մնացել է սեփական մարմինը, սեփական ստամոքսը: Այգտեղ է նրանց կեանքը իր ողորմելի ամբողջութեամբ: Պէտք է տեսնել, թէ որքան ուշադիր են սրանք գէպի իրանց յարմարութիւնները, ինչպիսի ընտրութիւն կերակրների, որքան քննքոյ խնամք ըստ ամենայնի կատարեալ վիճակի մէջ պահելու իրանց մարսողութիւնը, քունը, հանգիստը: Ջաղրելի է լսել, երբ նրանք իրար յետեւից, իրար ընդհատելով սկսում են պատմել սեղանակիցներին, թէ այս կամ այն կերակուրը ինչպէս աղդեց իրանց քնի, ստամոքսի, և տրամադրութեան վրայ, թէ ինչպէս իրանք ստիպուած են զգուշանալ այս կամ այն ըմպելիքից, թէ որքան թշուառ են, որ երէկ անձրևի պատճառով չը կարողացան կատարել սովորական պտոյտը, որ լաւ քնեն: Այս բոլորը ոչինչ, եթէ սրա հետ միասին որ և է ուրիշ բան հետաքրքրէր նրանց, եթէ այն ծերունիների պէս երբեմն խօսէին իրանց դաւալներից, իրանց հոգսերից, եթէ անհանգիստ լինէին իրան-

յից զուրս թէկուզ մի հատիկ էակի ճակատագրով, այդ չը կայ, նրանք նոյն իսկ ատում են իրանյ չըջապատողներին և մանաւանդ արդասցի ջահիլ աղջկան, կան միայն երկու մարմիններ, երկու բերան, երկու ստամոքս: Այս է բոլորը: Ի՞նչ զարչելի է մարդը, երբ նա միմիայն նիւթ է, առարկայ, կենդանի, կամ աւելի ճիշտ, երբ նա անասուն է: Պանսիօնում կայ նաև մի ոռու սպայ, որ ամենքի զարմանքն է չարժուժ իր մետաքսեայ բլիզով, իր թաւ, երկար, երկճղանի միրուքով, ուրախ մարդ է, բայց երբեմն սաստիկ զայրանում է, երբ լսում է ֆրանսիական լեզուի իր համար անհասկանալի, տարօրինակ ոճեր: Այսօր օրինակ, նա սաստիկ կատաղել էր լսելով, որ ֆրանսիացիք ասում են՝ «il vient de mourir»—«հէնց նոր մեռաւ»: Նա թարգմանում էր բառ առ բառ և ստացւում էր մի այսպիսի բան. որ «մարդը մեռել է, բայց գալիս է» և բացականչում էր, թէ ինչպէս կարող է մարդը գալ, երբ մեռած է արդէն:

Իմ բոլոր հարեաններից ամենահետաքրքիրը գուցէ մի ջահիլ անգլուհի է, հարուստ ընտանիքի զաւակ, որ չվէյցարական լեոններն է եկել բժշկուելու մի տարօրինակ հիւանդութիւնից: Այս դժբաղդ օրիորդի հիւանդութիւնը կայանում է նրանում, որ նա առաւօտից երեկոյ խօսում է աղամարդկանց մասին իրան խնամող կնոջը, բայց հէնց որ դրսում մի այր մարդու պատկեր է տեսնում, շտապով փախչում է իր սենեակում փակւում և արտասւում: Իր չըջադայութիւնների համար ընտրում է իտուլ, առանձնացած անկիւններ, աղամարդի չը պատահելու համար, իսկ եթէ ճանապարհին պատահում է մի անծանօթի, տուն է գալիս և հանգիստ չի առնում, մինչև իմանայ նրա ով լինելը: Նա բոլորովին խենթ չէ, բայց անպայման հիւանդ է հոգեպէս և երևի հեռու չէ այն ժամանակը, երբ պէտք կը լինի նրան փակել որ և է սպաստարանում: Արդէն յաճախ կատաղութեան րոպէներ է ունենում, երբ ջարդում է ձեռքի տակ ընկած իրերը և ապտակում է խնամող կնոջը: Ուշ գիշերին ես երբեմն լսում եմ նրա լացի ձայնը, կամ զայրոյթի աղաղակները:

Հետաքրքրուելի այս կնոջ անյեակով և զուրս եկաւ, որ նա զոհ է մի մութ բոմանի, մի դժբաղդ սիրոյ, որից յետոյ, նախ մեղանիօլիայ է եկել վրան, ապա լուել է երկար ժամանակ և ի վերջոյ հասել է այս կացութեանը: Խեղճ կին. սա մէկն է այն միլիօնաւոր դժբաղդներից, որոնց մէջ խօսում է բնութիւնը յախուռն թափով և որոնք ժամանակակից հասարակական կաղմակերպութեանը, ընդունուած բարոյական ձեւերին, պահանջներին բաւականութիւն տալու համար զոհ են բե-

րում իրանց եսը, իրանց անհատական մարդկային իրաւունքները: Ինչպէս տեսնում ես, սիրելիս, կինը անգամ քաղաքակիրթ համարուած երկրներում դեռ չի ազատուել այն բարոյական կապանքներից, որ դարձնել է հասարակութիւնը, կամ աւելի շուտ սղամարդկանց հասարակութիւնը, դարձնելով նրան իրաւազուրկ, բայց բազմաթիւ պարտականութիւններով ծանրաբեռնուած մի էակ: Ահա քեզ մի կին, մի փերուն, մի քնքոյշ կեանք, աշխարհ եկած սիրոյ անյաղթելի պահանջներով, սիրտը բաց նուիրական զգայմունքների, մաքուր յոյզերի համար, և նա սիրում է մի երիտասարդ, ինչո՞ւ, ինքն այդ ստել չի կարող, բայց տեսել է, եւ սիրել. երիտասարդն այդ չը գիտէ, իսկ օրիորդը իրաւունք չունի, բարոյապէս ընդունուած իրաւունք, դիմել նրան և իր սէրը յայտնել: Ի՞նչ կ'ասի աշխարհ, եթէ յանկարծ իմացուի, որ առաջարկութիւն անողը եղել է աղջիկը և ոչ երիտասարդը: Եւ աղջիկը սիրտ չի արել այդ յանդուգն քայլն անել, նա չի համարձակուել պատռել պատշաճաւորութեան, պայմանական ամօթի շատ հին քողը, նա խորասուզուել է իր սեփական աշխարհի մէջ, և իր մենակութիւնից սարսափած միտքը անկարող է եղել տանել յարատւ լարուած վիճակ և վրայ է հասել հոգեկան ընդունակութիւնների զարհուրելի կատաստրոֆը: Ինչո՞ւ այսպէս, կը հարցնես անշուշտ, բայց դա կը լինի մէկն այն բիւրաւոր «ինչուններից», որոնք դարերի յետեից վաղում են մարդկային հասարակութեան հետ, որոնց շատերի պատասխանը թէ՛ն տեսականապէս պատրաստ է համարուում, բայց գործնական կեանքը, բիրդ իրականութիւնը շարունակում է անտես առնել դարմանները և ընթանալ գծուած շուղով այնքան զոհերի, այնքան բազդերի, այնքան արցունքների վրայով:

Այս է մեր պանսիօնի հասարակութիւնը, որը դու գուցէ շատ էլ հետաքրքիր չը գտնես, բայց ըստ իս հոգեբանական դիտողութիւնների, ուսումնասիրութիւնների համար աշխարհում անհետաքրքիր մարդ չը կայ: Սրանցից իւրաքանչիւրն իր այս կամ այն նախադասութեամբ, ժեստով, վարմունքով, բացականչութեամբ, իր ապրելու եղանակով, իր ախտերով ու առաքինութեամբ, իր շատ անգամ անբացատրելի սովորութիւններով այնքան մտածելու նիւթ է տալիս ինձ: Մարդկային բնաւորութիւնը շատ է բարդ և նրա լուսաբանութիւնը առանձին առանձին անհատների վրայ կատարուած գիտողութիւններով չափազանց հետաքրքիր է: Երբեմն որ և է անհատի ներքին կայունութիւնը բազմակողմանի կերպով պարզելուց յետոյ մարդ տեսնում է, եթէ որքան ողորմելի են հասարակութեան ստեղ-

ծած այն օրէնքները, որոնք կաղապարել, ուղղութիւն են տուել, կամ ուղղակի խեղաթիւրել են նրա հոգին:

Շվէյցարական գիւղի նկարագրութեան մէջ զուցէ քեզ մի քիչ անտեղի թւայ, որ ես զբաղւում եմ պանսիօնով, բայց ինչպէս ասացի, դա այստեղ մի երևոյթ է և շատ կողմերով հետաքրքիր երևոյթ այս գիւղական կեանքում: Շնորհիւ այդ պանսիօնների մարդ ոչ միայն լայն հնարաւորութիւն ունի ապրել գիւղերում և դիտել տեղական կեանքը, այլ և աշխարհի զանազան կողմերից այստեղ թափուած տարբեր ազգութիւնների ներկայացուցիչների հետ ծանօթանալ, կապեր հաստատել. մի բան որ այնքան ուսանելի է: Իրար բողբոլին օտար, անծանօթ մարդիկ իմբւում են միասին միևնոյն յարկի տակ, միևնոյն պայմաններում, միևնոյն եզանակով ապրում ամբողջ ամիսներ, կամայ կամայ սահմանների և ցեղերի ստեղծած խնամքով թուլանում է մարդկանց մէջ և կաղւաթում է մի կօսմօզօլիտ հասարակութիւն, որի անդամները գետն յարգել փոխադարձաբար միմեանց ազգային, անհատական բնաւորութիւնը, առանձնայատկութիւնները, սովորում են սիրել իրար, համամարդկային սիրով, որ չի ճանաչում ցեղական կրօնական, բարոյական սահմաններ. նախապաշարմունքներ: Պանսիօնները ըստ իս համբերող, լայն սրտի պատրաստելու համար հիանալի զբոսայիւրդներ են, և շվէյցարական մեզմ երկնքի տակ, այս խաղաղ բարեկիրթ գիւղերում այս գեղեցիկ բնութեան ծոցում, լեռների մէջ, անտառներում, ուր ամեն ինչ խօսում է սիրուց և ոչինչ ատելութիւնից, կոպիտ, բիրդ անասնութիւնից, նրանք՝ այդ պանսիօնները, դառնում են կրկնակի գրաւիչ, կրկնակի ուշադրաւ: Բայց ես բաւականանում եմ այսքանով և դառնում եմ շվէյցարական գիւղական տանը:

Երէկ մեր տանտիկինը մի զրօսանք էր կազմակերպել: Պէտք էր ոտքով պտոյտ գործել Մօն-Պելլըբէն լեռան չուրջը և երեկոյեան տուն վերադառնալ: Բայի հիւանդ անդուհուրդ մնայած բոլոր պանսիօնները սիրով յանձն առան առաջարկութիւնը: Վաղ առաւօտից ճաշի համար պաշար վերցնելով ճանապարհ ընկանք: Ախ այդ պտոյտները շվէյցարական դաշտերում ու լեռներում. ով կարող է մոռանալ: Անընդհատ քայլում ենք կամ հարուստ մարգագետինների կանաչապատ կածաններով, կամ անտառների նեղ շաւիղներով: Ամենքի վրայ էլ ուրախ արամադրութիւն է իջել. ալլապուհին մի կատարեալ այծեամ է դարձել և քրքջալով, ճչալով ցատկոտում է շարունակ և ամենից առաջ է անցել: Երբեմն երբեմն մի բոպէ կանգ է առնում՝ ճանապարհի եզրի թփերի առաջ, մի բուռը պտուղ-

ներ հաւաքում, բերանը լցնում և առաջ վազում, կենսութիւն թռչնիկ, երկու պառաւ ամուսինները թե թիւ բռնած, քայլում են երիասարդի եռանդով, որոս սպան ինչոր մոմսում է և էլ բարկացած է ֆրանսիական լեզուի իր համար անհասկանալի ոճերից, մինչև անգամ երկու միշտ թթուած պառաւ ազդիկները բարձրաձայն ծիծաղում են և ի վերջոյ նրանք երգել սկսեցին: Հրաշագործ բնութիւն: Ճանապարհին մի գիւղացի օջաղի առաջ նստած՝ կեռասից օղի է պատրաստում, նա հրաւիրում է զրօս-նողներին ճաշակել այդ բոլորից: Ոմանք ընդունում են բարեմիտ հրաւերը, ուրիշները հրաժարւում են, ալլապուհին խմում է և քրքշում: Առաջ ենք անցնում անտառի միջով: Թւում է, թէ ամայութիւն է իշխում այստեղ և երկար ժամանակ մարդու երևաւենելու չենք: Բայց ահա ճանապարհը անտառում լայնացաւ, մեր առաջ բացուեց մի փոքրիկ կանաչ հրապարակ չրջապատած ծառերով և այնտեղ մի սիրուն, սպիտակ գիւղական տուն: Տանտիկինը մեզ այնտեղ է առաջնորդում մի փոքր հանգստանալու, հիւրերն ընդունւում են սիրով, ծեր գիւղացին իր երկու որդու հետ ընդառաջ է գալիս և հրաւիրում ամենքին և առաջարկում է մի մի բաժակ գինի: Առիթից օգտւում եմ դիտելու այս մեծ գիւղական տունը և ահա այդ դիտողութեան արդիւնքն է որ քիչ զրկու եմ այսօր:

Տանտէրը մի կայտառ և սրախօս ծերունի է, մօրուքն ու բերներն իսպառ ածիլած, հագին կարճ բաճկոն ու սպիտակ, օսլայած շապիկ, գլխին կրում է լայնեզր ցօղէ գլխարկ, ոտներին գեղջկական կոշտ կօշիկներ, որոնց տակի բազմաթիւ մեխերը քայլելիս բաւական մեծ աղմուկ են հանում քարերին դիպելով: Այս այդ շվեյցարացի ծերունիները, չը տեսայ մէկը, որ օտարի առաջ մշմշայ, զանգատուի, տրտնջայ իր բաղդից, իր տնից, իր զաւակներից: Խօսեցրու մեր երկրի մի գիւղացու, նրա կացութեան մասին հարցեր տուր և իսկոյն կը սկսուի «սև օրերի», դարդերի, չար բաղդի մի անվերջ ն'արագիր, որ ոչինչ էլ չը գտնի գոնէ մի յուսահատական ան կ'անի: Շվեյցարացի գիւղացին դրա հակառակ միշտ կենսութիւն է և նոյն իսկ յաճախ կատակասէր, սրախօս, նրա ճակատի կնճիռները ցաւերի ակօսներ չեն, այլ ժամանակի, խաղաղ, և երջանիկ մի անցեալի:

Մեր տանտիկինը միջոցով եւ խնդրում եմ ծերունուն ցոյց տալ ինձ իր տունը, պատմել իր կացութիւնը, տեղեկութիւններ տալ իր պարապմունքների մասին: Նա սիրալիր պատրաստակամութիւնն ինձ դարմայնում է, մեր երկրում ինչ ազգութեան և պատկանելիս լինի գիւղացին, հէնց որ հետա-

քրքրուելիք նրա վիճակով, կամ երբ մանաւանդ փորձես գրի առնել նրա պատասխանները, վտանգն զգացող կրիայի պէս գլուխը ներս կը քաշի կը լռի, կամ այնպիսի ստեր, այնպիսի արտուրդներ կ'աւար, որ գլուխդ կը կորցնես: Մեր զիւղացու համար ամեն մի լաւ հագնուած մարդ, որ տեղեկութիւններ է հաւաքում գիւղի, ժողովրդի, նրա վիճակի մասին, անպայման կ'ակածելի է և չար գիտաւորութիւններ ունեցող Գիտես ինչ կը նշանակի մեր զիւղացու լեզուով հետեւեալ նախադասութիւնը թէ «ձիերը գրում են» կամ «հողերը գրում են», դա նշանակում է թէ ձիերը խլելու են, հողերը պիտի պակասեցնեն կամ հարկերը շատացնեն. նա ուրիշ բացատրութիւն գտնել չի կարողանում և աշխատում է խոյս տալ: Ասե՛ք ամբողջ դարեր արեւելքի բռնակալների լծի տակ ծնծուած և խեղաթիւրուած բնաւորութիւններն ուրիշ կերպ լինել էլ չեն կարող, մեր ժողովուրդն ինքն իր բարոյական պատկերը, իր աշխարհայեացքը դրել է այս իմաստուն առածի մէջ՝ «Երբ բերանը շատ է այրուում, մարդ թանն էլ է փչում»: Շվէյցարային ոչինչ չի թագցնում, որովհետեւ սովորել է ոչ ոքից չը վախենալ, նա «թանը չի փչում» որովհետեւ «բերանը երբէք չի այրուել»:

Բայց դառնանք բուն հարցին, այս տան նկարագրին: Դրսից չինութեան տեսքը այնքան զեղեցիկ է, այնպէս գրաւիչ: Բաւական չէ, որ չորս կողմը անտառ է, առաջը փոքրիկ մշակուած պարտէզ բանջարանոցով, կանաչ բազեղներն էլ բանաստեղծական անկարգութեամբ բարձրացել են և սիրունիկ ու լորներով օժապոտյա շրջաններով պատել չինութեան պատերի երեսը: Սրեկող տեղերում տնկուած են տանձենիներ որոնց ձիւղերը երկաթէ թելերով և մեխերով միացած փռուել են սպիտակ պատերի վրայ որոշ սիւմետրիայով և այսպիսով ստացուել է կուտապի պէս տափակացած մի ծառ չինութեան երեսին կ'պած: Այդ ծառը տանեցոյ սիրելին է. քնքոյշ խնամքը, փորձառութիւնը ժամանակի ընթացքում նրանից պատրաստել են մի սիրուն զարդ, որ սակայն տալիս է այնքան համեղ և այնպէս սիրուն պտուղներ:

—Տեսէք, որքան մեծ են տանձերը, պարոն, ասում է ծերունին, ես եմ տնկել և ես եմ խնամում, եթէ ժակն ու Կլարան առանց իմ թոյլտւութեան տանձերը քաղեն, անտառի և պարտէզի բոլոր թռչունները կը փախչեն և էլ նրանց համար երգող չի լինի:

Ժակն ու Կլարան ծերունու փոքրիկ թոռներն են, երկու չիկահներ, կայտառ մանուկներ, որոնք կանգնած մեր յետեւում, լսում են պապի ասածները, և այտերն ուռեցրած, փոքրիկ

ձեռները յեանները դրած, նայում են կախկիտւած պտուղներին:

— Մենք այդ չենք անի, grand père (պապիկ) ասում են երեխաները մի անուշիկ անհանգստութեամբ, իսկ ծերունին կամայո՛ւկ ծիծաղում է իր սրամտութեան արդիւնքը տեսնելով:

Ներս ենք մտնում: Տունը բաղկացած է երկու բաժանմունքից. մի կողմում սենեակներն են ու խոհանոցը, իսկ միւս կողմում բոլորովին անջատ առաջինից գոմն է ու մարազը: Տունը երկյարկանի է և բաղկացած է հինգ սենեակից, վեցերորդը խոհանոցն է: Ննջարանը սեղանատունը և ընդունարանը առանձին առանձին սենեակներում են: Ես թոյլտուութիւն եմ խնդրում նայել անկողինը, դա համարեա ոչնչով չի վաճառանւում քաղաքի բնակիչների անկողիններից. նոյն մաքրութիւնը, նոյն կադմուածքը, փափկութիւնը: Պատերի վրայ կախկիտւած են նկարներ՝ որոնց սիւժէն վերցրած է շվեյցարական պատմութիւնից, այստեղ է Մայօր Դաւէլը, Վիլհելմ-Տէլլ, Բօնիվար: Մի փոքրիկ էտաժերկայի վրայ շարուած են մի քանի տաճնեակ գրքեր, մաքուր կազմուած, նայում եմ մի քանիսը, «La suisse illustree» «Պատկերազարդ Շվեյցարիա», մի հաստ հատոր, որի մէջ մանրամասն կերպով նկարադրուած է շվեյցարիան էտնօգրաֆիսական, աշխարհագրական, պատմական տեսակէտից: Մի ուրիշ հատոր՝ «Lac Lemán» «Լեման լիճ», կան մի քանի րոմաններ, շվեյցարական ազգային լիգենդաներ, երգերի ձայնագրած ժողովածու, Աստուածաշունչ, Աւետարան, ձայնագրած ազօթագիրք, ընտանիքներին նուիրած մի ամսագիր և այլն:

Ինձ ամենից աւելի հետաքրքրում է սրանց խոհանոցը. ըստ իս մի ժողովրդի կուլտուրական հակումների, նրա ճաշակի զարգացման, նրա մաքրասիրութեան, քաղաքակրթութեան աստիճանի ամենալաւ նշանը խոհանոցն է, ինչպէս և լինի բնակարանը, թէկու՛ղ մի պալատ, բայց եթէ նրա կողքին մի գարշալի հաւաքնում են կերակուր պատրաստում, որ առանց սիրտխառնոցի մտնել չի կարելի, քաղաքակրթութեան, բարեկիրթ կեանքի մասին խօսք լինել չի կարող: Դու խօս գիտես սիրելիս, որ մեր երկրի քաղաքներում էլ եւրոպական ձեւով ապրելու յաւակնութիւններ են ներս սպրտել, այժմ կարելի է այնտեղ էլ տեսնել ըստ երեւոյթին եւրոպական տուն, նոյն իսկ էլեկտրական զանգակ, լիվրէյով դոնապան, բազմաթիւ սենեակների եւրոպական կահ կարասիքով, բայց հէնց նոյն տան մէջ մի ներքնայարկ, մի կեղտոտ, մրոտ, խոնաւ, ցածր նկուղ շատ անգամ ծառայում է իբրեւ խոհանոց, ուր գեղեցիկ տանտիկինը

իր խշխշան շորերով չը գիտէ ինչպէս շարժուի փոշույ ու աղ-
բից խուսափելու համար:

Քաղաքակրթութեան արտաքինը միայն իւրացնող, արուես-
տականօրէն ըմբռնող մի ժողովուրդ իր հետեղութիւնների մէջ
միշտ ծիծաղելի կապիկ է. նա նման է պարսկաստանցի համ-
շարի, որի ածիլած գլխի վրայ չը դիտես ինչո՞ւ, դրել են մի
նոր, փայլուն ցիլինդր:

Շվէյցարական քաղաքներում ես հիացած էի նրանց խո-
հանոցների մաքրութեան վրայ, այդ հիացմունքս իր գազաթմ-
նագէտին է հասնում գիւղական տան խոհանոցը տեսնելով:
Մի անկիւնում փոքրիկ կուռը լի է վճիտ, թարմ ջրով, միւս
կողմում հաստատած է երկաթէ օջաղը, սրբուած ու մաքուր,
յատակը գունաւոր քառակուսի աղիւսներով զարդեր են կաղ-
մում, պատերը սպիտակ ու մաքուր, տախտակէ դարեկների
վրայ առանձին կարգերով շարուած են ամանները, մէջտեղում
մի մաքուր սեղան, այստեղ լոյս է, ինչպէս միւս սենեակներում,
ոչ մի հոտ, ոչ մի անախորժ պատկեր: Այսպիսի խոհանոցը հա-
մարձակ կարող է սեղանատանը փոխանակել և նոյն իսկ քա-
ղաքներում շատ կան ընտանիքներ, որոնց խոհանոցը և սեղա-
նատունը նոյն է:

Ծերունի տանտէրն ինձ առաջնորդում է դէպի իր տան
երկրորդ բաժինը. ներս ենք մտնում դոմբ: Դա մի երկար չի-
նութիւն է, ուր անասունները կապուած են միայն մի շարքով,
երկար մուրքը բաժանուած է առանձին մասերի և ոչ մի կեն-
դանի չի կարող տեսնել, թէ միւսն ինչ է ուտում: Մսուրքի
վրայ կենդանու դէմ ու դէմ պատի մէջ տախտակեայ դռնով,
մի մի լուսանոց կայ, որ բացուած է մարագում, կերակրի ժա-
մերին այդ դռնակները բացում են և իւրաքանչիւր կենդանի
ստանում է իր բաժինը: Սա այն յարմարութիւնն ունի, որ
դոմբի դռնից ոչինչ ներս չեն բերում, ոչ մէկը չի իմանում, թէ
ինչ է ստանում միւսը, նրանք իրանց կապերը չեն ձգձը-
գում, անհանգիստ չեն լինում, ամեն մէկն ապրում է իր ուրոյն
կեանքով: Գոմը չոր է, լուսաւոր ու մաքուր, յատակը ծած-
կուած է փափուկ, թարմ ծղօտով, որի վրայ պառկում են ա-
նասունները. և այդ ծղօտն անդադար փոխում է, որ խոնաւ
չը լինի: Մեր երկրի շատ գիւղացի ամենամեծ սիրով իր ողոր-
մելի խրճիթը կը փոխէր այս դոմբ հետ եթէ հնար լինէր:

Մէկ մէկ նայելի անասուններին, վեց կով, մի քանի հոր-
թեր ու երինջներ, մի ձի, և մի ահոելի կաղմուածքով ցուլ:
Կովերից մէկը հիւանդ է, ծերունին ասում է. որ նրա կորուս-
տը ծանր կը լինի իր տնտեսութեան համար. որովհետեւ ամեն

մէկն արժէ 6—7 հարիւր Փրանկ (մօտ 250 ռուբլի). իմ ներկայութեամբ կողմ կ'ընէին, մի փայտեայ ամանի մէջ, ես չը գիտեմ մեր երկրի քանի կող կարող է մի անգամից այդքան կաթ տալ: Սրանք այնքան մեծ են, որ կարծես կովեր չըլինեն, այլ մի ուրիշ ցեղի պատկանող կենդանիներ: Այս ցուլին հաւասար՝ ես մեր երկրում գտէ՛լ չեմ տեսել: Նա կատաղի է և վճռանգաւոր, զսպելու համար պարանը անց են կայրել քթի ստորին մասի ծակից, որ յատկապէս այդ նպատակով կենդանու փոքր ժամանակ բացուած է: Ցուլեր կան, որոնց երբէք դուրս չեն թողնում: Այսպիսի ցուլերից և կովերից ծնուած հորթերը իրանց դեզեցկութեամբ և մեծութեամբ զարմանք են չարժում. երկու տարեկան շվէյցարական հորթը շատ անգամ մեր երկրի կովին հաւասար մեծութիւն ունի: Եւ այդ հորթերը երբէք չեն ծծում, բացատրում է ինձ ծերունին, նրանց հէնց սկզբից տալիս են ջրախառն կաթ ամանների մէջ, որ նրանք խմում են: Այդ կենդանիները փակուած են գոմերում ամբողջ ամառը, նրանց կերակրում են հնձած խոտով: Այնքան ժամանակ, որ դաշտերում ցանք կայ, հնձելու մարդագետիկներ կան, դրսում ոչ մի աղատ անասուն տեսնել չի կարելի, նրանց ոտները տակ ոչինչ չի տրորուի, անգամ հնձած մարգագետինը: Մեր երկրի յայտնի «գիւհանի» գաղափարը չը կայ այս երկրում: Բայց այդ մասին ես կը գրեմ մի ուրիշ անգամ: Չը նայելով որ կենդանիները մինչև աշուն շարունակ փակած են գոմերում, այնուամենայնիւ ողջ այստեղ մաքուր է, կարելի է մնալ ժամերով առանց խեղդուելու գոմերին յատուկ մթնոլորտով:

Անցնում ենք տեսնելու մարազը, որ ինչպէս վերհետում ասացի՝ կից է գոմին, կամ աւելի ճիշտ՝ վերջինս, որ համեմատաբար աւելի ցածր է, մարագի մէջն է, որի ընդարձակ առաստաղը վերից ծածկում է, հովանի է անում նաև գոմի վրայ: Խոտի մեծամեծ դէզեր չարուած են գոմի կտրին բայց մարագի մէջ, Այնքան ընդարձակութիւն կայ այստեղ, որ երկրագործական բոլոր գործիքները, գութան, սայլ չարուած են մարագի յարկի տակ ներս բերուելով երկիեզկանի ընդարձակ դռնով: Դաշտից դալիս է բարձած սայլը, գիւղացին կարիք չունի ժամանակ կորցնել, խոտը վար թափել և յետոյ կրել մարագ, նա հեշտութիւն ունի բարձած սայլն անասուններով ներս քշել շինութեան յարկի տակ և պաշարի համար յատկացուած տեղում ցած թափել, եզներն արձակում են յետ տանում գոմը իսկ սայլը մնում է: Բոլոր գոմերը տախտակուած են ու կատարելապէս չոր, որ անասունների ձմեռուայ պաշարը չը փթի:

Եւ կուղէի զեռ երկար մնալ այս տանը, բազմաթիւ հարցեր տալ բարեմիտ տանտիրոջը, զիտեղ նաեւ մեղուի փեթակները, որոնք շարան շարան երեւում են պարտէզի ճառերի տակ, բայց գալիս են մեզ կանչելու, ժամանակ է տուն վերադառնալ, ես նոյն իսկ ուշացել եմ, սպան զանաւ է, որ չարժէ Շվէյցարիայ զաւ գոմերով զբաղուելու համար, որոնցից մեր երկրում չափ կան, չարածճի ալդասուհին բարձրաճայն ասում է, որ Monsieur-ն անպատճառ հովիւ լինելու ցանկութիւն ունի, երկու պատաւ աղջիկները լուռ են թէն, բայց թթուած են, որովհետեւ մենք կարող ենք ընթրիքին ուշանալ, տանտիրոջը, միշտ բարի, միշտ սիրալիր, հանգստացնում է ամենքին և մենք ճանապարհ ենք ընկնում տուն: Այս անգամ ես էլ չեմ հետաքրքրւում սիրուն դաշտանկարներով, չուրջս լսող խօսակցութեամբ, ալգասուհու անվերջ մանկական երգերով, երկաթուղային գնացքն անցնում է մեր առաջից, գնում է հեռու, և նրա հետ միասին իմ մտքերը գնում են դէպի այն հեռաւոր վայրերը, սիրելի վայրեր, ուր կեանքի պատկերը տակայն միանգամայն տարբեր է այստեղ տեսածիցս: Ես յիշում եմ մեր գիւղի տները, այն գարշահոտ տները, ուր անհուն ժամանակից ապրում է հայ գիւղացին, յիշում եմ մեր թոնիրները, նրա չուրջը խմբած ակլոր և գզգզուած մանուկները, որոնցից քանի քանիսը տարիների ընթացքում հէնց իրանց առաջի հնոցի բոցերի մէջ են ընկնում և կենդանի խորովւում: Առաւօտ է, մայրը վեր է կենում, աթարը բերում և թոնիրը ծուխ ձգում, մի վայրկեանում խրճիթը կորչում է խաւարի մէջ, կեղտոտ անկողիններից դուրս են սողում երեխաները, նրանք չեն համարձակւում լարձրանալ, ոտքի կանգնել, որովհետեւ ծուխը խեղդում է, ուստի ծնկները վրայ մօտենում են թոնիրին, ուր կռացած աշխատում է մայրը աչքերը կարծրած, և ծխից արցունքով լցուած: Միւս կողմից անասունները մեր խեղճ, վտիտ կովերն ու գոմէշները դուրս են գալիս գոմերից ամբողջապէս ազրի մէջ կորած, գարշահոտ ու այլանդակ, մէջքերին, գլուխների վրայ գունդ գունդ աղբ, յոգնած, չլմած, գոմի ծանր մթնոլորտից, դանդաղ, օրօրուելով շարժւում են դէպի գիւղամէջ և իրանց նման այլ ողորմելի կենդանիների հետ գնում են դէպի դաշտ չոր, գունատ խոտեր կրծելու մինչև երեկոյ, երբ կը գան փակուելու նոյն աղտեղի գոմում, ծծելու նոյն թունաւոր օդը, թաթախուելու նոյն աղբի մէջ և այսպէս շարունակ հազարաւոր տարիներից ի վեր ով գիտէ, զեռ էլի մինչև երբ...

Ճանապարհին տանտիրոջնա ինձ հարցնում է մեր տների կազմութեան մասին, մեր գիւղացու, նրա ապրուստի եղանակի

մասին: Ես նկարագրում եմ ամենայն ոմնկեղծութեամբ. նա լուծում է, իմ պատմութիւնը նրան այնքան անհաւանական է թւում, որ մի վայրկեան աչքերն աչքերիս մէջ ուղղած փորձում է իմանալ, թէ չեմ ստում արգեօք: Բայց երբ հասնում եմ թոնրի նկարագրին, երբ նրան պատմում եմ, որ մեր գիւղերում ամբողջ ընտանիքը քնում է, ուտում է, աշխատում է մինեոյն յարկի տակ, մի հատիկ թոնրատան մէջ, նա էլ չի կարողանում զսպել իրան և բացականչում է՝ «Mais c'est impossible» բայց այս անկարելի է:

— Իրաւունք ունիք, տիկին, պատասխանում եմ, ձեզ ներկայացրածս պատկերը այնքան տարօրինակ է, այնպէս տարբեր ձերինից, որ դուք հաւատալ չէք կարողանում, բայց տարաբաղդաբար իմ նկարագիրը միայն կատարեալ չը լինելու թերութիւնն ունի և ոչ չտփաղանջութեան:

— Բայց այն փոս բանը, պարոն, այն փոս բանը ես ընաւ հասկանալ չեմ կարողանում, այնտեղ ասում էք վառում են և ծուխը լցնում խրճիթը:

Այդ «փոս բանը» թոնիրն է և միամիտ շվեյցարուհին չի կարողանում հաւատալ թէ այդպիսի՝ վայրենի, հրէշաւոր բան հնարաւոր է մի տան մէջ, ինձ չի ասում, թէ սուտ ես խօսում, բայց աներկբայեմ, որ նա իմ նկարագիրը գտնում է կամ անկարելի, կամ առնուազն չափազանցաւորած: Ես լուծում եմ և անձնատուր լինում իմ խոհերին, չորս կողմներս լուծիւն է, երեկոյեան մատախուղն իջել է արդէն, մշուշի մէջ ծրագրւում է արեւելքում Մօն-Պիլլըէնը անտառի ծառերով՝ ինչպէս բաշ իր պարանոցը պատած. սուլոյով անցնում է երկրորդ գնացքը և շտապում է հեռու, հեռու, ալլապուհին սկսում է մի տխուր մեւլօդիա, աստղերը մէկիկ մէկիկ բացում են աչքերը, և մենք քայլում ենք կանաչ դաշտերի միջից, խոտերի և ծաղիկների բուրմունքով յղիացած: Տունը հեռու չէ, ճրագները պըլպըլում են:

Յը գրութիւն!

Ընկերք՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

Մ Օ Ն Ն Ա Վ Ա Ն Ն Ա

ԳՐԱՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԱՐ

Մօրիս Մէտէոլիսկի

(Ներկայացուած է Պարիզի “L'Oeuvre” թատրոնում 1902 թ. մայիսի 17-ին):

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

Գուրգոս Կօլօմնա, Պիլա քաղաքի բերդապահ զօրքի հրամանատարը:

Մարկօ Կօլօմնա, Գուրգոսի հայրը:

Պրինցիպալէ, Ֆլօրէնցիայի վարձկան զօրապետը:

Յրիվուլիօ, Ֆլօրէնտական Հանրապետութեան պատուիրակը:

Ռօսօ, Գուրգոսի փոխնակը (լէյտէնանտ):

Տօնէլլօ, Գուրգոսի փոխնակը (լէյտէնանտ):

Վէդիօ, Պրինցիպալէյի քարտուղարը:

Ջիօվաննա (Մօննա Վաննա), Գուրգոսի կինը:

Իշխաններ, զինուորներ, զեղջուկներ, ժողովուրդ (կանաչք և սղա-մարդիկ) և այլն:

Առաջին և երրորդ գործողութիւնը՝ Պիլայում. երկրորդը՝ քաղաքի առջևը (XV դարի վերջը):

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ն

Դահլիճ Գուրգոս Կօլօմնայի պալատում:

Ա Ն Ա Ջ Ի Ն Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Գուրգոսն և իր փոխնակ՝ Ռօսօն ու Տօնէլլօն բաց պատուհանի մօտ, որտեղից երևում է Պիլայի շրջակայքը:

ԳՈՒԻԴՕ. Այնպիսի ծայրայեղ զրուծեան ենք հասել, որ Աւագների ժողովը ստիպուեց յայտնել ինձ այն աղէտները, որ այնքան ժամանակ ծածկում էր մեզանից: Վենետիկի ուղարկած օժանդակ զօրքերը՝ երկուսն էլ պաշարուած են Ֆլօրէնտացիներից, մէկը՝ Բիբբիէնայում, միւսը՝ Էլչիյում: Վէնիայի, Բիռլզիի ու Մօնտալօնէյի անցքերը, Արէցցօն և Կազէնայի:

բոլոր կիրճերի դռները թշնամու ձեռքին են: Մենք կտրուած ենք ամբողջ աշխարհից և անպաշտպան մատնուած ֆլօրէնցիայի ատելութեանը, որ անողոք է, երբ առիթ չունի դողալու: Մեր վիճակները և ժողովուրդը դեռ ոչինչ չը դիտեն այդ պարտութիւնների մասին. բայց արդէն սկսել են տարածուել աւելի ու աւելի խռովայոյղ լուրեր: Ի՞նչ կանեն նրանք, երբ իմանան ճշմարտութիւնը... Իրանց ցասումն ու յուսահատ կատաղութիւնը նրանք կը թափեն մեր և Աւագների վրին: Այս երեք ամսուայ պաշարումը, ապարդիւն հերոսութիւնը, քաղցը և անլուր տառապանքները զայրացրել են նրանց և խելագարեցրել: Միակ յոյսը, որ դեռ սանձ էր դնում նրանց զայրոյթին, օղը կը ցնդի, և այն ժամանակ անխուսափելի է ապստամբութիւնը, թշնամու յարձակումը և Պիզայի վախճանը...

ԲՕՐՄՕ. Իմ մարդիկը ոչինչ չունեն այլ ես. և ո՛չ մի սլաք, և ո՛չ մի գնդակ. և ինչքան էլ տակն ու վրայ անէք նկուղների տակառները, չէք դանիլ և ոչ մէկում ոչ մի հատիկ վառօդ:

ՏՕՌԷԼԼՕ. Ես արձակեցի անցեալ օրը մեր վերջին ոռումը Սանտօ-Անտօնիօյի մարտկոցի և Ստամպաչէյի աշտարակի դէմ. և նոյն իսկ Ստրադիօտները, միմիայն սրերի յոյսով մնալով, հրաժարոււմ են դուրս գալ պատնէշների վրայ:

ԲՕՐՄՕ. Տեսէք ահա այն իրամատը, որ Պրինչիվալէյի թնդանօթները բացել են այն պարիսպում, որ պաշտպանում էին Վենետիկի ուղարկած օժանդակ զօրքերը... Յիսուն կանգուն կը լինի լայնութիւնը. ոչխարների ամբողջ հօտ կարող է ազատ անցնել միջովը... Ոչ ոք չի կարող դիմադրել այնտեղ, և ոռմանօլ հետևակները, սլառները ու ալքանացիք արդէն յայտարարեցին ինձ, որ բոլորն էլ կը թողնեն կը փախչեն, եթէ այս երեկոյ և եթ չը ստորագրենք անձնատրութեան դաշինքը:

ՓՈՒԻԴՕ. Տաս օրից ի վեր երեք անգամ իրար յետեից Աւագաժողովը իր անդամներից երեք աւագագոյններին ուղարկել է բանակցելու անձնատրութեան մասին: Եւ ոչ ոք նրանցից չի վերադարձել...

ՏՕՌԷԼԼՕ. Պրինչիվալէյն չի կարողանում ներել մեզ այն, որ նրա փոխնակ Անտօնիօ Ռէնօյին կատաղած գեղըւկները սպանեցին մեր փողոցներում: Ֆլօրէնցիան օգտուում է դրանից՝ մեզ օրէնքից դուրս նկատելու համար և ուզում է վարուել մեզ հետ, իբրև բարբարոսների հետ:

ՓՈՒԻԴՕ. Ես իմ հօրը ուղարկեցի բացատրելու և արդարացնելու սխալմունքը մոլեգնած ամբոխի, որին մենք անկարող էինք զսպել: Նուիրական պատանդ էր հայրս, բայց նա էլ չը վերադարձաւ...

ԲՕՐՍՕ. Մի շարաթից աւելի է արդէն, որ քաղաքը բայ է ամեն կողմից, պարիսպներն աւերուած և մեր թնդանօթները լուռ: Ինչո՞ւ հապա Պրինչիվալէն յարձակում չի գործում: Վախճում է արդեօք որ և է թափարդից, թէ սիրտ չի անում կամ գուցէ Ֆլորէնցիայի գաղտնի հրահանգներ է ստացել:

ԳՈՒԻԴՕ. Ֆլորէնցիայի հրահանգները միշտ գաղտնախորհուրդ են, բայց զիտաւորութիւնները՝ միշտ պարզ ու որոշ: Պիզան վաղուց ի վեր հաւատարիմ դաշնակից է Վենետիկին և խոտովայոյզ օրինակ է տալիս Տօսկանայի փոքրիկ քաղաքներին... Պիզայի հանրապետութիւնը պէտք է չքանայ աշխարհից... Կամաց կամաց, հմտօրէն և զաղտագողի, Ֆլորէնցիան բորբոքեց այս պատերազմը, տեղիք տալով անլուր դաժանութիւնների և նենգութիւնների, առիթ և արդաբացում պատրաստելու համար իր ապագայ վրէժխնդրութեանը: Ես հիմք ունեմ կասկածելու, որ նրա գաղտնի պատուիրակներն են զրդել մեր գեղջուկներին սպանելու Ռէնօյին: Աննպատակ չէ և այն, որ նա հանել է մեր դէմ իր ամենագաժան վարձկան զօրապետին, վայրենի Պրինչիվալէյին, որ այնքան տխուր հոչակ ստացաւ Պիաչէնցայի աւերածի միջոցին, ուր, իրանց ասելով՝ սխալմամբ, բոլոր զինուած մարդկանց բնաջինջ անելուց յետոյ վաճառի հանեց, իբր ստրկուհիներ, հինգ հազար հոլի ազատ կինարմատ:

ԲՕՐՍՕ. Սխալ կարծիք է այդ: Այդ ջարդի և վաճառքի հրաման տուողը Պրինչիվալէն չի եղել, այլ Ֆլորէնցիայի պատուիրակները: Ես երբեք տեսած չեմ Պրինչիվալէյէն, բայց եղբայրներիցս մէկը ճանաչ է եղել հետը: Ծագումով բարբարոս է նա. հայրը, որ պէտք է Բասք կամ Բրէտօն եղած լինի, ռուկերչի խանութ է ունեցել Վենետիկում ձիշտ է, աննշան ծագում ունի նա, բայց վայրենի չէ, ինչպէս կարծուում է: Ասում են, կրքոտ է, խելառ, անառակ ու վտանգաւոր, բայց չիտակ ու անխարդախ, այնպէս որ ես առանց երկիւղի կը յանձնէի նրան իմ սուրը...

ԳՈՒԻԴՕ. Աշխատէք չը յանձնել, քանի զեռ այդ սուրը կարող է պաշտպանել ձեզ: Գործում կը տեսնենք նրան, և այն ժամանակ կ'երևայ, թէ ում կարծիքն է ճիշտ: Իսկ առայժմ մեզ մնում է փորձել վերջին հնարքը, եթէ չենք ուզում մորթուել գլուխներս քաշ և ձեռներս ծալած: Նախ և առաջ պէտք է գործի ամբողջ իսկութիւնը յայտնել զինուորներին, քաղաքայիններին և քաղաք ապաստանած գիւղացիներին: Թող հաստատ իմանան, որ մեզ չեն առաջարկում անձնատուր լինել: Թող իմանան, որ այս այն խաղաղ պատերազմներինց չէ, որոնց ընթացքում երկու մեծ զօրքեր առաւօտից մինչև երեկոյ կուռկուռ

յետոյ երկու-երեք վիրաւորներ էին թողնում կռուի դաշտումը, ոչ էլ այն եղբայրական պաշարումներիցը, որոնցից յետոյ յաղթողը անմիջապէս դառնում էր յաղթուածի հիւրը և լաւագոյն բարեկամը: Անողոր պատերազմ է այս, ուր վճուում է մահուան ու կեանքի հարցը, ուր մեր կանայք, մեր զաւակները...

Երկրորդ ակտի արմ

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՄԱՐԿՈՆ

(Մտնում է Մարկոն: Գոբիգոն նկատում է նրան և վազում է ընդ առաջ ու գրկում):

ԳՈԲԻԴՈ. Հայր իմ... Ի՞նչ բախտի բերմունք է՝ այս մեծ աղէտների մէջ, ինչ բարեբաբ՝ հրաշք է, որ հնարք է տուել ձեզ վերադառնալ, երբ յոյսս կորցրել էի արդէն... Հօ չէք վիրաւորուած... Հազիւ հազ էք փոխում քայլերդ... Հօ չէն տանջել ձեզ... Փախել էք բանակից... Ասէ՛ք՝ ի՞նչ են արել ձեզ...

ՄԱՐԿՈ. Ոչինչ: Գոհութիւն Աստուծոյ, բարբարոս չեն նրանք... Նրանք ինձ ընդունեցին իբր պատկանելի հիւրի: Պրինչիփալէն կարգացել է իմ գրուածքները. նա խօսեց ինձ հետ իմ դատած ու թարգմանած՝ Պլատոնի երեք արամախօսութիւնների մասին: Եթէ գծուարութեամբ եմ քայլում, պատճառն այն է, որ շատ եմ ծեր և շատ հեռուից եմ գալիս... Գիտէ՞ք՝ ում հանդիպեցի Պրինչիփալէյի վրանում:

ԳՈԲԻԴՈ. Երեւի Ֆլօրէնցիայի անպուծ պատուիրակներին...

ՄԱՐԿՈ. Այո, նրանց էլ կամ աւելի ճիշտ նրանցից մէկին, որովհետեւ մէկին միտջն տեսայ... Բայց առաջին մարդը, որի հետ ծանօթացրին ինձ այնտեղ, Մարչիլլէ Ֆրէչինն էր, այն պատկանելի գիտնականը, որ յայտնադորձեց Պլատոնին... Մարչիլլէ Ֆրէչինը՝ ինքը Պլատոնի հոգին, նորից երեսն եկած այս աշխարհումս... Եթէ ուղէին, կեանքիցս տասը տարի կը տալի, որպէս զի տեսնէի նրան նախ քան այն աշխարհը գնալը, ուր վերջ ի վերջոյ գնում են ամենքը... Կարծես իրար կորցրած եղբայրների լինէինք ու դառնք վերջապէս միմեանց... Խօսում էինք Հէլլոօդի, Արիստօտէլի և Հօմէրի մասին... Ասոյցի ափին, բանակի մօտերքում, ձիթենիների անտառում տատուածուհու մի արձանի այնպիսի չքնաղ իրանամասն է գտել աւաղի մէջ թաղուած, որ եթէ տեսնէիր՝ պատերազմը բոլորովին կը մոռանայիր... Մենք չարունակելինք փորուածքը. նա գտաւ

կռներից մէկը. ես գետնի տակից հանցիլ երկու ձեռք, այնքան կանոնաւոր և այնքան նուրբ, որ կարծես ստեղծուած լինէին ժպիտներ զարթեցնելու, ցօղ շաղ տալու և արշալոյսը զգուելու համար... Նրանցից մէկը ձկուած էր այն ձեւով, որ ընդունում են թեթեւ մասները ստինքին հպելիս, միւսը՝ դեռ սղմած ունէր հայելու կոթը...

ԳՈՒԻԴՈ. Հայր իմ, չը մոռանանք, որ ժողովուրդը մեռնում է սովից և նրա համար նշանակութիւն չունեն այդ նուրբ ձեռները ու բրօնզէ արձանի բեկորները...

ՄԱՐԿՕ. Արձանը մարմարից է չինուած...

ԳՈՒԻԴՈ. Թող լինի մարմարից, բայց աւելի լաւ է խօսենք այն երեսուն հազար կեանքերի մասին, որոնք կարող են չքանալ մի հատիկ անխոհմտութեան, մի բռնակի յապաղման շնորհիւ կամ փրկուել՝ մի ճարտար խօսքի, մի ուրախ համբաւի շնորհիւ... Միթէ ծայրատ անդրինների կամ հաշմ ձեռները համար էիք գնացել այնտեղ... Ի՞նչ յայտնեցին ձեզ—Ի՞նչ են ուզում անել մեզ Ֆլորէնցիան կամ Պրինչիպալէն—Շուտ արէք, տացէք... Ինչի են սպասում—Լսում էք մեր պատուհանների տակ թըշուառների աղաղակը—Իրար ձեռից խլում են քարերի արանքում բուսնող խոտերը...

ՄԱՐԿՕ. Իրաւ ես ասում եմ մոռացել էի, որ դուք պատերազմ էք մղում, երբ ծնւում է նորից դարունը, երբ երկինքը հրճւում է, ինչպէս մի արքայ զարթնելիս, երբ ծովը ծփում է վէտ-վէտ, ինչպէս լուսնդէն սկաւառակ, որ կապոյտ սփիւռների աստուածունիին մեկնում է կապոյտ սփիւռների աստուածներին, երբ այնքան չքնաղ է երկիրը և այնքան սիրում է մարդկանց... Բայց դուք ունէք ձեր ուրախութիւնները. զուր եմ ես այսքան խօսում իմ բերկրանքների մասին։ Այսպէս թէ այնպէս իրաւացի էք դուք. ես պէտք է իսկոյն և եթ հաղորդէի ձեզ իմ բերած լուրը... Նա փրկում է երեսուն հազար կեանք՝ մէկը խորտակելու համար, բայց այդ կեանքի տիրոջը նա ներկայացնում է ամենավեհ առիթը վաստակելու մի փառք, որ ինձ աւելի վսեմ է թւում, քան պատերազմական փառքը... Սէրը դէպի մի հատիկ անձը երանելի է և զովելի. բայց դերազանց է այն սէրը, որ վսեմացնում է մարդու... Զգոն ամօթխածութիւնը և ամուսնական հաւատարմութիւնը լաւ առաքինութիւններ են առհասարակ, բայց լինում են անսովոր բռնկանի ու նրանք մանր են թւում, երբ մարդու միտք ուրիշ կողմ է դառնում... Ահա ասում եմ... Բայց չը սխալուէք առաջին խօսքերիցս, չը կորէք նահանջի ձանադարհներդ և չուխտէք

այնպիսի ուխտ, որ կաշկանդում է խելքը ու թույլ չի տալիս նրան այլևս յետ կենալ իր վճռից...

ՊՈԽԻՊՕ, ձեռքի շարժումով արձակուրդ տալով սպաներին:

Մենակ թողէք մեզ...

ՄԱՐԿՕ. Ոչ, մնացէք... Մեր բոլորիս բախտն է որոշուելու այս բողբոս... Նա կուղէի ընդհակառակը, որ այս դահլիճը ծայրէծայր լիքը լինէր այն զոհերով, որոնց փրկելու ենք մենք, և որ այդ թշուառ մարդիկ, որոնց կեանքը աղատելու ենք, ահանջ զնէին պատուհաններից, սրպէս զի լսէին և յիշողութեան մէջ ընդմիջտ պահէին այն փրկարար լուրը, որ ես բերել եմ այժմ. որովհետև փրկութիւն եմ բերել ես, եթէ ձեր բանականութիւնը ընդունի այդ փրկութիւնը: Իսկ բիրաւոր խնդրեր հազիւ հազ կարողանան հաւատարակչուել մի վերին աստիճանի ծանր մոլորութիւն, որի ծանրութիւնից ես վախենում եմ, մասնաւանդ որ ինքս էլ...

ԳՈՒԻԿՕ. Հայր իմ, ինդրում եմ, թողնենք այդ հանելուկները: Այդ ինչ բան է, որ այդքան շատ խօսք է պահանջում: Ինչ ասէք՝ կարող ենք լսել. մօտ է մեզ այն ժամը, երբ այլ ևս ոչինչ չի զարմացնում մարդու...

ՄԱՐԿՕ. Հաաա, տեսա՛յ Պրինչիվալլէյին և խօսեցի հետը: Որքան օտարոտի և անծիշտ են պատկերացնում մարդիկ այն անձին, որից վախենում են... Նա գնում էի այնպէս, ինչպէս Պրիամը Աքիլլէսի վրանը... Նա կարծում էի, թէ հանդիպելու եմ մի միեմամիտ ու ապուշ բարբարոսի, որ միշտ թաթախուած է արեան մէջ ու աչք չի բանում հարբեցութիւնից, մի տեսակ խնկր ու խելաւր,—ինչպէս նկարագրում են նրան,—որի հանձարը երբեմնապէս միայն, պատերազմի դաշտում, մարդ չը գիտի ինչպէս, փայլատակում է կաշմակի նման... Նա կարծում էի, թէ դիմացս լինելու է պատերազմի զուր, կոյր ու խաժամուժ, դաժան ու սնափառ, նենգ ու անառակ...

ԳՈՒԻԿՕ. Եւ Պրինչիվալլէն իսկ և իսկ այդպէս է, բացի այն, որ նենգ չէ:

ԲՕՐՍՕ. Ճիշտ է, նա անխարդախ է, թէև ծառայում է Ֆլօրէնցիային: Երկու անգամ նա ապացուցել է մեզ իր անխարդախութիւնը:

ՄԱՐԿՕ. Արդ, հանդիպածս այնպիսի մարդ դուքս եկաւ, որ խոնարհուեց իմ առաջ, ինչպէս զգածուած աշակերտը խոնարհուում է ուսուցչի առաջ: Նա գիտուն է ու պերճախօս, իմաստասէր և ուսումնաժարաւ: Նա գիտէ լսել երկար խօսակցութիւն և զգայուն է թւում զէպի տմեն ինչ, որ գեղեցիկ է:

Նա դիտէ ժպտալ խելացի կերպով. նա մեղմ է ու մարդասէր, և ասում է պատերազմը: Նա փնտրում է նախապատճառները կրքերի և իրերի: Նա գիտէ զինել իր հոգու խորքը, նա մարմնացած խղճմտանք է ու անկեղծութիւն, և յակամայից է ծառայում նենդ հանրապետութեանը: Հանգամանքների բերմամբ, զույցէ ձակառարի կամքով՝ նա դարձել է պատերազմիկ, և մինչ այժմ մնում է զինուորական ասպարէզում, որ ասում է և ուզում է թողնել. բայց ոչ առաջ, քան կարողանայ յագուրդ տալ մի բաղձանքի, մի չարարաստիկ բաղձանքի, որի նմանը ոչնե-
նում են այնպիսի մարդիկ, որոնք, ըստ երեւոյթին, ծնուած են մի միակ և անխրագործելի մեծ սիրոյ վստահաւոր աստղի տակ...

ԳՈՒԻԴՕ. Հայր իմ, մի մոռանաք, թէ որքան ծանր է սպասել նրանց համար, որոնք մնում են սովից: Զանց արէք այդ արժանաւորութիւնները, որոնք պէտք չեն այժմ մեզ, և ասացէք վերջապէս այն փրկարար լուրը, որ խոստացաք յայտնել:

ՄԱՐԿՕ. Իրաւ է, թերեւ զուր եմ ուշ յայտնում բերած լուրս, թէպէտ նա չափազանց դժան է այն երկու էակների համար, որոնց ամենից չատ եմ սիրում աշխարհիս երեսին...

ԳՈՒԻԴՕ. Ես պատրաստ եմ ընդունել իմ բաժինը, բայց ումն է համակուր միւսը:

ՄԱՐԿՕ. Լսէք, ասում եմ... Այստեղ գալիս՝ օտարոտի և զժուարին էր թւում ինձ այդ, բայց միւս կողմից փրկութեան հնարաւորութիւնը այնքան սքանչելի էր...

ԳՈՒԻԴՕ. Ասացէք, ասացէք...

ՄԱՐԿՕ. Ֆլորէնցիան վճռել է ջնջել մեզ աշխարհից: Զինուորական տասնակալները անհրաժեշտ են դատել այդ և Աւագների ժողովը հաւան է այդ բանին: Վճիռն անդառնալի է: Բայց խոհեմ ու կեղծաւոր Ֆլորէնցիան չէր կամենալ այդքան արիւն-ըռուշտ յաղթանակի մեղքը վիզն առնել ամբողջ աշխարհի առաջ, որին ինքը քաղաքակրթութեան դասեր է տալիս: Նա կը պնդի, թէ Պիզան մերժեց իր առաջարկած անձնատրութեան մեղմ դաշինքը: Քաղաքը կ'առնուի յախուռն յարձակմամբ: Նրա դէմ կը հանեն սպանացի ու գերմանացի վարձկան հրոսակներ, որոնց աւելորդ է տալ յատուկ հրահանգներ, երբ պէտք է քանարարել, կողոպտել, հրկիզել ու կոտորել... Բաւական է, որ նրանք մի օր մնան ինքնագլուխ, և այդ օրը նրանց իշխանաւորները կը յայտարարեն, որ անդօր են զսպել նրանց: Ահա թէ ինչ վիճակ են պատրաստում մեզ համար, և կարմիր շուշանի քաղաքը *) ամենից առաջ կ'ողբայ մեր

*) Ֆլորէնցիան:

Ծան. թարգմ.

աղէաները, եթէ նրանք նրա սպասածից էլ դաժան լինեն, և կը վերագրի այդ աղէաները ամբողջովին անախտաւոր անկարգապահութեանը վարձկան զօրքերի, որոնց նա կարձակի զգուանքի ցոյցերով, երբ մեր կործանումից յետոյ այլ ևս աւելորդ կը լինի նրանց օգնութիւնը...

ԳՈՒԻԿՕ. Այո, այդպէս է Ֆլօրէնցիան:

ՄԱՐԿՕ. Ահա այն բանաւոր ու գաղտնի հրահանգները, որ բերել են Պրինչինալէյին Ֆլօրէնցիայի պատուիրակները: Մի շարաթիւր ի վեր նրանք ստիպում են նրան սկսել վճարական յարձակումը: Մինչ այսօր՝ այլ և այլ պատուիրակներով նա յետաձգել է այդ: Միւս կողմից, նա բռնել է Աւագների ժողովին զրուած նամակներ, որոնց մէջ նրան դաւաճան են ներկայացնում Ֆլօրէնցիայի պատուիրակները, որոնք հսկում են նրա ամենաշնչին քայլին: Երբ Պիզան կործանուի, ու պատերազմը վերջանայ, նրան անշուշտ կը դատեն Ֆլօրէնցիայում, կը տանջեն և յետոյ մահուան կենթարկեն, ինչպէս արել են շատ ու շատ՝ վտանգաւոր համարուած զօրապետների նկատմամբ: Ուրեմն նրան յայտնի է իր սպառնալի վիճակը:

ԳՈՒԻԿՕ. Շատ լաւ, բայց ինչ է առաջարկում նա:

ՄԱՐԿՕ. Նա երաշխաւոր է,—որքան որ կարելի է երաշխաւոր լինել այդ վտանգաւոր վայրենիների հաւատարմութեան համար,—նա երաշխաւորում է նետաձիգների մի մասի համար, որ ինքն է զօրագրել: Յամենայն դէպս նա վստահ է հարիւր հոգուց բաղկացած թիկնապահ զնգի վրայ, որ կազմելու է իր զօրքի միջուկը և բոլորովին նուիրուած է իրան: Այդպէս ուրեմն նա առաջարկում է ձեռք մտցնել Պիզա իրան հետեւել ցանկացող բոլոր զինուորներին և նրանց հետ պաշտպանել մեզ մնացած թշնամի զօրքի դէմ:

ԳՈՒԻԿՕ. Մարդիկ մենք էլ շատ ունենք և մեզ ամենին պէտք չեն այդ վտանգաւոր օգնականները: Եթէ ուղում են մեզ օգնել, թող տան մեզ միջերըներ, գնդակներ ու վառոդ...

ՄԱՐԿՕ. Այդ էլ լաւ: Նա նախատեսում էր, որ դուք կը մերժէք իր այդ առաջարկը, որ կարող է կասկածելի թուալ: Նա յանձն է առնում մտցնել մեր քաղաքը երեք հարիւր սայլ ուտելու և զէնքի միջերը, որ նոր է հասկ ընտել:

* ԳՈՒԻԿՕ. Ի՞նչպէս կ'անի նա այդ:

ՄԱՐԿՕ. Ձը գիտեմք—ես գաղափար չունեմ պատերազմական և քաղաքագիտական խորամանկութիւնների մասին:—Բայց նա անում է, ինչ որ ուղում է: Ձը նայած Ֆլօրէնցիայի պատուիրակներին, նա միակ տէրն է ըմբռնում և այդպէս կը լիսի, մինչև որ Աւագները յետ չը կանչեն նրան:—Իսկ նրանք

չեն համարձակուել յետ կանչել նրան այժմ, երբ յաղթանակը այնքան մօտ է և երբ զօրքը, որ վստահ է նրա վրայ, գրեթե զգուժ է աւարը իր ձեռքին: Ուստի կամայ ակամայ ֆլօրէն-յիան պէտք է սպասի նպաստաւոր ռոպէի...

ԳՈՒԻԻՕ. Ասենք թէ նա մեզ փրկում է ինքն իրան փըր-կելու և նախօրօք իր վրէժն առնելու համար: Բայց նա կարող էր այդ անել աւելի փայլուն կամ աւելի ճարպիկ ձեւով: Ի՞նչ չա՜հ ունի նա բարերարել մեզ, իր թշնամիներին: Ո՞ւր է մտա-գիր գնալ և ի՞նչ է անելու: Ի՞նչ է ուզում մեզնից դրա փո-խարէն...

ՄԱՐԿՕ. Հասաւ, որդիս, այն ռոպէն, երբ խօսքերս դառ-նալու են դաժան և հուժկու... Հասաւ, որդիս, ռոպէն, երբ երկու երեք խօսք ճակատագրի ոյժ են ստանում յանկարծ և զոհեր են ընտրում... Դողում եմ անից, երբ մտքովս անցնում է, որ ձայնիս հնչիւնը, արտասանութեանս եղանակը կարող է պատճառել բիւր մահեր կամ փրկել բիւր կեանքեր...

ԳՈՒԻԻՕ. Չեմ կարողանում գուշակել... Ամենադաժան խօսքերը անպօր են սաստկացնել իրական աղէտները...

ՄԱՐԿՕ. Ես արդէն ասացի. Պրինսիփալէն խելօք է թը-ւում. նա ողջամիտ է և մարդասէր... Բայց ո՞ւր է այն խելօք մարդը, որ չունենայ իր խենթութիւնը, և ո՞ւր է այն բարի մարդը, որ երբէք անուցած չը լինի սրտումը որ և է հրէշա-ւոր խորհուրդ... Այլ կողմը խելքն է, գթութիւնը, արդարու-թիւնը. ձախ կողմը՝ այլ բաներ, բաղձանքը, կիրքը, ես իմ, խելագարութիւնը, որ տիրում է մեզ անդադար... Ես էլ եմ ունեցել խելագարութեան ռոպէներ, և դարձեալ կունենամ, դու ինքդ էլ կունենաս թերիս... Որովհետեւ այդպէս է մար-դուս բանը... Քեզ սպասում է մի վիշտ, որ չը պէտք է լինէր մարդկային վիշտ... Եւ ես, որ պարզ տեսնում եմ, որ չարիքը այնքան մեծ չէ, որքան լինելու է քո վիշտը,—ես այնպիսի խոստում տուեցի, որ աւելի ես խելագար բան է, քան այդ վիշտը, որ անշուշտ խելագար է լինելու... Եւ այդ խոստումը ամենախելագարօրէն կը կատարեմ ես, որ ուզում եմ խելացի լի-նել և եկել եմ քեզ յորդորելու յանուն առույժ դատողութեան... Ես խոստացայ վերադառնալ թշնամու բանակը, եթէ դուք չըն-դունէք նրանց առաջարկութիւնը... Ի՞նչ կ'անեն ինձ... Հաւա-նալիան է, տանջանքով ու մահով վարձատրեն իմ տխմար բա-րեխղճութիւնը... Բայց ես այնպէս ես կ'երթամ... Իզուր եմ ինքս ինձ ասում, որ այդ բարեխղճութիւնը խենթութեան մնա-ցորդն է իմ մէջ, որ ես պատում եմ ծիրանիով՝ ինքս ինձ խա-բելու համար. ես կը կատարեմ այդ խենթութիւնը, որ զատա-

պարտում եմ, որովհետեւ ես եւս այնքան ուժեղ չեմ, որ հետեւեմ առողջ դատողութեանս... Բայց ես չեմ ասում... Ախ, ներեցէք, ես կորցնում եմ ինքս ինձ, չփոթում եմ խօսքերս, կուտակում եմ բառ բառի վրայ, որ գոնէ փոքր ինչ յետաձգեմ վճռական ըոպէն... Բայց գուցէ զուր եմ այսքան անվստահ ձեր նկատմամբ... Արդ, միջերջերի այդ ահագին կարաւանը, որ ես տեսայ այնտեղ, ցորեն ու գինիով, պտուղ ու բանջարով գլխէ-գլուխ բարձած այդ սայլերը, այդ բոլոր հօտերն ու նախիրները, որոնք բաւական են երկար ամիսներ կերակրել մի ամբողջ ժողովուրդ, վառօղի այդ բոլոր տակառները և կապարի ձոյլերը, որոնք բաւական են Ֆլօրէնցիային յաղթելու և Պիզան նորից ծաղկեցնելու համար, այդ բոլորը հէնց այս երեկոյ կը լինի քաղաքում, եթէ դուք ուղարկէք բանակը, որպէս զի նա միմիայն մի դիշեր լինի Պրինչիվալլէի տրամադրութեան տակ, որովհետեւ Պրինչիվալլէն նրան յետ կուղարկի, երբ երեւան արշալոյսի առաջին ցրտերը... Բայց Պրինչիվալլէն պահանջում է՝ ինչպէս յաղթութեան և անձնատրութեան, որ նա գնայ բանակը միայնակ ու մերկ, ունենալով վրան միմիայն վերարկուն...

ԳՈՒԻԻՒՕ. Բայց ո՞վ, ո՞վ պէտք է գնայ...

ՄԱՐԿՕ. Զիօվաննան...

ԳՈՒԻԻՒՕ. Ո՞վ... Իմ կէնը... Վաննան...

ՄԱՐԿՕ. Այո, քո Զիօվաննան... Կարծեմ, պարզ ասայի...

ԳՈՒԻԻՒՕ. Բայց ինչո՞ւ անպատճառ իմ Վաննան, եթէ նա ունի այդպիսի մի բաղձանք... Միթէ քիչ կ'ին կայ դրա համար...

ՄԱՐԿՕ. Բայց Զիօվաննան ամենագեղեցիկն է կանանց մէջ և Պրինչիվալլէն սիրում է նրան...

ԳՈՒԻԻՒՕ. Պրինչիվալլէն սիրում է Վաննային... Ո՞րտեղ է տեսել նա կնոջս... Պրինչիվալլէն չի ճանաչում նրան...

ՄԱՐԿՕ. Նա տեսել է կնոջդ, ճանաչում է նրան, բայց չուզեց ասել՝ երբուանից և ինչպէս...

ԳՈՒԻԻՒՕ. Իսկ կ'ինո՞ ինչպէս. տեսել է արդեօք նրան... Ո՞րտեղ է հանդիպել այդ մարդը Վաննային...

ՄԱՐԿՕ. Կ'ինդ նրան չի տեսել երբէք կամ գոնէ չի յիշում...

ԳՈՒԻԻՒՕ. Ո՞րտեղից գիտէք այդ:

ՄԱՐԿՕ. Կ'ինդ ինքն ասաց ինձ:

ԳՈՒԻԻՒՕ. Ե՞րբ:

ՄԱՐԿՕ. Նախ քան քո մօտ գալս:

ԳՈՒԻԻՒՕ. Եւ դուք նրան ասացիք...

ՄԱՐԿՕ. Ամեն ինչ:

ԳՈՒԻԴՕ. Ամբն ինչ... Ի՞նչպէս... Ամբողջ այդ խայտառակ սակարկութիւնը... Եւ դուք համարձակուեցիք...

ՄԱՐԿՕ. Այո:

ԳՈՒԻԴՕ. Եւ ի՞նչ պատասխանեց նա...

ՄԱՐԿՕ. Նա ոչինչ չասաց: Գունատուեց միայն ու հեռացաւ անխօս:

ԳՈՒԻԴՕ. Այո, լաւն այդ է... Նա կարող էր յարձակուել ձեր վրայ, թքել ձեր երեսին կամ ընկնել ձեր ոտները... Բայց այդ ինձ աւելի է դուր գալիս... Գունատուած հեռանալ անխօս... Հրեշտակները միայն կարող են վարուել այդպէս... Կեցցէ իմ Վաննան: Պէտք է որ ոչինչ ասել, ուրեմն մենք էլ չենք խօսիլ այլ ևս զրա մասին... Մենք կը գրաւենք նորից մեր տեղը պատնէշների վրայ, և եթէ պէտք է մեռնել այնտեղ, կը մեռնենք ու դո՛նէ չենք պղծիլ մեր պարտութիւնը...

ՄԱՐԿՕ. Ես քեզ հասկանում եմ, որդիս, և աղէտի ցաւը ինձ համար նոյնքան ծանր է զրեթէ, որքան և քեզ համար: Բայց հարուածը արդէն տրուած է. ժամանակ տանք մեր խելքին պատշաճ տեղ յատկացնելու մեր վշտին և պարտականութիւններին:

ԳՈՒԻԴՕ. Միմիայն մի պարտականութիւն կարող է լինել այդպիսի նողկալի առաջարկութեան դիմաց, և ինչքան էլ մտածենք, միմիայն կը սաստկացնենք այն զգուանքը, որ ազդում է նա...

ՄԱՐԿՕ. Սակայն հարցրու ինքդ քեզ, իրաւունք ունե՞ս արդեօք մահուան մասնել մի ամբողջ ժողովուրդ, մի քանի տիտուր ժամով յետաձգելու համար անխուսափելի մի չարիք, որովհետեւ քաղաքը առնուկուց յետոյ՝ Վաննան կը լինի յաղթողի ձեռքում...

ԳՈՒԻԴՕ. Ոչ... Այդ իմ գիտնալու բանն է...

ՄԱՐԿՕ. Թող այդպէս լինի, բայց ընդհանուր կեանքեր դու հել զրա համար, միթէ այդ շատ չէ, դուք է չափազանց շատ. միթէ անարդարութիւն չէ այդ... Եթէ միմիայն ձեր բախտը կախուած լինէր այդ ընտրութիւնից, դուք կընտրէիք մահը, և ինձ համար հասկանալի կը լինէր այդ, թէպէտ եթէ հարցնէք ինձ, գերեզմանին մօտեցած ծերունուս, որ այնքան մարդիկ կ'մտնակ կ'կանգուում և ուրեմն այնքան մարդկային վշտեր, ես կ'ասեմ, որ խելօք բան չէ բնաւ գերազասել մահը, սոսկալի ու ցրտաշունչ մահը, իր յաւէրժ լուսթեամբ, թէկուզ ամենախիստ մարմնական կամ հոգեկան տանջանքից, որ կարող է ուշացնել մահը... Բայց այստեղ հարցը վերաբերում է բերաւոր կեանքերի, այստեղ տուժելու են մեր զինակից ընկերները, կանայք

ու մանուկներ... Կատարեցէք այդ խելագարի պահանջը, և այն, ինչ որ թուում է ձեզ հրէշաւոր, հերոսութիւն կը թուի ապագայի մարդկանց, որոնք աւելի հանգարտ ու արդար աչքով և աւելի մարդկայնօրէն կը նայեն ձեր արածի վրայ... Հաւատա ինձ, չը կայ մի բան, որ արժեքնար այնքան, որքան մի վրկուած կեանք, և մարդկանց բոլոր իղէալները, բոլոր տաքթիստութիւնները, այն ամենը, ինչ որ անուանում են պատիւ, հաւատարմութիւն և, ևս իմ, էլ ինչ,--բոլորն էլ երեկոյակած բաներ են մի կեանք փրկելու առաջ... Դու ուզում ես անարատ գուրս գալ այս զարհուրելի փորձութիւնից և հերոսաբար դիմադրել նրան, բայց սխալ է կարծել, թէ հերոսութիւնը չունի ուրիշ զաղաթնակէ մահից զատ: Ամենահերոսական գործը այն է, որ ամենից ծանր է մարդու համար. իսկ մահը յաճախ աւելի թեթեւ է քան կեանքը:

ԳՈՒԻԴՕ. Եւ դուք իմ հայրն էք...

ՄԱՐԿՕ. Այո, քո հայրն եմ, և պարծենում եմ դրանով... Եթէ այժմ մտքառում եմ քո հետ, մտքառում եմ նոյնպէս և իմ հետ, և ես քեզ աւելի քիչ կը սիրէի, եթէ իսկոյն և եթ զիջէիր...

ԳՈՒԻԴՕ. Այո, դուք իմ հայրն էք և դուք ապացոյցել էք այդ, որովհետեւ դուք էլ անշուշտ կը նախընտրէք մահը, և քանի որ ես մերժում եմ ընդունել մեզ առաջարկուած նողկալի դաշինքը, դուք իսկոյն կը դառնաք թշնամու բանակը և կ'ենթարկուէք այն վիճակին, որ պատրաստում է ձեզ համար ֆլօրէնցիան...

ՄԱՐԿՕ. Հարցը միմիայն իմ մասին չէ, որդիս: Ես արգէն մի անպէտք ծերուկ եմ, իմ մի ոտս վաղուց գորեղմանումն է և ոչ ոքի հոգը չէ՝ ես կամ թէ չը կամ աշխարհիս երեսին... Ուստի և ինքս ինձ ասում եմ, որ չարժի դիմադրել հոգուս մէջ բուն դրած խենթութեան մնացորդին և երկար մտքառել, որպէս զի ստիպում ինձ խելացի վարուել... Ես կ'երթամ բանակը, թէ և չը դիտեմ ինչն... Իմ հոգիս դեռ չառ ջանիլ է մնացել այս ահիլ մարմնիս մէջ, և ես այնպիսի դարի զաւակ եմ, որ դեռ չառ է հեռու այն դարից, երբ աշխարհիս երեսին հաստատուելու է վերջապէս ինքի թաղաւորութիւնը... Սակայն յաւում եմ սաստիկ, որ անցեալի ոյժերը թոյլ չեն տալիս ինձ զրօնել մի խելառ խոստում...

ԳՈՒԻԴՕ. Ես կը հետեւեմ ձեր օրինակին:

ՄԱՐԿՕ. Ի՞նչ ես ուզում ասել...

ԳՈՒԻԴՕ. Այն, որ կը վարուեմ ձեզ պէս և հաւատարիմ

կը մնամ անցկալի ոյժերին, որոնք անհեթեթ են թուում ձեզ, բայց, բախտաւորապէս, դեռ իշխում են ձեր վրայ...

ՄԱՐԿՕ. Երբ հարցը ուրիշների մասին է, նրանք չեն իշխում այլ ևս ինձ վրայ, և եթէ ձեր աչքերը բանալու համար՝ անհրաժեշտ է այնպէս մի խղճուկ գոհ, ինչպէս իմ ծերունական խոստման դրժումը, ես սրտիս խորքում յետ ևմ առնում խոստումս և, ինչ որ էլ անէք, գնալու չեմ բանակը...

ԳՈՒԻԴՕ. Հէրիք է, հայր իմ: Այնպիսի խօսքեր են գալիս ընդանս, որ երբէք մի որդի չը պէտք է ասի իր մոլորուող հօրը:

ՄԱՐԿՕ. Ասա, որդիս, ասա այն բոլոր խօսքերը, որոնք ըզխում են զայրացած սրտիցդ: Ես կընդունեմ այդ խօսքերը, իբր ապացոյց արդար կսկիծի... Այն սէրը, որ ևս տածում ևմ դէպի քեզ, կախում չունի բնաւ այն խօսքերից, որ դու կարող ես ասել ինձ... Բայց ինձ անիծելիս, թոյլ տուր, որ խելքն ու բարի զթուփիւնը գրաւեն քո հոգում այն նզովքների տեղը, որոնք դուրս են գալու նրա խորքից:

ԳՈՒԻԴՕ. Թող հէրիք համարուի այսքանը: Ես այլ ևս չեմ լսիլ ձեր առածը: Մտածեցէք, թէ ինչ էք ուղում ստիպել ինձ անելու: Այս բոլորիս դուք էք խելքից պակասը, վսեմ ու ազնիւ խելքից: Մահուան երկիւղը չփոթիլ է ձեր միտքը: Գալով ինձ, ես աւելի հանգիստ եմ նայում մահուան երեսին, և վառ կերպով յիշում եմ այն քաջութեան դասերը, որ դուք տալիս էիք ինձ այն ժամանակ, երբ ծերութեան տարիները և անպէտք զրքամուլութիւնը դեռ չէին թուլացրել ձեր արի հոգին: Մենք մենակ ենք այս դաշիճումս: Կողմնակի վիպյ չը կար ձեր թուլութեան բոլէին, իսկ ևս ու իմ փոխնակները սրբութեամբ կը պահենք այս գաղտնիքը մեր սրտում, որ, աւանդ, երկար չէ բաբախելու այսուհետ: Թող այս բոլորը թաղուած համարուի ընդ միշտ մեր սրտում, ու սկսենք խօսել այժմ օրհասական կռուի մասին...

ՄԱՐԿՕ. Ոչ, որդիս, այս բանը անկարելի է թաղել, որովհետեւ երկար տարիներն ու գրքերի, ինչպէս ասացիր, անպէտք ուսումնասիրութիւնը ինձ սովորեցրել են, որ երբէք և ոչ մի պատճառով ներելի չէ թաղել այդպէս՝ մարդկային մի կեանք: Եթէ դու կարծում ես, թէ իմ մէջ մեռել է արգէն այն քաջութիւնը, որ միակ՝ քո կարծիքով՝ արժանի է այդ սնուան,—իմ մէջ մնացել է սակայն մի ուրիշ քաջութիւն, որ նուազ փայլուն է թերեւ և աւելի քիչ գովուած մարդկանցից, որովհետեւ աւելի քիչ չարիք է պատճառում, իսկ մարդիկ յարգում են միայն այն, ինչ որ տանջում է նրանց... Ահա այդ քաջութիւն-

նը թոյլ կը տայ ինձ կատարել իմ վերջին պարտականութիւնը:
ԳՈՒԻԿՕ. Եւ որն է ձեր այդ պարտականութիւնը:

ՄԱՐԿՕ. Գնում եմ վերջացնելու այն, ինչ որ սկսեցի այստեղ այսքան անաղուղ: Դուք մինն էիք զատաւորներին, բայց ոչ երբէք միակը: Այն բոլոր մարդիկ, որոնց կեանքի ու մահուան հարցն է վճռոււմ այս ժամին, իրաւունք ունեն իմանալու, թէ ինչ է իրանց վիճակը և ինչից է կախուած իրանց փրկութիւնը...

ԳՈՒԻԿՕ. Լաւ չեմ հասկանում ձեր ասածը. դոնէ յոյս ունեմ, որ դեռ չեմ հասկացել... Ասում էք...

ՄԱՐԿՕ. Ասում եմ, որ այստեղից կ'երթամ կը յայտնեմ ժողովրդին Պրինչիվալէյի առաջարկը և քո մերժումը:

ԳՈՒԻԿՕ. Կեցցէք, այժմ հասկացայ: Ցաւում եմ, որ պարզին խօսակցութիւնը հասցրեց մեզ այստեղ: Ցաւում եմ նմանապէս, որ ձեր մտքի խանգարումը ստիպում է ինձ դանդաւանել այն յարգանքը, որին արժանի է ձեր տարիքը: Բայց ամեն որդի պարտական է պաշտպանել իր հօրը նոյն իսկ իրան դէմ, եթէ նա սխալոււմ է: Բացի այդ, քանի դեռ կանգուն է Պիզան, ևս եմ նրա տէրը և պատւի պաշտպանը: Բօրսօ և Տօռէլլօ, ձեզ եմ յանձնում իմ հօրը. կը հսկէք նրա վրայ, մինչև որ փարատուի մտքի շփոթութիւնը: Չեղած համարենք ինչ որ տեղի ունեցաւ: Թող ոչ ոք ոչինչ չիմանայ: Ես ձեզ ներում եմ, հայր իմ: Դուք էլ ինձ կը ներէք այն ժամանակ, երբ վերջին ժամը կը զարթեցնի ձեր մէջ այն օրերի յիշատակը. երբ դուք սովորցնում էիք ինձ լինել միշտ անվեհեր և երբէք թուլամորթ:

ՄԱՐԿՕ. Ես քեզ ներում եմ, որդիս, նախ քան վերջին ժամը: Ես էլ այն կ'անէի, ինչ որ դու արեցիր: Դու ինձ կը կախնաւորես, բայց իմ դադանիքը ազատ է. արդէն չստ ուշ է իմ ձայնը ինդդելու համար:

ԳՈՒԻԿՕ. Ի՞նչ էք ուզում ասել:

ՄԱՐԿՕ. Այն, որ հէնց այս բոպէին Աւագների ժողովը քննում է Պրինչիվալէյի առաջարկը:

ԳՈՒԻԿՕ. Աւագների ժողովը... Բայց ո՞վ յայտնեց նրանց...

ՄԱՐԿՕ. Ես ինքս, նախ քան քեզ ասելը...

ԳՈՒԻԿՕ. Ոչ: Անկարելի բան է, որ մահուան երկիւղը և այն աւերածը, որ ծերութիւնը գործել է ձեր սրտում, հասցրած լինէին ձեզ այն աստիճան խենթութեան, որ իմ միակ երջանկութիւնը, իմ կաթոգին սէրը, մեր ընտանի կեանքի ամբողջ բերկրանքը և անարատ պատիւը այդպէս դուք մատ-

նէլիք օտար մարդկանց ձեռքը, որոնք չափելու և կշռելու են այդ ամէնը այնպէս սառնասիրտ, ինչպէս կշռում են ազը ու չափում իւզը իրանց խանութներում... Ես դեռ չեմ հաւատում դրան... Ես բոլորովին կը հաւատամ այդ բանին միայն այն ժամանակ, երբ աչքովս տեսնեմ այդ... Իսկ եթէ տեսնեմ, ես կը նայեմ ձեզ վրայ, իմ խեղճ ծերուկ հայր, որին ես սիրում էի, որին կարծում էի ճանաչել, որին ձգտում էի նմանել փոքր ինչ, կը նայեմ ձեզ վրայ նոյնքան նողկանքով և աւելի մեծ զարմանքով, քան կը նայէի այն ստորաքարչ ու գարշ հրէշին, որ թաթախում է մեզ այժմ այս զաղրութիւնների մէջ...

ՄԱՐԿՈ. Ծիշտ ես ասում, որդիս, դու լաւ չէիր ճանաչում ինձ, և մեղքն իմն է այդ բանում: Երբ հասայ ծերութեան հասակին, ես քեզ չէի հաղորդում ոչինչ այն բոլորից, որ ամէն օր ծերութիւնը սովորեցնում էր ինձ մարդկային կեանքի ու սիրոյ, վշտի ու բերկրանքի մասին... Շատ յաճախ է պատահում, որ մարդ ասլորում է կող առ կող իր սիրած էակների հետ և սակայն չի տեսնում նրանց այն միակ բաները, որ արժէր ասել... Մարդ առաջ է գնում օրօրուելով անցեալից. մարդ կարծում է, թէ ամէն ինչ փոփոխւում է իր հետ, և նրբ մի աղէտ սթափանդում է յանկարծ, մարդ զարմանում է, տեսնելով, թէ որքան հեռու են ուրիշներն իրանից... Եթէ ես առաջուց յայտնէի քեզ այն բոլոր փոփոխութիւնները, որոնք կատարւում էին իմ սրտում, բոլոր սին մտքերը, որոնք մի առ մի չքանւում էին իմ մէջ և բոլոր իրական ճշմարտութիւնները, որոնք երեւան էին դալիս նրանց տեղ, այսօր ես կանգնած չէի լինիլ քո առաջ իբր մի անծանօթ թշուառական, որին դու պատրաստ ես ասել...

ԳՈՒԻԴՈ. Մեծ բախտ է ինձ համար, որ այսքան ուշ ճանաչեցի ձեզ... Գալով մնացեալին, շատ ափոստ. Ես առաջուց գիտեմ, ինչ կը վճռեն Աւագները: Ինչու չէ, շատ հեշտ է նրանց համար փրկել իրանց անձը զոհելով մի անհատ: Այդպիսի փորձութեան չէին զիմանալ նոյն իսկ աւելի աղնիւ քաջութեան տէր մարդիկ, քան այդ վաճառականները, որոնք կարօտել են արգէն իրանց խանութներին: Բայց ես պարտական չեմ յանձն առնել այդ զոհը նրանց համար: Ոչ ոքի համար ես պարտական չեմ յանձն առնել այդ զոհը: Ես նուիրեցի նրանց արիւնս ու անքուն գիշերներս. ես սիրով տարայ այս երկար պաշարման բոլոր յոգնութիւնները, բոլոր տառապանքները: Հէրիք է այդքանը, և այդ էր բոլորը, որ ես կարող էի տալ նրանց: Մնացեալն ինձ է պատկանում. ես չեմ հնազանդուիլ նրանց վճոխ

և յոյց կը տամ բոլորին, որ դեռ ես եմ այստեղ ամենքի հրա-
մանտարը: Ի՞նչ էլ պատահի, ես կունենամ ձեռքիս տակ իմ
երեք հարիւր Ստրազիտներին, որոնք ինձ են միայն լսում և
ակամջ չեն դնիլ թուլամորթ ու կնատ մարդկանց խորհուր-
դին...

ՄԱՐԿՕ. Սխալուում ես, որդիս: Պիզայի Աւագները, այդ
վաճառականները, որոնց դու արհամարհեցիր նախ քան վճիռ-
ներն իմանալը, ընդհակառակը, այս թշուառ բոլեին սքանչելի
օրինակ տուեցին ազնիւ ու արի վարմունքի: Նրանք չուզեցին
փրկել իրանց կիանքը ստիպելով մի կնոջ զոհել իր պատիւն ու
սէրը, և հէնց այն բոլեին, երբ ես հեռացայ նրանցից ու եկայ
քո մօտ, նրանք ուղարկեցին Վաննային կանչելու, որպէս զի
ասէին նրան, որ նրան են յանձնում քաղաքի բախտը:

ԳՈՒԻԴՕ. Ի՞նչպէս թէ... Նրանք համարձակուել են, իմ
բացակայութեան միջոցին, կրկնել նրա առաջ այդ մոլեգին
սատիրի*) լպիրշ խօսքերը... Խեղճ Վաննաս... որի քնքոյշ գէմբը
կարմրում է ամեն մի օտար հայեացքից, որի շարմաղ երեսին
խաղում է շարունակ ամօթխածութեան նշոյլը, կարծես կըրկ-
նապատկելու համար նրա գեղեցկութեան փայլը... Իմ Վաննան
նրանց առջև, այդ պսպղան աչքերով ծերուկների առջև, այդ
զուռնատ գէմբով ու կեղծ ժպտով խանութպանների առջև,
որոնք ծուներ էին դնում նրա փէշերի առաջ... Ուրեմն նրանք
պիտի ասեն նրան. «Գնա բանակը մէն-մենակ ու մերկ, ինչպէս
պահանջել է նա...» Գնա յանձնիր նրան այդ մարմինը, որ այն-
քան անարատ ու կուսական էր թւում, որ ոչ ոք չէր յանդգ-
նում պղծել նոյն իսկ լոկ յանկութեամբ, և որ ես, ամուսինս,
չէի յանդգնում մերկացնել այլապէս, քան խնդրելով ձեռներիցս,
աղաչելով աչքերիս՝ մնալ սուրբ ու ողջախոհ, որպէս զի չա-
ղարտէի նրան որ և է անվայել սարսուռով... Եւ մինչ այսպէս
խօսում եմ, նրանք ազնիւ են ու արի. նրանք չեն ստիպում
նրան դնալ այնտեղ իր կամքի հակառակ... Ի՞նչ կ'անէին հապա
նրանք, եթէ ես այնտեղ լինէի... Նրանք միմիայն կնոջ կամքն
են հարցնում... Իսկ ո՞վ է իմ կամքը հարցնում...

ՄԱՐԿՕ. Հապա ի՞նչ է իմ արածս: Եթէ ես մնամ ձեռնու-
նայն, նրանք կը զան խնդրելու քո համաձայնութիւնը...

*) Սատիր=աթամարդ (զիցարանութեան մէջ՝ կիսատուած աջի
ոտներով. փոխաբերաբար՝ վաւշոտ, կնամոլ):

ԳՈՒԻԴՈ. Հարկ չը կայ նրանց դալուն. վաննան պատասխանած կը լինի երկուսիս փոխարէն:

ՄԱՐԿՈ. Յոյս ունեմ, թէ միայն դու ընդունես նրա պատասխանը:

ԳՈՒԻԴՈ. Նրա պատասխանը... Ուրեմն կասկած ունէք դրա մասին... Եւ դուք ճանաչում էք նրան, և դուք տեսել էք նրան առէն օր, սկսած այն ժամից, երբ առաջին անգամ, ոտից գլուխ ծաղկազարդ և երեսը պայծառ իր միակ սիրոյ ժպտից, նա ոտք դրեց այս դահլիճը, ուր դուք այժմ ուզում էք վաճառել նրան, ուր դուք համարձակում էք ենթադրել, թէ նա կը տայ ձեզ ուրիշ պատասխան, քան այն միակ պատասխանը, որ մի կին կարող է տալ մի հօր, որ այնքան մոռացել է ինքն իրան, որ ցանկանում է...

ՄԱՐԿՈ. Ամէն մարդ տեսնում է, որդիս, ուրիշի մէջ այն միայն, ինչ որ կայ իր մէջ, և չափում է ուրիշին իր չափով, իր խղճի բարձրութեան համեմատ...

ԳՈՒԻԴՈ. Այո, և այդ է պատճառը անշուշտ, որ ես լաւ չէի ճանաչում ձեզ... Բայց եթէ գիտնայի, որ կուրացած աչքերս բացուելու են այսպէս, որպէս զի տեսնեմ միայն, թէ չարաչար սխալուել եմ իմ սիրած, իմ պաշտած երկու էակների նկատմամբ, ես կը գերադասեի, Տէր Աստուած, փակել կուպերս ընդ միշտ...

ՄԱՐԿՈ. Նրանք կը բացուէին, որդիս, աւելի եւս պայծառ լոյսեր տեսնելու... Եւ եթէ ես այսպէս եմ խօսում, պատճառն այն է, որ ես տեսայ կնոջդ մէջ մի ոյժ, որ դու չես տեսել, և որի շնորհիւ ես վստահ եմ նրա պատասխանի վրայ...

ԳՈՒԻԴՈ. Եթէ դուք վստահ էք, ես աւելի եւս վստահ եմ նրա պատասխանը ես ընդունում եմ այժմուէն, նախօրօք, կուրօրէն, յամառաբար, անդառնալի կերպով: Եթէ նրա պատասխանը նոյնը չէ, ինչ որ իմը, կը նշանակի մենք երկուսս էլ խաբուած ենք եղել ամուսնութեան առաջին ժամից մինչեւ այս վերջին օրը: Կը նշանակի մեր ամբողջ սէրը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի անագին կեղծիք, որ ցնդում է օդի մէջ, կը նշանակի այն բոլորը, որ ես պաշտում էի նրա մէջ, գոյութիւն ունէր միմիայն այստեղ, այս թշուառ, այս դիւրահաւան գլխիս մէջ, որ կը ցնորուի անշուշտ, այս սղորմելի սրտիս մէջ, որ չունէր ուրիշ երջանկութիւն և որ ուրեմն սիրած է եղել լոկ մի ուրուական...

Ե Ր Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ո Ր Ա Ն

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՆ ՎԱՆՆԱՆ

(Լսում է մտունը ամբողջի, որ դրսում կրկնում է «Մօննա Վաննայի» տուննը: Խորքի դուռը բացում է և Վաննան, միայնակ ու գունատ, մըտնում է դաշիճը, մինչ շեմքի վրայ գողտուկ խոնում են կանայք ու տղամարդիկ, որոնք սիրտ չեն անում մտնել):

ԳՈՒԻԴՈ, նկատելով Վաննային. թռչում է դեպի նա, բռնում է ձեռներիցը, զզվում է երեսը եւ համբուրում է նրան սենցոս ջերմութեամբ:

Իմ Վաննաս... Այդ ինչ էր նրանց արածը... Ոչ, ոչ, մի կրկնիլ նրանց ասածները... Թող տեսնեմ ճակատդ, թող նայեմ աչքերիդ մէջ... Օ՛հ, ամեն ինչ աղնիւ ու անարատ է միտքել քո մէջ, ինչպէս այն ջուրը, որի մէջ լողանում են հրեշտակները... Նրանք չեն կարողացել պղծել ոչինչ իմ սիրած բաներից, և նրանց բոլոր խօսքերը վայր են ընկել գետին, ինչպէս դէպի վեր նետուած քարեր, որոնք վայր են ընկնում առանց կարողանալու գէթ մի վայրկեան պղտորել կապոյտ երկնքի պայծառութիւնը: Երբ նրանք տեսան այդ աչքերը, անշուշտ ոչինչ չը հարցրին այլ ես... Պատասխան չը պահանջեցին քեզանից, կարողաւով պատասխանը նրանց ջինջ հայեացքում, որ, լոյսի ու սիրոյ անանցանելի ծովի պէս, անշատում էր քո մըտքերը այդ մարդկանց մտքերից... Բայց այժմ մտիկ տուր, մօտեցիր... Մի մարդ կայ այստեղ, որին ես հայր եմ կոչում... Տես, նա կախում է գլուխը. արևոք մագերը ծածկում են երեսը... Պէտք է ներել նրան. նա ծեր է և սխալւում է... Պէտք է դիմել նրան. պէտք է ճիշդ դործ դնես. աչքերդ բաւական չեն նրա սխալ կարծիքը փարատելու համար. նա շատ է հեռու մեզանից... Նա այլ ևս չի ճանաչում մեզ. մեր սէրը նրա կոյր ծերութեան համար այնպէս անհետ է անցել, ինչպէս ապրիլեան անձրևը չոր ապառաժի համար... Նա չի նկատել ոչ մի ճառագայթ նրա շողերից. նա չի նշմարել երբեք ոչ մէկը մեր համբոյրներից... Նա կարծում է, թէ մենք սիրում ենք այնպէս, ինչպէս սիրում են անսիրտ մարդիկ... Նա չի կարող հասկանալ ճշմարտութիւնը առանց խօսքերի: Նրա համար անհրաժեշտ է, որ դու պատասխանես... Դէ պատասխանիր ուրեմն:

ՎԱՆՆԱ. մօտենալով Մարկոյին:

Հայր իմ, ես կ'երթամ այս երեկոյ:

ՄԱՐԿՈ. համբուրելով նակար:

Գիտէի, աղջիկս...

ԳՈՒԻԴՕ. Ի՞նչ... Ի՞նչ ասացիր նրան... Ո՞ւր հետ ես խոսում, նրա հետ թէ ինձ հետ...

ՎԱՆՆԱ. Թէ նրա հետ, Գուրգո, թէ քեզ հետ... Ես կը հնազանդուեմ այս երեկոյ...

ԳՈՒԻԴՕ. Բայց ո՞ւր Բանը հէնց դրանումն է, ես չը գիտեմ դեռ ես...

ՎԱՆՆԱ. Ես կ'երթամ այս երեկոյ Պրինչիւալէյի բանակը:

ԳՈՒԻԴՕ. Որպէս զի անձնատուր լինես նրան, ինչպէս նա պահանջում է:

ՎԱՆՆԱ. Այո:

ԳՈՒԻԴՕ. Որպէս զի մեռնես նրա հետ... Նախ նրան սպանես, յետոյ քեզ... Մտքովս այդ չէր անցել... Ասա, որ այդ է ուզածդ, գէթ այդ, ե ես կը հասկանամ ամեն ինչ...

ՎԱՆՆԱ. Ես չեմ ստանիլ նրան, եթէ սպանեմ, քաղաքը կ'առնեն...

ԳՈՒԻԴՕ. Եւ ո՞վ է այդ ատղը... Դու, զու... Ուրեմն դու սիրում ես նրան, դու սիրում էիր նրան... Ո՞րքան ժամանակ է, որ սիրում ես նրան...

ՎԱՆՆԱ. Ես չեմ ճանաչում նրան, ես չեմ տեսել նրան երբէք...

ԳՈՒԻԴՕ. Բայց գոնէ գիտես, թէ ինչ տեսակ մարդ է... Անշուշտ ասած կը լինեն քեզ... Ասած կը լինեն, որ նա...

ՎԱՆՆԱ. Չը գիտեմ ո՞վ նոր ասաց, որ ծերունի է նա, դրանից աւելի ոչինչ չը գիտեմ...

ԳՈՒԻԴՕ. Ծերունի չէ նա... Նա ջահիլ է ու զեղեցիկ... Շատ աւելի ջահիլ, քան ես... Բայց, Տէր իմ, ինչո՞ւ նա չը պահանջեց մի որևէ ուրիշ բան... Ես, ես ինքս, ձեռներս չը դրեցի, չը քեզ դրեցի քանակը մեր քաղաքը փրկելու համար... Ես կը հեռանայի քաղաքից միայնակ, աղքատ ու միայնակ Վաննայիս հետ, ու մինչի մահ կը թափառէի այդպէս՝ դամաք հայ մուրալով գիւղէ գիւղ... Բայց այդ չէ այդ լպիրշ բարբարոսի ուզածը... Երբէք ամբողջ պատմութեան ընթացքում ե ոչ մի երկրում՝ յաղթող թշնամին չի յանդգնել պահանջել այդպիսի բան... (Մօսեմալով Վաննայի ու գրկելով նրան) Օհ, Վաննա, իմ Վաննա... Ես դեռ չեմ հաւատում այդ բանին... Դու չէիր խօսողը... Ես ոչինչ չեմ լսել ե ամեն ինչ կարգին է ընթանում... Այս պատերն էին, որ կրկնում էին հօրս խօսքերը... Ասա, որ ես սխալւում եմ ե որ մեր ամբողջ սէրը ե քո ամբողջ պարկեշտութիւնը ոչ էին ասում, ոչ էին գոչում, որովհետեւ պէտք էր զիմազրաւել այդ խայտառակ առաջարկին...

Իմ լսածս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ուշացած արձագանք... Դու այժմ պիտի խախտես կուսական լռութիւնդ: Տես, ամենքը ականջ են դնում. ոչ ոք ոչինչ չը գիտի, և դու պէտք է արտասանես քո առաջին խօսքը... Շուտ արա, ասա խօսքդ, Վաննա, որպէս զի այս մարդիկ ճանաչեն քեզ. շուտ արա, ասա, Վաննա, որպէս զի սրանք իմանան մեր սէրը, որպէս զի փառատուի ծանր երազը... Ասա այն խօսքը, որ սպասում եմ քեզնից և որ պէտք է ասուի, որպէս զի վերջապէս յենարան գտնի այն ամենը, որ խորտակում է իմ մէջ...

ՎԱՆՆԱ. Ես լաւ գիտեմ, Գուրգո, որ քեզ է բաժին ընկնում ամենածանր մասը...

ԳՈՒԴԳՈ. (Բնագործէն դէն հրելով նրան):

Բայց ես միայնակ եմ կրում այդ ծանրութիւնը, և ով որ սիրում է, նա է կրում ամբողջ ծանրութիւնը... Դու ինձ չես սիրել երբեք... Այդ ոչինչ չարժի անսիրտ մարդկանց համար... Անակնկալ բան է այդ... Թերեւ տօնախմբութիւն է այդ... Օ՛, սակայն ես կը կարողանամ խանդարել այդ տօնախմբութիւնը... Ես եմ դեռ այստեղի տէրը, ինչ էլ ասեն, ի՞նչ էլ անեն... Իսկ ինչ կատէիր, եթէ յանկարծ վրդովուէի... Եթէ կալանաւորէի քեզ մեր փառաւոր բանտում, այն ողջախոհ բանտում, այն զով զննաններում, որոնք գտնւում են այս դահլիճի տակ, և Ստրազիօտներին կանգնեցնէի վանդակապատների առաջ ու սպասէի այդպէս, որ հանգչէր մէջիդ կրակը ու մի քիչ հովանար հերոսութիւնդ... Դէ առաջ անցէք ու կալանաւորեցէք սրան... Շուտ արէք, կատարեցէք հրամանս...

ՎԱՆՆԱ. Գուրգո, քեզ լաւ յայտնի է, որ...

ԳՈՒԴԳՈ. Այս ի՞նչ է, չե՞ն լսում հրամանիս... Ոչ ոք չարեց ասածս... Դու, Բորսո, դու Տօռէլլօ, ի՞նչ էք անշարժ կանգնել... Քարից են ձեր կոնները... Թէ ձայնս է անլսելի դարձել... Իսկ դուք, միւսներդ, որ կանգնած ականջ էք դնում դռան մէջ, չէք լսում, ի՞նչ է, ասածս... Ձայնս երկինք է հասնում... Էլ ի՞նչ էք կանգնած մնացել, մտէք դահլիճը, բռնեցէք սրան, սա պատկանում է այժմ ամենքին... Օհ, հասկանում եմ, հասկանում. այդ մարդիկը վախենում են... Չէ որ ուզում են կենդանի մնալ... Եւ նրանք կենդանի են, իսկ ես մեռնում եմ... Օ, Տէր Աստուած, սրբան հեշտ է այդ... Մի հատիկ մարդ ամբողջ բազմութեան առաջ... Մի հատիկ մարդ, որ հատուցանում է ամենքի փոխարէն... Բայց ինչո՞ւ ես և ոչ դուք... Չէ որ ամենքդ էլ կին ունէք ինձ պէս... (Կիսով չափ հանելով սուրը պատեանից ու մօտենալով Վաննային): Իսկ եթէ ես զերազասէի քո

մահը մեր խայտառակութիւնից... Մտքովդ չի անցել այդ... Սակայն, այո, այո, տես... Բաւական է մի շարժում ես...

ՎԱՆՆԱ. Գուրգո, արա այդ, եթէ սէրը այդ է թելադրում քեզ...

ԳՈՒԻԴՈ. Եթէ սէրը այդ է թելադրում քեզ... Ինչո՞ւ ես խօսում սիրոյ մասին, որ երբէք չես զգացել սրտումդ... Գուրգո երբէք չես սիրել... Այսօր դու երևում ես ինձ իբր մի աւազոտ անապատ, ուր ես թաղել եմ ամեն ինչ... Ո՛րքան չոր հոգի... Ո՛չ մի բան... Եւ ոչ նոյն իսկ մի կաթիլ արցունք... Ես ոչ այլ ինչ էի քեզ համար, եթէ ոչ մի ապաստարան, որ հարկաւոր էր քեզ... Եթէ մի վայրկեան, միայն մի վայրկեան...

ՎԱՆՆԱ. Տեսնում ես, Գուրգո, որ այլ ես անկարող եմ խօսել... Նայիր երեսիս... Մարմինս սառնում է, մեռնում եմ, Գուրգո...

ԳՈՒԻԴՈ. Բուռն շարժումով գրկելով նրան:

Եկ իմ գիրկս, Վաննա... Այստեղ դու կը կենդանանաս...

ՎԱՆՆԱ. Յետ քաշուելով ու ձգուելով:

Ոչ, ոչ, ոչ, Գուրգո... Ես գիտեմ... Ես չեմ կարող ասել... Ամբողջ ոյժս կը չքանայ, եթէ մի հատիկ խօսք արտասանեմ... Ես չեմ կարող... Ես ուզում եմ... Ես մտածել եմ, ես գիտեմ, ես սիրում եմ քեզ, ես երախտապարտ եմ քեզ ամեն բանում... Գուրգէ դարչելի եմ ես... Բայց եւ այնպէս կերթամ, կերթամ, կերթամ...

ԳՈՒԻԴՈ. դէն հրելով նրան:

Շատ լաւ, գնա, գնա, հեռացիր այստեղից, գնա այնտեղ, ես տալիս եմ ամեն ինչ, գնա այնտեղ, ես ձեռք եմ քաշում քեզանից...

ՎԱՆՆԱ. Բռնելով նրա ձեռներէից:

Գուրգո...

ԳՈՒԻԴՈ. դէն հրելով նրան:

Օ՛ր, մի բռնիր ինձ քո տաք ու մեղկ ձեռքերով... Հայրս իրաւունք ունէր. նա աւելի լաւ էր ճանաչում քեզ... Ահաւասիկ, հայր իմ... Սա ձեր գործն է, հայր իմ... Աւարտեցէք ուրեմն ձեր գործը, հասցրէք մինչև վերջը... Տարէք սրան թըշնամու վրանը... Ես կը մնամ այստեղ. ես կը նայեմ, թէ ինչպէս էք գնում դուք... Բայց չը կարծէք, թէ ես էլ բաժին կուզեմ այն հաց ու մսից, որի գինը սա գնում է վճարելու... Մի բան է միայն մնում ինձ, եւ դուք չուտով կիմանաք...

ՎԱՆՆԱ. Պիղդ բռնում է նրան: Նայիր ինձ, Գուրգո... Մի ծածկիր աչքերդ... Միակ սպառնալիքն է այդ... Նայիր... Ես ուզում եմ տեսնել...

ԳՈՒԻԴՕ. Եայելով նրան ու աւելի եւս սառը կերպով դէն հրելով իրանից:

Նայիր... հեռացիր ինձնից, այսուհետեւ չեմ ճանաչում քեզ այլ հա... Շտապիր, քիչ ժամանակ է մնում, նա սպասում է այնտեղ, մոռթն ընկնում է արդէն... Մի վախենալ, երկիւղ մի կրիւ... Միթէ այսպիսի աչքեր կունենայ այն մարդը, որ պատրաստուում է յնորամիտ բան անել... Ո՞վ է գլուխը մահացնում այնպիսի սիրոյ համար, որ չքանում է արդէն... Միմիայն սիրած ժամանակն է մարդուս խելքը յնորում... Իմ խելքս կազդուրուեց... Ես տեսայ քո սէրը մինչեւ խորքը, սէրդ և պարկեշտութիւնդ... Ես ոչինչ չունեմ այլ հա ասելու... Ոչ, ոչ, բաց թող մատներդ... Նրանք չեն կարող պահել չքացող սէրը... Վերջացաւ ամեն ինչ, բոլորովին վերջացաւ... Ոչ մի հետք չի մնում այլ հա... Ամբողջ անցեալը խորտակուեց և ապագան նրա հետ... Ահ, այո, այդ փոքրիկ մատները, այդ վճիտ աչքերը և այդ շրթունքները... Կար ժամանակ, երբ ես հաւատում էի նրանց... Ոչինչ չի մնում ինձ այլ հա... (Յե՛տ մղելով իրար յե՛տեւից Վաննայի աջ ու ձախ ձեռքը): Ոչինչ, ոչինչ այլ հա, աւելի քիչ, քան ոչինչ... Մնաս բարեւ, Վաննա, զնա, զնա... Գնում ես այնտեղ...

ՎԱՆՆԱ. Այո...

ԳՈՒԻԴՕ. Չե՛ս վերադառնալ...

ՎԱՆՆԱ. Կը վերադառնամ...

ԳՈՒԻԴՕ. Կը տեսնենք... Շատ լաւ, շատ լաւ... Կը տեսնենք... Ո՞վ կարող էր ասել, որ հայրս աւելի լաւ էր ճանաչում սրան, քան ես... (Օրօրում է ու բռնում մարմարէ սիւնեքից վեկից: Վաննան միայնակ դուրս է գալիս դահլիճից, առանց նրան նայելու):

(Առաջին գործողութեան վերջը):

Պրանս. Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

29) Полный русско-армянский словарь.—Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն. կազմեց Յ. Դադրաշեան, Պրակ առաջին և երկրորդ, Քիֆ-լիս, 1902.

Քանի որ ռուսաց լեզուն հետզհետէ աւելի մուտք է գործում մեր կեանքի մէջ. քանի որ ռուսաց մատենագրութիւնն ու մամուլը առաջին, զրեթէ միակ միջոցն են դառնում մեր մտաւոր հորիզոնն ընդարձակելու, լայն աշխարհի հետ ծանօթանալու՝ այնքան էլ անհրաժեշտ պահանջ է դառնում ռուսերէն-հայերէն ընդարձակ բառարանը։ Եղած բառարանները, (Ներիցիփեանի, Աբիս. Յովհաննիսեանի, չը խօսելով աւելի անըջան բառգրքոյիների մասին), բաւարարութիւն չէին տալիս այս պահանջին, որովհետև չափազանց հնայած, համառօտ և սխալաշատ էին։ Բայց ինչպէս որ սոված մարդը, ցորենի հաց չը գտնելով, յակամայից ուտում է զանազան անպէտք ու վնասակար խառնուրդներ, այնպէս էլ ռուսահայ ժողովուրդը, ռուս-հայերէն բառարանի սովից ստիպուած, կուլ տուեց և սպառեց այդ երկու բառարաններն էլ, և այսօր զրավաճառների մօտ չը կայ և ոչ մի օրինակ ռուս-հայերէն բառարանի։

Ուրեմն շատ յարմար միջոցին է լոյս տեսնում պ. Դադրաշեանի այս նոր բառարանը և մեծ օգնողակութիւն կարող է լինել ռուսերէնով պարապողներին՝ եթէ միայն իր կոչման բարձրութեան վրայ է գտնուած։

Արդ՝ որ աստիճան այս նոր հրատարակութիւնը բաւարարութիւն է տալիս այն պահանջին, որ իրաւունք ունինք անելու հայ-ռուսերէն բառարանից. լաւ, գոնէ զոհացուցիչ բառարան է, թէ ոչ։

Այս հարցերին զփուար է միանգամից վճռական պատաս-

խան տալ. որովհետև պ. Դաղբաշեանի բառարանը մի քանի կողմերով՝ գոհացուցիչ, նոյն-խակ լաւ է, իսկ մի քանի կողմերով ոչ-գոհացուցիչ, մինչև-իսկ թոյլ է: Եթէ համեմատելու լինինք այս բառարանը իր նախորդների, Երիցփոխանի և Ա. Յովհաննիսեանի բառարանների հետ՝ սա նրանցից բարձր է, այն էլ մի քանի աստիճան բարձր. նրանք խիստ պակասաւոր գործեր են եղել, բացասական յատկութիւններով լիքը. այն-ինչ սա անպայման ունի մի քանի դրական կողմեր, իսկ պակասութիւններն էլ այն աստիճան խոշոր չեն՝ ինչպէս նրանց մէջ: Բայց այս համեմատութիւնից շուտափոյթ կգրականութիւն հանելը սխալ կը լինէր: Ծիշտ հայկական կազմելու համար՝ պէտք է այսպէս դնել հարցը: Արդեօք պ. Դաղբաշեանի բառարանը ունի այն կատարելութիւնը՝ ինչ որ կարելի է սպասել ուսուցիչ և հայերէն լեզուի զարգացման ներկայ աստիճանում, այժմ գոյութիւն ունեցող լեզուարանական և բառարանագրական օժանդակ միջոցների օգնութեամբ: Այս հարցին դժբախտաբար պէտք է տանք բացասական պատասխան:

Բայց զառնանք փաստերով խօսելու:

Ռուս-հայերէն բառարանում զետեղուած ու բացատրուած ամեն մի բառը, ուրեմն և յաւելուած բառարանը, կարելի է բաժանել երկու մասի, այսինքն բոսերէնի և հայերէնի: Ռուսերէնի մասում մտել են՝ բացատրուելիք բառը, նրա քերականական ձևերը (ինչ մասն բանի, ինչ սեռի, ձևի են լինելը, հոլովումը, խոնարհումը). բառի գլխաւոր և երկրորդական նշանակութիւնները, փոխաբերական առումները, յատուկ ոճեր՝ որոնց մէջ մտնում է այդ բառը, օրինակներ՝ որոնք ապացուցանում են բառի այս կամ այն նշանակութիւնը. ցուցումներ՝ թէ այս-ինչ բառը հին է կամ դաւառական, կամ գործ է ածւում այս-ինչ մասնագիտութեան մէջ: Գիտական բառերի մօտ՝ աւելայրած է նաև նրանց լատիներէն տեխնիկական կոչումը. իսկ օտար ծագում ունեցող բառերի մօտ՝ նաև ցոյց է տրուած, թէ ինչ լեզուի բառեր են:

Այս մասը՝ նոր բառարանի յաջողուած մասն է: Թէպէտ հեղինակը զլացել է գրքին առաջաբան դնել, որի մէջ ցոյց պէտք է տար, թէ ինչ օժանդակ աղբիւրների է հետևել և ինչ ծաւալով (—մի բան՝ որ անհրաժեշտ էր—), բայց յայտնի է, և լոկ համեմատութիւնից էլ երևում է, որ հեղինակը իրան առաջնորդ է ընտրել գլխաւորապէս Ռուսաց Ակադեմիայի բառարանը, որ դեռ 11 տարի առաջ սկսուել է հրատարակուել, բայց դեռ շատ հեռու է աւարտուելուց: Պ. Դաղբաշեանը հետևելով այս ակադեմիական աշխատութեան՝ մի կողմից ազատուել է

ռուսներէն բառեր ու ոճեր վնասուելու ծանրութիւնից և միւս կողմից աղատուել է սխալներից ու թերութիւններից, այնպէս որ հնչող ճանապարհով նա ապահովել է իր գրքի կէս մասի յաջողութիւնը: Եւ յիշուի, ընթերցողը ամենայն վստահութեամբ կարող է զիմել բառարանի այս մասին, ուր կը գտնէ շատ օգտակար, բաւական մանրամասն, և որ գլխաւորն է՝ համարեւան անսխալ ցուցումներ որնէ ռուսներէն բառի ուղղագրութեան, շնչատաղրութեան, քերականական ձևերի ևն մասին:

Այս ռուսներէն մասի վերաբերութեամբ թոյլ ենք տալիս մեզ մի քանի նկատողութիւններ անել: Մենք չենք խօսի այն մասին, որ մի քանի տասնեակ բառ գուցէ պակասուած է բառաշարքերում, այս պակասութիւնը անխուսափելի է և պատահում է նոյն-իսկ Լիտւէի, Փրանսիական Ակադեմիայի բառարանների նման աշխարհահռչակ գործերում: Այս պակասները երևի գրքի տպագրութեան վերջում մասամբ կը լրացնուին: Մեր խօսքը վերաբերում է ռուսներէն մասը կազմելու տեխնիկական կողմին:

Հեղինակը, ինչպէս երևում է, պարզ կերպով չէ հասկացել, թէ ինչ տարբերութիւն կայ և պէտք է լինի մի ակադեմիական և մի թարգմանական՝ թէկուզ լիակատար բառարանի մէջ: Ակադեմիական բառարանը պարտաւոր է իր մէջ ամբարել լեզուի բոլոր բառամիջերը, լինին նրանք հին թէ նոր, գրական թէ գաւառական, ընտիր թէ գոեհիկ, պատշաճ թէ անպատշաճ: Իսկ թարգմանական, նոյն-իսկ լիակատար բառարանի հեղինակը պարտաւոր է ընտրութիւն անել. ինչ որ բոլորովին հնացած է, ինչ որ մի յետ ընկած գաւառում միայն գործածական է, ինչ որ գրական վայելչութեան դէմ մեղանշում է՝ չը պէտք է զետեղուեն այսպիսի բառարանում: Այսպէս՝ այս բառարանում աւելորդ էին бранида, гоить, гуня և սրանց նման բազմաթիւ հնացած բառեր, որոնք ոչ մատենագրութեան մէջ ևն պատահում և ոչ կենդանի խօսակցութեան մէջ: Աւելորդ էին այնպիսի գաւառաբանութիւնները՝ ինչպէս «Варовина... 4. վնասակ. նախ. կօշիկների կարելու համար ոլորած և ձիւթած (կպրած) թել».— «Барабанная шкура դատարկ, փուչ, յիմար կինարմատ (նախատական խօսք փոքր միութիւնում)».— «Богатство... 3 (Ալիտակ ծովի ափի բնակիչների լեզուով) ծովի վրայ ձեռք բերուած աւարը»: Աւելորդ էին մանաւանդ այն պատճառով, որ այդ նշանակութիւնները ըստ ինքեան հասկանալի են այդ բառերի նախընթաց բացատրութիւններից: Անհրաժեշտ էր բառարանից դուրս ձգել՝ մաքուր հասարակութեան և գրականութեան մէջ քնաւ չը գործածուող այնպիսի անպարկեշտ ու անվայել բա-

ուր, որոնք զետեղուած են բառարանի 52 ա, 67 բ երեսներում:

Ամեն մի բառ այս բառարանում նոր պարբերութեամբ չէ սկսուած. այլ մի շարք բառեր, որոնք միննոյն արմատից են ծագում՝ մի պարբերութիւն են կազմում. և այս զէպքում պարբերութեան սկզբում դրուած առաջին բառի մի մասը երկու ուղղահայեաց գծերով անջատուած է միւս մասից. յաջորդ բառերը չեն գրուած ամբողջապէս. այլ նրանց առաջին մասի փոխանակ (որ համապատասխանում է առաջին բառի մէջ ուղղահայեաց գծերով բաժանուած մասին) գրուած է մի գծիկ: Օր. եր. 67. Дѡбава;—бавить;—бавленіе;—бавливать;—бавокъ են, փոխանակ գրելու Добава; Добавить; Добавленіе; Добавливать; Добавокъ են: Այս կրճատման նպատակն է տեղի ու ծախսի խնայողութիւն: Այսպիսի կրճատում սովորաբար անում են գերմանական բառարանները, գերմանական յատուկ խնայասիրութեամբ. բայց գործածութիւնը սրանով բաւական զգուշարանում է: Ֆրանսիական բառարանները, որոնք առհասարակ յայտնի են իշանց յարմարութեամբ՝ այսպիսի խնայողութիւն չեն անում. (որչափ մենք ենք տեսել ֆրանսերէն բառարաններ՝ ոչ մէկում չը կայ այս): Ռուսաց ակադեմիական բառարանն էլ ոչ միայն չունի այս կրճատումը, այլ և բառի ամեն մի նշանակութիւնը առանձին տողից է սկսում, որ շատ հեշտայնում է պարագլը նրանով: Բայց ռուս-հայերէն բառարանում աւելի ևս անյարմար էր այսպիսի կրճատում, ի նկատի ունենալով հայ ընթերցողի մտաւոր զարգացման ու գրավարժութեան համեմատաբար ստոր աստիճանը: Շատերը այս բառարանը գործածողներին անշուշտ շփուել են և պիտի շփուին՝ որեւէ բառ փնտռելով ու չը գտնելով, յետոյ պարբերութեան այս և այն տողում փնտռելով իրանց պէտքական բառը, որի գլուխը կըտրուած, պարբերութեան սկիզբն է գրած, իսկ մարմինը 5—10 և աւելի տող յետոյ: Խիստ մեծ անյարմարութիւն է այս և բառարանի տեխնիկական պակասութիւններից ամենախոշորը:

Բայց այս զոհողութիւնն անելուց յետոյ՝ անհասկանալի է մնում, թէ ինչ սիստեմով է բառը անջատուած երկու մասերի. ոչ միննոյն խմբի բառերի մէջ անփոփոխ կրկնուող անգամն է անջատուած և ոչ բառի լեզուաբանական արմատը, ոչ էլ բառի չեշտը այստեղ գեր է կատարում.—տիրում է մի անհասկանալի կարգ, կամ աւելի ճիշտ կը լինէր տեսլ՝ անկարգութիւն: Օր., ինչո՞ւ վերը բերուած բառը բաժանուած է Дѡбава են, և ոչ թէ Доба|ва, Доба|вленіе... կամ գոնէ Доба|ва, Доба|вленіе:

Ի՞նչ խորհուրդ կար բաժանել Би|нтикъ,—нтованіе;—нтовоѣ և այլն, և ոչ Бинт|икъ;—ованіе և այլն, (կամ գոնէ Бинт|икъ...)

Ասացինք, որ ոռւերէնի մասում օտարազգի բառերի մօտ նշանակուած է, թէ որ լեզուի բառեր են: (Օր. Ботинка (Ֆր.); Вesperъ (լո.) և այլն): Բայց այս սովորութիւնը միշտ պահուած չէ, և յաճախ պատահում են բառեր, որոնք թէպէտ օտարազգի են, բայց այս բանը չէ նշանակուած: Այսպէս, օրինակ, Баядера, Браконьеръ, Веттиверъ և այլն: Պէտք էր հետեւողական լինել. այլապէս բառարանը գործածողը մոլորութեան մէջ կ'ընկնի, կարծելով թէ վերոյիշեալ և ուրիշ շատ բառեր զուտ ոռւերէն են: Բառերի օտարազգի ծագում նշանակելիս էլ պէտք էր աւելի ճիշտ լինել: Զարմանքով տեսանք, որ Акклиматизація բառի մօտ նշանակուած է «գերմաներէն»: Գուցէ այս բառի մէջ գերմանական լինի միայն из վանկը. սակայն клима(т) արմատը յունարէն է, ак(=ad) և тия(=tio) լատինական մասնիկներ են, և ամբողջ բառը, շատ մանր հնչիւնական տարբերութիւններով, գործ է ածուած բոլոր ևւրոպական լեզուներում: Ուրեմն բանասիրական տեսակէտից իրաւունք չը կայ նրան մկրտելու իբրեւ «գերմանական» բառ: Նոյնպէս սխալ է Амфора կոչել լատիներէն. սրա մէջ լատիներէն է միայն а վերջաւորութիւնը. իսկ բուն բառը յունարէն է:

Դառնանք բառարանի երկրորդ, այն է հայերէն մասին: Եթէ առաջին մասում հեղինակը, առանց զուտից հաւանելու, հետեւել է մի վստահելի առաջնորդի և նրանից արտադրել է ոռւերէն բառեր, օրինակներ և այլն՝ այս երկրորդ մասում նա արդէն պէտք է աւելի ինքնուրոյն լինի. նա իւրաքանչիւր ոռւերէն բառի, դարձուածքի, օրինակի դէմ պէտք է կարողանայ գտնել և զննել ճիշտ և համապատասխան հայերէնը: Այս հայերէնի համար պատրաստ շտեմարան չը կայ, մասամբ հեղինակը պէտք է օգտուի իր սեփական գիտցածով, մասամբ պէտք է փնտռէ ուրիշ բառարանների մէջ, մասամբ մատենագրութեան մէջ, մասամբ ժողովրդի բերանում, մասամբ էլ պէտք է նորից կազմէ: Բոլոր դէպքերում էլ հարկաւոր է ընդհանուր գիտական-լեզուաբանական և տրամաբանական հմտութիւն՝ գործ ածուելիք բառի ճշտութիւնը և ոռւերէնին համապատասխանութիւնը որոշելու համար, և գեղարուեստական ճաշակ՝ զեղելիք, դիւրահնչիւն, գործնականը ընտրելու համար:

Այս դժուար, պատասխանատու գործը պ. Դաղբաշեանը չէ կարողացել բաւարար կերպով կատարել, և այս պատճառով նրա բառարանի հայերէն, միակ ինքնուրոյն, մասը, ոռւերէնի համեմատութեամբ, թոյլ է, իսկ բացարձակօրէն՝ շատ թոյլ:

Այս մասում պատահում են բազմատեսակ թերութիւններ, սկսած սարքական տառասխաւներից մինչեւ փիլիսոփայական ներքութիւնների մէջ պատահող անճշտութիւններ ու կոպիտ սխալներ:

Մի քանի յօդուածների բաժանէնք և համառօտ քննենք այս թերութիւնները:

Թերութիւններ առանձին բառերի մէջ: 1. Տառասխաւներ: Տառասխաւներ ասելով չենք ուղղում հասկանալ տպարանական վրիպակները, թէպէտ սրանցից էլ բաւականաչափ կայ այս բառարանում. այլ հասկանում ենք բուն հեղինակի սխալները, որոնք առաջ են եկել կամ սխալ հասկացողութիւնից, կամ ուղղակի հայերէնի տղիաութիւնից: Այսպէս են, օր. ներքոյական (միշտ, փոխ. ներգոյական)¹, ամենախոնարհ, ամենակարող և այլն (միշտ, փոխ. ամենախոնարհ, ամենակարող...) ², սանդուխտ (մի քանի անգամ եր. 96ա, փոխ. սանդուխ, կամ սանդուխք) ³, աւիլ (եր. 147բ, 196ա. փոխ. աւել), հրահանք (197բ, փոխ. հրահանգ), գրեթէ (151ա, փոխ. գրեթէ), ժպիմ (5բ, 84բ, փոխ. ժպիմ), զեղջ (1բ, փոխ. զեղչ) ⁴, կտրիճ ատամ (52բ, փոխ. կտրիչ), յանկերգ (27բ, փոխ. յանգերգ), գերեզմանոց (64ա, փոխ. գերեզմանոց), պղպնակ (131ա, փոխ. պղպղակ), խոչնդոտ (68բ. փոխ. խոչընդոտ), Աթենք, Ապոլոն (Атенеи և Атрибутъ բառերում, փոխ. Աթէնք, Ապոլոն) և այլն:

2. Անհարազատ եւ սխալ ձեւեր: Վեր դատկիլ (147բ, մի քանի անգամ, փոխ. դատկիլ), կայսրազն (26բ, փոխ. կայսերազն), սայթքուն, սայթքել (64բ... մի քանի անգամ, փոխ. սայթաբուն, սայթաքել), յարդում (65բ, փոխ. հարթում?), յղիութիւն, յղիանալ (50բ, փոխ. յղութիւն, յղանալ), զարնանացնել (105բ, ?), քծնուիլ, լինիլ, ընկնիլ (միշտ, փոխ. քծնել, լինել, ընկնել) և այլն:

¹ Հեղինակը սխալ ստուգաբանութիւն է արել, կարծելով թէ լատր առաջ է գալիս ներքոյ բառից, աչն-ինչ նա ծագում է զոյ արմատից, ներ+զոյ+ական:

² Հեղինակը երեի մոլորուել է թիւրքահայոց գործածած ամէն ձեւից, որ նախ մեր մէջ ընդունուած չէ. երկրորդ՝ դա ուրիշ բառ է, իսկ բարդութիւնների մէջ մտնող ամեն-ը ուրիշ բառ, երրորդ, որ բարդութեան մէջ յամենայն դէպս և պէտք է ստացուի, որ և թէ՛ զրաբարի և թէ՛ աշխարհաբարի մէջ անպալման ընդունուած ձեւն է:

³ Հեղինակը, ուրիշ համբակների նման, սանդուխը շփոթում է Սանդուխտ իդական անուան հետ:

⁴ Զեղջ՝ զղջալ բալի արմատն է (անզեղջ մեղաւոր). զեղջ՝ բոլորովին ուրիշ արմատ է: Դժբախտաբար շատերը մեղանում անում են միևնոյն սխալը:

3. Օսարնի եւ անհասկանալի բառեր. Արանքոհնակ, արանքոհնակաւոր (? , 29բ, 5 անգամ), հեց (որ մի անգամ գործ է ածուած՝ անուի չրջանակի նշանակութեամբ և մի անգամ՝ դուգայի նշանակութեամբ). քաղցրիտ օշանակ ? (214, որ նշանակում է... գլիցերինի սապոն). ողորենու արեթէնի ? (Бере-СТОВИКЪ). ծուր, յամրուակը ? (АѢ) և այլն: Առհասարակ նկատուում է, որ պ. Դաղբաշեանը ի չարն է գործ դնում զբարար և նոր շինուած բառերը, զբարար ձևեր և այլն, որոնցից կարելի էր շատ անգամ խոյս տալ: Օր. նա գործ է ածում. «այն գիծը, ցոր միայն»... (95ա), «ի գետեղրի» (95բ), ապաւանդակ (95ա) և այլն:

4. Գոեհկաբանութիւն, օսարաբանութիւն: Պ. Դաղբաշեանը կամեցել է կենդանի ժողովրդական լեզուից բառեր վերցնել իր բառարանի համար: Միտքը գովելի է, բայց զժբախտաբար շատ անգամ բացակայում է ճաշակ և լեզուաբանական հոտառութիւն, որոշելու համար, թէ ինչ բառ կարելի և հարկաւոր է վերցնել, և ինչ բառ՝ չէ կարելի: Ուստի յաճախ հանդիպում ենք նրա բառարանում այնպիսի գոեհիկ և օտար բառերի, որոնց չէ կարող դիմանալ նուրբ ճաշակը, և այն՝ երբ ամենեւին պէտք չը կար այդպիսի ծայրայեղ միջոցի դիմելու: Օրինակ, միայն 184 երեսում պատահում ենք այս գոեհկաբանութիւններին. — Ուլմաղալ բարձրացնել, ֆօբակ, ֆօբախել. բօյու ամբողջ երկարութեամբ գետին փռուել: Ինչո՞ւ պակաս կը լինէր, եթէ ասէինք աղմուկ բարձրացնել, ծեծ, ծեծել կամ քակել, ամբողջ հասակով գետին փռուել: Ի՞նչ կարիք կայ գործածել «ոռւս եկեղեցու ուսկօլի մի ճիւղը (2բ.), երբ հեթո՞ւած բառը թէ՛ ծագումով և թէ՛ պատմական նշանակութեամբ ճիշտ համապատասխանում է ոռւսերէն расколъ բառին:

Տեսնում ենք ուրեմն, որ պ. Դաղբաշեանը բաւական ուժեղ չէ հայերէնի ուղղագրութեան մէջ. բառերի ընտրութեան մէջ չունի հարկաւոր ճաշակը, այլ ծայրայեղութեան մէջ է ընկնում՝ աւելորդ տեղը զբարար բառերի և դարձուածքների հետ գործածելով գոեհկաբանութիւններ և օտար բառեր: Սրանով նրա հայերէնը մի անհարթ, խայտաբղէտ կերպարանք է ստանում:

Այս թերութիւնների հետ սակայն, որչափ էլ ցաւալի լինին՝ կարելի էր հաշտուել, եթէ հայերէն մասը լիովին բաւականութիւն տար այն պահանջներին, որոնցով ընթերցողը դիմում է բառարանին:

Երկու դէպք կայ, երբ ընթերցողը կարիք է զգում դիմելու բառարանի թարգմանական (հայերէն) մասին. նախ՝ երբ նա մի ոռւսերէն բառի նշանակութիւնը չը գիտէ, և բառարանին

դիմում է, որպէս զի նրա միջոցով հասկանայ իրան անծանօթ բառը, և երկրորդ՝ երբ նա ուսերէն բառի նշանակութիւնը հասկանում է, բայց չը գիտէ, թէ զրան հայերէն ինչ են ասում, ուստի դիմում է բառարանին, որպէսզի մի համապատասխան բառ գտնէ: (Երկրորդ դէպքը գլխաւորապէս տեղի է ունենում ուսերէնից հայերէն թարգմանելու ժամանակ): Կատարեալ բառարանները (մեր խօսքը, ի հարկէ, երկլեզուական բառարանների մասին է) այս երկու տեսակ պահանջներին էլ բաւարարութիւն են տալիս նրանով, որ օտարազգի բառից յետոյ նախ դնում են նրա մանրամասն ճիշտ բացատրութիւնը և ապա դնում են մի կամ երկու թարգմանական բառ: (Սրանք՝ բացարարական բառարաններն են): Բայց շատ բառարաններ բացատրական մասը չեն ունենում. նրանք բաւականանում են օտարազգի, անծանօթ բառի դէմ դնելով նրան համապատասխանող բառը մայրենի լեզուով, ևնթադրելով որ այս վերջինը ըստ ինքեան ծանօթ և հասկանալի պէտք է լինի ընթերցողին (Սրանք՝ համառօտ, թարգմանական բառարաններն են): Բայց երկու տեսակի բառարաններից էլ պահանջում է, որ օտարազգի որևէ բառի դէմ դնեն համապատասխան թարգմանական բառ միւս՝ թարգմանական լեզուով:

Արդ՝ ինչպիսի բառարան է պ. Դաղբաշեանինը:—Նա ոչ զուտ բացատրական է, ոչ լոկ թարգմանական, այլ երկուսի մի խառնուրդ է: Այս բառարանում ընթերցողը կը գտնէ բառեր՝ որոնց մօտ զրուած է բացատրութիւն և սրա հետ թարգմանական բառ:—Շատ լաւ: Կը գտնէ բառեր՝ որոնց մօտ բացատրութիւն չը կայ, այլ կայ միայն թարգմանական բառ:—Ընդունելի: Կը գտնէ վերջապէս բառեր՝ որոնց մօտ զրուած է միայն բացատրութիւն, իսկ թարգմանական բառ չը կայ:—Այս արդէն վատ է: Իսկ երբ ի նկատ ենք առնում, որ այս անհետեղութիւնը ոչ թէ առաջ է գալիս որոշ գիտական սիստեմից, ոչ թէ ընթերցողի յարմարութիւնն ու դիւրութիւնն ունի աչքի առաջ, այլ հետեանք է կամայականութեան և ասլիկարութեան՝ ցաւօք սրտի պէտք է խոստովանենք, որ այս զրուութիւնը շատ վատ է: Այս պատճառով այս բառարանը գործածողը յաճախ հիասթափուած ու զայրացած դէն պէտք է նետէ նրան՝ երբ նրա մէջ չէ գտնում իրան պէտք եղածը: Բանանք, օր., մի քանի բառեր.

Ай а. կնդ. *Bradypus tridactylus*, այլ, ծովը, յամրուակը:
Аржанецъ а. բս. *Phleum*. փղէոն գալտաց:

Брюква ի. բս. *Brassica campestris*,... գոնգիկ, կոլդա:
Вохра ի. հնք. *Ocre*. դեղնգեղ:

Սեպտեմբեր, 1902.

Гидратъ ա. (յն.) քիմ. ջրատու,

Եթէ բառարանին գիմողը վերոյիշեալ բառերէն բառերը չը գիտէ, կարող է նրանց գիմաց գրուած հայերէն բառերից հասկանալ նրանց նշանակութիւնը: Համառոտագրութեամբ գրուած կնդ. բա. են բառերից կը հասկանայ այսքան, թէ առաջինը ինչ-որ կենդանի է, երկրորդը և երրորդը՝ ինչ-որ բոյսեր են, չորրորդը՝ հանքաքանական և վերջինը քիմիական ինչ-որ նիւթեր են—բայց սա քիչ մխիթարութիւն է: Բացատրական մէթօդին հետեւող հեղինակը պարտաւոր էր այս և սրանց նման բազմաթիւ բառերի մօտ նախ համառոտ բացատրել իւրաքանչիւրի գլխաւոր յատկութիւնները—այսինքն՝ գիտական դասաւորութիւնը, նկարագրութիւնը, ինչ բանի գործածութիւնը և այլն, և ապա զնէր թարգմանական բառը: Եւ սա հեշտ կարելի կը լինէր անել՝ եթէ հեղինակը գիմած լինէր մի քանի մասնագէտների անկեղծութեան, կամ գոնէ ամբողջապէս հետեւէր Ակադեմիական բառարանին, որ այսպիսի գէտքերում զնուած է բացատրութիւններ: Էլ չենք խօսում աւելի մանրամասն աղբիւրների մասին:

Սրա հակառակ՝ պատահում ենք բազմաթիւ բառերի, որոնց մօտ բացատրութիւններ գրուած են, բայց թարգմանական բառեր չը կան: Օր.

АПСИДА ի. ասողը. այն երկու միմեանց հակադիր կէտերից իւրաքանչիւրը (ինչ կոկ հայերէն), որոնք որոշում են և այլն (9 տող):

ГНОМЪ (ֆր.) երեակայական ստորերկրեայ ոգիներ, որոնք պահպանում են ստորերկրեայ գանձերը, լեռնային հարստութիւնները:

Եւ այսպիսի հարիւրաւոր բառեր ի՞նչ անէ թարգմանիչը, երբ այս բառերին համապատասխանող որեւէ հայերէն բառ է վնասոռւմ: Նա բառերի նշանակութիւնը գիտէ, բայց հայերէն բառ չը գիտէ. լիայոյս գիմում է նա բառարանին, իսկ սա՝ ձկան տեղ օձ է առաջարկում, և նա յուսախաբուած՝ զայրոյթով դէն պէտք է չպոտէ բառարանը, ձեռներով ձակատը չօշափէ և ուրիշ աղբիւրների գիմէ:

Գուցէ մտածէ ընթերցողը, թէ հեղինակին չէ կարելի միշտ մեղադրել. եթէ չկայ հայերէն բառ՝ նա ի՞նչ անէ: Սա սխալ միտք է. ով իրան բաւական ձեռնհաս է համարում լիակատար բառարան կազմելու՝ նա պարտաւոր է բառարանի առաջին պայմանին բաւարարութիւն տալ—բառի դէմ բառ դնել: Եթէ հայերէն պատրաստ բառ նա չը գիտէ՝ պէտք է գիմէ մասնագիտական գրքերի, ուրիշ բառարանների, պէտք է խորհրդակցի,

պէտք է մտածէ, աշխատի, պէտք է հնարէ, և... վերջապէս՝ ճարահատակ պէպքում՝ թէկուզ օտարազգի բառը դնէ (ի հարկէ, պատշաճաւոր բացատրութիւնից յետոյ): Նա պարտաւոր է ամբողջ օրեր միջնեցնել, գիշերներ լուսացնել, տասնեակ գրքերի գիմել մի բառի համար. նա պէտք է նախ իր խղճին բաւարարութիւն տայ և երկրորդ՝ իր ապագայ ընթերցողները պահանջին—և ապա թէ ձեռք վերցնէ այդ մի բառից: Այսպէս են վարուել բարեխիղճ հեղինակները: Նորայր Բիւղանդացին, որ կատարեալ հմտութիւն ունի ֆրանսերէնի և հայերէնի մէջ՝ տառն և չորս տարի «Թշուառաքիրտն» աշխատանք է գործ գրել իր փրանսերէն—Հայերէն պատկառելի բառարանի վրայ. հին և նոր ձեռագիրներից հարիւրաւոր անձանթ բառեր է քաղել, բազմաթիւ նոր բառեր հնարել... որպէս զի իր բառարանին դիմողը ձեռնունայն չը մնայ: Հ. Մանուէլ Քաջունին քառասուն տարի «յուսաբակ» աշխատանք է գործ գրել իր երկհատոր Արուստից և Դիտութեանց պեղեցիկ բառգիրքը կազմելու համար, և քանի հազարաւոր գիտական բառեր է նա ձարել, կամ արգէն գոյութիւն ունեցող գրաւոր աղբիւրներից, կամ իրանից հնարել, հետևելով թարգմանելի բառի ստուգաբանութեան կամ նշանակութեան, հարցնելով հեղինակաւոր անձերի խորհուրդները: Իսկ պ. Դադբաշեանը—նա զլացել է նոյն-իսկ այս բառարանների վրայ շարունակ աչք պահել և գոնէ նրանց մէջ պատրաստ եղածը վերցնել: Մեր վերը բերած երկու բառն էլ (ինչպէս և ուրիշ հարիւրաւորները) այս բառարաններում ունին նոր ստեղծուած բաւարար թարգմանական բառեր (Տ. Նորայր, եր. 80 և 603, Քաջ. ա. հար. եր. 9 և 953): Հարկաւոր էր փոքր ինչ աշխատանք՝ այս բառարաններում փնտռելու յիշեալ բառերը և մի փոքր ճաշակ ու զիտութիւն՝ ընտրութիւն անելու համար: Իսկ պ. Դադբաշեանը գործնական մարդ է, ժամանակակից ոգով. նա գիտէ որ մեղանում «հաստ ու բարակ մի գին է, վայ բարակ մանողին»։ Նա գիտէ որ մեղանում ուռւս-հայերէն բառարանի սով է, և հասարակութիւնը կը գնէ թէկուզ ամենավատիւս բառարանը. ուստի նա կարիք չէ զգացել բարակ մանելու, աշխատանք և ժամանակ գործ դնելու: Ինչ տեղ պատրաստ բառ ունի՝ դնում է բացատրութեան հետ, ինչ տեղ չունի՝ բացատրութիւնն է միայն դնում և գլխից ռազ անում: Իսկ թարգմանիչը, նրա բառարանին դիմողը: Պ. Դադբաշեանը սրանց մասին չէ մտածում. թող սրանք էլ իրանց գլխի ձարը տեսնեն: Եթէ մենք մի քիչ երկար կանգ առանք բառարանի այս պոկասաւոր կողմի վրայ և խիստ խօսեցինք՝ պատճառն այն է, որ սա ընդհանուր երևոյթ է կազմում, բառարանի ամենախոշոր

պակասութիւններից մէկն է և առաջ է դալիս ոչ թէ հեղինակի անպատրաստութիւնից, այլ անբարեխղճութիւնից:—Դառնանք առանձին երեսիթներին:

Անյաջող բառեր եւ բացատրութիւններ: Պ. Դաղբաշևան բաւականաչափ ծանօթ չէ հայերէն լեզուի բառական հարստութիւններին. ուստի նա յաճախ արուեստական անյաջող բառեր ու աւելարդ բացատրութիւններ է գործ ածում այն տեղերում՝ երբ գոյութիւն ունին զեղեցիկ և ճիշտ հայերէն բառեր: Օրինակ, Варенецъ նա բացատրում է այսպէս. «եփած, աղա արաժանով բրուեցած կաթից եփնած կերակուր»։ մինչդեռ Варенецъ ոչ այլ ինչ է (զոնէ փոքր Ռուսիայում), և թէ ոչ ամեն մի հայի ծանօթ մածունը ¹⁾։ (Ուրիշ բան է простокваша՝ն)։ —Волкодавъ բառը բացատրուած է. «զայլ կալնող զամփոռ»։ Այն-ինչ ժողովուրդը ասում է «գէլիսեղդ», որ կազմութեամբ էլ լաւ համապատասխանում է ռուսերէնին: Вепрыснутъ (կրկնորդ նշանակութիւնը) բացատրուած է այսպէս. «որն է ուրախութեան առթիւ ինջոյք տալ, ինջոյք սարքել, «մազարիչ» առնել»։ Այս օտարոտի և տգեղ բացատրութեան փոխարէն պէտք էր գործածել գոյութիւն ունեցող հայերէն ժողովրդական զեղեցիկ բառը—«ջուրը քաշել» կամ «ջրել», (զաւառական նախ «ձէթվէթելիք տալ, առնել»)։ այնպէս որ «Надобно его вепрыснутъ» կոկ հայերէն կը լինէր—«պէտք է ջուրը քաշել» (առարկայի մասին), կամ՝ «ջուրը վրան է» (անձի մասին)։ Այս բառը կամ դարձուածքը այն առաւելութիւնն էլ ունի, որ կազմութեամբ էլ համապատասխանում է ռուսերէնին. (вепрыснутъ իսկապէս նշանակում է՝ (հեղուկ) սրսկել, ցայտեցնել)։

Թարգմանական բառերի կոսակութիւն: Մենք քանիցս անգամ, բառարանների մասին խօսելիս, առիթ ենք ունեցել նկատել մի խոշոր պակասութիւն, որին ենթարկուած են բառարան կազմողները (Աբ. Յովհաննիսեան, մանաւանդ Ամբր. Լուսինեան)։ այն է, որ մի օտարազգի բառի դէմ դնում են 5—10 և աւելի հայերէն թարգմանական բառեր: Նրանք կարծում են, թէ այս միջոցով օգուտ են տալիս թարգմանիչներին՝ ընտրութեան ընդարձակ ասպարէզ բանալով նրանց առաջ, կամ որ հայերէնի հարստութիւնն են ցոյց տալիս: Բայց սա սխալ և վնասակար սկզբունք է: Պէտք է տալ օտարազգի բառի նիւս

1) Ակադեմիական բառարանը ճիշտ բացատրութիւն ունի, որ բառացի թարգմանութեամբ նշանակում է. «նստելիք»՝ որ բաղկացած է եփած և աղա արաժանով մակարղած կաթից: Փոքր Ռուսիայում իբրեւ մակարղ գործ են ածում թթուած սերուցը, իսկ մեզանում՝ մածունը: Հետեանքը նոյնն է:

նշանակութիւնը, որ կարող է արտայայտուել մի բառով, առ առաւելն՝ երկուսով: Միւս թարգմանական բառերը, որոնք մօտաւորապէս կամ փոխաբերաբար միայն կարող են յարմարուել այդ օտարազգի բառին՝ ունին ուրիշ՝ ճիշտ համապատասխան բառեր: Երբ մի օտարազգի բառի դէմ զրուում են 5—10 հայերէն բառեր տարբեր բառացի նշանակութիւններով՝ ընթերցողը չի կարողանայ որոշ և ճիշտ հասկացողութիւն կազմել այդ բառի մասին և անշուշտ նրան կը չփոթէ ուրիշ համանիշ բառերի հետ:—Պ. Դաղբաշեանի բառարանն էլ զօրախտաբար ազատ չէ այս թերութիւնից: Ահա հարիւրներից մի քանի օրինակ.

Всеславный ամ. ամենափառաւոր, չնայխարհիկ, չքնադ: Վերջին երկու բառը համապատասխանում են ռուս. неземный прелестный բառերին. նրանք աւելորդ էին Всеславный բառի մօտ:

Веревка ի. թու. պարան, չուան, առասան, ապաւանդակ: Վերջին բառը միանգամայն անտեղի է՝ իբրև հնացած և գործածութիւնից դուրս ընկած բառ: Իսկ միւս չորս բառը միայն Веревка բառի դէմ դնելով՝ լինչ պէտք է դնէ հեղինակը Бичева, Бичевка ¹⁾, канать և այլ բառերի դէմ:

Беременная ամ. յղի կինարմատ, ծննդկան:—Երկրորդ բառը սխալ է, ուրիշ է «յղի» կինը, ուրիշ է «ծննդկանը»:

Ажурный ամ. ծակծկուած, ծակոտկէն, ցանցակերպ, նօսր, թափանցիկ:—Հինգ թարգմանական բառ՝ որոնցից ոչ մինը չէ նշանակում ажурный, և որոնց իւրաքանչիւրը ունի համապատասխան ռուսերէնը—проколотый, пористый, сбитый, рёб-кий, прозрачный: Եթէ պատահինք ռուսերէն, օրինակ, այսպիսի մի խօսքի—серебряный ажурный подсвечник—լինչպէս պէտք է թարգմանենք.—արծաթէ՝ ծակծկուած, ծակոտկէն, ցանցակերպ, նօսր, թափանցիկ աշտանակ²⁾:

Այսպէս նաև Бойкий (7 բառ), Гнусный (8 բառ) Заглох-нуть (10 բառ) և ուրիշ շատերը:

Անհիւս, անորոշ բացատրութիւն՝ լեզուաբանական տեսակէ-տից: Շատ անգամ ռուսերէն բառի դէմ պ. Դաղբաշեանի բառարանում զրուած են հայերէն բառեր՝ որոնք համապատասխանում են ռուսերէնին՝ միայն գործնական տեսակէտից, առօրեայ գործածական մտքով, բայց լեզուագիտական տեսակէտից բոլո-

¹⁾ Այս բառի դէմ էլ զրուել է «բարակ նուրբ թուկ, փուկ, քել»: Մինչդեռ թուկը, որչափ էլ բարակ ու նուրբ լինի՝ թել չէ, իսկ փուկը զանազանում է թուկից իր նիւթով:

րովին չեն համապատասխանում. այնպէս որ ընթերցողը չէ կարող ճիշտ գաղափար կազմել այդ ռուսերէն բառի իսկական բուն նշանակութեան մասին: Օրինակ. Голіаѳъ ա. *խիստ բարձրահասակ ոմն:—Շատ լաւ. բառի սկզբում գրուած աստղանիշից էլ հասկանում ենք, որ դա փոխարկերական նշանակութիւնն է Голіаѳъ բառի. բայց ինչ է այդ բառի իսկական նշանակութիւնը:—Անշուշտ պէտք էր գնել Голіаѳъ ա. Գողիաթ (այն անձոնն էր հական, որին Դաւիթ պարսաքարով սպանեց). *խիստ խոշոր, անձոննի մարդ:

Амѳа ի. (լա.) 1, լոտոյի և վիճակախաղի մէջ միանդամից երկու համարների գուրս գալը. 2, թղթախաղի ժամանակ միմեանց յետիւց երկու անգամ տանելը (բաղատրութիւններ՝ առանց թարգմանական բառերի): Ընդունենք որ Амѳа'ն այդ է նշանակում կեանքի մէջ. բայց նրա իսկական նշանակութիւնն ինչ է:—Հարկաւոր էր նախ, գոնէ փակագծի մէջ, նշանակել (լատիններէն՝ գոյգ), և այն ժամանակ մրջափ պարզ ու հասկանալի կը դառնային այդ բառի գործածական նշանակութիւնները:

Биквадратъ ա. (լա.) մաթեմ. որն է թուի, քանակութեան չորրորդ աստիճանը:—Գործածութեան տեսակէտից ճիշտ է, որ Биквадратъ որն է թուի, քանակութեան չորրորդ աստիճանն է, ինչպէս և ճիշտ է, որ ռուսերէն дважды два՝ հայերէն էլ 4 է: Բայց լեզուաբանական տեսակէտից՝ Биквадратъ նշանակում է կրկնակ քառակուսի, ինչպէս дважды два նշանակում է երկու անգամ երկու:

Бешлыкъ ա. (թուրք.) թրքական արծաթեայ պստիկ դահեկան, դրամ:—Թողնելով այս բաղատրութեան միւս պակասութիւնները՝ հարկաւոր էր նախ և առաջ գնել. (թուրք. հնգնոց) և յետոյ՝ թիւրքական արծաթէ դրամ՝ 5 ղուրուշնոց (այժմեան ոսկի փողով=41 կ.):

Շփոթութիւն հոմանիշ բառերի նշանակութեան: Ամեն մի լեզուի մէջ կան հազարաւոր հոմանիշ բառեր, այսինքն նշանակութեամբ նման, բայց ոչ նոյն բառեր. ինչպէս հայերէն՝ նըշմարել և նկատել, խոնգարել և արգելել, կին և կինարմատ, հին և նախկին և այլն: Նոյնպիսի հոմանիշներ կան մեծ քանակութեամբ և ռուսերէնի մէջ: Հմուտ և բարեխիղճ հեղինակը պարտաւոր է թարգմանական բաղատրութեան և բառերի միջոցով արտայայտել բառի ճիշտ նշանակութիւնն, այնպէս որ հոմանիշի հետ չը շփոթուի: Պ. Դաղբաշեանի բառարանը այս առաւելութիւնից էլ զուրկ է: Ռուսերէն բառերի դէմ առանց խիստ ընտրութեան յախուռն ածուած են հայերէն բառեր, էլ բառերի

խմատի նուրբ զանազանութիւն, բառակազմական, հոգեբանական, պատմական ճշտութիւն դուր է այնտեղ փնտռել: Այս կողմից բառարանը ներկայացնում է մի կոպիտ, անաչ զործ: Ահա մի քանի օրինակներ:

Всемогушественный և Всемогушій բառերի դէմ դրուած են միևնոյն բառերը «ամենակարող, ամենազոր», որ սխալ են թէ կազմութեամբ և թէ գործածական նշանակութեամբ: Всемогушественный բառը գերադրական աստիճան է могушественный (==հզոր) ածականից, ուրեմն և նշանակում է ամենահզոր (== ամենից հզոր). այն-ինչ Всемогушій բառում՝ все բառը սեռի խնդիր է могушій (կարողացող) գերբային, ուրեմն և վերջին բառը նշանակում է ամենակարող (== որ կարէ զամենայն): Գործածութեան տեսակէտից, ուրեմն, հասկանալի է, որ всемогушественный բառը կարելի է գործածել և մարդկանց համար, իսկ всемогушій միայն Աստծու համար, ինչպէս և գործ է ածւում իսկապէս:

Аблакать ոմկ. տ. Адвокатъ Այսինքն, ըստ պ. Դաղրահանի բառարանի՝ ազլօկատը (փաստաբանը) և արլակատը միևնոյն նշանակութիւնն ունին, միայն թէ արլակատ ռամկական բառ է: Բայց՝ ճրջափ սխալ է այս: Արլակատը ժողովրդի ազիտութիւնից ու աղքատութիւնից բուսած մի մակարոյժ է, որ ծծում է նրա արիւն-քրտինքով ձեռք բերած կոպէկները. նա չունի ուսման բարձր ղէնդ և ոչ բարոյական հիմունքներ. նա զատարանների գոնքերը մաշելով՝ սովորել է օրէնքի մի քանի յօդուածներ, նրանցով չլացնում է խեղճ ժողովրդին, դատերի գոնքեր բաց անում, յաճախ խաբում, և այլն: Եւ ասել, թէ արլակատը նոյնն է՝ ինչ որ ազլօկատը:

Вѣроломецъ ա. ուխտադրութ, հաւատադրութ, ուխտազանց, երդմնադանդ:—Вѣроотступникъ ա. հաւատադրութ, ուխտադրութ, ուխտազանց, հաւատուրաց: Երկու բառի մօտ էլ չորսական թարգմանական բառ, որոնցից առաջին երկքը միևնոյնն են, այնպէս որ այս բառարանը գործածողը անշուշտ պէտք է չփոթէ այդ երկու բառի նշանակութիւնը. այն-ինչ նրանց մէջ բաւական մեծ զանազանութիւն կայ: Вѣроломецъ նա է, որ դաւաճանում է իրան ընծայուած հաւատին, վատահութեան, իր ուխտը զոքում է: Սա հայերէն կը լինի ուխտադրութ, երբեմն նաև՝ դաւաճան (== измѣнникъ): Իսկ вѣроотступникъ նա է, որ ուրանում է իր նախկին հաւատը, դաւաճանութիւնը: Սա հայերէն կը լինի հաւատուրաց, ուրացող (օր. Յուլիանոս ուրացող):

Թարգմանական խոսք սխալներ: Այսպիսի գոհարներ էլ

դժբախտաբար պակաս չեն Պ. Դաղբաշեանի բառարանում: Սրանք առաջ են գալիս հեղինակի ընդհանուր զարգացման պակասութիւնից և յատկապէս՝ ուսերէն լեզուին անհմուտ լինելուց: Ահա շատերից մի քանի օրինակներ:

Вариация (Կրրորդ նշանակութիւնը). «Երաժշտական գրութեան մէջ արած (որի արած) փոփոխութիւնը»։—Երևում է, որ հեղինակը ոչինչ հասկացողութիւն այժմ էլ չունի, թէ ինչ է նշանակում երաժշտութեան մէջ վարիացիան, ուստի և այդպիսի հիմնապէս սխալ բացատրութիւն է գրել, որով ընթերցողը պէտք է մոլորուի: Variация կոչւում է որեւէ հիմնական պարզ եղանակի զարդարուն զանազանակերպութիւնը: Ինչպէս բանաստեղծը խօսքի մի հատուած նիւթ է դարձնում ճառի, հոյակապ բանաստեղծութեան, այնպէս էլ երաժիշտը նիւթ վերցնելով որեւէ պարզ, անպաճոյճ (յաճախ՝ ժողովրդական) եղանակ՝ ստեղծագործում է, շատ անգամ աստիճանաբար զարդարելով իր նիւթը, պարզից, մօտաւորից հետզհետէ դէպի բարդն ու հեռաւորը:

Раздѣльный актъ имѣнію (տ. Актъ բառում) բացատրւած է այսպէս. «Կտակագիր, որով ընտանիքի հայրն իւր կալուածքը, կայքը բաժանում է իւր որդիներանց մէջ»։ Ծայրէ ծայր սխալ և բազմաթիւ թիւրիմացութիւնների տեղիք տուող բացատրութիւն: Раздѣльный актъ-ը ոչ կտակագիր է, ոչ նրանով ընտանիքի հայրն է բաժանում, և ոչ անպատճառ «որդիներանց» (==որդոց) մէջ. այլ դա մի թուղթ է, որով որեւէ կալուածի կամ առհասարակ որեւէ գոյքի մասնատէրերը (օր. ժառանգներ, ընկերներ և այլն) իրանց մէջ բաժանում են այդ գոյքը՝ ընդհանուր համաձայնութեամբ: Հայերէն սրան ասում են՝ բաժանման թուղթ, որ թէ բառացի ճիշտ է ուսերէնի հետ և թէ բոլորովին պարզ ու հասկանալի:

Вербы ж. «Ծաղկազարդի չաբաթուայ աճուրդը»։ Այսպիսի աճուրդ միուսաստանում չը կայ: Ռուսաստանում ուրիշ բան կայ. ծաղկազարդի չաբաթուայ ընթացքում քաղաքի մի բանուկ փողոցում առևտրականները սարքում են ժամանակաւոր խանութներ, որտեղ մանր իրեղէններ են ծախում, սկսելով ուռի ճիւղերից (որը կիրակի օրը և կիկեցիներում գործ են ածում փոխանակ արմաւենու և ձիթենու ճիւղերի) մինչև խաղալիքներ, քաղցրեղէններ, զարդարանքներ և այլն. սա մի տօնավաճառ է, որը յաճախում են զլիաւորապէս կանայք իրանց փոքրիկ երեխաներով և զանազան իրեղէններ են առնում, կամ հէնց միայն զբօսնում: Այս տօնավաճառը, առուծախան է, որ պ. Դաղբաշեանի մօտ դարձել է աճուրդ, և ահա թէ ինչպէս:

Ակադեմիական բառարանում *Вербъ* բառի դէմ զրուած է «торгъ на вербной недѣлѣ»: Պ. Դաղբաշեանը որովհետեւ չէ զիայել, թէ ինչ առանձին նշանակութիւն ունի *вербъ* (*верба* = ուռենի բառի յոգնակին), ապաւինել է լոկ այդ բացատրութեան և նրան թարգմանել է. բայց թարսի պէս՝ *торгъ* բառն էլ չէ եղել հասկանալի: Նա կարծել է թէ *торгъ* նշանակում է աճուրդ. մինչդեռ աճուրդ բառի նշանակութեամբ գործ է ածում *торгъ* բառի յոգնակին. (*бытъ на торгахъ, торги начнутся, купить съ торговою*). Իսկ *торгъ* (*торговать* բայի արմատը) հասարակօրէն նշանակում է առետուր: Ակադեմիայի բառարանը կաղմոզ գիտնականներն էլ այս մտքով են գործ ածել այդ բառը վերոյիշեալ տեղում և ամեն մի ուռենիէն հասկացող մարդ միայն այդպէս էլ կը հասկանայ:

Չանց ենք առնում ուրիշ տեսակի թերութիւններ և աւելի օրինակներ բերել: Այսքանն էլ բաւական է՝ հասկացողութիւն կազմելու համար պ. Դաղբաշեանի բառարանի մասին: Պէտք է միայն ասենք, որ մենք չենք կարդացել ամբողջ երկու պրակն էլ, այլ հազիւ մի քառասուն երես, և մեր արած նկատողութիւններէց կէսից էլ քիչն ենք բերել այստեղ և չենք սպառել նկատողութիւնների տեսակները: Եթէ երկու պրակը սխառմաբար քննէինք՝ «Մուրճի» ամբողջ համարը չէր բաւականանայ մեր դիտողութիւններին: Հասկանալի է միւս կողմից, որ ամբողջ գրքոյկները ծայրէ ծայր պակասաւոր չեն. կան բառեր, որոնք բաւարար, նոյն-իսկ լաւ են կազմուած. — սրանք փոքրամասնութիւն են կազմում: Մեծագոյն մասը բառերի՝ ունի նկատողութեան արժանի թերութիւններ, իսկ մի մասն էլ շատ պակասաւոր, սխալ ու դատապարտելի է: Ընդհանրապէս առած՝ այս բառարանը բաւարար չէ: Ներկայ պայմաններում դործին հմուտ և բարեխիղճ մարդը կարող է կազմել ուռենիէն-հայերէն այնպիսի բառարան, որ շատ աւելի բարձր լինի պ. Դաղբաշեանի բառարանից՝ քան որչափ որ սա բարձր է Աբ. Յովհաննիսեանի բառարանից: Եւ ցաւալին էլ հէնց այն է, թէ ինչո՞ւ մենք չը պէտք է ունենանք մի լաւ բառարան, քանի որ կարելի է նրան ունենալ. ինչո՞ւ բառարան կազմելու ձևը են զարկում մեղանում այնպիսի մարդիկ, որոնք դրա համար ոչ անհրաժեշտ պատրաստութիւնն ունին և ոչ բաւական բարեխիղճութիւն: Դատեցէք, ընթերցող. հայերէն գրելիս՝ տառաւորաւոր անել, ուռենիէն կարդացածը չը կարողանալ ճիշտ հասկանալ — և ձևը զարնել լիակատար ուռենիէն-հայերէն բառարան կազմելու: Այսպիսի վերաբերմունք կարող է միայն մեր մէջ

գոյութիւն ունենալ, որտեղ չը կայ մրցութիւն—այս փրկարար սանձը ապիկարների համար:

Մի քանի խօսք էլ դրքի արտաքինի մասին: Տառերը մանր են, տիպը՝ շատ սեղմուած.—այսպէս էլ պէտք է լինի բառաբանում: Բայց թուղթը բարակ է, այնպէս որ երեսները սև են երևում (միւս երեսների թանաքի գոյնի թափանցելուց). թանաքը անպիտան է և մանաւանդ վատ է տպագրութիւնը.—մի երեսը շատ սև տպուած, դիմացի երեսը աղօտ, կան երեսներ, որտեղ հայերէն գրերի վերի կէսը ամենեւին չէ երևում (օր. եր. 7, սիւնակ 2), այնպէս որ «ընտանիքի» բառը կարդացւում է «ըստարբր», «ուսումնական» բառը կարդացւում է «ուսուսազան» և այլն: Շատ երեսներ ուղղակի տպարանի կեղտոտ մակընթացի տպաւորութիւն են գործում: Տպարանական սխալներ բաւական չափ կան—Գինը թանգ չէ:

Յամենայն դէպս, քանի որ այս բառարանը մի քանի քայլ առաջագիմութիւն է ներկայացնում նախորդների համեմատութեամբ, քանի որ ուսեսերէն մասը գոհացուցիչ է և ամբողջը ընդունակ է ուղղագրուելու՝ ցանկանում ենք յաջողութիւն և բարի կտարած: Երբ գիրքը վերջանայ գուցէ նորից առիթ ունենանք խօսելու նրա ամբողջութեան մասին:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

30) ԼԵՆԻՆ. ՄԱՆՈՒԼԻՍՄԱՆ. «Գէպի վեր» (Դրամատիկական պօէմա). 44 եր., գ. 10 կոպ., Ս.-Պետերբուրգ. 1902 թ.

Նորերս այնքան տրագիկաբար մահացած Զօլան պնդում էր մի ժամանակ, թէ վիպասանը պէտք է լսի արձանադրի այն երեւոյթները, որոնք իրապէս տեղի են ունենում կեանքում: Եւ նա գրեց բազմաճառորդ վէպեր, որոնք լուսանկարչօրէն վերարտադրում էին իրական կեանքը այն չափով, որ չափով մարդուս զուխը կարող է նմանուել լուսանկարչական մեքենայի և որ չափով նրա խոչոր տաղանդը տեղի էր տալիս նրա սխալ հայեաղքներին:

Զօլան ունէր նախորդներ, նա ունեցաւ նաև հետեւողներ, և նրա ուսուցիչների քարոզած ու նրա ժողովրդականացրած նատուրալիզմը դարձաւ մի ժամանակ տիրապետող ուղղութիւն եւրոպական գրականութեան մէջ: Սակայն այդ ուղղութեան ազդեցութիւնը սահմանափակուած էր արձակ գրութեանը:

Ոտանաւորը, այդ ինքն ըստ ինքեան անբնական երեւոյթը, չէր հաշուում զօլայականների ընտանաւորութեան հետ, և եթէ ուղիները դանել ոտանաւորներ, որոնք լոկ արձանագրութիւններ լինէին, պէտք է յետ գնանք դէպի սխօլատիկայի տիրապետութեան շրջանը, երբ թուարանութեան դասագրքերն անգամ ոտանաւորով էին գրում:

Պ. Լեւոն Մանուէլեան, ըստ երեւոյթին, ուզում է յարութիւն տալ այդ մեռած սովորութեանը: Նա պատմում է ոտանաւորով իրօք տեղի ունեցած դէպքեր մանոսկրիկա ճշտութեամբ: Նա պօէմայի նիւթ է փնտրում գիտնականի ձգտումի մէջ, որ աւելի գլխից է բղիւմ, քան սրտից: Նա գրամա է տեսնում այնտեղ, ուր չոր կայ կոքերի ընդհարում, բնագոյի թռնութիւն, կամրի մտքառում, ուր զգայմունք կալ միայն հօմէօպաթական չափով, ուր երեւակայութիւնը դժգոյն է և մարդկանց մղում է գիտաւորապէս սառը դատողութիւնը:

Պ. Մանուէլեանի «գրամատիկական պօէմայի» նիւթն է պրօֆէսոր Պարրօտի վերելքը Մասիսի գագաթը, առաձին վերելքը այդ լարի գագաթը, որ անմատչելի էր թւում մինչ այդ մահկանացուների համար:

Ս. Յակոբայ վանահայրը հաւատացած է, որ Պարրօտին չի յաջողի բարձրանալ Մասիսի գլուխը: Նոյն նախապաշարմունքն ունեն նաև Ակոռի գիւղի գեղջուկները, երիտասարդ Խաչատուր Արովեանը աղատ է այդ նախապաշարմունքից: Նա բնկերանում է Պարրօտի խմբին, որ բաղկացած է երկու ուսանողներից ու մի տատղարալից, կատարեալ չինական վէպերի հերոսներից:

Վանահայրը վիճում է Պարրօտի հետ, ասում է, որ չեն կարող բարձրանալ, պատմում է յայտնի աւանդութիւնը Ս. Յակոբի բարձրանալու մասին, վերջնելով այդ աւանդութիւնը փաւստոս Բիւղանդացուի և ոչ թէ ժողովրդի բերանից, որ մի քիչ ուրիշ կերպ է պատմում այդ երեւակայական դէպքը, սակայն ոչ մի ընդհարում տեղի չի ունենում նրանց մէջ: Ընդհակառակը հայր սուրբը մաղթում է. «Տայ Աստուած ձեզ ոյժ և կարողութիւն՝ հոսանել դանկալի ձեր նպատակին»:

Ինչպէս տեսնում էք, այստեղ կայ հայեացքների տարբերութիւն, բայց ոչ ընդհարում, ոչ մաքառում, հետևաբար ոչ մի նշոյլ դրամայի:

Նոյնն է և Արովեանի նկատմամբ: Նրան չեն հալածում, նրան չեն քարկոծում: «Իմ պարտքս էր քեզ «զղուշադնիլ», ասում է վանահայրը, «իսկ մնացածը—դու գիտես, եղբայր»:

Աւելի ևս քիչ դրամատիկական տրամադրութիւն ունեն

գիւղացիները: Նրանք նոյնպէս հաւատալիք են, որ Պարբոտն ու ընկերները չեն կարող բարձրանալ Մասիսի գագաթը, բայց այդ մարդկանց փորձը չի յուղում նրանց. «Մեր ինչ պէտքն է», ասում են նրանք: «Մերն է ստանալ մեր օրավարձը»:

Ինչ վերաբերում է այն մեղմ բերկրութեան, այն սքանչալիքն է, որ զիտնականներն և ուսումնաձարաւ երիտասարդները զգում են Մասիսի գագաթը բարձրանալուց յետոյ, այդ էլ շատ քիչ է բանաստեղծական բան, պօէմա յօրինու համար:

Պէտք է ասել, որ պ. Մանուէլեանի ոտանաւորը սիրուն է ու կոկ:

Տ. Յ.

31) Lily Braun: „Die Frauenfrage; ihre geschichtliche Entwicklung und ihre wirtschaftliche Seite“ Leipzig. «Կանանց հարցը. նրա պատմական զարգացումը և տնտեսական կողմերը», Լիլի Բրաունի:

Առհասարակ շատ է խօսւում, գրւում կանանց ազատագրութեան խնդրի մասին: Սակայն այդ խնդրին նուիրուած բուն քննադատութիւնը վկայում է, որ իսկապէս դեռ շատ աղքատ է կանանց հարցի գիտնական գրականութիւնը: Մինչև 70-ական թուականի վերջերը բնաւ գոյութիւն չեն ունեցել այնպիսի ուսումնասիրութիւններ, որոնք կարողանային պատմական դիտողութիւններով, իրական փաստերով և զուտ գիտնական հիմունքներով ապացուցանել կանանց էմանսիպացիայի բնական անհրաժեշտութիւնը, սլարդաբանել այդ խնդրի գոյութեան և առաջադէմ ընթացքի նշանակութիւնը: Իսկ 70-ական թուականի վերջերից սկսած արդէն, երբ գերմանացի հռչակաւոր գործիչ և նշանաւոր հոետոր Աւգուստ Բէքելը իր տաղանդաւոր գրութեամբ^{*)} ասպարէզ իջաւ, այն ժամանակ միայն հրապարակից անյայտապան բոլոր վերացական ֆրազներն ու մարդասիրական ջերմ ցանկութիւնները և «կանանց հարց» ասածը իր ամբողջութեամբ ստացաւ գիտնական որոշ բանաձև: Բէքելի աշխատութիւնը իր ժամանակին մեծ իրաբանցում, պայքար առաջացրեց պահպանողական բանակի մէջ. կարճ միջոցում նրա գիրքը թարգմանուեց եւրոպական բոլոր յայտնի լեզուներով:

*) „Die Frau und der Sozialismus. Frau in der Vergangenheit, Gegenwart und Zukunft“. (Կինը և սոցիալիզմը, Կինը անցեալում, ներկայում և ապագայում), Հրատ. 1879 թ., մինչև օրս արժանացել է իններորդ տպագրութեան:

«Կանանց հարցի զիտնական պարզաբանութիւնը—ասում է Բրեսլաւի համալսարանի պրօֆէսօր յայտնի տնտեսագէտ Վերներ Զօմբարտը,—հնարաւոր է միայն մի ճանապարհով՝ պատմական-տնտեսական վերլուծութեամբ: Կանանց հարցը,—չարունակում է նա,—ինքն իրան մի կուլտուրական պրօբլէմ է, հիմնուած սօցիալական ֆեմինիզմի վրայ, իսկ սօցիալական ֆեմինիզմները կարելի է ուրիշ ոչ մի կերպ, բայց եթէ տնտեսական երևոյթների պատճառակցական յարաբերութեամբ հասկանալ: Այն մեծ գիտնական ծառայութիւնը ցոյց աւելու համար, թէ ինչպէս է կանանց շարժումը իր ամբողջ արմատով հիմնուել սօցիալական հողի վրայ, և թէ նրա առաջխաղաց ընթացքը ինչպիսի անմիջական կախում ունի պատմական—տնտեսական պայմանների զարգացումից,—անկասկած և անուրանալի կերպով ցոյց է տուել առաջին անգամ Բէբելը («Zeit», Wien, 1902 թ.)»:

Նոյն Զօմբարտի հատու գրիչն ուսուր կշիռն է, որ մեծ գովասանքով ցոյց տուաւ տիկին Լիլի Բրաունի այս նոր լոյս տեսած աշխատութեան զիտնական արժանաւորութիւնը և Բէբելի գրուածքից յետոյ երկրորդ տեղը տուեց նրան:

Տիկին Լիլի Բրաուն միայն այդ դրքով չէ յայտնի գերմանական ընթերցող հասարակութեան: Նա ամբողջ Գերմանիայի կանանց շարժման ամենազլխաւոր պարագլուխներից մէկն է և ունեցել է երկար տարիների ընթացքում իր ահագին ազդեցութեամբ և զրաւոր ու բանաւոր աւաք պրօպագանդայով պատկառելի դործունէութիւն:

Մենք կանգ կ'առնենք գլխաւորապէս այս աշխատութեան երկու նշանաւոր կէտերի վրայ, որոնք ամբողջ գրուածքի ուղին ու ծուծն են կաղմում: Նախ այն հետաքրքիր նկարագրութիւնների վրայ, որ տիկին հեղինակը սրտաշարժ գոյներով պատկերացնում է ընթերցողի առջև, որպէս իրական կեանքի ճշգրէրիտ վերարտադրութիւն և ապա կ'անշնենք նրա դատողութիւններին և վճիռներին:

«Կանանց հարցը» վերնագրով այս աշխատութիւնը, բացի նրանից, որ ընթերցողին տալիս է թարմ մտքերի, առողջ դատողութիւնների և նորանոր գաղափարների հարուստ պաշար, այլև վերին աստիճանի հետաքրքիր է, իբրև կենդանի կեանքի բաղմածալ երևոյթների, դառն իրողութիւնների մի, եթէ կարելի է այսպէս ասել, լիակատար պատկերահանգէս: Իրաւ, երկար տարիների անդու աշխատանք, սուր, հետամուտ զիտողութիւններ են հարկաւոր ուսումնասիրելու համար կեանքի այն ամբողջ տրագիգմը, ուր կանացի սեռը իր այս կամ այն

գործով հանդէս է դալիս ձեր առաջ: Մի կարմիր թել առաջնորդում է ընթերցողին գէպի կեանքի հազար ու մի շերտեր և դիտել տալիս այն բազմագունի տիպերը, այն սրտածմլիկ, դարհուրելի տեսարանները, ուր դիւրահոշակ հերոսուհին կանայի սեռն է, այդ բազմաշարճար զոհը, իր տարբեր կոչման ու հասակի մէջ:

Ձեր առջև բացւում են սօցիալական ծայրայեղ կոնտրաստ խաւեր, ուր մի կողմում՝ արիւնք է փափկութիւն, հրապոյր, փառահեղ կոմֆորտներ, վայելք, յղիութիւն ծայրայեղ աստիճանի, իսկ միւս կողմում՝ իշխում է դաժան աղքատութիւնը, որի մէջ լողում են չոր, քամուած ու մղուած դէմքեր, դառն վշտերի, բիւրաւոր ցաւերի մի աննշար ուղիւն: Մի տեղ դատարկապօրտ, անգործ կիներ չրջապատուած անսահման բարիքներով ծառայում է արական սեռի ձեռքին որպէս մի «տիկնիկ», քաղցր ու երանական բոպէներ պատճառող մի համով հոտով լի գործիք, իսկ մի այլ մտախաւապատ տեղ, կին ասածդ աշխատանքի անծայր սահմանում մի բեռնակիր կենդանի է, անտեսական հոգսերով, գոյութեան կոռուով լարուած մի ճակատագրական զոհ: Աւելին ասենք: Սանդուղքի վերին բեռում՝ չքեղաշուք պալատներում, տեսնում էք բիւրոկրատիայի, արիստոկրատիայի և բուրժուազիայի կանանց սեռը ականակուռ զարդարանքների, բեհեզեայ հագուստի մէջ թաղուած, իսկ ներքին բեռում՝ խոնաւ ու մթապատ վայրում, նկատում էք վիթխարի քանակով բանւորուհիների, սպասաւորուհիների տխուր, լալահառաջ դէմքեր, խաւար նկուղիներում բռնապսօսիկ քմահաճութեան, անամենական կրքերի ենթակայ զոհեր և այլն և այլն:

«Ո՛հ, որքան բարձր է արեւելքը—կարծէք դուրս է թռչում ձեր բերնից մի այսպիսի միամիտ խոստովանութիւն,— այնտեղ անկարելի է տեսնել սօցիալական կեանքի այս օրինակ սուր, սար ու ձորի տարբերութիւն ունեցող հակասութիւններ, թէև ճիշտ է այնտեղ կիներ անհամեմատ ստրուկ է և ճնշուած»:

Եւ այդ սրտաշարժ տեսարանները, իրականութեան այդ խաւար օրեկտը տիկին հեղինակը այնպիսի սառն ու լուրջ դիտողութիւններով է ձեր առջև պատկերացնում, որ կարծէք լուսեայն ուղում է հասկացնել թէ զարմանալու ոչինչ չկայ, ուրիշ կերպ չէր կարող լինել, դա ժամանակի բերմունք է:

Տիկին Լիլի Բրաուն բաւական ընդարձակ ակնարկ է ձգում կանանց սեռի պատմական անցեալի վրայ և նրա ունեցած յարաբերութիւնների յաջորդական փոփոխութիւնները

հասցնում մինչև ներկայ բեժիմը: Նա ծանրանում է երեք դըլ-խաւոր կէտերի վրայ:

I. Կանանց սեռի փոխադարձ յարաբերութիւնները սօց. կեանքում: Նա ցոյց է տալիս, որ կանանց սեռի ընդհանուր սօցիալական յարաբերութիւնը ոչ միայն սուր չէ եղել պատմական անցեալում, այլ և զրկի՞ է գոյութիւն չէ ունեցել. ընդհանրապէս, կանգնած է եղել կոչման և դասակարգային շահերի համահաւասար մակերևոյթի վրայ: Տարբերութեան միակ սահմանը հարուստ և աղքատ դրութեան մէջ է եղել, և սօցիալական կոիւր պատմական բոլոր յայտնի չրջաններում տեղի է ունեցել միայն արական սեռի սահմանում: Կինը թէ բարձր և թէ ցածր աստիճանի վրայ, չէ ունեցել իրաւական, հրապարակական որեւէ կոչում, որպէս առանձին դասակարգ նա չէ ունեցել ընդհանուր մարդկային քաղաքակրթական խնդիրներում որևէ շահ, ինտերես՝ Իսկ այսօր կեանքը բոլորովին այլ պատկեր ունի: Ինդուստրիայի ներկայ շրջանը դրօշմել է մասսայի կանանց սեռի ճակատին մի մշտական, յարատև կոչում և դրանով ահագին անդունդ փորել կանանց բարձր ու ցածր դասակարգերի մէջ: Այժմ աշխատող, ժողովրդական հարստութիւն արտադրող կինը՝ բանւորուհին, մի բնական դրդումով մղւում է կուռի այն ընդհանուր դաշտը, ուր ինքը դարեր շարունակ բացակայ էր:

II. Կնոջ յարաբերութիւնը տնտեսական կեանքի նկատմամբ: Պատմական անցեալում կնոջ դերը խիստ պարզ ու որոշ էր: Նա աշխատանքի մի սահմանափակ շրջան ունէր՝ տունն ու անային տնտեսութիւնը, երեխայ պահել, պահպանելը: Նա բոլորովին գործ չունէր դրսի աշխարհի հետ, կատարելապէս ենթարկուած էր տղամարդուն, և ընդհանրապէս կին սեռը արական սեռից վայելում էր ոչ աւելի, քան մի ընտանեկան կենդանու յարգ ու արժանիք: Սակայն անդառնալի անցան այդ ժամանակները, ժամանակի հետ փոխուեցին տիրապետող պայմանները, երբ նոր դարը իր բոլոր նուաճումներով վրայ հասաւ: Մի անասելի յեղափոխութեան ենթարկուեց մարդկային ընդհանուր կեանքի կազմակերպութիւնը, երբ նոր դարու մտաւոր արշաւանքը մի կողմից, տնտեսական բարեշրջումները միւս կողմից իրանց ներդրածական կնիքը դրօշմեցին ժամանակի ոգու, նրա բազմաբովանդակ պահանջների վրայ: Փոխուեց իրերի արտադրութեան եղանակը, մարդկային կեանքի տնտեսութիւնը և, իբրև բնական հետևանք, փոխուեցին նաև սօցիալական կեանքի այլ պայմանները: Կինը ցնցուեց, մի սթափեցնող մղում արթնացրեց նրան դարաւոր քնածութիւնից, նրա միտքը վերածը-

նուեւ սկսեց: Սակայն այդ չէր գլխաւորը, այլ այն, որ նա դուրս նետուեց իւր մեխուած փակուածութիւնից դէպի հրապարակ: Վիթխարի մեքենաները, տեխնիկական ինդուստրիայի կատարելատիպ զարգացումը՝ կանանց սեռին առաջարկեցին աշխատանքի լայնարձակ ասպարէզ: Կինը տղամարդու նման հրապարակի վրայ վաճառքի հանեց իր ֆիզիկական ոյժը: Կինը սկսեց դրականապէս դեր խաղալ ժողովրդական տնտեսութեան խնդրում: Նա դարձաւ մի առանձին դասակարգ իր յատուկ շահերով, ձգտումներով և այլն:

III. Կնոջ յարաբերութիւնը տղամարդու նկատմամբ: Տիկին Լիլի Բրաուն այս կէտը համարում է որպէս մի հետևողական եզրակացութիւն երկրորդ կարգի յարաբերութեան: Այսինքն պատմական անցեալում կինը կատարելապէս ենթակայ լինելով տղամարդուն, իր անհատական կեանքի ապահովութիւնը, իր ամբողջ գոյութիւնը թողնուած էր նրա կամքին, հետևապէս և փոխադարձ յարաբերութեան եղանակի մասին խօսք լինել չէր կարող: Իսկ նորագոյն դարուց սկսած, յանձինս կնոջ և տղամարդու պէտք է նկատել երկու տարբեր մեծութիւններ, տնտեսական ասպարիզում իրար հանդէպ կանգնած մրցող ոյժեր: Հետևապէս և սօցիալական յարաբերութեան տեսակէտից նրանք անհրաժեշտօրէն ներկայանում են երկու հակամարտ դասակարգեր:

Ահա այսպէս է պատկերացնում տիկին հեղինակը կնոջ յարաբերութիւնների պատմական զարգացումը, հիմնուած դուռ մատերիալիստական պրինցիպների վրայ:

Անցնենք կանանց շարժման բուն խնդիրին:

Տիկին Լիլի Բրաուն կանանց ներկայ ընդհանուր շարժումը բաժանում է երկու կուսակցութեան. քաղաքացիական կանանց շարժում (bürgerliche Frauenbewegung) և պրօլետարիական կանանց շարժում (proletarische Frauenbewegung): Առաջին շարժումը աւելի հին է, քան երկրորդը: Պրօլետարիական կանանց շարժումը իր ծագմամբ պարտական է սօցիալական ընդհանուր շարժման, ընկերավարական նորագոյն գիտնական պրինցիպներին: Այժմ արդէն, կանանց շարժման այդ վերջին տեսակը առաջ է ընթանում պրօլետարիական ընդհանուր կուսակցութեան հետ ձեռք ձեռքի տուած:

Այստեղ եւ հանդիպում ենք համեմատական կէտերի, որ տիկին հեղինակը առաջ է բերում կանանց երկու կարգի շարժումների մէջ: Ընդհանուր հոսանքի երկու տարբեր շրջաններում գտնում ենք երևոյթներ, ծագած տարբեր հիմունքներից: Մինչդեռ քաղաքացիական կանանց շարժումը ձգտում է կուլ-

տուրադան խնդիրներին սահմանում դրական մասնակցութիւն, ձայն ունենալ, իսկ պրօլետարիական կանանց շարժումը կըռւում է կեանքի խնդրի համար: Առաջինը աշխատանք է պահանջում, գործունէութեան ասպարէզ է որոնում, իսկ երկրորդը, ընդհակառակը, կըռւում է ծանր աշխատանքի, երկարատև դադմունքի դէմ: Առաջին շարժումը վարում են ապահովուած, հասուն խմբեր, իսկ երկրորդը՝ սարսափելի չքաւորութեան, զրկանքների ենթակայ կանայքի մասսան:

Սակայն երկու կուսակցութիւնների այս տարբեր երկւոյթները յարգելի տիկինը չի նկատում որպէս ներհակ մեծութիւններ, սկզբունքի հակասութիւններ, այլ լոկ սօցիալական դրութեան արդասիւք և ուրիշ ոչինչ: Հիմնական կորիզը, երկու շարժումների վախճանական կամ հեռաւոր նպատակը միևնոյնն է, նրանց առաջնորդող զրօշակը միևնոյն վերտառութիւնն է կրում. «կոխ տիրապետող կարգերի դէմ, ձգտել դէպի ազատութիւն» և այլն:

Ինքը. տիկին Լիլի Բրաուն, պատկանում է երկրորդ կուսակցութեան և համարւում է առաջնակարգ պարագլուխներից մէկը: Նա սուր լօգիկայով և զարմանալի պարզութեամբ բացատրում է պրօլետարիական կանանց շարժման գերազանց առաւելութիւնը, առաջնակարգ նշանակութիւնը ներկայ պայմաններում, որի բարեյաջող լուծումից է կախուած և քաղաքացիական կանանց կամ առհասարակ կանանց շարժման յաղթութիւնը, այլապէս՝ երբէք: Աւելին ասենք, Գիտական տեսակէտի ըմբռնմամբ, տիկին հեղինակը հասկանում է միայն մի շարժում, այսինքն կանանց պրօլետարիական շարժում, որ ամուր հող ունի իր ոտքի տակ, զինուած է զօրեղ արդումնետներով և կազմում է կուսակցական մի որոշ կազմակերպութիւն:

Ո՞րն է կանանց շարժման հիմնական աղբիւրը, — այդ հարցի պատասխանն է, որ կազմում է տիկին Լիլի Բրաունի աշխատութեան իսկական փայլը:

Հասարակական կեանքի վերակազմութեան հիմնական կռուանները կուտակւում են հասարակական կեանքի պայմանների մէջ, իսկ հասարակական կեանքի պայմանների կենտրոնական մասը գրաւում է տնտեսական կեանքի բարդ պրօբլեմը: Տնտեսական կեանքի այս կամ այն դրութիւնը, մարդկային կեանքի որ և է շրջանում, բնականաբար կախուած է իրերի արտադրութեան եղանակից, միջոցներից: Տնտեսական կեանքի պատմութիւնը ամենահիմնական մասն է կազմում մարդկային

ընկերութեան ընդհանուր քաղաքակրթութեան պատմութեան, որովհետեւ տնտեսական կեանքի բարորութեան վրայ է հիմնուած մարդկային ընդհանուր կուլտուրական առաջընթացութիւնը: Եթէ այդ այդպէս է, եթէ մի անգամ ընդմիշտ հաշտուած ենք այն մտքի հետ, որ տնտեսական կեանքի յաջող կամ անաջող ընթացքը անմիջական, զօրեղ և փոփոխիչ ներգործութիւն ունի մարդկային կեանքի ընդհանուր օրգանիզմի վրայ, ապա ուրեմն պէտք է որ տնտեսական կեանքի գործօնները ընդհանուր կուլտուրական գործօն համարուելու արտօնութիւն ունենան: Եթէ, օրինակի համար, այսօր կապիտալիստի գործարաններում բանուորի հետ միասին քրտինք է թափում և՛ բանուորուհին, կամ ուրիշ խօսքով, եթէ այսօր կինը ճակատ առ ճակատ տնտեսական կեանքի լայնարձակ ասպարէզում աշխատուոր ոյժ, գրական ֆակտոր է համարւում, ապա ուրեմն պէտք է բնական և տրամաբանական անհրաժեշտ եզրակացութեամբ ընդունել, որ նոյն այդ կինը իրաւունք ունի մարդկային ընկերական-հասարակական բոլոր խնդիրներում, ընթացիկ կեանքում, ձայն ու մասնակցութիւն ունենալու:

Իրաւ, թերեւս գծուար կը լինէր կոռուլ այսօր տիրող այն հին հակացողութեան դէմ՝ որ սնդուած է, թէ կինը չը պէտք է իր բնական կուլտմիջ դուրս գայ, որ նա պէտք է լաւ մայր ու տնտեսուհի լինի և այլն, եթէ կինը մնացած լինէր իր պատմական նախկին շրջագծի մէջ, եթէ նա միշտ և յաւէտ մի կրաւորական և տղամարդուն ենթակայ մարմին մնացած լինէր: Սակայն ինչպէս տեսնում ենք իրերի դրութիւնը այլ գոյն ունի, կինը վաղուց է դուրս եկել իր ստրկական ենթակայութիւնից, նա այժմ գրական ոյժ է, կուլտուր, մրցող հակառակորդ, հետեւապէս պահպանողական հայեացքը անդօր է միշտ միևնոյն տեսակէտի վրայ մեխուած մնալու: Կինը հասկացել է արդէն իրերի ընթացքը, նա յասկանում է իրաւագործ անհատականութիւն, ազատ ու անկախ մարդ, բարեկիրթ անձ-նաւորութիւն դառնալ, անա թէ որն է նրա գաւառանքի նշանաբանը:

Ահա թէ որտեղ է որսնում տիկին Լիլի Բրաուն կանանց խնդրի հիմնական արմատը: Իսկ թէ ինչ հողի վրայ և ինչ ծրագրով պիտի առաջ ընթանայ կանանց կռուի պրօցեսսը, այդ առթիւ նա առաջ է բերում զօրեղ հիմունքներ:

Կանանց խնդիրը ծնունդ առնելով սօցիալական հողի վրայ, պէտք է նաև իր լուծումը ստանայ նոյն սահմանում: Եւ որովհետեւ նրա կռուի հիմնական սաղմը ծագում է ներկայ ընդհ.

սօցիալական կռուի աղբիւրից, ուստի և կանանց ինդիւրը իր կռուի ընթացքում չը պէտք է վրիպէ ընդհանուր շարժման հիմնական սկզբունքից. կանանց աշխատանքի ներկայ սահմանը, իրաւ, միակողմանի բնաւորութիւն ունի: Կնոջ մուտքը ինդուստրիայի բաղմադան ճիւղերում, գործարաններում, խանութներում, գորտանեակներում, դպրոցներում արդէն մի սովորական կրեւոյթ և օրինական ոյժ է ստացել: Սակայն մարդկային ընկերութեան ընդհանուր հանդիսարանում դեռ քանի՜-քանի՜ ասպարէզներ կան, ուր կինը իրաւազօրութիւնից զուրկ է, պաշտօն վարելու արտօնութիւն չունի: Այս վերջին հանգամանքն արդէն ժամանակի խնդիր է, և պէտք է իրականացած դրութիւն նկատել միայն այն յաղթութիւնից յետոյ, որ կինը ձեռք կը բերէ նախ սօցիալական հողի վրայ: Պէտք է նախ և առաջ ձեռք բերել կանանց իրաւունքների համար օրինական հող՝ ձայնակցել, անդամակցել քաղաքական-վարչական բարձր կազմակերպութեան և այդ միջոցով ներդրածել օրինական ոյժի վերին սանկցիայի վրայ: Իսկ այդ անել կարող է միայն այն դատակարգը, որը ամուր յենարան ունի, զօրեղ հիմունքներով է զինուած. այդպէս է և կանանց պրօլետարիատ դասակարգը. նրանն է կռուի ասպարէզը, նա է իսկական զբօսակալիւրը և նրա յաղթութեամբ պիտի լուծուի առհասարակ կանանց էմանսիպացիայի կնճառտ պրօբլեմը:

Ապագայ այն կին անհատը, որին տիկին լիլի Բրաուն պատկերացնում է իր աշխատութեան վերջում, ներկայացնում է գերազանց յատկութիւններից մարմնացած մի տիպ, որ պիտի փայլէ իրրեւ կիրք ու խելացի մայր, բարեխիղճ կոչման տէր մարդ և հրաշալի «f e m m e»:

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Էմինեան Ազգադրական ժողովածու, հատոր Գ. թուրքերէն է փոխադրեալ բառեր հայերէնի մէջ. գրեց Հր. Աճառեան. Մոսկուա-Վաղարշապատ, 1902, գինն է 1 ա. 50 կ.:

- 2) Հր. Աճառեան, Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան, քննութիւն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901 թ.:
- 3) Տեղեկագիր համարատուութեան ս. Մեսրոպեան և ս. Հռիփսիմեան ազգ. երկսեռ վարժարանաց հոգաբարձութեան, 1901—1902 տարեշրջանի. Բուսճուք:
- 4) Հայոց նոր վկաները, երկու հատոր, կազմեցին Յ. Մանանդեան և Հ. Աճառեան, Վաղարշապատ, 1902 թ., երկու հատորի զինն է 1 ռ.:

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Պարոյց Շահի վերադարձը ճանապարհորդութիւնից.—Պարսկահայ գիւղացիների դրութիւնը.—Դրանց օգնելու մի միջոց.—Ինչո՞ւ հասարակական ձեռնարկութիւնները մեր մէջ չեն զարգանում.—Ժողովրդի թուի և նրա մտաւոր-բարոյական զարգացման հասարակական նշանակութիւնը.—Մեր հասարակութեան անտարբերութեան արմատական պատճառը.—Նոր իդէալներով համակուած ինտելիգենցիա.—Համալսարանների կեանքում նոր փոփոխութիւններ:

Պաշտօնական հաղորդագրութիւններ. Ֆինլանդիայի մասին նոր կարգադրութիւն.—Սլէքսանդրապօլից հեռացրուած անձեր:

Եւրոպայում կատարած ճանապարհորդութիւնից Շահը վերադարձաւ իր երկիրը, անցնելով կրկին Անդրկովկասով: Նրա՝ թէ Եւրոպա ուղևորուելիս և թէ վերադարձին հայ հասարակութիւնը մի քանի անգամ առիթ ունեցաւ յայտնելու իրանի վեհապետին անկեղծ շնորհակալութիւն այն հոգատար համակրանքի համար, որ նա տաժում է դէպի պարսկահայերը:

Բայց չը նայած Շահի այդ վերաբերմունքին, Պարսկաստանի հայերը առանձին կենդանութիւն չեն ցոյց տուիւ ոչ միայն դպրոցական, այլ և տնտեսական ասպարէզում:

Յաճախ մենք լսում ենք գանգատներ, որ Պարսկաստանի հայ գիւղացիները կեղեքուում են մահմեդական կալուածատէրերից. սակայն ի՞նչ է անում այդ գիւղացիների դրութիւնը բարեփոխելու համար: Ո՞վ է խանգարում այդ ուղղութեամբ գործել թէ Ստրպատականում և թէ Նոր-Ջուղայի չըջակայքում, ուր հայ տարրը բաւական զօրեղ է, ուր կան հայոց վանքեր:

Մենք փաստեր ունենք, որոնք ապացուցում են թէ սրբան հեշտ է Պարսկաստանում հող ձեռք բերելը: 1891 թուականին, օրինակ, մի սէիդից 500 թումանով գնուեց ընդարձակ և բարերէր մի կալուածք Դէրիկի վանքի համար: Եթէ այդ ուղղութեամբ գործողներ լինէին Ստրպատականում, կարելի էր ըն-

գարձակ հողեր գնել և դրանց վրայ մի քանի նոր գիւղեր հաստատել:

Նոյն իսկ մասնաւոր դրամատէրեր կարող են ձեռք բերել այդպիսի հողեր և տալ գիւղացիներին այն պայմանով, որ որոշ տարիների ընթացքում դրանք իրաւունք ունենան մաս-մաս վճարելով, յետ գնել կալուածատէրերից իրանց բաժինները և դառնալ իրանց մշակած հողերի սեփականատէրեր:

Դրամատէրերը այդ դէպքում ոչինչ չեն կորցնում, որովհետև նրանց ձեռքում դրամի փոխարէն մնում են հողեր, եթէ նորահաստատ գիւղացիները չը կարողանան յետ գնել իրանց բաժինները, որ, եթէ ի նկատի ունենանք հայ գիւղացու սէրը դէպի անհատական հողատիրութիւնը, անհաւատալի է, ի հարկէ, այդպիսի ձեռնարկութեան մէջ պահանջւում է դրամատէրից որոշ գաղափարական վերաբերմունք. Շէյխ-Ջիմզիմովներին լաւ է սկի չը խառնել այդպիսի գործերում...

Հարցին պէտք է նայել գաղափարական և գործնական կողմից: Այդ ծրագրի գաղափարական կողմը այն է, որ հողից զրկուած մի քանի հազար անտուն-անտէր մարդիկ վերջապէս կարողանան աստանդական կեանքից ազատուել և իրանց զբաղմունքներին նըւիրուել: յոյսը որ իր քրտնաջան աշխատանքից է կախուած մօտ սպագայում իր մշակած հողի սեփականատէր դառնալ՝ աւելի եւ կը կրկնապատկի խեղճերի մէջ աշխատասիրութիւնը, իսկ այդ ծրագիրը գործնական է այն պատճառով որ առանձին զուհարուրդներ չի պահանջւում մեր հարուստներից. հողեր գնելով դրանք չեն կորցնում իրանց պաշտած կուռքը—փողը, այլ միայն մոյցնում են նրան որոշ պայմաններով մի հաստատ գործի մէջ, որ կարող է նոյն իսկ որոշ շահ տալ նրանց, ի հարկէ ոչ վաշխառուական: Գիւղացիներին այդպիսով տրւում է մի փոխառութիւն՝ հողեր ձեռք բերելու Պարսկաստանում:

Եթէ մեր մէջ գաղափարական ձգտումները աւելի հոծ տարրի սեփականութիւն լինէին, ի հարկէ՝ կարելի էր և յատուկ ընկերութիւններ կազմել վերոյիշեալ նպատակով, բայց այդպիսի տարրեր չը կան և՛ անհատական ֆանքերով պէտք է գլուխ դան մեղանում շատ կարեւոր հասարակական ձեռնարկութիւններ: Եթէ մեր հոգեւոր վարչութիւնը, իջմիածինը, Ատրպատականի առաջնորդը, այդ ուղղութեամբ գործելու ընդունակ զտնուէին աւելի եւ հեշտ կը լինէր իրագործել այդ ծրագիրը:

Ի հարկէ, լաւագոյն դէպքում այդ ծրագիրը միայն մօտ սպագայում կարող է իրագործուել, իսկ ժամանակաւոր օգնութիւն պէտք է մատակարարեն Ատրպատականի մեր վանքերը:

որոնց հողերը աւելի լաւ է որ գիւղացիներ մշակեն, քան անապատ ներկայացնեն...

Երբ մի ազգի մէջ ոգորմելի են ու վտիտ նրա հասարակական ձեռնարկութիւնները, դրանից պէտք է եզրակացնել որ չափազանց ստոր է նրա մտաւոր-քարոյական զարգացման մակերևոյթը: Այդպիսի եզրակացութեան մենք պէտք է հասնենք զիտելով մեր, հայերիս, հասարակական-ազգային կեանքի արտայայտութիւնները, որոնցից գրականութիւնը, թատրոնը, դրամորդը առաջնակարգ տեղ են բռնում:

Թէ որքան սխալ են նրանք, որոնք առաջնակարգ նշանակութիւն են տալիս միայն թուին, այդ ապացուցւում է Թիֆլիսի հայերի օրինակով: Թիֆլիսում պէտք է առնուազն 60 հազար հայ հաշուել: Արդ, հետաքրքրուէք քանի տասնեակ բաժանորդ է տալիս հայոց հրատարակութիւններին հայակերների աչքում փուշ դառած «հայկական» Թիֆլիսը, Թիֆլիսում կան հայոց մի քանի ընկերութիւններ. իմացէք, խնդրեմ, քանի անդամներ ունին այդ ընկերութիւնները: Թիֆլիսում հայոց ներկայացումներ են տրւում յատուկ այդ բանի համար կազմակերպուած Դրամատիկական ընկերութեան ղեկավարութեամբ: Այդ ընկերութեան վարչութիւնը բաղկացած է խոշոր բուրժուազիայի չրջաններից սիրելի անդամներից, տեղեկացէք, քանի հազարից է կազմուած այդ համակերպի ընկերութեան ֆոնդը, ինչ հետաքրքրութիւն է ցոյց տալիս Թիֆլիսի հասարակութիւնը հայոց ներկայացումներին: Եւ եթէ այդ բոլոր տեղեկութիւնները հաւաքէք և ապա համեմատէք ձեր ստացած վիճակագրութիւնները Թիֆլիսի հայ ազգաբնակչութեան թուի հետ՝ կը տեսնէք որ զատարկ զառանցանքներ են Թիֆլիսում «հայկական տեղեկանքների» մասին միտած թշնամական յօդուածները: Այն, տնատէրերի, խանութպանների մեծագոյն մասը հայեր են, բայց այդ բաների մէջ վեր կենալ և ազգային տեղեկանքի տեսնել՝ նշանակում է հայի մասին ամենասխալ հասկացողութիւն ունենալ: Ինչպէս որ մեղուն իր փեթակի մէջ մեղր է հաւաքում, բնաւ չը մտածելով մեղուական ազգասիրութեան մասին, այնպէս և հայը փող դատելով, իր ապրուստը հայթայթելով, ամենից քիչ է մտածում «ազգային» կերպարանք տալու իր այդ արածներին, դա մեղուի, մրջյնի աշխատասիրութիւն է, աւելի ոչինչ: Եթէ օտարները լաւ ճանաչէին հային, պէտք համոզուէին որ աւելի կօսեմօպօլիտ ազգ քան հայ ազգը դժուար է գտնել: Անշուշտ այդ կօսմօպօլիտութիւնը հետևանք է նրա զաղափարական զարգացման, այլ դա բղիւղում է նրա անտարբերութիւնից, անտեսական հակումների մի այլանդակ գերածումից, ի վրաս հոգու

աւելի համակրելի կողմերի: Հայը գիտէ որ ազգային-հասարակական ձեռնարկութիւնները ոչ միայն ոչ մի նիւթական չափ չեն տալիս նրան, այլ և յաճախ պահանջում են նրանից նիւթական զոհաբերութիւններ: Իսկ ոչ նիւթական, այլ գաղափարական օգուտների իմաստը ըմբռնելու համար նա չունի իր մէջ բարոյական որոշ զարգացում, իդէալական ձգտումներ: Այդ բանի համար նա կամ տգէտ է կամ իր կրթութեամբ օտարացած: Աւելացրէք դրան և մեր մասսայի աղքատութիւնը և գութ կը գլտնէք գլխաւոր պայմանը այն սառն ու անտարբեր վերարբմունքին, որ հանդիպում են մեր բոլոր հասարակական ձեռնարկութիւնները մեր ժողովրդի կողմից:

Մասնաւորելով խօսքը թատրոնի մասին մենք, ի հարկէ, չենք մոռանում սովորական դառած ճամարտութիւնները, որ բնականաբար պէտք է ընտիր լինի, դերասանները՝ չնորհալի, գէները՝ մատչելի և այլն և այլն. սակայն այդ բոլոր պահանջները կատարելով հանդերձ յոյս ունենալ մեր հասարակութիւնից, ներկայ պայմաններում, բուն համակրական արտայայտութիւններ դիպի մի ազգային-հասարակական ձեռնարկութիւն, դէպի թատրոնը, — զժրախտարար, անհիմն լաւատեսութիւն է:

Պէտք է շատ և շատ աշխատել մեր ազգի մտաւոր-բարոյական մակերնոյթը բարձրացնելու համար, պէտք է ջնջել նրա հոգուց անբարոյականացնող, անասնական վայելքների տենչերը և տեղը դնել աւելի վեհ, աւելի ազնուացնող իդէալներ:

Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ!

Պէտք է կրթել ժողովրդի միտքը, ազնուացնել նրա ճաշակը, մերկանտիլ հալիւններից մաքրել նրա զգայմունքները:

Ո՞վ պէտք է այդ անի:

Դպրոցը, մամուլը, թատրոնը, որոնց ղեկավարները պէտք է իրանք տողորուած լինեն վեհ, ազնիւ իդէալներով, իրանց համար պարզ որոշած լինեն թէ նպատակը և թէ ուղղութիւնը, որով կարելի է հասնել նրան: Այդ աշխատանքը իր բոլոր ծանրութեամբ պիտի ընկնի գլխաւորապէս ինտելիգենցիայի վրայ: Սակայն մեր ինտելիգենցիայի ձգտումների մէջ իդէալական, աւտրուիտական կողմերը, վերջին մի քանի տասնեակ տարիներում մանաւանդ, նկատելի կերպով թուլացել են. մեր դարի մերկանտիլ ոգին առականել է նաև «երկրի աղը»: Այդ երկոյթը ընդհանուր է ամենուրեք, սակայն աւելի նկատելի Ռուսաստանում և այդտեղ էլ ամենից շատ հայերիս մէջ, որովհետև այդ ժամանակակից ոգին մի քիչ էլ ի բնէ հարադատ է մեզ...

Համալսարանների ներկայ ընկած դրութիւնն է մասամբ

այդ ընդհանուր երևոյթի պատճառը՝ Հետեաբար, ամեն մի նոր կարգադրութիւն, որ նպատակ ունի վերացնել համալսարաններում տիրող ձեւական, իշխալական ձգտումները մեռցնող կարգերը՝ արժանի է ամենամեծ համակրանքի։ Այդպիսի կարգադրութիւններին են այս տարուայ օգոստոսի 24-ին հրատարակուած համալսարանական մի քանի կանոնները, որոնցով համալսարանական կեանքում մտցնում է պրոֆէսորներից ընտրած դատարան։ Մինչև այժմ համալսարանական կարգապահութիւնը խանգարող ուսանողներին դատում էին լոկ վարչութեան, ինսպեկցիայի, ցուցմունքների համաձայն, առանց լսելու մեղադրուածների բացատրութիւնները։ Արդարագատութեան տարրական կողմը, *audiat et altera pars*-ը, չէր գործադրում, և ուսանողները անշափահանների նման ենթարկուած էին նշանակովի կարգապահների քահանայութիւններին։ Այժմ լուսաւորութեան միսիստրի նոր կանոններով ուսանողները, յանձին պրոֆէսորներից ընտրած դատարանի, ստանում են մի հեղինակաւոր ատեան, որ կը յարդի նրանց անհատական իրաւունքը, ինքնասիրութիւնը և կը գործի ղեկավարութեամբ մարդասէր արդարադատութեամբ։

Նոր կանոններով որոշ զէպքերում թոյլատրում են կուրսային համախմբումներ, իրաւունք է տրւում ուսանողներին ընտրել իրանց միջից աւագներ՝ դասատուների և վարչութեան հետ կուրսի կողմից յարաբերութիւնների մէջ մտնելու համար։ Իւրաքանչիւր կուրսի համար համալսարանի խորհուրդը պրոֆէսորներից ընտրում է մի-մի կուրատոր և այլն և այլն։ Այդ բոլոր նորութիւնները համալսարանական կեանքի մէջ կը մըտցնեն որոշ կենդանութիւն, որ կարող է բարեբար ազդեցութիւն անել նաև ուսանողների մտաւոր-բարոյականը կարիերիստական տենչերի չըջանից դուրս բերելու և աւելի իշխալական ձգտումներով համակելու...

I. II.

23 սեպտ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Որոշումների ժողովածուի» մէջ հրատարակուած է Բարձրագոյն հրաման մի քանի կանոնների փոփոխութեան մասին, որոնք վերաբերում են Ֆինլանդիայի քաղաքայինական մասի աստիճանաւորների ծառայութեան և որոնցով թոյլ է տրւում ծառայելու այդ երկրի մէջ Ռուսաստանի բնակիչներին։ Միատեսակ իրաւունքներ Հէլսինգֆորսի համալսարանի հետ ստանում են բոլոր ուսանական համալսարանների և Դէմիդովեան

իրաւաբանական լիցէյի կանդիդատները ու իսկական ուսանողները, ինչպէս նաեւ իրաւագիտական ուսումնարանը եւ գինուորական իրաւաբանական ակադէմիան աւարտողները: XI մինչեւ XIV դասաստիճան (կլասս) ունեցող պաշտօնեաներին նշանակելու և հեռացնելու իրաւունքը յատկացնում է իշխանութեան, իսկ V—IX դասաստիճան ունեցողների նշանակումը կամ հեռացումը, բացի պօլիցիայի և գններալ-նահանգապետի կանցելարիայում ծառայողներից, կախում պէտք է լինի Ֆինլանդական Սենատի տնտեսական դեպարտամենտից, գններալ-նահանգապետի համաձայնութեամբ: Նախագահում է Սենատում գններալ-նահանգապետը կամ նրա օգնականը: Այլ թոյլատրւում այլ եւս զիմիջ Սենատին յանունը Նորին Մեծութեան թղթերը տրւում են Սենատի անունով: Գանգատները եւ խնդիրները յանուն Նորին Մեծութեան ուղարկւում են ընդունուած կարգով: Անպայման կերպով մնում են առանց քննութեան, ի միջի այլոց, այն խնդիրները, ուղերձները եւ զանգատները, որոնք տրւում են մի խումբ անձանց կողմից, որոնք երկրի կարիքների վերաբերմամբ միջնորդութիւններ յարուցանելու պատրուակով դատապարտում են կառաւարութեան գործողութիւնները կամ ձգտում են խախտել հաստրակաց կարգը եւ խաղաղութիւնը: Վերջուած է Սենատի պրօկուրօրի իրաւունքը՝ նկատողութիւն անելու գններալ-նահանգապետին եւ անձամբ ամբաստանագիր գրելու նրա վրայ թագաւոր կայսրին:

Ալեքսանդրապօլի բնակիչներ՝ Աւետիք Մուշեցեանին, Ստեփան Տէր-Սահակեանին, Իսկանդար Յովհաննիսեանին, Պետրոս Կարապետեանին, Յակոբ Ալահվերդեանին և Ալեքսանդրապօլում ապրող յոյն Թուհի Իվրաէլօվին, Կովկասի գլխաւոր իշխանութեան կարգադրութեամբ, արգելուած է բնակուել Կովկասի սահմաններում, հասարակական անդորրութեան համար նրանց ունեցած վնասակար գործունէութեան պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամերիկական յայտագիրը Ռումանիայի հրէաների մոտին.—Միջազգային արդարութիւն և շահ.—Շիպկայում կոտորուած հանդէսների նշանակութիւնը.—Զը կատարուած խոստումներ:

Պ օ լ ա ի թ ե ռ թ ե ռ ի ց. Կրթական գործը Դիարբէքի թեմում.—Դաւառային վանքերի վիճակը.—Վիլիկիայի կաթողիկոսական հարցը.—Անգլիանիկ հայ դերասանուհի տ. Ա. Պէրիքեանի վիճակը.—Լեհացիներ զիմուրը հայ եկեղեցուն.—Տրիպօլիսի հայերի հանրագիրը:

Լոկ մարդասիրական, արդարասիրութեան զրդումից մեր ժամանակներում պետութիւնները միջազգային դիմումներ անելու անընդունակ են. այդ ապացուցուեց և վերջերումս Միացեալ Նահանգների նախագահի մի յայտագրից, որ ուղղուած է բոլոր այն պետութիւններին, որոնք ստորագրել են Բերլինի 1878 թ. դաշնագիրը:

Այդ վերջինը, ի միջի այլոց, պարտաւորեցնում էր Ռումանիային՝ վերադնել նրա բնակիչների որոշ մասի (հրէաների) դէմ ուղղուած բացառիկ օրէնքները: Ծիշտ է, Միացեալ Նահանգները չեն մասնակցել Բերլինի վեհաժողովում, բայց այժմ նրանք ստիպուած են պահանջել որ իրագործուեն դաշնագրի որոշ յօդուածներով ապահոված կրօնական ազատութիւնը Ռումանիայում, որովհետեւ այդ յօդուածների անկատար մնալով տուժում են Միացեալ Նահանգները և ահա ինչպէս:

Այդ յայտագրից երևում է որ Միացեալ Նահանգները պատրաստ են այժմ էլ, ինչպէս և միշտ, իրանց պետական օրգանիզմի հետ ձուլել յօժարակամ ներգաղթած բոլոր ընդունակ օտարերկրացիներին: Ամերիկական օրէնքները այդ ներգաղթածներին տալիս են բնիկների հետ հաւասար իրաւունքներ թէ երկրի մէջ և թէ դրսում: Միացեալ Նահանգների մէջ մուտք գործելը ոչ ոքի արգելուած չէ, բացառութեամբ մուրացկանների, յանցաւորների և վարակիչ կամ անբուժելի հիւանդու-

թիւներով բոնուած անձանց: Միայն թէ այդ ներգաղթունները լինեն յօժարակամ և ոչ ստիպողական կամ օժանդակուած ձևով:

Երէպի օտարերկրացի ներգաղթողը (իմամիրանտ) այդ մեծահոգի վերաբերմունքի նպատակն է, —ինչպէս ասուած է ամերիկական այդ յայտարարի մէջ, —օգուտ բերել թէ նրան և թէ Միացեալ Նահանգներին, բայց բնաւ՝ մի այլ պետութեան ազգաբնակչութեան հալածուած տարրերի համար տալ ապաստան: Ռումանական հրէաների դրութիւնը, որոնց թիւը հաշուում են 400 հազ., արդէն չատ տարիների ընթացքում հոգս է պատճառում Միացեալ Նահանգներին: Այդ ցեղի հալածումը, թրքական տիրապետութեան ժամանակ, 1872 թուականին, յարուցեց զօրեղ բողոք նրանց կողմից: Բերլինի դաշնագիրը ողջունուեց, իբրև չարիքը բուժելու մի միջոց, որովհետև նասարունակում էր յատուկ յօդուած, որ ապահովում էր թէ Ռումանիայի ընտելիչների մէջ այլ ևս ոչ մի խտրութիւն չի անուելու կրօնական տեսակէտով: Սակայն ժամանակի ընթացքում Ռումանիան կամայ կամայ աս ոչինչ դարձրեց այդ արգար որոշումները: Հրէաների առաջ Ռումանիայում այժմ փակուած են պետական ծառայութիւնը և ազատ զբաղմունքները: Նրանց արգելուած է ունենալ հողային սեփականութիւն և մինչև անգամ արգելուած է մշակել հողը իբրև հասարակ բանուոր, նրանց նոյն իսկ թոյլ չեն տալիս բնակուել գիւղական շրջաններում: Մանր առևտրի և արհեստաւորական արդիւնազորութեան ճիւղերից շատերը փակուած են նրանց առաջ: Քաղաքներում, ուր նրանք հաստատուել են իբրև սոսկ արհեստաւորներ կամ վարձկան բանուորներ, ամեն մի գործատէր կարող է պահել միայն մի հրէայ-բանուոր երկու առևանացու գիմաց: Ապրուստի ամեն տեսակ ազբււրներից յետ մղուած, նրանք ոյժ չունին բարձրանալ իրանց ճարահատ ստորացումից, և նրանց մնում է միայն մի ելք—փախչել այլ երկիրներ: Պատմութեան դասերը և ամերիկական ազգի փորձը ցոյց են տալիս, որ հրէաները օժտուած են քաղաքացուն անհրաժեշտ մտաւոր և բարոյական ամենաբարձր յատկութիւններով, և չը կայ դասակարգ, որի համար Միացեալ Նահանգներում աւելի ուրախ լինէին, քան Ֆիզիկապէս և հոգեպէս քաղաքացիի կոչման պիտանի մարդկանց համար: Սակայն ամերիկական պետութիւնը չի կարող լուռ մասնակցող լինել միջազգային անարդարութեան, նա ստիպուած է բողոքել այն բեժիմի դէմ, որին ենթարկուած են հրէաները Ռումանիայում, և այդ ոչ միայն այն պատճառով՝ որ ամերիկական կառավարութիւնը ունի անվիճելի հիմք ընդդիմադրելու իր սեփական երկրի համար այդ բանից բղիտղ վնասի դէմ, այլ և

յանուն մարդասիրութեան Միացեալ Նահանգները դուրսէ անկարող են հեղինակօրէն ուշադրութիւն հրաւիրել Բերլինի դաշնագրի պայմանների վրայ, որ նրանք չեն ստորագրել և չեն կարող այժմ ստորագրել, բայց նրանք լուրջ կերպով ընդդժում են այդ դաշնագրի մէջ ցուցադրուած սկզբունքները, որովհետեւ դրանք միջազգային իրաւունքի և յաւիտենական արդարութեան սկզբունքներ են: Միացեալ Նահանգները պահանջում են միեւնոյն ժամանակ լայն համերոտութիւն, որ պատուիրւում է այդ հանգիստը դաշնագրով, և պատրաստ են ցոյց տալ իրանց բարոյական օժանդակութիւնը, որպէս զի այդ դաշնագիրը ստորագրող պետութիւնները ի կատար ածեն նրան, որովհետեւ Ռումանիայի հէնց սեփական վարմունքը միացրեց Նահանգները յիշած պետութիւններին իրրեւ շահագրգռուած կողմ»:

Այդ վերջին խօսքերից պարզ է, որ լոկ բարոյական սկզբունքից, միջազգային արդարութեան ղեկավարութիւնից, Միացեալ Նահանգները, ինչպէս և բոլոր պետութիւնները, բոլորք չէին բարձրացնի ամենաբարձրագոյն անիրաւութիւնների դէմ անգամ:

Եթէ համեմատենք հրէաների կրած հալածանքները մինչև Բերլինի դաշնագրի ստորագրութիւնը և այդ օրից յետոյ, մենք կը տեսնենք որ Ռումանիան, Թիւրքիայի այդ նախկին ստրուկը, իր աղատութիւնից միայն օգտուել է աւելի ևս ճնշելու համար մի թոյլ, անպաշտպան ազգ: «Times»-ը թւում է այն բոլոր կարգադրութիւնները, որ Ռումանիան արել է Բերլինի դաշնագրի պայմաններին ուղղակի հակառակ ուղղութիւնամբ: Այդպէս, 1881 թուականի օրէնքներով պօլիցիային տրւում է իրաւունք խուզարկելու և աքսորելու հրէաներին, միջնորդ (մակլէր) և առևտրական յանձնակատար (կոմիսիօնէր) չեն կարող լինել հրէաները: 1884 թ. օրէնքներով արգելւում է հրէաներին մանր շրջիկ առևտուրը, հաշտարար դատարաններում գործ վարելը, և այդպէս չարունակաբար տարէց տարի արգելւում է հրէաներին, մասնակցել առևտրական պալատների մէջ ընտրութիւններին, հաւաքել համայնական հատոյթներ, ծխախոտի վաճառում, հասարակական ծառայութիւն, հասարակական աշխատանքներ կատարել, լինել ակցիօներական ընկերութիւնների տնօրէններ (դիրեկտօր), գործարաններում սահմանափակւում է հրէայ քանուորների թիւը ($\frac{1}{3}$ -ով), արգելւում է նշանակել հրէաներին երկաթուղային աշխատանքների կարեւոր պաշտօններում, ծառայել սահմանափակ և բժշկական ճիւղերում: հրէայ մանուկները չեն կարող դպրոցներում ձրխաբար սովորել և պէտք է ընդունուեն միայն, երբ աղատ տեղ կայ դպրոցներում: Իսկ 1898 թ. մարտի 23-ի օրէնքով փակ-

ւում են հրէաների առաջ միջին և բարձր կրթական ուսումնարանների գոները. 1899 թ. 31-ի օրէնքով փակւում են հրէաների առաջ նաև գիւղատնտեսական և պրօֆէսիօնալ ուսումնարանները: 1901 թ. դեկտ. ամսում հրատարակուած օրէնքով արգելւում է հրէաներին գիւղերում ունենալ պանդօկներ, գրաջրատներ, նպարախանութներ, սրճարաններ, հացախանութներ և այլն: Այդ բոլորը բաւական չէր, և ահա այս տարուայ մարտ ամսում հրատարակւում է օրէնք, որով արգելւում է հրէաներին նաև արհեստներով պարագել, մինչդեռ նախընթաց տարիների մի շարք արգելքների պատճառով հրէայ ժողովրդի համար ապրուստի այլ միջոցներ, քան արհեստն է, համարեա չէր մնացել: Պարզ է որ յօժարակամ չէր հրէաների գաղթը Ռումանիայից:

Միացեալ Նահանգների յայտագիրը հասկանալի է որ բուն համակրանք գտաւ բոլոր եւրոպական երկրների ազատական կուսակցութիւնների կողմից, բայց պետութիւնները դեռ ևս որոշ պատասխան չեն տուել...

Այդ յայտագիրը գրելիս Ռուզվէլտը պէտք է յիշէր, որ նոյն դաշնագրի մէջ կան յիշուած և այլ յօդուածներ, նա պէտք է իմանար որ Թիւրքիայում էլ քրիստոնեաների դէմ օրէց օր բարդւում են նոր խտութիւններ և հալածանքներ, որ վատթար բեժիմի չնորհիւ դաղթում են, փախչում են այդ երկրից աշխարհի ամեն կողմ, և նոյն Միացեալ Նահանգները, թրքական բռնութեան բազմաթիւ թշուառացած զոհեր, որոնց կացութեան մասին ամենաճիշտ տեղեկութիւններ կարող են հաղորդել հէնց Թիւրքիայում գործող ամերիկացի միսիօնարները: Այսօր կամ վաղը կարող են կրկնուել, մասսային կոտորածները Հայաստանում:

«Information» լրագրի ասելով. «Պաշարողական վիճակը առաջուայ պէս շարունակւում է Մուշում և Սասունում: Ֆրանսիական, սուսայ և անյլիական հիւպատոսական գործակալների գալը չը բարւոքեց վիճակը այդ շրջանում: Դեռ մանրամասն տեղեկութիւններ չը կան այդ միսիայի նպատակի և նրա քրննութեան հետեանքների մասին: Սասունը չը ջապատուած է կահոնաւոր զօրքերով և քիւրդերը միայն սպասում են հրամանի իլդըզ-Քիօչիից, որպէս զի սկսեն աւարառութիւնները և սպանութիւնները: Հայ ժողովուրդը ապրում է մշտական վախի մէջ: Թիւրքաց զօրքերը, որոնք տեղաւորուել են բոլոր հայ գիւղերում, վարւում են բնակիչների հետ, առանց սեռի խտրութեան, ամենաանգութ կերպով: Հայերին թոյլ չէ տրւում անցնել մի գիւղից միւսը: Բոլոր երիտասարդ հայերի վրայ հսկում են և խմբերով կալանաւորում նրանց: Կառավարութիւնը ամեն միջոց

ձեռք է առնում, որ նրա գործողությունների մասին լուրեր չը հասնեն Եւրօպային: Բացառիկ օրէնքները գործադրւում են ամենայն խստութեամբ և թիւրք վարչութիւնը ամեն եղանակով արգելք է դառնում հայերի վերադարձին Կովկասից»: Բոլորովին նման տեղեկություններ տպւում էին և «Times»-ի մէջ:

Ինչու այդ բոլորը իմանալով հանդերձ Միացեալ Նահանգները չեն վերցնում իրանց վրայ արդարութեան պաշտպանների զերը.— որովհետև իրանց շահերը չեն վտանգւում...

Այո, ինչ ուզում են թող ասեն, բայց հազուադիւս երևւոյթ է ամբողջ պատմութեան մէջ Ալէքսանդր II-րդի ասպետական վարմունքը, որ վճռեց իր ուսու ժողովրդի արիւնով փրկել բուլղար ժողովուրդը թրքական արհաւիրքներից: Այս րուխտական այդ վեհ օրինակի քսանհինգամեակի առիթով Շիպկայում կատարւած ուսու-բուլղարական փառաւոր հանգէսները պէտք է յիշեցնէին քաղաքակիրթ մարդկութեան որ իր խղճի վրայ մնում են չը հատուցւում պարտքեր, չը կատարւում խոստումներ, որոնք միջազգային արդարութիւնը ամենից չառ են ոտնակոխ անում...

Լ. Ս.

24 սեպտ.

Պ Օ Լ Ս Ի Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

Կրթական գործը Դիարբէխի թեմեռուն սէջ

Բնականաբար, կրթական տխուր յետամնացութիւնը, որ Դիարբէխի բարոյական ամենէն ցաւալի ու սրտակսկիծ վէրքն է, իր յոռի հակահարուածը ունեցեր է նաեւ գաւառականերուն վրայ, որոնք փոխանակ գաւառական կեդրոնէն ստանալու հրահանգիչ ու օգտակար օրինակներ, աւելի տուժած են, տեսնելով անոր ցուրտ վերաբերմունքը:

Հնա, կրթական, կրօնական, կամ բարեգործական հաստատութիւն մը անհրաժեշտ է, հոն, հաստատութիւն մը կայ, բայց այնքան գահավէժ ու հակապատակ պայմաններու մատնուած, որ անոր գոյութիւնը, բարիք մը մատակարարելու փոխարէն, գայթակղութիւն ու նողկանք կը սփռէ: Այս ինչ համայնքին մէջ, կրթական ու կրօնական գործերը, այնքան քայքայուն ու դժոխային անկաժութիւն մը կը ցուցադրեն, որ հասարակութիւնը, բոլորովին շուարած, ուրիշ յարանուանութեանց փեռին

կը կառչի, եւ անոնցմէ կ'ակնկալէ բալասանը: Այն ինչ համայնքին մէջ, սոսկալի մոլութեան մը ժանտ ուրուականը սողոսկած է, ու ամլութեան դատապարտած է ունէ բարոյական մտածութիւն: Ու վերջապէս, դեռ անհամար բարոյական խօթութիւններ կան, որոնք փտախախ մը աղէտաւորութեամբ բոյն դրած են շատ տեղեր. չուրջանակի ակնարկ մը պըտըտցնենք կրթական գործին վրայ այն գաւառականներուն, որոնք կրօնական կապակցութիւն մը ունին Դիարպէքիւրի հետ, ու բնականաբար, անոնց դպրոցական կազմակերպութեան հոգածութիւնն ալ, առաւելապէս Դիարպէքիւրի կը վերաբերի:

1. Լընէ.—Դիարպէքիւրէն 16 ժամուան հեռաւորութեամբ, տեղակալանիստ կարեւոր գիւղաքաղաք մըն է: Ունի 1 եկեղեցի, 3 քահանայ, այնքան ջերմնոտնդ նախանձաւորութիւն մը, ու կրօնական անայլայլ գաւառանք մը ունի որ, հակառակ քահանաներու ապիկարութեան ու սղիտութեան, բայց դուռ մը չէ եղած ուրիշ յարանուանութիւններու, ու ամլութեան դատապարտած է մարդորսական փորձերը: Սոսկալի հակակրօնութեամբ մը կը համակուրին, հանդէպ այն անձերուն, որոնք իրենց ըմբռնումներուն հակասող քարոզութեան մը, կամ թելադրութեան մը մէջ կը գտնուին: Սակայն իրենց կրօնական աններողութեան չափ ալ, ծայրայեղ օղնոյնք եւս կան մարդիկ, որոնք մոռցած իրենց առօրին զբաղումները, մշտնջենական արբեցութեան մէջ են: Ասիկա կործանարար մոլութիւն մըն է, որուն բարձումը անհրաժեշտ է ազդու եւ հեղինակաւոր թելադրութիւններով: Սովորական օրերու մէջ նշարուած այս վնասաբեր ալքողամոլութիւնը, աներեւակայելի համամատուցութիւններու կը հասնի Բարեկենդանի օրերուն մէջ, երբ օրական մեծաքանակ ըմպելիք կը սպառի, այնքան Փիզիքական ու բարոյական կորուստներով:

Ժողովուրդը, ալ ինքնին կը մակարերուի թէ, որքան կը տուժէ այս խոտելի մոլութեան երեսէն: Մենք դարձեալ ներելի պիտի համարէինք այս դժոխային մոլութիւնն ալ, եթէ գոնէ հոգատար ըլլային հասարակ վարժարան մը ունենալու: Դպրոցական այնքան ձախաւեր վիճակ մը ունին որ, անկէ ընթերցանութիւն մը սորվելու հաւանականութիւնն ալ, ջորիէն ձագ սպասելու չափ անկարելի ցնորք մըն է: Զինքը չըջապատող գիւղերն ալ, որոնք բազմահայ համայնքներ կ'արգանդեն, թէ կրթապէս ամէնէն ողորմագին արգահատելութեան մը տալաւորութիւն կը թողուն վրագ: Անանկ որ աւելի դիւրին պիտի ըլլայ ճերմակ սարեակ մը գտնելը, քան պիր-կարգմունքի հմուտ մէկուն հանդիպումը:

Բնականաբար, ասոնք, իրենց տարազայման սփռութեանը մէջ, չպիտի կրնային դատողութիւն մը կազմել, կրթական յարկերէն սպասուելիք իմացական օգուաներուն վրայ: Ազգութիւնը զօրաւոր ջանադրութիւններ, եթէ միանան իրենց տրամադրութիւններուն, հոս ալ կրթական բարիքը պիտի ճառագայթէ:

Շատ զարմանալի կը գտնեմ, որ մինչեւ հիմա, Պատրիարքարանը չէ խորհած լըճէի համար ալ կրթական նպաստ մը յատկացնելու, ինչ որ գերագոյն բարիք մը պիտի ըլլար, ու սփռութեան ամօթէն պիտի փրկէր զիրենք: Եթէ դեռ շարունակուի ներկայ անտարբերութիւնը, մեղադրելի պիտի չըլլայ լըճէի հասարակութիւնը, երբ օր մը վերջապէս զգալով իր կրթական պակասութիւնը, ու ինքն իր մէջ զարթոնելու գիտակցութիւնը չունենալով, հրապուրուի մարգորսական հնարքներէն, որոնք աղէտք մը դարձած են սղէտ միջավայրերու համար:

Անհրաժեշտ է, որ Պատրիարքարանէ յատկացուած գրամական բաւականաչափ նպաստ մը, վերջնական կազմակերպութիւն մը տայ կրթական գործին, արժանաւոր ու ձեռնհաս դաստուաներով, եւ առողջ ու գործնական կրթութեան յայտագրով մը:

2. Հազրօ.—Ունի 2 եկեղեցի, 4 քահանայ:

Ասոր ժողովուրդն ալ ջերմ կրօնասիրութիւն մը ունի, յատկանշական բարքերով ու հնամենի աւանդութիւններու ջերմ պահպանութեամբ: Տնտեսական ինկած ու աննախանձելի մակարդակ մը ունենալուն հակառակ, հոս ալ ամբողջ համայնքը դիւնեմութեան սրտկալի ախտաւորութիւն մը ունի, անբայատրեւի աստիճան: Կան մարդիկ որ ամբողջ օրերով դինի կը խմեն, ցնորտկան քանակութեամբ: Աւելորդ է ըսել թէ ինչ աւերքներ ու վնասներ առաջ կուգան այս յոռի սովորութենէն:

Հազրօ, կրթակէս տւելի բարեբաղդ եղած է, որ բազմութիւ տարիներ Կեղրոնին հոգածութիւնը վայելելէ յետոյ, հիմա ալ, նպաստընկալ վարժարաններուն կարգին մէջ է: Ասկայն արդիւնքի տեսակէտով, ասիկա ալ շատ սարբերութիւն մը չունի լըճէն, քանի որ, զրկուած նսրասոսերը, մասնաւոր եւ ուղղամիտ մատակարարութեամբ մը չեն գործածուիր, ու իրենց նպատակին չեն ծառայեր: Ո՛չ կանոնաւոր դասընթացք, եւ ո՛չ ուսուցչական յարմարաւոր մարմին մը ունի: Քիմահաճոյքով կը կառավարուի, եւ զարմանալի է որ, բարեփոխութեան նշան մըն ալ չի ցուցներ:

Մեղք է, որ կրթասէրներու լուսմաներէն հաւաքուած այս նպաստները, վիժին իրենց նպատակէն, եւ ասոր անոր քաակները

պարարտացնելու ծառայեն: Պզտիկ հոգածութիւնք մը բաւական պիտի ըլլայ այս գեղծումներուն դիմագրաւելու:

3. Հայնի.—Հակառակ հայ բնակչութեան նուազութեան, կրթութեան համար ամենէն արգասաւոր գետինը կը ներկայացնէ: Երկար տարիներէ ի վեր, ասոնք զուտ ինքնայատուկ միջոցներու կիրառութեամբ, իրենց մասնաւոր վարժարանը ունեցած են, որ եթէ շատ նախանձելի կանոնաւորութիւն մը չունի, գոնէ բաղդատական առաւելութիւն մը ունի միւսներուն վրայ: Այստեղի ժողովուրդը յատկանշական է մանաւանդ, իր կրօնական վիճաբանութիւններովը, որոնք երբեմն հրատապ հանգամանք մը առած են: Այսպիսի աններող հակառակութիւնները պատճառ եղած են, որ յարանուանական բաժանումներ երեւան ելլեն հոն: Անկասկածելի է, որ եթէ կրթական ջանքեր սերմանուին հոս, շատ բեղմնաւոր արդիւնքներ առաջ պիտի գան:

4. Փարդին.—Դիարպէքիւրէն 18 ժամուան հեռաւորութեամբ, տեղակալական կեդրոն մըն է: Ունի մէկ եկեղեցի եւ երկու քահանայ: Ժողովուրդը, որ 300 տունէ կը բաղկանայ, մեծամասնաբար քրդախօս է: Ունի բազմաթիւ հայաբնակ գիւղեր, որ նմանապէս քրդախօս են: Փարդին ալ երկար ժամանակէ ի վեր, կրթական տեսակէտով կեդրոնին բարիքները վայելած է, եւ հիմա ալ, ամսական երկու ոսկիով կը նպաստաւորուի Պատրիարքարանէն: Կրթական ջանքերը հոս ամուլ մնացած չեն, որովհետեւ հասարակութիւնը, իր կրօնասիրութեանը չափ, կրթասիրութիւն ալ ունի: Առեւտրական կարեւոր կեդրոն մը ըլլալուն համար, զաղթական համայնքներ ունի, եւ այս պարագան շատ սատարած է կրթական բարդաւաճման: Բանիմաց անհատներ ունի, որոնք գիտակցութեամբ կը վարեն եկեղեցիին ու դպրոցին մատակարարութիւնը: Հիմակուան վարժարանը բաւական օրինաւոր է, եւ պաշտօնավարող ուսուցիչներն ալ ունին հմտութիւն:

Ուրեմն Փարդինի համար յատկացուած նպաստը, բաղդատաբար, օգտակարութիւն կ'ունենայ եւ կը ծառայէ իր կըրթական նպատակին. գոնէ Հաղբօյէն մեծ առաւելութիւններ ունի:

Ասոնցմէ յետքը կուգայ Տէրիք, որուն հայ բնակչութիւնը, թէև սակաւաթիւ, բայց նիւթական ինքնաբաւ կացութիւն մը ունին, եւ բաւական ջանախնդիր են իրենց կրօնական ու կրթական բարելաւութեան: Տեղւոյս Առաջնորդարանին մէջ, այսօրերս, բաւական ջանքեր կ'ըլլան Տէրիքի մասին:

Դիարպէքիւրի մօտակայ գիւղերուն մէջ, շատ բարեբաղդ

գտնուեցաւ Սաթիգիւղ, որ անցեալ տարուէն է ի վեր, կրթասէր բարերարի մը դրամական ձեռնտուութեամբ վարժարան մը ունեցաւ, եւ ատիկա գիւղական համայնքին համար մեծ մխիթարութիւն մըն է:

Գաւառային վանքերու վիճակը չենք հասկնար թէ ինչո՞ւ նկատողութեան չառնուիր Պատրիարքարանի կողմէ: Ամենքն ալ անխնամ թողուած են, երբեմն անկարող ու տգէտ վանահայրի մը ձեռքը, երբեմն առանց վանահայրի, երբեմն ալ յանձնուած այս կամ այն աշխարհականին: Երեք պարագաներուն ալ արդիւնքը նոյն է որ կ'ըլլայ, անկերպարան վիճակ մը՝ հասութեաբեր կալուածներու, հողերու, այգիներու լքում, եւ կամ առատ զեղծում՝ մատակարարութեան գործին մէջ: Այսօր եկեղեցական մը այս կամ այն վանքին արծաթեղէնները ծախելով փոխարէնը կը գրպանէ, վաղը աշխարհական հոգաբարձու մըն է որ արտ մը կամ հող մը ուզածին պէս կը շահագործէ՝ առանց վանքին դանկ մը տալու, եւ այսպէս, քիչ մը ամէն վանքի գլուխն պլլուած են այդ կարգի անպատեհութիւններ, որոնք շատ ցաւալի գաղափար մը կազմել կուտան վանքերու մասին ցոյց տրուած հոգածութեան բնոյթին վրայ: Բալուի նախորդ տեղապահ Եզնիկ վարդապետի պարագան՝ եւ անկէ առաջ ալ նմանօրինակ ուրիշ պարագաներ՝ զորս մամուլը բազմիցս առիթը ունեցած է արձանագրելու, ինքնին չեն ապացուցաներ սա կէտը թէ այս պահուս մեր վանքերու ինչքն ու բարոյական նշանակութիւնը շատ անհոգ ու անփոյթ մարդոց խնամքին յանձնուած են: Երբոր իրողութիւնները մէջտեղն են եւ շատ ալ պերճախօս, ալ ինչ տեղի կը մնայ տարակոյսի:

Այսօր, Պատրիարքարանի 45 առաջնորդական վիճակներուն մէջ կը գտնուին 131 վանքեր, որոնք հետեւեալ կերպով բաժանուած են Հիւանդանոցի այս տարուան օրացոյցին մէջ. — Էնկիւրի 1, Կեսարիա 3, Սըվազ 6, Թոգատ 2, Ամասիա-Մարդուան 1, Շապին-Գարահիսար 3, Տրապիզոն 3, Էրզում 8, Երզնկա 11, Բաբերդ 1, Քղի 4, Քէմալ 6, Պայազիտ-Ալաշկերտ 1, Վան 25, Կտուց 8, Պիթլիս 11, Մուշ 9, Սզերդ 1, Դիարպէքիւր 5, Բալու 4, Խարբերդ 5, Ալին 5, Արաբկիւր 1, Չարսանճազ 5, Ուրֆա 2. Նաև մասնաւոր թեմերէն 1 Արմաշի, 1 Պէլէկէսի եւ 7 Աղբակի մէջ:

Արդ, այս վանքերէն ամենքն ալ ունին իրենց վանահայրերը եւ կամ հսկող մարմինները: Ո՛չ անշուշտ: Ու քանի որ չունին՝ ինչպէս կը մատակարարուին, ինչ հսկողութիւն կ'ըլլայ անոնց վրայ, ո՞վ կը ղեկավար անոնց հասոյթներուն խնդրով:

Հարցումներ են ասոնք որոնց պատասխան մը գտնելը կարծեմ բաւական դժուար պիտի ըլլայ:

Աւելորդ է ըսել թէ Պատրիարքարանի համար ուշադրութեան առնուելիք շատ կարեւոր խնդիր մըն է ասիկա: Չնայդ կրնար պահանջել որ այդ վանքերուն ամբողջութիւնը բարոյապէս բարձրացունին այնչափ՝ որչափ որ կրնային եղած ըլլալ երբեմն, իրենց հաստատման միջոցին: Բայց գոնէ այն չափ դժուար չպիտի կրնայ նկատուիլ անոնց նիւթական մատակարարութիւնը, ինչպէս նաեւ բարոք պահպանումը: Վերոյիշեալ վանքերէն մեծագոյն մասը շատ տարածուն ստացուածքներ ունին, մէկ մասն ալ բաւական հարուստ է՝ եկեղեցական սրբազան առարկաներով: Դժուար է խիստ հսկողութեան մը տակ առնել այդ անշարժ եւ շարժուն ստացուածքները:

Աս է որ կը սպասենք Պատրիարքարանէն եւ իրաւամբ:

Տիկին Արուսեակ Պեղիբեան անդրանիկ հայ դերասանուհին, որ երկար տարիներէ ի վեր կը թափառէր անոք անօգնական, կարեւորութեան կարօտ՝ աղքատ ու հիւանդագին՝ խելակորոյս վիճակի մէջ Ս. Փրկչի Հիւանդանոցը պատսպարուեր է: Այսօրուան սերունդը չի տեսաւ Տիկին Արուսեակի երիտասարդութեան փայլուն շրջանը՝ բեմական կեանքի մէջ՝ բայց իր ժամանակիցներէն մեզի հասած արձագանգներ կը նկարագրէին իր դերասանուհիի յաջողութիւնները փայլուն հեռապատկերի մը մէջ, որ երբեք գուշակել չէր տար այս տխուր վերջաւորութիւնը: Խեղճ Արուսեակ:

Կիլիկոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ Մովսէս եպիսկոպոս Կէօմրիքճեան, որուն Ատանա հասած ըլլալը հեռագրուած էր Պատրիարքարան օգոստոսի 9-ին, մեծ պատուով ընդունուեր է եկեղեցական եւ աշխարհական բոլոր ժողովականներուն կողմէ: Մովսէս եպիսկոպոս ժամերգութեանց ներկայ գտնուելով՝ քարոզ մը խօսեր եւ իր պաշտօնը բացատրեր է, յորդորելով ժողովուրդը որ համերաշխ ոգով ջանան ընտրել այնպիսի Կաթողիկոս մը որ սուրբանական կառավարութեան վստահութիւնը դրաւած ըլլայ եւ Կիլիկոյ թեմականներուն եւ համայն Ազգին բաղձնաց համապատասխանէ: Կաթողիկոսական ընտրութիւնը պիտի կատարուի Վարազայ խաչին օրը:

Անցեալ ապրիլ ամսի սկիզբները երկու լեհացի քահանաներ Ամերիկայի հայոց առաջնորդ Յովսէփ եպիսկոպոս Սառաձեանին մի խնդիրք են ներկայացրել, սրից երկուսն է որ Ամե-

րիկայի լեհացի ժողովրդի մի մասը 5 տարի առաջ հռոմէական եկեղեցուց բաժանուելով կազմել է Վեհական ուղղափառ եկեղեցի»։ Այդ եկեղեցուն այժմ պատկանում են 8 քահանաներ։ Յանկալով այդ եկեղեցու ապագան ապահովել թէ Ամերիկայի մէջ և թէ Լեհաստանում զբանջողում են ունենալ մի եպիսկոպոս իբրև զլուխ, ուստի խնդրում են որ իրանց քահանաներից մէկը այս Վեհական ուղղափառ եկեղեցու» կղերական գասից և ժողովրդից ընտրուելով՝ եպիսկոպոս ձեռնադրուի հայոց եկեղեցուց։ Սառաձեան եպիսկոպոսը խոստանում է այդ մասին զրեւ հայոց կաթողիկոսին։ Կաթողիկոսի կողմից տնօրինութիւն դեռ չի արուած։

Հազիւ թէ լուրջ նշանակութիւն կարելի լինի տալ այդ զիմումին, քանի որ զիմոզները ոչ մի պարտականութիւն չեն յանձն անում հայոց եկեղեցու նկատմամբ և իրանց կապը հայոց եկեղեցու հետ լսկ մի եպիսկոպոս ձեռնադրուելու մէջ պէտք է արտայայտուի. միւս կողմից, հայոց եկեղեցու պետերն այնքան թոյլ են և ապիկար, որ սեփական գործերն իսկ չեն կարողանում կարգի դնել, ուր մնաց որ դեռ ուրիշների զրուսելու մասին հոգան... Կարծես այդ զիմումը հեղնելու համար Տրիպոլի հայերն էլ զիմում են յունաց եկեղեցուն՝ խնդրելով հոգայցողութիւն իրանց հոգեւոր պէտքերի։ Ահա ինչ ենք կարգում Պօլսի թերթերից մէկում.

«Ափրիկեան Տրիպոլիոյ կարգ մը հայեր հանրագիր մը ուղղեր են Աղեքսանդրիոյ յունաց պատրիարքին, որպէս զի տրաօնէ տեղւոյն յոյն կղերն՝ հայոց ալ հոգեւոր պէտքերն հոգալու տու ժամապէս։ Մեզ կ'գրեն Ափր. Տրիպոլիտէն թէ ազգայնոց ոմանց այս ընթացքը հոս պատճառերէ միմաներուն, որք կը գանդատին թէ իրենք լեզուով, եկեղեցիով և ընտանեկան կարգաւարքով այնքան կը տարբերին յոյներէն որ չեն կրնար զոհանալ յոյն կղերով մը։ Հայ կիներ ու ազջիկը չեն կրնար ծնրադրել յոյն քահանային առջև, ու մնջկատակներով խոստովանուիլ, իրենց անձնական և ընտանեկան հանգամանքները պատմելու համար. ուստի նորէն կը պնդեն զիմել հայոց պատրիարքարան որպէս զի ճար մը գտնէ իրենց հոգեւոր անխնամ վիճակին»։

ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ

Համաշխարհային գրականութիւնը մի խոշոր կորուստ ունեցաւ այս օրերս յանձին Էմիլ Զօլայի, որ մեռաւ խիստ տրագիկ պայմաններում։ Անսպասելի մահը վրայ հասաւ Զօլային այնպիսի տարիքում, երբ նրա ստեղծագործող խոշոր տաղանդը ինչպէս մի վիթխարի հնոց անօրինակ բեղմնաւորութեամբ շարունակում էր արտադրել մէկը միւսից աւելի հետաքրքիր, աւելի մեծ գրական գործեր, նա անկարող եղաւ նոյն իսկ տեսնել իր վերջին՝ «La vérité», վէպի տպագրութեան վերջը, որ նորերս միայն սկսուեց հրատարակուել Փրանսիական «L'aurore» թերթում։

Զօլայի անունը, նրա անձնաւորութիւնը, նրա ամբողջ բարոյական պատկերը և հասարակական ժամանակակից այրող հարցերին նուիրուած նրա բաղմամբիւ երկերը այնպէս յայտնի են ամբողջ աշխարհի ընթերցող հասարակութեանը, որ գուցէ աւելորդ լինի այս անակնկալ, ցաւալի մահուան առթիւ վերստին նկարագրել յոյգերով և փառքով հարուստ այդ մեծ կեանքը ընդարձակօրէն, կամ թէկուզ հակիրճ տեսութիւններով։ Նրա անձնաւորութեան և գրական գործունէութեան մասին ահագին հատորներ են դրուել «Բուգոն-Մակարների» սերիան, «Ներք քաղաքները» և «Զօրս Աւետարանը» այնպիսի հսկայ մեծութիւն են կազմում համաշխարհային գրականութեան մէջ, որ քիչ ու շատ կրթուած մարդու աչքից չեն կարող խուսափել։

Զօլային՝ իբրեւ գրականագէտի և հասարակական գործչի վիճակուած էր մի բացառիկ բաղդ։ Իր աղմկայոյզ կեանքի արշալոյսին և վերջալոյսին թէև տարբեր հանգամանքներում և տարբեր պատճառներով նրա անունը համաշխարհային հետաքրքրութեան առարկայ դարձաւ, իսկ իր հայրենիքում՝ Փրանսիայում մերթ հիացմունք, մերթ անասելի զայրոյթ, մերթ խո-

րին յարգանք, մերթ բուռն ատելութիւն առաջ բերեց դարձնելով նրա գոյութիւնը լիբը և լաւ ապրած կեանք: Իր գրական գործունէութեան սկզբում նա յայտնւում է իբրեւ գրական մի նոր հոսանքի՝ նատուրալիզմի յանդուգն ներկայացուցիչ, որ գալիս է մաքառելու բոմանտիկ շկօլայի համարեա կէս դար տնող տիրապետութեան դէմ: Իսկ վերջին տարիները նա անսպասելի կերպով դուրս եկաւ իր գրասենեակից, թողեց խաղաղ գրական աշխատանքները և հրապարակ նետուեց ոչ թէ իբրեւ սոսկ գրչի մարդ, այլ քաղաքական գործիչ: Ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան հասարակական կարծիքը յուզող մի խոշոր երևոյթ էր այդ, երբ մի գրող իր տաղանդով ստեղծած փառքին և անուանը յենուած մարտահրաւէր էր կարդում Ֆրանսիայի զինւորական ամբողջ կազմին և սպաննում դարաւոր նախապաշարունակների նուիրական համարուած հրէշաւոր շէնքը խորտակել: Ոսքս Դրէյֆիւսի գործի՝ աշխարհահռչակ L'affaire-ի, զինւորական դատաւարութեան անսխալականութեան և Զօլայի յանդուգն ու հմայիչ «J'accuse»-ի մասին է:

Մեծ գրողի աղմկայոյզ կեանքի այս երկու հետաքրքիր շրջաններն այն աստիճան նշանակալից են, այնպիսի մեծ ազդեցութիւն ունեցան մէկը գրական—մտաւոր հոսանքների և միւսը ժամանակակից քաղաքական-հասարակական հասկացողութիւնների, տիրող գաղափարների վրայ, որ արժէ դրանցով առանձնապէս դբադուել, առանձին տեսութիւնների նիւթ դարձնելով: Զօլայի գրական դերի մեծութիւնը, նրա խաղացած դերի արժէքը ժամանակակից պատմութեան մէջ, նրա հասակի ամբողջ մեծութիւնը այդ երկու շրջանների մէջ է: Որոշել նատուրալիզմի տեղը և նրան ծնունդ տուող հանգամանքները ընդհանուր գրականութեան պատմութեան մէջ, որոշել Զօլայի դերի նշանակութիւնը Դրէյֆիւսի դատի և նրան յարակից, նրանից տրամաբանօրէն բխող հասարակական հոսանքների մէջ կը նշանակի պատմել Զօլայի ամբողջ կեանքը:

Ահա այս է ներկայ յօդուածի նպատակը:

*
* *

Բնութեան մէջ, ֆիզիքական երևոյթների շրջանում իշխող պատճառականութեան օրէնքը իր բոլոր զօրութեամբ արտայայտւում է և գաղափարների աշխարհում, ուր նոյնպէս ամեն մի պատճառ հետեանք է և ամեն մի հետեանք պատճառ է մի այլ անմիջական հետեանքի և սրանցից մէկը միւսով է բացատրւում:

Ահա թէ ինչու իւրաքանչիւր գիտական վարդապետութեան,

թէօրիայի ծագումը, նոյնպէս որևէ գրական կամ փիլիսոփայական չիօլան բացատրելու և հասկանալու համար անհրաժեշտ է մի յետադարձ հայեացք ձգել մօտաւոր անցեալի վրայ և այդ շրջանում աիրող մօտաւոր հոսանքների մէջ փնտրել սկիզբը, արմատները ժամանակակից գաղափարների, ժամանակակից հասարակական երևոյթների:

Այս անսակետով նատուրալիզմը պայմանաւորող պատճառները պարզելու համար հետաքրքիր է դառնում նրա նախնիքայ գրական զարույցի, բովանդակի ոգին բացատրել, որովհետև մէկը միւսի դէմ սկսուած բեական է, նրա հակահարուածն է:

Կեանքի և գրականութեան փոխադարձ ազդեցութիւնն իրար վրայ արտադրում է այն, ինչ սովոր ենք անուանել գաղափարների էվոլյուցիա: Հասարակական և քաղաքական այս կամ այն պայմանները անհրաժեշտապէս առաջ են բերում որոշ արամադրութիւն, կաղապարում են ժամանակակից հոգիները և բնաստութիւնների, մարդկանց անհատական աշխարհների վրայ դնում են իրստ բնորոշ և յայտնի էպոխային յատուկ կնիք: Որոշ ժամանակում իշխող տրամադրութիւնը, հոգեկան անհանգըստութիւնները կամ բաւականութիւնները, իդէալական, կամ նիւթապաշտական որոշ ձգտումների մէջ գաստարակուած սերունդի միջոցով արտադրում է մի յայտնի գրականութեան ժանր, որ ապրում է այնքան ժամանակ, որքան կենսունակութիւն ունի նրան ծնունդ տուող հասարակական կազմակերպութիւնը: Որովհետև խօսքը ֆրանսիական գրականութեան մասին է, ապա չափազանցութիւն չի լինի ասել, որ գուցէ ոչ մի ժամանակ կեանքի ազդեցութիւնը գրականութեան վրայ այնպէս սուր, այնքան բելիկֆի կերպով չի արտայայտուել, որքան XIX դարի սկզբին: Ֆրանսիական հասարակութիւնը XVIII-դ դարի վերջին և XIX-դ դարի սկզբին հոգեկան երկու խոչոր, մինչև այդ ժամանակ չը տեսնուած ցնցումների ենթարկուեց, որոնք նրա ամբողջ էութիւնը տակն ու վրայ արեցին: Նախ Մեծ յեղափոխութիւնն իր արիւնոտ մերկով եկաւ ու անողորմ կերպով քանդեց հասարակական—քաղաքական բազմաթիւ հին հասկացողութիւնների, հին նախապաշարմունքների շէնքը—խոստանալով հնի աւերակների վրայ վերածնուած, նոր կեանքի փառաւոր յաղթանակը կանգնել, երջանկութեան արշալոյսը վառել մօայլ հորիզոնի վրայ: Մարդիկ շտապեցին զերեզմաններ պատրաստել այն բոլորից, ինչի հաւատում էին, ինչ որ մինչև այդ ժամանակ համարուում էր նուիրական, ինչի վրայ կեանքը հաստատուած էր իր բոլոր արտայայտութիւններով: Բոլոր կապանքներից յանկարծակի ազատուած միտքը խօսական թոխը—

ներ զործեց. նոր հասարակութիւն էր դարձնուած նոր հիմունքների վրայ և մօտաւոր պերսպեկտիվան ընդգրկում էր աիեզերքը: Սակայն այդ չը տեսնուած տրագեդիայի, պատմական այդ մեծ յեղաշրջման պատրաստողներն իրար յօշոտելով ճակատադրապէս զննուեցին ազատութեան սեղանի վրայ, յեղափոխութիւնն ինչպէս կրօնոս՝ լափեց իր զաւակներին, և երազած ազատութեան, կօլլեկտիվ կամքի, հասարակական արդար սկզբունքներին, վաղուց հետէ փնտրած ճշմարտութեան և արդարութեան փոխարէն հորիզոնի վրայ ցցուեց Նապօլէօնի վիթխարի էպօիզմը իր սանձարձակ ու ցինիկ քմահաճութեամբ:

Բարոյական զարհուրելի կատասարօֆ էր այն, մի չը տեսնուած յուսախաբուութիւն, որ կօշմարի պէս ծանրացաւ տանջուած, յողնած մաքրի վրայ: Մօտաւոր անցեալի բուռն ցընցումներին յաջորդող այս անսպասելի հարուածը, բոլոր հաւատալիքների, բոլոր համոզմունքների, բոլոր ազնիւ ցնորքների այս խորտակումը առաջ բերեց հոգիների մէջ մի խեղտող դատարկութիւն, մի մոռյլ պեսսիմիզմ: Ահա այդ ժամանակ սպտերն ուռիների, տխուր նոճիների տակ, հեռաւոր անձանօթ հորիզոններում, խուլ անապատներում փափսացող ջրերի ափերին լացող մի թափառական ոգի եկաւ սրտերում բուռն զրեց և զրականութեանը ներշնչումներ բերեց: Իրականութիւնից զրմ-զոհ, պատրանքներով դառնապէս մոլորուած հոգիները մի սեռակ միատիկ տրամադրութեան մէջ ընկան և կրօնը էլի մի անգամ վշտացած հոգիների ապաստանը դարձաւ: Շատօրբիանը յայտնուեց և չուտով նրա *Le génie du Christianisme*-ը այնքան մեանխօսիկ հոգիների սփոփիչը, միայնութեան ընկերը, սիրելին դարձաւ Մի հեռաքրքիր զուգադիպութեամբ *Le génie du Christianisme*-ը լոյս տեսաւ 1802 թ. ապրիլի 12-ին, ճիշտ նոյն օրը, երբ ամենակարող դարձած Նապօլէօն հրատարակեց կանկոնդան, քաղաքական և կրօնական իշխանութեան այդ դաշինքը, որ կնքւում էր մեռնող ազատութեան զլխին: Էլ ոչինչ չը կար մօտաւոր փառաւոր անցեալից, այնքան յոյսերից ու երազներից և Շատօրբիան հրաւիրում էր բոլոր հիասթափուածներին դէպի կրօն, դէպի բնութիւնը, դէպի միայնութեան մեղանխօսիկ խոհերը: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, երբ ամբողջ կեանքը դարձել էր ձանձրոյթ, վիշտ ու թախիծ: Ժամանակակից իշխող տրամադրութիւնը մինք գտնում ենք Շատօրբիանի հերոսներից մէկի խոստովանութեան մէջ. «Իմ կեանքի սկզբից ես շարունակ անձնատուր եմ մի թախիծի, որի սերմը ես կրում եմ իմ մէջ ինչպէս ծառը, որ պահում է իր պաղի սերմը: Իմ բոլոր զգացմունքներին խառնում է միշտ մի ան-

ծանօթ թոյն... Ես մի ծանր երազեմ... Ես ձանձրանում եմ կեանքից, ձանձրոյթը ինձ միշտ խեղտում է. ինչ որ հետաքրքրում է ուրիշ մարդկանց, իմ փոյթը չէ... Թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում հասարակութիւնն ու բնութիւնը ինձ համար ձանձրալի են»:

Այսպէս էին այն հոգիները, ուր բուն զրեց ըոմանտիզմը, որով անհատական յախուռն զգայմունքի ծայրայեղ սրբագործումը մի նոր կուլտ դարձաւ բազմաթիւ ցաւած հոգիների համար: Մարդիկ գաղափարների մի մի աշխարհ ստեղծեցին իրանց համար, ուր երազներով ապրեցին երևակայական ուրախութիւնն ու թախիժը, երևակայական մեծութիւններն ու վշտերը առանց կարիք ունենալու այլ, կողմնակի գոյութիւնների: Ինչիվիդուալիզմը զօրացաւ որպէս սրտերի սանձարձակ ու սանտիմենտալ զեղումն, որպէս ծայրայեղ սէր դէպի բնութիւն, դէպի մեկանխօյիկ առանձնութիւնը: Բոմանտիզմի սկիզբը դրուեց այդպէս պատրաստուած հողի վրայ, հեռու չէր Վիկտոր-Հիւգոն, նա, որ Le génie du Christianisme-ից քսան հինգ տարի յետոյ ըոմանտիկ չիօլայի վերջնական ձևակերպումը կատարեց:

Մօտաւորապէս 1830-ական թւականներին Շամօբրիսնով, Գեօթէ-Շիլլերով, Բայրօնով ներշնչուած հասարակութիւնն ու գրականութիւնը ըոմանտիկ է մետափիզիկայով համեմուած: Նրա լիբիզմը սանտիմենտալ զեղումներով, գեղանկար ու հարուստ պատկերներով գնում է դէպի բարձր խորհրդածութիւններ անյայտի, մարդկային ճակատագրի, տիեզերքի գերազոյն, անհասանելի նպատակների մասին: Անհատական յոյզերը մարդուն կը տրում են իրականութիւնից, խորթացնում են կեանքի նիւթական պահանջներից, մի կողմ են մնում բանականութիւնն իր մտածելու, քննելու, տարրալուծելու կարողութեամբ, միտքը տիեզերական րացիոնել ճշմարտութիւնները գտնել չի հետամըտում, բարձի թողի են լինում հոգեբանութիւնն ու գիտութիւնը, մտածելու և դատելու արուեստը, ճշգրիտ և տրամաբանական մեթոդը: Մարդիկ չեն խօսում, այլ կարծես, երգում են, չեն տեսնում, այլ երազում են, պատկերները ֆանտաստիկ են և սանտիմենտալ, ամեն ինչ լիբիկական զեղումնէ, սնգամ ըոմանի մէջ իշխում է լիբիզմը: Ժորժ Զանդի հերոսները մի մի լիբիկական բանաստեղծներ են, Ալֆրեդ-դը-Միւսէն լալիս է իր «Գիշերներում» (Les nuits) և Վիկտոր-Հիւգոն իշխում է այդ բոլորի վրայ և իր լայնարձակ ու հարուստ ոճով, իր ֆանտաստիկ պատկերներով տոն, ուղղութիւն տալիս ամբողջ գրականութեան:

Առաջին կայսրութիւնը բոմանտիզմի օրօրանն եղաւ, իսկ երկրորդ կայսրութիւնը՝ նատուրալիզմի: Բնատուրացիայի և նրան յաջորդող ժամանակի սերունդը, բոմանտիկ և երազող, վաթսուներկան թւականներից իր ձգտումներով և հաւատալիքներով դիմում է դէպի գեկադանս. ժողովրդի մտածող խաւերի մէջ մի շարք բարոյական և մտաւոր ֆակտորների ազդեցութեան տակ առաջ է գալիս մի շարժում, որ իրական լինելու բոլոր հանգամանքներն ունի: Բուսսօի, Շատօրբրանի և Լամարտինի սանտիմենտալ, էնտուզիաստ, յեղյեղուկ ձգտումներով գրականութեան կողքին XIX դարի երեսնական թւականներից սկսեալ քաղաքական և մտաւոր մի քանի առաջնակարգ կարեւորութիւն ունեցող երեոյթներ Ֆրանսիական հասարակութեան մէջ առաջ են բերում մի գրական, քննադատական ոգի և նրա առաջ լայն մտաւոր հորիզոններ են բաց անում: Սէն-Սիմօնեան վարդապետութիւնը, թէև ուսուցիչի կերպարանքով, բայց մի զօրեղ բարոյական մղումն է հանդիսանում լաւագոյն խնդրերին դէպի մի լաւագոյն սպագայ: Յուլիսեան և 48-ի յեղափոխութիւնները թէև զբոսում, փողոցում, բայց սօցիալիզմը տեսան. տնտեսական դասակարգային պայքարի և նրա սպառնալի հեռանկարը որպէս անորոշ, անկերպարան մի հասարակական երեոյթ լոյս ընկաւ և մտքերի մէջ իրարանցումն առաջ բերեց:

Քննադատական վերաբերմունքը դէպի կենսական սովորական և կարևոր երեոյթները նոր, անորոշ բայց յուսալից ձգտումները, բոմանտիզմի երազող, զգայմունքների հետ խաղաղող ոգու գէմ սկսուած բնակչիան ունենում է իր զօրեղ ջատագովը, հրապարակ է գալիս Տէնը. այդ մեծ մեթոդիկ խելքը և ուղղութիւն է տալիս սկսուած շարժմանը: Տէն իրաւացի կերպով նկատում է որպէս թեորեալի նատուրալիզմի. նա աշխատում է գրականութեան մէջ անցկացնել գիտական մեթոդը, Թէ իբրև փիլիսոփայ, թէ իբրև քննադատ և պատմաբան նրա ազդեցութիւնն ահագին է մտաւոր ուղղութիւնների վրայ սկսեալ 1865-ից: Տէն աշխատում է հոգեբանութիւնը դարձնել մի իսկական գիտութիւն. նրա համար «հոգին միներբին կանոնաւորուած շարժումն է, ինչպէս մակնթացութիւնը ծովում և մի խուրձ տպաւորութիւնների և էմպուլսիաների, որոնք այլ կողմից նայելով իրանց հերթին նոյնպէս ներկայացնում են կանոնաւորուած շարժումն և ներվային թիթեոններ»: Մարդկային բանականութեան արքատրակցիայի կարողութիւնը ըստ Տէնի, մարդու և անասունի խնդրերի ամենահիմնական տարբերութիւնն է. անգամ «ես» ի իդէան Տէնի համար արքատրակցիայի պրօցեսսի մի

սերիայ է: Ձուտ հոգեկան և ֆիզիոլոգիական երևոյթները նա կապում է իրար ներվային կենտրոններին յատկացնելով մեր բոլոր զգացմունքների, բոլոր զաղափարների ծագումը և նրանցից դուրս Տէնի համար իրական և հաստատուն ոչինչ չը կայ:

Գրականութեան մէջ մեթոդի հիմունք Տէն ընդունում է էքսպերիմենտալը—փորձնականը, «Լաւ ընտրուած ամենամանր փաստեր, հարուստ ու նշանակալից, լայն կերպով՝ հանդամանօրէն պարզուած, ահա այսօր ամեն մի գիտութեան նիւթը», ասում է Տէն: Գիտական այս մեթոդը Տէն տարածում է նաև վիպասանութեան ու պատմութեան վրայ, սա մի քննադատական լայն սիստեմ է, որ ընդգրկում է գիտութեան և գեղարուեստի բոլոր ճիւղերը: «պատմութեան հիմունքը, բոտ Տէնի, պիտի լինի հոգեբանութիւնը և ինչ որ հոգեբաններն անում են անյետալի համար, մեծ վիպասանները և թատերադիւրները պիտի անեն ներկայի համար»: Եւ այսպէս Տէն կարծէք ուղղում է ասել վիպասաններին՝ վերցրէք կեանքի մանր ու մեծ բազմաթիւ փաստեր, լուսաբանեցէք այդ փաստերը գիտական մեթոդով, տրամաբանական հետեւողութեամբ պարզեցէք հոգեկան աշխարհը մինչև նրա ամենամութ, ամենաանշան անկիւնները և դուք մեզ կը տաք մի հետաքրքիր, իրականութեան ճշգրիտ պատկերը կազմող վէպ:

Տէնի ուսումնասիրութիւններն ու թէօրիաները մուտք են գործում գրականութեան մէջ. նրա մեթոդով միտքը հոգեբանական գիտողութիւնների համար չի բաւականանում միմիայն իր նկրթին աշխարհով, իր «Լսող», ինչպէս անում էր լիրիզմը, հապա և Տէնի մատնացոյց արած «մանր փաստերն» է փնտրում իր շուրջը, իրանից դուրս գտնուող «ուշ-ես» ի մէջ: Եւ այս «ուշ-եսն» է, որ դառնում է բոմանի նիւթ որպէս հուկադրութիւն բոմանտիզմի ընտրած «ես»ին և նրա լիրիկական զեղումներին:

Շնորհիւ Տէնի մի ամբողջ յեղաշրջումն է կատարւում մտածողութեան եղանակի, նիւթեր ընտրելու մեթոդի և այդ նիւթերը շահագործելու, նրանց վերլուծութիւնից եզրակացութիւններ հանելու մէջ: Միևնոյն ժամանակ կոդ-Բերնարի ֆիզիոլոգիական ուսումնասիրութիւնները, նրա հետաքրքիր գիտութեան, ներվային սիստեմների ֆունկցիայի վերաբերեալ նրա ուշագրաւ գիտնական եզրակացութիւնը թէ ներվային մանր կենտրոնները գործում են անյախ մեծ կենտրոնից և այլն, այս բոլորը հզօրապէս օժանդակեցին Տէնի հոգեբանութեան և նրա-

նից բղխող իր վարդապետութեան ու թէօրիանրին իբրի անհրաժեշտ հիմունք ծառայեցին:

Սէն-Սիմոն, Կլոդ-Բեռնար, Տէն, երկու յեղափոխութիւնները (1830 և 1848) նրանց յարակից պայմաններով անցեալ դարի յիսունական թուականներին ֆրանսիայում պատրաստեցին մի սերունդ, որի հոգին կարծէք էլ տրամադիր չէր յափշտակուելու բոմանտիկական յոյզերով, որ ձեռք է վերցնում անխորհուրդ մելանխոլիայից, որի ընտեալները հաւատում են գիտութեանը, իսկ բազմութիւնը, մասսան հնարաւոր, կարելի է պահում մօտաւոր նիւթական երջանկութիւն, բաղդ, բարօրութիւն այլ հիմունքների վրայ: Այնուհետև յաջորդող պերիօդը արդէն գիտական պողիտիվիզմին է պատկանում. բոմանտիկ երազների տեղ բռնում է գործնական մատերիալիզմը, իսկ սկեպտիցիզմը մտքին տալիս է մի այլ, հիմնական, պահանջող քննադատող ուղղութիւն:

Այսպէս էր այն հասարակական տրամադրութիւնը, այն իշխող ոգին, որ հնարաւոր դարձրեց նատուրալիզմը, մի գրական շարժում, որ առաջնակարգ երևոյթ է հանդիսանում XIX-դ դարի վերջին կիսում: Երկրորդ կայսրութեան տրագիկական անկումը բոմանտիզմի վերջնական պարտութիւնն էր միաժամանակ, իսկ երրորդ հանրապետութեան հաստատութիւնը քննադատող, պահանջող մտքի, իրական մեթոդի յաղթանակն եղաւ: Զօլայի «La débacle» վէպի վերջում՝ հերոսը գիտելով հրդեհուող և բռնկերով լուսաւորւած Պարիզի աւերակները բացականչում է տխրութեամբ՝ «ամեն բան պէտք է նորից սկսել»... Նատուրալիզմը այդ սկսուող ճնորդութիւններից մէկն էր:

* *

Երբեմն ժամանակի ոգին, մթնոլորդի մէջ հասունացած զաղափարներն աստիճան զօրեղ են լինում, որ մի նոր վարդապետութեան, մի նոր ժամանակակից չկօլայի հիմնադիրներն անգամ մի տեսակ ֆատալ գործիքներ են հանդիսանում հրամայող էվօլյուցիայի ձեռքին և կատարում են իրանց յեղաշրջող, առաքելութիւնը, քանզում հին կազմակերպութիւնները, հասկացողութիւնների հին շէնքերը, շարունակելով իրանց մեռնող սերնդի անգամ, մեռնող վարդապետութեան կուսակից համարել: Հաւատալիքում են, որ Լիւտեր երկար ժամանակ ինքն իրան ամենաջերմ կաթօլիկ էր համարում և նոյն իսկ երբեմն սարսափով էր տեսնում իր քարոզութիւնների մի փոքր խիստ, անսպասելի հետևանքները:

Այսպիսի մի, կարելի է ասել, անգիտակից գրական առաքելութիւն էր վիճակուած Գիւստաւ—Ֆլօբերին, որ բովանտիկ և նատիւրալիստ դպրոցների մէջ իր գրականութեամբ, մանաւանդ իր «Madame Bovary»-ով բռնում է միջին տեղը Գիւստաւ—Ֆլօբեր, ինչպէս անցողական չրջաններին պատկանող բոլոր գործիչները, մի բարդ գրական տեմպերամենտ է։ Գործնական կեանքի մէջ իր սովորութիւններով բուրժուա՝ նա մի կատարեալ բովանտիկ է իր դաստիարակութեամբ, իր ճաշակով և պաշտում է Հիւգօին. միևնոյն ժամանակ նա բուռն ափսոսանքով է տածում դէպի բուրժուազիան և գրում է մի բովան, մի գլուխ գործոյ, որ կատարեալ հերքումն է բովանտիկութիւն։ Այդ բովանը նրա Madame Bovary-ն է, ուր նա ցոյց է տալիս ամենաարագիկ հանգամանքներում, թէ որքան վեասակար է սանտիմենտալ, դատարկ զեղումներով անորոշ ու յեղեղուկ տենչերով դաստիարակութիւնը, բարոյական խրատները զուտ վերացական պայմաններում, մի խօսքով բովանտիկութիւն ամբողջ վտանգը։ Իր հերոսուհու Madame Bovary-ի ճակատագրին հետեւելով՝ մարդ տեսնում է թէ մինչև որ աստիճան երբեմն լիբիկական յալիւժտակութիւնները, կրքոտ գալարումները, անորոշ յոյզերը գործնական կեանքի մէջ պատճառ կարող են դառնալ այնպիսի դաստիարակութիւն ստացած անհատների անգիտակից անբարոյականութեան և վերջնական ողբալի անկման։

Ամբողջ այդ գործը կատարուած է հզօր գլխով և վարպետ, կիրթ ձեռքով, լոգիկան, բարոյական եզրակացութիւնները պահուած են մի անողորմ ճշտութեամբ, այնպէս որ միտքը խուսափել չի կարողանում բովանտիկ, սանտիմենտալ դաստիարակութեան ի վեաս ծանր եզրակացութիւններից։ Այսպիսով բովանտիկ ծնուած ու մնուած Ֆլօբեր տալիս է առաջին համարեա նատուրալիստ վէպը և իր անողորմ լոգիկայով հարթում է այն մարդու ճանապարհը, որ պիտի գար շուտով երիտասարդ դպրոցն ամբողջապէս իր ուսերին կրելու։

Դա մի յանգուզն գործ էր. բովանտիկութիւն տակաւին առերևոյթ արքայականութեան չրջանում (1857) մի ըմբոստ տաղանդ քսան տարուայ մանրակրկիտ ուսումնասիրութիւններից, ժամանակակից հասարակական կազմը խորը հոգեբանական զիտողութիւնների ենթարկելուց յետոյ գալիս էր իր վէպով ասելու, թէ այդ հասարակական օրգանիզմը փթած է և անկայուն, որ բուրժուա-բովանտիկ դաստիարակութիւնը պատրաստում է միայն մի հիւանդ անբարոյական սերունդ, որ ընտանիքն այգալիսով դառնում է մի տխուր ֆիկցիա։

Հարուածուած խաւերում կատաղութիւնն ընդհանուր էր այդ յանդուգն գրողի դէմ և շուտով Ֆլօբեր դատարան քաշուեց արդարանալու իր գրքով տարածած «անբարոյական դադափար-ների» համար: Դա մի վերջին փորձ էր հինը պահելու, որ սա-կայն յաջողութիւն չ'ունեցաւ, բռնանտիզմի շրջանը փակուեց և զրականութիւնը անցաւ քննադատական խորհրդածութիւն-ներին:

Այսպէս էր այն հասարակական-գրական միջավայրը ուր Զօլան ոտք կոխեց:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Լր ԵԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Կոերականութիւնը Գերմանիայի մէջ *)

Բ

Յայտնի է, որ գերմանական համալսարանները, **) վայելելով խօսքի կատարեալ ազատութիւն, ունին նաև վարչական ինքնավարութիւն: Վարչական անկախութեան հիմնական պայմաններից մէկն է՝ նոր պրօֆէսորների ազատ ընտրութեան իրաւունքը: Իրաւ է, լուսաւորութեան միջնորդութիւնը de jure՝ ունի որոշ մասնակցութիւն այդ ընտրութիւնների մէջ, սակայն de facto նա շատ սակաւ է օգտուել իր իրաւունքից: Միայն «նոր կուրսի» հաստատուելուց յետոյ հանգամանքները փոխուեմ են, կառավարչական բարձր շրջանները յաճախ ուղղակի թէ կողմնակի կերպով սկսում են միջամտել համալսարանների ներքին գործերին, այդպիսով հետզհետէ ոտ է կոխում «գիտութեան տաճարներում» բնութարարիկ ուղղութիւնը, վերջինս մանաւանդ նկատելի է Պրուսիայի մէջ:

Անցեալ աշնան կառավարչական միջամտութեան մի դէպք պատահեց Ստրասբուրգի համալսարանում, որ շնորհիւ իր բուհային պայմաններին մեծ յուզում առաջ բերեց ամբողջ Գերմանիայի մէջ, մանաւանդ պրօֆէսորների շրջանում: Այս անգամ կառավարչական միջամտութիւնը արդէն համալսարանների լոկ վարչական անկախութեան չէր սպառնում, այլ և գիտութեան ազատ աւանդելու սկզբունքին, որ մինչև այսօր Գերմանիայի բարձրագոյն կրթական հիմնարկութիւնների փառքն ու պատիւն է եղել:

Ստրասբուրգի համալսարանում նոր պատմութեան կաթիլգրան ազատում է. վարչութիւնը (համալսարանի սենատոր)

*) «Մուրճ», № 9:

**) Գերմանիան ներկայումս ունի 22 համալսարան:

ձեռնարկում է նոր պրոֆեսսորի ընտրութեան, ու հրաւերի առաջարկներ է անում: Բանակցութիւնները դեռ չաւարտած, կառավարութիւնը յայտարարում է, թէ նա բացում է երկրորդ կաթէդրա նոր պատմութեան համար՝ մէկը բողոքական, միւսը կաթոլիկ պրոֆեսսորի համար՝ և թէ վերջինիս համար հրաւիրել է ոմն Շպահանին: Սա յայտնի է որպէս օրթօդոքս կաթոլիկ Ապա պարզուեց, որ կառավարութիւնը այդ տարօրինակ որոշումը կայացնելով կամեցել է որոշ բաւականութիւն տալ Centrum-ին ու էլզաս-Լոթարինգիայի կաթոլիկ կղերականութեան: Դէպքը եղակի էր Գերմանիայի համալսարանական կեանքում: առհասարակ պրոֆեսսորները հրաւիրւում են անխտիր բոլոր դաւանութիւններից՝ լինի կաթոլիկ, բողոքական, թէ հրէայ՝ և ազատ քաղաքական որևէ նկատումներից: Շպահանի հրաւերը բնականաբար առաջ բերեց միաժամանակ հրճուանք կաթոլիկ կղերական շրջաններում եւ սաստիկ դժգոհութիւն հասարակութեան բոլոր կրթուած խաւերում:

Հոչակաւոր պատմագէտ արեգարդ Մոմսէնը՝ որին իրաւամբ անուանում են Գերմանիայի պրոֆեսսորների Նեստոր՝ ամենից առաջ արձագանք տուեց այդ անսովոր երևոյթին, հրապարակ գալով մի բողոքագրով, որ միևնոյն ժամանակ ազդու կոչ էր՝ ուղղած Գերմանիայի պրոֆեսսորներին՝ գիտութեան ազատ ու անկախ աւանդման պաշտպան հանդիսանալ: Մոմսէնի նամակը լոյս տեսաւ Միւնխէնի նացիօնալ-լիբերալների օրգանում «Համալսարանական կրթութիւն ու դաւանաբանութիւն» բնորոշ վերնագրի տակ *):

«Մեր կեանքի նեարդը—ասում է Մոմսէնը բողոքագրում—կազմում է կանխակալութիւնից ազազ գիտական հետազոտութիւնը (Voraussetzungslose Forschung). այսինքն՝ այնպիսի ուսումնասիրութիւն, որ չէ ծառայում գիտութիւնից դուրս ուրիշ գործսական նպատակների ու միտումների, հետազոտութիւն՝ որ սոսկ ստոյգ է թւում բարեխիղճ ուսումնասիրողին թէ տրամաբանօրէն թէ պատմական տեսակէտից. մի խօսքով հետազոտութիւն, որի միակ նպատակն է՝ ճշմարտութիւնը: Հրաւիրել մի պատմագէտ կամ փիլիսոփայ, հարկադրելով նրան լինել բողոքական կամ կաթոլիկ ու ծառայել իր դաւանութեան, նշանակում է ոչ այլ ինչ, եթէ ոչ պարտադրել նրան սահմանափակել իր հետազոտութիւնը, երբ փաստերը թւում են անյարմար նրա կրօնական այս կամ այն զօգմային. այսպէս, բողոքական պատմաբանին արգելել հակայագործ պապականութեան պատմութեան

*) „Münchener neueste Nachrichten“, 15 նոյեմբ. 1901.

Սեպտեմբեր, 1902.

վրայ լոյս սփռել, իսկ կաթօլիկին՝ արժանի գնահատել հերետիկոսութեան ու բողոքականութեան խորունկ մտքերը ու անսահման մեծ նշանակութիւնը»։ Նամակի վերջում Մոմսէնը նկատում է, որ նա դիտաւորութիւն չունի չօչափելու որևէ մասնաւոր դէպք. խօսքը սկզբունքի հարց է՝ արդե՞ք և դարացի ու օգտաւէտ է համալսարաններում պրոֆէսորների ընտրութեան ժամանակ ղեկավարուել դաւանաբանական նեղ նկատումներով։

Ընչ ասել կուզի, որ ծերունի պրոֆէսորի հեղինակաւոր ծայրը անմիջապէս կենդանի արձագանք գտաւ Գերմանիայի համարեա բոլոր համալսարաններում։ Պրոֆէսորների ջախջախիչ մեծամասնութիւնը հանդէս եկաւ որպէս ջերմ պաշտպան «անկանխակալ գիտական հետազօտութեան» նշանաբանի. պրոֆէսորները շտապեցին մի շարք ուղերձներով և ապա առանձին յօդուածներով պարբերական մամուլի մէջ յայտնել իրանց խորին համակրանքն ու երախտագիտութիւնը ականաւոր պատմագէտին, որ չը զլացաւ բարձրացնել իր զօրեղ ծայրը յօգուտ գիտութեան ազատութեան ընդդէմ կղերական միջին խարդաւանքների, Բայց և հակառակորդները՝ կղերականութեան ներկայացուցիչները, չը մնացին լուռ. սակայն ընչ կարող էին առարկել «անկանխակալ գիտական ուսումնասիրութեան» սկզբունքի դէմ, մի սկզբունքի, որի ճշմարտութիւնը արեգակի լոյսի պէս պարզ է՝ Նրանք օւնէին միայն մի ելք՝ դիմել եղուխոնների սիրած միջոցներին, այն է՝ ազաւագել Մոմսէնի խօսքերը, ձգնել տալ նրանց ուրիշ մեկնութիւն, տարբեր միտք... ուլորամօնաւանները ջանում էին ամեն կերպ ապացուցանել, որ Մոմսէնի ասած «անկանխակալ գիտական հետազօտութիւնը» լոկ բարձրահնչիւն խօսքեր են, զուրկ որևէ իրական բովանդակութիւնից... Միթէ կայ մի գիտնական, մի պատմագէտ, որ չունենար իր անձնական որոշ քաղաքական, սոցիալական կամ կրօնական հայեաղքները. միթէ հնարաւոր է կատարել որևէ գիտական ուսումնասիրութիւն առանց ղեկավարուելու սեպհական աշխարհահայեցողութեամբ. մարդ չըկայ—բացականչում էին նրա մեծ ապլօմբով—որ մտաւոր և հոգեւոր *tabula rasa* (մաքուր տախտակ) լինէր. Մոմսէնի վարմունքը մի-կատակերգութիւն է և ուրիշ ոչինչ...

«Ով պարապել է երբ և իցէ մեթօդօլոգիական խնդիրներով—ասում է Միւնխենի համալսարանի պրոֆէսոր, ռայխըստագի պոստգումաւոր ու Բաւարիայի ուլորամօնաւանների պորագլուխ Հերտլինգը (Hertling)—դիտէ, որ «անկանխակալ գիտական հետազօտութիւն» ասած բանը գոյութիւն չունի. մեր

բոլոր ուսումնասիրութիւնները ու մեր գիտութիւնը հիմնուած են բաղմամբիւ կանխադրելի կարծիքների վրայ *)»:

Այս եզրուիտական առարկութիւնները ստիպելիքն Մոմսէ-նին մի նոր նամակով **) բացատրել, թէ «անկանխադրելի գիտական հետազոտութիւնը» չէ պահանջում, որ գիտնականը իր ուսումնասիրութիւնը կատարելիս կամ պրոֆէսսորը իր դասախօսութիւնը ասանդակիս մի կողմ ձգեն իրանց աշխարհահայեցողութիւնը, նա բողոքում է լոկ այն սիւսեմի դէմ, որի նպատակն է մտքնել գիտութեան ասանդակեան մէջ զաւանաբանական սկզբունքը, հարկադրել պրոֆէսսորին ծառայել այս կամ այն կրօնի շահերին: «Դատնականութիւնը—սկզբում է Մոմսէնը—մահաբեր թշնամի է համալսարանական գործին»:

Այս պոչեմիկան պարբերական մամուլից շուտով անցաւ գրականութեան: Լոյս տեսան թէ յոռաջողիմականների և թէ ուղտրամոնտանների կողմից մի շարք դրքեր, ուր մանրամասն քննութեան էր առնուած կաթօլիկութեան վերաբերմունքը դէպի գիտութիւնը ու ժամանակակից կրթութիւնը: Այդ հրատարակութիւնների մէջ ուշադրութեան արժանի է Միւնխենի համալսարանի պրոֆ. Գիւտտլէրի (Güttler) գրքոյը հետեւեալ բնորոշ վերնագրով՝ „Giebt es eine „Katholische“ Wissenschaft?“ («Արդեօք գոյութիւն ունի «կաթօլիկ» գիտութիւն»): Գիւտտլէրը կաթօլիկ է ու ինքը իրան սնուանում է «կաթօլիկ եկեղեցւոյ հաւատարիմ սրգին»: Այս իսկ տեսակէտից հեղինակի դատողութիւնները կրկնակի գնահատելի են: Արդ ինչպէս է վերաբերւում «կաթօլիկ եկեղեցւոյ հաւատարիմ սրգին»: Այս իսկ տեսակէտից հեղինակի դատողութիւնները կրկնակի գնահատելի են: Տեսնենք ինչպէս է վերաբերւում «կաթօլիկ եկեղեցւոյ հաւատարիմ զաւակը» Մոմսէնի շարժման:

«Անկանխադրելի գիտական հետազոտութիւն» ասելով—բացատրում է արդոյ պրոֆէսսորը—չը պէտք է ըմբռնել՝ ինչպէս ընդունել ու տարածել էին շատերը, որպէս պահանջ անտես առնել մտրդու տրամաբանութիւնը ու հոգեբանութիւնը, նրանք անձնական տեմպերամենտը ու անհատական հակումները Երոէք: Նա պահանջում է սոսկ հրաժարուել կրօնական դոգմայով առաջնորդուելուց գիտական աշխատութիւնների ժամանակ: Ապա հեղինակը բերորոսպելտիւ հայեալք ձգելով պատմութեան վրայ նկատում է: «Միջին դարերում Եկեղեցական հեղինակութեան ու ազատ մտքի մէջ ծագած պայքարը վերջապա վերջի-

*) Ibid, № 538.

**) Ibid, № 546.

նրա կատարեալ յաղթութեամբ: Միջնադարեան սխօլաստիկան պահանջում էր, որ կրօնական դոգման գիտական ազատ ուսումնասիրութեան սահմանը կազմէր, սակայն նոր դարերը այդ անպայման բացասեցին: Այս երկու դարագլուխների միթօդների էական զանազանութիւնը կայանում է հէնց ժամանակակից գիտութեան անկախութեան մէջ որևէ դոգմատիկ սահմանափակումներից, նրա անկանխակալութեան մեջ (Voraussetzungslosigkeit): Արդ, ինչպէս կարելի է կամաւոր կերպով յետ դառնալ դէպի նրանց միութիւնը... Գիտութեան բաժանումը կրօնական դոգմայից մի նշանաբան է և այդ երկու դարուց ի վեր մեր մէջ արիւն ու ոսկոր է դառել: Այն օրից, երբ նախ վեատֆալեան խաղաղութեան դաշնադրութիւնը ու ապա ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը (1789 թ.) տակն ու վրայ արին կեանքի բոլոր յարաբերութիւնները, անկարելի է այլ ևս գիտութիւնը ստորադրել կրօնական դոգմային նախկին ձևով (էջ 8, 8, 20 և 22):

Մեր նպատակից դուրս է կանգ առնել այս բանակոռի խիստ հետաքրքիր ու խրատական բոլոր մանրամասնութիւնների վրայ: Մենք կամենում էինք միայն յիշատակել մի երևոյթ, որ մի կողմից լուսաբանում է կառավարչական շրջանների ու կաթօլիկ կղերականութեան դիրքը կրթական ասպարիզում, իսկ միւս կողմից ցոյց է տալիս, որչափ զօրեղ է ազատ ու անկախ գիտութեան անհրաժեշտութեան գիտակցութիւնը Գերմանիայի հասարակութեան յառաջագէտ խաւերի մէջ: Զը նայած վերջիններիս մշտական ընդդիմադրութեան, ուլտրամօնտանները, օգտուելով կառավարութեան հովանաւորութիւնից, չեն խնայում ոչ մի ջանք կրթական գործը ամբողջովին իրենց ձեռքը վերցնելու: Նրանք չը ռաւականանալով գոյութիւն ունեցող համալսարաններում առանձին կաթօլիկ կաթէդրաներ բանալով պատմութեան ու փիլիսոփայութեան համար—թող աստուածաբանական բաժինները, ուր ազատ իշխում են նրանք—այսօր երազում են առանձին «կաթօլիկ համալսարան» հիմնել... Իսկ առայժմ բանակցութիւններ են տեղի ունենում Հռոմի ու Բերլինի մէջ ուլտրամօնտանների պարագլուխների միջնորդութեամբ բանալու «կաթօլիկ ֆակուլթետ» Ստրասբուրգի համալսարանում...

Կը յաղողուի կղերականութեան այս համարձակ ձեռնարկները թէ ոչ—դժուարին է շնոր կուրսի» ժամանակ գուշակելը: Սակայն խնդիրը դորանում չէ: Ուշադրութեան արժանին դաւանաբանական վտանգաւոր ուղղութիւնն է, որ ուլտրամօնտանները ջանում են մտցնել կրթական գործի մէջ: Յայտարարելով ժամանակակից գիտութիւնը ամուսնոր ժանտախտ»

(geistige Epidemie), ճգնում են մի կողմից գիտությունը կաթոլիկացնել, միւս կողմից հրաւեր են կարգում հրաժարուել իսպառ ժամանակակից կուլտուրայից ու դառնալ յետ դէպի միջնադարեան խաւարը, դէպի անդրպատմական կարգերը...

Ահա մի նմուշ:

«Յետ, յետ—կանչում է Ռօտտենբուրգի եպիսկոպոս Կէպպլէրը մի հրապարական ճառում. ներկայ կուլտուրական ճանապարհը միայն ըստ երևոյթին է ամենում դէպի յաւաջադիմութիւն. նա առաջնորդում է դէպի անդունդի եզերքը...»

Յետ դէպի բարի հին գերմանական կենցաղավարութիւնը. յետ դէպի խելացի քրիստոնէական կեանքը. յետ դէպի հնազանդութիւն մեծերին. յետ դէպի ժուժկալութիւն, համեստութիւն, խնայողութիւն ու սակաւապետութիւն...

«Իսկ կորչին թալկացուցիչ կրթութիւնը, գիտութիւնը, ազատութիւնը» *)...

Արդեօք հարկաւոր են բաղատութիւններ...

Անցնենք այժմ Գերմանիայի քաղաքական-սոցիալական կեանքին:

Quidam.

*) „Münch. N. N.“ 17 Յուլիսի, 1902.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒՆՆԵՐ

«Русское Богатство» ամսագրի այս տարուալ ոգոստոսի համարում «Известъ Сіона» վերնագրի տակ մի հետաքրքիր չօդուած է զետեղուած, որ նուիրուած է ուսա-հրէայ լահուստեղծ Ֆրուզին:

Նոր տերմին չէ «Սիօնի երգը». հազարաւոր դարերից ի վեր, զեռ լահալահան զետերի ափերին հրէայ ժողովուրդը երգում է երաղում է իր Նիօնը: Մարգարէնրի ամբողջ սերունդներ Յնովայի է երկնքի շանթերում միուած իրանց երգերով Սիօնը երգել են է անցել: Նրանց հոգու ալդ ալրող հառաշանքներն անգիր ալրած յետազայ սերունդները տիեզերքի բոլոր ծաշերում կրկնեցին է երեսական հայրենիքի եթերային պատկերին փարած մնացին: Մինչ է վերջին տարիները սակայն, բոլոր ալդ երգերը, բոլոր ալդ հառաշանքները ողոր, անցած երջանկութիւն վրայ սուգի ընաուրութիւն ունէին: Նրանք բոլորն էլ աւելի յուահաա վշտի, քան արցունքի միջից իրապէս յուահոդի շերտն ունէին:

Հրէայ ժողովրդի մտածող մասը, նա որ աւելի խորն էր զգում իր անհայրենիք, անարգուած, հալածական ազգի ցար, ալդ եթերային ողբերը, ալդ դարերի մէջ կորչող լացերն ու հառաշանքները փորձեց

հաւաքել է մի իրական լենակետի վրայ զնել հին իլլիպիաները: Նրնունդ առաւ սիօնիզմը, ալսինքն վերադարձ զէպի հին հայրենիքը, որովհետեւ առանց հայրենիքի, ինչպէս աակ է մի ալդ հրէայ լահաստեղծ, չը կայ երջանկութիւն:

Ինքն լատ ինքնան դարաւոր անարգ վիճակից, լարատն հալածանքներից լողնած, ձանձրացած մի ժողովրդի ալդ անհանգիստ ժեստը, անտանելի կացութեան մի ելք, մի վախճան գտնելու մտահոգութիւնն ու փորձը անպալման համակրելի են: է ալդ սիօնիստական շարժումը ամբողջ աշխարհում հետաքրքրութիւն ինչպէս է համակրութիւն զարթեցրեց: Սիօնիստների տարեկան կօնգրէսները Նւրուպայում միշտ մի առանձին ուշադրութեան առարկայ եղան է ահազին, գուցէ է չափազանցալրած հետաքրքրութիւն զարթեցրին զրական, հասարակական է նոյն լակ քաղաքական խաուրում: Վերջին ժամանակները սակայն ալդ շարժման զեկալուրները՝ զօկտոր Հերցլ է Մաքս-Նորդաու քաղաքադիրական հովերով լանում՝ աշխատում են աղատութիւն է վերածնութիւն երաղող իրանց սոգէա, խեղճ ժողովրդին ցեխերի միջից քաշ տալով սանել զէպի զերազոյն նպատակը: Սզգերի ալատագրու-

թիւնն պատմութեան մէջ մի չը տեսնուած կօմպրօմիսի օրինակ տուին այս նոր ձևի հայրենասէրները. հրապարակական մի խալտաւակութիւն էր զօքոօր շերցլի ներկայանալը աշխարհի անմեղների դահիճ, Արդիւ-Համիդին. հրէայ ժողովրդի դատին, ամբողջ սիօնիզմին մի անարդարեք էր անցեալ տարի Բաղէլում գումարուած հրէական կօնգրէսի հիացմունքի հեռագիրը ուղղած նոյն Համիդին: Ապատութիւնը ո՛չ մի երկրում, ո՛չ մի դարում սողալով ձեռք չի բերում և սողացողն արժանի էլ չի ապատութեան: Այդ էր, որ այնպէս միահամուռ և ազդու լեզուով ասաց սիօնիստներին ամբողջ աշխարհի լաւագոյն մամուլը յիշեալ երկու վարիչներին՝ շերցլի և Նօրդատի ամօթալի ընթացքի և անբարոյական տակաւիկայի առթիւ: Անգամ լաւ հրէաները զայրոյթի և ամօթի մի ճիշտ արձակեցին Բաղէլի կօնգրէսի հեռագրից յետոյ. ֆրանսիական համակրելի հրապարակութեան Բերնար Լապարի այդ առթիւ հրատարակած յօդուածը մի ազդու և ազնիւ բողոք էր այդ ստորագրման դէմ: Ճշմարիտ է, որ չէր կայ երջանկութիւնն առանց հայրենիքի, բայց չարժէ հայրենիք, հող ձեռք բերել սողալով, ստորանալով և. որ գլխաւորն է, դահիճների հետ զոհերի գէմ միանալով:

Ուրախալի է սակայն, որ յԲԿԵ. Բօր.՝-ի յօդուածի հեղինակը Ս. Յ. Գուցէ և մի հրէայ, նոյնպէս դատապարտում է Հերցլի և Նօրդատի ընթացքը, որոնք «թուրք փաթիշահի տոներն ընկան», բայց նրա հասկացած սիօնիզմը հազիւ թէ թունդ սիօնիստներին զոհաբերումն տալ: Նա գտնում է, օրինակ, որ հրէայ ժողովուրդը կարող էր ձեռք ձեռքի տուած դործել իր խորթ հայրենիքի առաջապէս ոյժերի հետ. թէ և դրա հետ միասին սիօնիզմը նրա համար

մի անհրաժեշտութիւն է, որովհետև հրէայ ժողովրդի ազէտ, զժրադոհ հազին մասսայի համար դա կարող է ծառայել որպէս մի փրկարար յօգունգ, և ընդունակ է բարձրացնել նրա մարդկային արժանաւորութիւնը:

Այդպիսի հայեացքի դէմ բազմաթիւ են հակառակ կարծիքները թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում. շատերի համար սիօնիզմը մի անմիտ ուտօպիա է, որ ապրիլու չէ, որովհետև կենսական հիմունքների չունի: Այդպիսի առարկութիւնների դէմ է, որ յօդուածագիրը մէջ է բերում հեղինակաւոր կարծիքներ և մասնատրայէս ռուս վիպագիր Գօրկիյի կարծիքը, որ գուցէ ամենանշիշտ որոշումն է սիօնիզմի. «Ինձ տեսում են, թէ սիօնիզմն ուտօպիա է—չը գիտեմ, գուցէ: Բայց քանի որ ես այդ ուտօպիայի մէջ տեսնում եմ անյաղթելի, բռն ծարու ապատութեան, ինձ համար դա իրականութիւն է, ինձ համար դա կիսանքի մի գործ է»:

Այսպէս թէ այնպէս իրողութիւն է, որ այսօր սիօնիզմը լայն չափերով ընդգրկել է տառապող հրէայ ժողովրդի խաւերը, ներկայանալով որպէս նրա լուսնի, թէկուզ ուտօպիական, նրա հեռաւոր երազների մի վարդադոյն պատկեր: Հէնց այն հանգամանքը, որ սիօնիզմն ունի նաև իր երգիչները, իր բանաստեղծները, ամեն ալաւ ապացոյցն է, որ այդ շարժումը լայն ծաւալ է ընդունել: Այդ բանաստեղծների մէջ առաջնակարգ տեղ է բռնում Յրուզը՝ «Սիօնի երգիչը», որի դատածօրինները ամենատեղեղ կերպով են արտայայտում ստրուկ, հալածակուն, երկրէ երկիր թափառական ժողովրդի հոգու տանջանքները, իր յոգնած զուխը զննելու մի տեղ ճարելու բուռն ցանկութիւնը, դարերի մէջ անհետացած իր հայրենիքի կիւրի կարօտը: Խորթ հայրենիքի մէջ

հրէայ ժողովրդի զգացած օտարութիւնը Զրուգ արտայայտում է ամենայնուցիւ տողերով՝

«Որպէս անապատի թափառական
Յաւզների և լերկ ժայռերի մէջ,
Շրջում եմ ես ճանապարհս կոր-
ցրած»

Մանուկն անեց, մեծացաւ բան-
տում,

Մի՛թէ կարող է նա երգել փայ-
լը ցերեկի,

Շառաչն ալիքի և դաշտն արձակ
Գունատ ու խեղճ է իմ երգը,

Ինչպէս գունատ է իմ կոյր բաղ-
դը»:

Ի՞նչ լուզիչ է այդ համեմատու-
թիւնը. ամբողջ մի ժողովուրդ դա-
րերի ընթացքում «անել է մեծա-
ցել բանտում» և բանտը լայն ա-
րար—աշխարհն է, ուր ոչ մի տեղ
նա իր սեփական արևը, օրուայ մի
կտոր փայլը, պայծառ շողերը չունի,
ոչ մի երկրում գլուխ գնելու տեղ
չունի. Բոլոր հայածական, բոլոր
տանջուած ժողովուրդների երգն է
այս, բոլոր նրանց, որոնք խորթ
զաւակներ են օտար աշխարհներում:

Անհատական և ազգայնական չա-
րաբերութիւնների մէջ երբ զեկա-
վար է հանդիսանում անմիտ ատե-
լութիւնը, աւանդաբար հասած և
կուրօրէն շարունակուող հալածանքը,
միշտ և ամեն տեղ զոհերի որոնե-
րում կաթիլ կաթիլ թոյն է քամ-
ւում ամեն օր, որ քանդում, կըր-
ծում է նրանց կենսական ոյժերը
ու ոչնչացնում, անօգուտ դարձնում
այնքան եռանդ, արտադրող ու բա-
րերար այնքան էներգիա:

Եւ ո՛չ մի ժողովուրդ աշխարհում
այնպէս խորը կերպով չի զգացել
այդ ատելութեան թոյնի դառնու-
թիւնը. ո՛չ ոք հրէայի պէս իր սրտի
խորքում չի լացել իր խեղդուած,
պրկուած, ճմուռած հոգեկան կարո-
ղութիւնների կորուստը: Կրօնները՝
ինչպէս միշտ, աւելի սպառնալի և

պալքարող են դարձրել հին ատե-
լութիւնը, աւելի զօրացրել զոհերի
սրտի կիզիչ կսկիծը: Այդ կսկիծն է
ահա, սրտի խորքում, այդ խուլ հեծ-
կըլտանքն է, որ այնքան ուժեղ
ցաւի շեշտով Զրուգ արտայայտում
է հետեւեալ դիմումով քրիստոնեայ
մանուկին.

«Երբ մայրդ քեզ խնամոտ ու
քնքոյշ ձեռքով

Ցանում էր դէպ կանաչաւտ
դաշտերը,

Երբ քո կուրծքն աղատօրէն շըն-
չում էր,

Ես մի խուլ անկիւնում, քարի
վրայ, պատի տակ,

Շան բնում մոռացուած՝ ընկած
էի մենակ,

Եւ իմ անարգանքը հեղնում էիր
դու,

Եւ իմ ցաւերի վրայ քրքջում
էիր դու

.....

«Միշտ նոյն թոյնը թշնամու-
թեան ու ալլող ատելութեան

Դու անողորմ ձեռքով իմ կըրծ-
քում թափեցիր,

Օ՛, որքան թարմ ու կարող
ուժեր

Դու իմ մէջ ալդ թոյնով խեղ-
դեցիր»

Ասանց հողի, առանց սեփական
ճակտի քրտինքով թրջուած դաշ-
տերի ազգութիւնն, իբրև ուրոյն
ամբողջութիւն, իբրև պատմական
մի շօշափելի երևոյթ, տրամաբանա-
կան անկարելիութիւն է: Եւ Զրուգ,
որ այդ ձգմարտութեան խորին գի-
տակցութիւնն ունի, դիմում է իր
անհայրենիք, անհող ժողովուրդին և
հրաւիրում է նրան դառնալ դէպի
մայր հողը, վայր ձգելով ուսից թա-
փառական փերեզակի ամօթալի
պարկը, որ օտարների ատելութիւնն
է դրել նրա թիկունքին և որ նա
կրում է այնքան դարեր, մոռացած
աւելի աղնապնդող, աւելի գրաւիչ

պարսպմունքի կարիքը Թրուպ
ասում է.

«Իսթրիա դէպի հող. դէպի գաշ-
տուն ու ալգին.

Նրանք քո անցած երջանիկ
օրերին

Ծառայելին քո մանուկ լաղղին,
Որպէս մի խաղաղ ու երջանիկ

ապաստան»:

Որո՞նք են Թրուպի՝ իբրև «Սիօնի
երգչի» անմիջական յոյսերը, ի՞նչ
է սպասում, ի՞նչ է ուզում նա
այսօր, այս ժամին. ո՞րն է նրա
գերագոյն ցանկութիւնը՝ նա իս-
նասեղծ է, նա երազող է՝ և իր
անմիջական իղձերն ու սպասելիք-
ները իր խոհերի և երազների պէս
եթերային, իղէալական են: Նա
խօսում է արտերի հետ և իր աշ-
խարհը զգացմունքների աշխարհն
է, ուր նուիրական յոյզերի թագա-
ւորութիւնն է քարոզում և միայն
յոյզերի:

Այսպէս նա կը կամենար՝

«Որ մեր ստրկութեան անարգ
զօրութիւնը

Որպէս կատաղի քաղց մեզ ցաւ
պատճառէր,

Որ մենք զգայինք, ինչպէս ծա-
րաւը տօթ օրին,

Մի ալրուղ տենչանք դէպի նուր-
բական վիճակը,

Որն այժմ մեզ երազ է թուում—
Ազատութիւնը դառնար քաղցր

ու գրաւիչ,

Որպէս զի ազատ կեանքի պայ-
ծառ միտքը

Գիտակցական զայլույթի կրա-
կով վառուած՝

Մեր հոգու մէջ բնկնէր, ինչպէս
արտի ակօսում

բնկնում է հատիկը օրհնուած
ցանքի,

Նւ ծաղկէր այնտեղ՝ որպէս վե-
րածնուած զրախտումս:

Այս բոլորը շատ գեղեցիկ է, չու-
ղիչ. իւրաքանչիւր տողը խօսում է
տանջուած, անարգուած ժողովրդի

վերաւոր սրտին, բայց շատ աւելի
լաւ, շատ աւելի ցանկալի կը լինէր
տեսնել—ինչպէս ասում է նաև մեզ
զբաղեցնող յօդուածի հեղինակը—
որ հասնեն վերջապէս այն երջա-
նիկ օրերը, երբ մարդը մարդու մէջ
կը տեսնի ո՛չ գայլ, ո՛չ գաղան, այլ
եղբայր: Այն ժամանակ գուցէ չա-
րարաղղ ու տառապող հրէայ ժո-
ղովուրդը պէտք չէ՛ր զգայ գնալ
«Միջերկրական ծովից» այն կողմը՝
փնտրելու իր համարեա անդր-պատ-
մական Սիօնը...

Նոյն համարում Ն. Միխայիլովիւն,
Լ. Տօլստոյի լիանամեայ գրական
գործունէութեան առիթով, ասում է.
«Վերլիշելով ռուսաց երկրի մեծ
գրողի» գրական գործունէութեան
ամբողջ լիանամեայ ճանապարհը,
մենք տեսնում ենք, որ թէ իր մեծ
երկերում, թէ իր յաճախ շատ խո-
շոր սխալների մէջ, միշտ, իր գրած
առաջին տողից մինչև վերջինը,
նա եղել է և է ինքն, որ հաշուի է
առնում միայն իր սեփական խիղճը,
անկաշառ թէ իր միջավայրի
նախապաշարմունքների համար թէ
այսպէս ասած համաշխարհային նա-
խապաշարմունքների համար. որ
նա ոչ սակաւ փոխել է իր հայեացք-
ները, բայց երբեք չես չի կանգնել
զրանցից արտաքին ինչ ճշման
տակ էլ է որ լինէր: Այդ մտքով նա
մեզ համար աւելի է, քան մեծ
գրող: Նա—կարծես տպագրական
խօսքի արժանապատուութեան կեն-
դանի, մարմին և արիւն դառած
խորհրդանշան, սիմբոլ է»:

„РУССКАЯ МЫСЛЬ“, օգոստոսի Մի-
այն 50 տարի է, որ Հելսինգֆորսի
համալսարանում գոյութիւն ունի
ֆինական լեզուի և գրականութեան
համար առանձին կաթեդրա: Պրո-
ֆէսոր Սետելէի ճառը այդ առիթով
թարգմանուած է լիշա՛ծ ամսագրի
մէջ: Շատ հետաքրքրական է իմա-

նալ թէ ինչ ահագին ջանքերով միայն կարողացել են ֆինական լեզուն և գրականութիւնը շվեդականի հաւասար դիրք ձեռք բերել առհասարակ Ֆինլանդիայի բարձրագոյն կրթական հաստատութիւնների մէջ։ Այդ յօդուածի մէջ չիշատակուած են չեխինգսֆորսի համալսարանում ֆինական լեզուի և գրականութեան առաջին երկու պրոֆէսորների՝ Վաստրենի և Ելիաս Լեօնրոտի՝ անձնուէր և հակալական գործունէութիւնը։ Լեօնրոտն էր, որ հաւաքեց և հրատարակեց ֆինական աղբային վէպ Վալեվալան, մարդկային մտքի ստեղծագործութեան այդ համաշխարհային գոհարներից մէկը։

Այժմ ֆին աղբը պատրաստում է արձան կանգնեցնել Ելիաս Լեօնրոտին, նրա ծննդեան հարիւրամեակի օրը։

„Научное Обозрение“, օգոստոսի բարձն Ֆենդեր Խօլենի ճանապարհորդութիւնը „Մրեւելում“ պարունակում է մի կտոր էլ հայերի մասին, որ բնորոշում է հեղինակի միակողմանի և մակերևոյթացին վերաբերմունքը ղէպի իր դիտած իրողութիւնները։

„Յոյների մէջ, ասում է բարօնը, ես նկատեցի առանձին զայրոյթ հայերի դէմ. այս վերջինները, երբ թուլացաւ թիւրքական վստահութիւնը ղէպի ապստամբութեան յօշնարդ, կարողացան կամաց-կամաց իրանց ձեռք գցել շատ աջնպիսի պաշտօններ, ուր պահանջում էր լայտնի ճարպիկութիւն, լեզուների տիրապետում և հաշուեղիտութիւն։ Գալով Պոլիս, հայ ինտելիգենցիան թրքականից աւելի խորթ էր իր ժողովրդի իսկական շահերին. հետամուտ լինելով աւելի փառասիրական զիտումներին քան հայրենակիցների շահերին, այդ հայ ինտելիգենցիան ամեն կերպ աշխա-

տում էր ստեղծել ինքնավար շատասնի Յիշեցնելով Թիւրքիային՝ հայ աղգարնակութեան մեծամասնութեամբ բնակուած գաւառների համար Բերլինի պալմանադրութեամբ խոստացած բեֆօրմները մտցնելու անհրաժեշտութեան մասին, ստիպում էին թրքական մոլեռանդութեան՝ հայ մեծամասնութիւնը փոքրամասնութեան վերածել։ Հակակական շարժման պարագլուխները Պոլսի մէջ իրանց ապահով էին զգում։ Եւրոպական համալսարաններում ուսած այդ քաղաքագէտները համոզուած էին, որ միայն կոտորածը կը Խոփի Եւրոպային՝ առջ դարձնել հայերի դրութեան վրայ։ Ենթարկուելով անգլիական ինստիտուտին (?!), նրանք ամեն կերպ աշխատում էին նաեւ մացնել (?!) Փոքր-Մարայում ռուսական հեղինակութիւնը, ապացուցելով, որ անգլիացիներն են հանդիսանում հայ ժողովրդի պաշտպան և ոչ ռուսները։ Գաղտնի կոմիտէտները, տարածելով սպառնական պրօկլամացիաներ, ահաբեկում էին թիւրք պաշտօնեաներին։ Վերջ ի վերջոյ, ի հարկէ, տուժում էին գլխատրոպէս հայերից նրանք, որոնք անգղոյշութիւն ունէին արտաշայտել անպատշաճ համակրանք՝ Երզրումը և թիւրքաց ձայնատանի ալլ մատերը ռուսներից գրաւուելու ժամանակ։ Եսկ կոմիտէտների պարագլուխները ակադեմիական հանգըտութեամբ դատաւարութիւններ էին անում հապճեպ բեֆօրմներ մտցընելու անհրաժեշտութեան մասին։

Մարդ զարմանում է որ Բրիտանէլում կայացած հայաստանների համաժողովից լեսոյ էլ զտնւում են ղեռ աշնքա՞ն նախապաշարուած գլուխներ, որոնք հանդէս են գալիս հակական հարցի մասին հնացած, անհիմն և կանխակալ կարծիքներով։ „Научн. Обозр.“-ի խմբագրութեան պատիւ չէ բերում այդպիսի լեռնի

վերաբերմունքը Հայկական կոտորածները թրքական բեմի քրտմբնելի բարբարոսութեան ու եւրոպական մեծ պետութիւնների քարտափրտ անտարբերութեան հետեւանք էին. հայ ինտելիգենցիան այդ բանում մեղ չունի. եւ թիւրքահայերի ամբողջ մեղքը այն է որ նրանք էլ մարդիկ են, զգում են իրանց կրած անասելի տանջանքները և ելք են որոնում այդ դժոխային կացութիւնից...

«Մեզակ», №№ 199—200. Զարեքի վանահայր Աստուածատուր վարդապետ Տէր-Յարութիւնեանի սպանութիւնը բացատրում է իբրեւ անխուսափելի հետեւանք այդ վարդապետի 28 ամեայ եռանդուն և անձնուէր գործունէութեան, որի շնորհիւ յափշտակչների ձեռներից ազատուել են Գարունանաց աշխարհի այդ բնագործակ կուսական անտառները և օրէնքով հաստատուել իբրեւ վանքի սեփականութիւն. Յօդուածագիրը շատ աղքատ տնով պատկերացնում է այդ՝ մեղանում՝ աւակաւ պատահող՝ եռանդուն, գործունեայ և վանքի շահերին անսահման նուիրում շխտակ վարդապետի գործունէութիւնը և գուշակում նրա մահից յետ, մեր հոգեւոր ստեղծանքի անհոգութեան պատճառով, այդ հարուստ կալուածքի ոչնչացումը Արարիկ, ապիկար, թուլամորթ, կաշառակեր և վափկասէր վանականները մի ընդհանուր կանոն են մեղանում, իսկ Աստուածատուր վարդապետները բացառութիւններ. Այդ է պատճառը որ բնդհանրապէս մեր վանական կալուածները անտնուտ են անտէրութեան և դերվումներին:

Նիպրոսի հայ զաղթականութեան մասին Նիկոսիայից գրած մի յօդուածից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները.

Պատմական մի քանի տեղեկութիւններից պարզ է որ Նիպրոսում հայեր եղել են դեռ 800 տարի առաջ. Այժմ Նիպրոսի հայ հասարակութիւնը բաղկացած է 500 հոգուց, մեծ մասամբ Նիկոսիայում Տեղացի հայերի լեզուն թուրքերէնն է, բայց զպրոցների շնորհիւ նոր սերունդը խօսում է հայերէն. Նիկոսիայի եկեղեցու բակում կայ երկսեռ զբոսայրոց, 60 սովորողներով: Առանձին ուշադրութեան արժանի է կրթարան-որբանոցը, որ անգլիարեակ հայերի ձեռքով բացուած է կիլիկեցի և թրքահայաստանցի մանուկների համար: Նպաստները բաւարարում են Մանչեստրի հայ վանականներից: Ապցուած են օժանդակ մարմիններ՝ Լօնդոնում, Պարիզի և Գահրէի մէջ ևս, տարեկան նուէրներ հաւաքելու նպատակով: Մինչև հիմա ծախսուած գումարը կը լինի տարեկան գրեթէ 400 անդլ. ոսկի, միջին հաշուով 40 ուսանողի համար: Պարեւոր է Մանչեստրի հայ վանականներից ընտրուած Խնամակալութեան այն որոշումը, որի համաձայն կրթարան-որբանոցը պիտի վերածուի միջնակարգ ուսումնարանի և պիտի ընդունէ աւելի թուով կիլիկեցի և թրքահայաստանցի որդեգիրներ:

Անշուշտ, կ'աւելացնենք մեր կողմից, Նիլիկիայի կենտրոնական դիրքը հայ զաղթութեանի նկատմամբ և նրա անգլիական ազատ վարչութիւնը շատ մեծ յարմարութիւններ են տալիս մի այդպիսի օգտակար կըրթական հաստատութեան բարդաւածման համար. հարկաւոր են միայն առատ նիւթական միջոցներ, որ կարող էին, ի միջի այլոց, հայթայթել նաև Հնդկաստանի հայերը, որոնց հասարակական, կտակովի, հարստութիւնները այժմ պարապ տեղն են կորչում կամ դատապարտելի անգործադրութեան են մատնուած: Վատ չէր լինի եթէ

Մանչեստրի Խնամակալութիւնը հոգ տանէր այդ մասին. Մ. Նալբանդեանի օրինակը ցոյց տուեց թէ ինչ կարող է անել հաստատակամութիւնը և անձնութիւնը որոշ նպատակի հասնելու համար: Այսօր Նոր-Նախիջևանը վայելում է Նալբանդեանի քանքերով ստացած գումարների արդիւնքը:

Վրաց մամուլը. Վրաց թերթերի մէջ մի բանակուի է սկսուել. վրացական թթու և նեղ ազգասիրութեան օրգան «Իվերիան», Վրաստանը հայերից ազատելու համար, առաջարկում է բռնկօտ հայերի դէմ. նրա կարծիքով պէտք է վրացիները խօսք տան և հայերից ոչինչ չառնեն և դրանց ոչինչ չը ծախեն. այդ կը ստիպի որ հայերը իրանց փաստաւորէն հաւաքեն և հեռանան Վրաստանից, Հայրենասիրութեամբ վառուած «Իվերիան» գաղափարների ուշադրութիւնն է դարձնում մի քստմենքի «անկարգութեան» վրայ. հալ կառապանները Կախեթիայում վրացերէն չը գիտեն: Արեւմտեան բաւական չէ որ Վրաստանի հայերը խկապէս միայն լուսաւորական վրացիներ են, որի ապացոյց՝ Խուցեան, Գրգելեան ազգանունները, բաւական չէ որ հայերը փոխում են վրացական վանքերի և եկեղեցիների արձանագրութիւնները հայկականի, այլ և յանդգնում են կառապանութեամբ պարապել Վրաստանի մէջ և վրացերէն չիմանալ... Այդ տուտուց դատողութիւնների դէմ լուրջ առարկութիւններ անել նշանակում է վիճել խուլի հետ: Միթէ արականը այն է, որ ասելի լուրջ վրացիները իրանք չեն հաւանում իվերիական այդ հայակերութիւնը. «Իվալին» և «Ճոթիսփուրցելին» ուղղակի հեղինակ են և ծաղրում «Իվերիալին», «Իվերիան» իր հայատեցութիւնը հասցնում է այնտեղ, որ ոչ միայն թութակի

նման կրկնում է «Новое Время»-ի սուտը, թէ իբրև հալ գիտնականների յօրինած քարտէշներում Հայաստանի սահմանները հասնում են մինչև Դոն, այլ և մօտենում է այդ թերթին իր չարախնդաց վերաբերմունքով դէպի դժբախտ թիւրքահայերի վիճակը: Գիտենք որ վրացի աղգասէրները փրում են իդէալականացնել իրանց սնցեայր և ամեն տեղ կրկնել թէ վրացիները քաջասիրտ են և ռազմական ոգու տէր. սակայն այդ առասպելները, որ չեն ճշտում պատմական անաչառ փաստերով, իրաւունք չեն տալիս այդքան ստոր և ոչ ասպետական վերաբերմունք դէպի հարեան մի ազգի մարտիրոսութիւն... Պատմութիւն գրելը եթէ միայն ազգասէրների մօնօպօլիան լինէր, անշուշտ, ասելի առաքինի, ազնիւ, քաջ և քաղաքագէտ ազգ քան վրացիներն են—դժուար կը լինէր գտնել. սակայն պատմական գիտութիւնը այդպիսի մօնօպօլիա չէ տուել ոչ մի ազգի հայրենասէրներին, ուստի ինքնազով առասպելներն նոյնքան կարող են փոխել անցեալ իրականութիւնը, որքան տուտուց հայատեցութիւնը ուժ ունի լուծել ներկայ տնտեսական կեանքի ստեղծած լարաբերութիւնները:

Համալսարան, լուլիս «Մուրճի» նախընթաց համարներում մենք անդգուշութիւն էինք ունեցել ուշադրութիւն դարձնելու այս ամսագրի վրայ և մի դիտողութիւն էինք գրել նրա մի յօդուածի առիթով: Ասում ենք, «անդգուշութիւն ունեցանք», որովհետեւ չէինք ճանաչում թէ դա ինչ տեսակ պարբերական հրատարակութիւն է: Մեզ խաբողը վերնագիրն էր—«Համալրատարան», գիտական ամսագիր: Գրեցինք մեր նկատողութիւնը, և այժմ անա պարզ տեսնում ենք, որ

դա ալն ապականուած մամուլի վիժմունքներից մէկն է, որ ի դժբախտութիւն հայ ազգի պատուաստուել է արտասահմանեան հողի վրայ՝ մի քանի թիւրքահայերի ձեռքով «Համալսարանը» մեզ հաչհոյում է ամենալիրբ խօսքերով, և իրաւունք ունի, մենք միանգամայն անտես ալրած պիտի լինէինք նրա գոյութիւնը, հաչհոյել մենք չը գիտենք, պատրաստ ենք ջուխտ ձեռքով ստորագրելու, որ հոսոսը Պարիզի բուլվարներում հրաշալի կերպով

սովորում է հաչհոյել, ամենաանպատկառ բառերով հաչհոյել, հոսոսութիւնը, այո, անպարտելի է, երբ միանում է Պարիզի տականքների հետ: Բան չունենք ասելու: Մնում է միայն փոստալ, որ հոսոսական այդ կեղտոտութիւնները «համալսարան» անունով են պոսակում: Բայց այստեղ էլ զարմանալու բան չը կայ. քննադատուած ինքնահաւանութիւնը մեզանում ընդունակ է կեղտոտել ամեն մի մաքուր անուն և գործ:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Լ. ԻՃԵ. Հ ա յ ո ց գ Ր ա դ ա Ր ա ն ի վ ա Ր չ ու թ ե ա ն.— Մընի օրդըրը ուղարկել էք մեր անունով, իսկ դրամը ուրիշի անունով: Մանրամասնութիւնները նամակով:

Շումիա. Հ ա յ ո ց գ Ր ա դ ա Ր ա ն ի վ ա Ր չ ու թ ե ա ն.— Դարեցրինք ուղարկել, որովհետեւ չէք լրացրել: Բուլղարիայի հայերը առհասարակ չեն հետաքրքրուում, երեւի կամաց-կամաց դրանք էլ կը գնան Ռումանիայի, Լեհաստանի և Հնդկաստանի հայերի տիտը շաղով:

Սարգսաբաք. պ. Յ ա կ ո Ր (Շ ա հ Ր ի ա Ր գ ի ա դ ու մ).— Փոքր յօդուածները չեն վերադարձնում: Մենք չենք յիշում. հաւանական է, ինկատի կ'ունենանք և դէպք եղած ժամանակը կը վերադարձնենք յիշածները:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Այս համարում.

Երես	տող	ցպուած է	պէսք է լինի
52	2	էր	էին
"	11	բումնի (կտորի)	գնդի
		ու նեցող	ունեցող
132	41	հարուստ նման	լար և նման
157	10	թողաք	թողունք

„ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ СЛОВАРЬ“

Брокгауза и Ефрона

(начатый проф. И. Е. Андреевским)

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДЪ РЕДАКЦИЕЙ

К. К. АРСЕНЬЕВА и заслуженнаго проф. В. В. ПЕТРУШЕВСКАГО

Словарь выходит полутомами каждые два мѣсяца.

Вышелъ 70 й полутомъ (Фенслы—Финлидія).

Цѣна каждаго полутома 3 р. въ переплетѣ.

Книги высылаются почтою, при чемъ за пересылку взимается 40 к. съ книги.

Всѣ вышедшія уже книги высылаются по ж. дор., съ уплатою за провозъ по желѣзнодорожному тарифу (требуется указаніе станціи).

ДОПУСКАЕТСЯ ПОДПИСКА ВЪ РАЗСРОЧКУ:

1) При подпискѣ вносятся задатокъ отъ 10 р. и выдаются имѣющіеся налицо полутомы. Долгъ выплачивается ежемѣсячными взносами отъ 7 р. независимо отъ пріобрѣтенія остальныхъ полутомовъ по 3 р. за книгу.

2) Лица, желающія подписаться въ разсрочку, благоволятъ указать на служебный, общественный или имущественный цензъ, при чемъ контора редакціи оставляетъ за собою право не принять подписку, если найдетъ гарантію уплаты недостаточною.

Принимается подписка на „Малый энциклопедическій словарь“ Брокгауза и Ефрона. Вышли 10 вып. Цѣна каждаго 1 р. 50 к. безъ пересылки.

Подписка принимается въ Баку, уг. Красноводской и Молоканской, д. Муса-Нагіева, у Ивана Оаддѣевича Мусиньянца.

5—1

Ա. Ա Հ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

«Ի Ե Ղ Ճ Ե Ր Ը»

Պատմաճիւրհերի ժողովածուն, մօտ 400 երես, մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի: Գինն է 1 աս. ր. 1, ճանապարհածախսով 1 աս. 20 կ. Խանկապոլսի բնակիչները կարող են գրմել «Մուրճի» խմբագրատուն՝ հեղինակին. Թիֆլիս, ռեդակցիա „Մուրճ“.

5—1

Главное представительство Высочайше утвержденного ГЕНЕРАЛЬНАГО ОБЩЕСТВА

страхованій жизни и пожизненныхъ доходовъ

Въ С.-Петербургѣ, Невскій № 21.

ОТКРЫВЪ СВОИ ОПЕРАЦІИ ВЪ БАКУ

и въ губерніяхъ Бакинск., Елисаветпольск. и Дагестанской области, приглашаетъ на условіяхъ комиссіоннаго вознагражден. интеллигентныхъ, энергичныхъ и способныхъ сотрудниковъ для приобрѣтенія страхованій.

Генеральное Общество предлагаетъ своимъ страхователямъ наиболѣе либеральныя условія, какъ, напр., **неоспоримость** полисовъ послѣ 1-го года, **ненарушимость**, т. е. право приостановить платежи по своимъ страхованіямъ на болѣе или менѣе продолжительное время, при чемъ, въ случаѣ смерти страхователя въ теченіе этого времени, наслѣдники получаютъ застрахованный капиталъ безъ всякихъ вычетовъ; участіе въ прибыляхъ Общества по **совокупности** платежей премій, а не съ первой годовой преміи; **мѣсячные платежи премій**, дѣлающіе страхованіе жизни доступнымъ наименѣе обезпеченному классу населенія; выдача **полисовъ** безъ всякихъ сборовъ и проч.

Сравнительный тарифъ премій

ЗА СТРАХОВАНІЕ ВЪ 1000 РУБ. НА СЛУЧАЙ СМЕРТИ ВЪ ВОЗРАСТѢ 35 ЛѢТЪ:

Въ Генеральномъ Обществѣ 24 р. 24 к.	Въ другихъ рус- скихъ Обществахъ 27 р. 20 к.	Въ иностранныхъ Обществахъ, дѣйс- твующихъ въ Рос- сіи. 30 р. 70 к. съ уч. въ приб.
--	--	--

за всякими справками, равно съ предложеніемъ страхованій и агентскихъ услугъ просятъ адресоваться въ Главное Представительство въ гор. Баку уг. Красноводск. и Молоканск., д. Муса Нагіева.

Главный представитель Бакинск. округа **И. Ѳ МУСИНЬЯНЦЪ.**

Въ Елисаветполѣ утвержд. главн. агент. **С. Сардаровъ.**

Книгоиздательское Т-во „Просвѣщеніе“

“Большая Энциклопедія,”

Словарь общедоступныхъ свѣдѣній по всѣмъ отраслямъ знанія, подъ редакціей С. Н. Южакова.

20 томовъ въ переплетахъ по 6 руб.

Въ общей стоимости 120 „

“Вся Природа“,

Цѣна въ рос-
кош. полукож.
переплетѣ

состоящая изъ слѣд. изданій:

„Мірозданіе“ д-ра Мейера	8 р. 60 к.
„Исторія земли“ проф. Неймайра, 2 тома	15 „ — „
„Происхожденіе животнаго міра“ проф. Гааке	7 „ — „
„Жизнь животныхъ“ Брэма, 3 тома	24 „ — „
„Жизнь растений“, проф. Кернера, 2 тома	15 „ — „
„Человѣкъ“ проф. Ранке, 2 тома	14 „ 20 „
„Народовѣдѣніе“ проф. Ратцеля, 2 тома	15 „ — „

Всего . . 98 р. 80 к.

Альбомы картинъ по географіи и естест- вознанію:

Цѣна въ
изящн. переп.

Альбомъ картинъ по географіи Европы	1 р. 50 к.
„ „ „ „ вѣввропейск. странъ	1 „ 75 „
„ „ „ зоологіи птицъ, „	1 „ 75 „
„ „ „ „ млекопитающихъ	1 „ 75 „
„ „ „ „ рыбъ	1 „ 75 „
„ „ „ „ низшихъ животныхъ	1 „ 75 „
„ „ „ географіи растений	1 „ 75 „

Исторія нѣмецкой литературы

профессоровъ Фогта и Коха 8 р. 60 „

Промышленность и техника

10 т. по 6 руб. = 60 руб.

Исторія человѣчества (Всемирная исторія)

подъ ред. д-ра Гельмольта.

8 томовъ по 6 руб. = 48 руб.

Подобные проспекты высылаются бесплатно;
первые выпуски за 6 семикоп. марокъ.

Продажа въ разсрочку на весьма выгодныхъ условіяхъ.

Подписка принимается въ Баку, угл. Красноводской и Молоканской,
д. Муса Нагіева, у Ивана Фаддѣевича Мусиньянца.

Թիւն և շահ.—Շիպկայում կատարուած հանդէսների նշանակութիւնը.—Ձը կատարուած խոստումներ, Լ. Ս.	223
Պ օ լ ս ի թ ե ը թ ե ը ի ց. Կրթական դուրծը Դիարբեքի թեմում.—Գաւառային վանքերի վիճակը.—Կիլիկիայի կաթողիկոսական հարցը.—Անդրանիկ հայ ղերասանու- հի տ. Ա. Պէլլիւճեանի վիճակը.—Լեհացիների դիմումը հայ եկեղեցուն.—Տրիպոլի հայերի հանրագիրը	227
13. ԷՄԻՆ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ, Ա. Ահարոնեանի ² .	234
14. ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, Կղերականութիւնը Գերմա- նիայի մէջ, Quidam	244
15. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	249
16. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	257
17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	278

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1902 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ր Ի

(Նոր շրջան, II-րդ տարի)

Խմբագրութեան անդամներն են՝ պ. պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ, ԼԷՕ
և ԱԻ. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 անգամ. Արաստսիսում՝ 12 անգամ.
" Կէս տարին 6 " " 7 "
" 1 ամսուան 1 " " 1 " 20 Կ.
«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել՝
Թիֆլիսում—խմբագրատանը ձալձալվածքան փողոց, տ. № 16) և
«Գուտտներէրդ» գրավածառանոցում:
Քալախանի. պ. Մ. Տէր-Դանիէլեանի մօտ, «Անդրանիկ» ընկ. գործա-
րանում:
Քաղու. պ. Յ. Մուսինեանի մօտ, Կրասնօլոզսկայա և Մալկանսկայա
փողոցների անկիւն, տ. Մուսա Նաղիբի:
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисѣ, въ редакцію
журнала „Мурчѣ“.
Արաստսիսից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զեփեղելու համար պէժք է վճարել.

Մի երես ամիսը չափադարձեան համար	• 10 Կ.
1/2 " " " " " "	• 5 "
1/4 " " " " " "	• 2 "

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը չափով խնդրում է յօդուածագիրներին՝ գրել պարզ, մանաւանդ թանրը, չափով անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. Ձրնդունում մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Ձեռագիրը չիտ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև չափող համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային գրասենեակի հաւաստագիրը (востовѣреніе), որ ամսագրի համարը չի լանձնում գանդատաւորին: